

**ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ**

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ

15



ԵՐԵՎԱՆ 2014

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

NATIONAL ACADEMY OF SCIENCES
OF THE REPUBLIC OF ARMENIA
INSTITUTE OF HISTORY

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ИНСТИТУТ ИСТОРИИ

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ
(ԳԻՏԱԿԱՆ ՀՈՂՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ)

THE PROBLEMS OF THE HISTORY OF ARMENIA
(A COLLECTION OF SCIENTIFIC ARTICLES)

ВОПРОСЫ ИСТОРИИ АРМЕНИИ
(СБОРНИК НАУЧНЫХ СТАТЕЙ)

15

ՄԵՍՐՈՊ ԱՐԶ ԱՇԺՅԱՆ
ՄԱՏԵՆԱԾԱՐ

118



ARCH. MESROB ASHJIAN
BOOK SERIES

118

ԵՐԵՎԱՆ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ
2014

**Տպագրվում է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի
գիտական խորհրդի որոշմամբ**

Խմբագրական խորհուրդ

ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Ա.Ա. Մելքոնյան (նախագահ), ՀՀ ԳԱԱ
թղթակից անդամ Ա.Ա. Խառատյան, պ.գ.դ. Է.Լ. Դանիելյան, պ.գ.դ.
Հ.Մ. Հարությունյան, պ.գ.թ. Կ.Հ. Խաչատրյան (նախագահի
տեղակալ), պ.գ.թ. Ա.Ի. Շահնազարյան, պ.գ.թ. Հ.Ղ. Մուրադյան,
պ.գ.թ. Հ.Կ. Սուքիասյան:

Редакционная коллегия

Академик НАН РА А.А. Мелконян (председатель), член-кор.
НАН РА А.А. Харатян, д.и.н. Э.Л. Даниелян, д.и.н. Г.М. Арутюнян,
к.и.н. К.Г. Хачатрян (заместитель председателя), к.и.н. А.И.
Шахназарян, к.и.н. А.Г. Мурадян, к.и.н. А.К. Сукиасян.

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի «Հայոց պատմության հարցեր» տարե-
գրքի հերթական 15-րդ հատորում գետեղված աշխատությունները սկզբնաղբ-
յունների, մամուլի հրապարակումների, հայրենի և համաշխարհային պատմա-
գիտական գրականության լայն հենքի վրա լույս են սփռում Հայոց պատմության
առանձին հիմնահարցերի վրա:

Տարեգրքում գետեղված են նաև ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի ֆի-
նանսական օժանդակությամբ տեղի ունեցած ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտու-
տի երիտասարդ գիտաշխատողների XXXV գիտական նստաշրջանի (11-13 հու-
լիսի 2014 թ., Ադվերան) զեկուցումները:

БОГ СОЛНЦА МИՒՐ – ПОКРОВИТЕЛЬ ДОБРА И СПРАВЕДЛИВОСТИ У ДРЕВНИХ АРМЯН

В религиозно-мифологической системе древних армян особенно знаменателен культ Ми́ра – солярного бога, многогранный образ которого развивался в течение многих веков, демонстрируя самые различные проявления.

Ми́р первоначально символизировал Добро и Свет, Чистоту и Правду, беря начало с тех незапамятных времен, когда Солнце воспринималось как всемогущий источник тепла, жизни и движения, начало начал всего живого, органического и неорганического мира. Найдя отражение в мифологическом восприятии племен Армянского нагорья как солнцепоклонничество, Солнце-Ми́р символизировал также вечность общины и священность традиций, справедливость, право и законность в общинной жизни племени.

В армянской культуре, в частности в наскальном искусстве, мифологии и культе, философии и эпосе, архитектуре и музыке наблюдается целое множество световых и солнечных тем¹, поскольку в религиозно-мифологических представлениях древних важную

¹ О культе солнца и света у древних армян см: Վարդումյան Գ., Թոխաթյան Վ., Հայոց լուսաբերության պատկերացումները (ըստ փայտապատկերների եւ արձանագրության նիւթերի), «Բազմալեզու», Վենետիկ, 2002, 1-4, էջ 383-407. Есть также точка зрения, что, вопреки принятому мнению, культ Ми́ра-Митры не отождествлялся с солнцем, что в отличие от последнего, являющего собой божество физического света, Митра символизировал духовный свет и правдивость (Մարգարյան Ե., Միհրականությունը շին Աշխարհի կրոնափոփոխող համակարգում. Կոմմադենտ, Հայաստան, Հոռմ, Եր., 2014, էջ 136; автор ссылается на de Jong A., Traditions of the Magi: Zoroastrianism in Greek and Latin Literature, - Religions in Greco-Roman World, vol. 133, Leiden etc. Brill, 1997, p. 329).

роль играли космогонические представления, которые составляли значительную часть в мышлении и деятельности человека.

В глубокой древности, когда многие малоазийские, армянские и индо-иранские племена находились в едином духовном ареале, у них были свои верования и мировоззрение, в которых одушевлялась природа, воспринимавшаяся как разумная сущность. Эти племена поклонялись природным стихиям – земле, воде, воздуху, огню. Солнце и свет считались олицетворением животворной силы и божественной мощи.

Солнце воспринималось и как спаситель, помогающий человеку во всех его делах своими ласковыми лучами, и как каратель, наказывающий виновных своими огненными шипами. Обожествленное солнце часто принимало значение „правда, праведность, правдивость, правосудие, осуждение, судья”: Шамаш в аккадской мифологии был богом солнца и правосудия; вавилонский царь Хаммурапи (1792-1750) посвятил свод законов богу солнца; у египтян был миф о наказании людей за их грехи по приказанию бога солнца Ра, который, считалось, в наиболее знойное время года распаляется гневом на людей².

Уже во II тыс. до н.э. имя Митры засвидетельствовано в стране Митанни на юге Армянского нагорья: оно упоминается в письменных переговорах между хеттским и митаннийским царями, в котором последний княнется именем бога *mi-it-ra-aš-ši-il* (Митрасил) быть верным договору (1380 г. до н.э.)³. Он считался источником света и божеством солнца, олицетворяя добро, чест-

² Афанасьев В.К., Уту-Шамаш. Мифы народов мира (далее МНМ), Энциклопедия, т. 2, Москва, 1982, с. 552; Он же, Шумеро-аккадская мифология, – МНМ, т. 2, с. 647-653; Рубинштейн Р.И., Египетская мифология, МНМ, т. 1, Москва, 1980, с. 424.

³ Дрезден Москва, Мифология древнего Ирана, Мифология Древнего Мира, пер. с англ., М., 1977, с. 350-351.

ность и правдивость в едином целом, потому и воспринимался как Спаситель человечества, символизируя веру в окончательную победу справедливости и праведности. А когда начали образоваться первые государства в Передней Азии, Митра стал также покровителем и поручителем межгосударственных договоров⁴. В хеттских гимнах к солнцу обращались как к высшей инстанции: «Солнце, господин мой справедливый, / Суд вершащий! /... Только праведного человека / Возвышаешь ты, благое Солнце!»⁵.

У древних армян солнце и солнечный свет назывались Арев или Арег (Арегаки), заходящее (уходящее) и восходящее (возвращающееся) солнце – Ара, день назывался Тив (տիվ), а дневное солнце – Тивское светило. В ҺАйкидский период Солнце персонифицировалось самим ҺАйком, в Ванском царстве – солярным богом Шивини, а в пантеоне ервандидско-арташесидского периода – Ваһагном и Миһром.

Первые письменные упоминания о культе солярного бога Миһра в Армении можно найти у греческих авторов. Ксенофонт в своем «Анабасисе» описывает, как в стране Армения он отдал своего коня комарху одного села для приношения в жертву богу солнца Гелиосу⁶, т.е. Миһру. Страбон же упоминает о том, что в Ахеменидский период сатрап Армении посылал персидскому царю ежегодно 20 тысяч жеребцов для Миһрских празднеств⁷.

В армянской историографии первым о Миһре упоминает

⁴ Намного позже, в Авесте, Митра выступает в качестве покровителя межгосударственных договоров (см. Кошеленко Г.А., Разные этапы культа Мифры, Древний Восток и Античный мир, Москва, 1977, с. 75).

⁵ Поэзия и проза Древнего Востока, пер. Иванова, Москва, 1973, 3, с. 350.

⁶ Ксенофонт, Анабасис, пер., вступ. статья и примеч. М.И. Максаковой, под ред. И.И. Толстого, переизд., Античная классика, Москва, 1994, кн. IV, гл. V, 34.

⁷ Страбон, География, пер. Г.А. Стратановского, под общ. ред. С.Л. Утченко, Москва, 1964, XI, 44, 9 (см. также: Ստրաբոն, քաղեց և քարզմ. Հր. Աճառյան, Օտար անբնիկները հայերի մասին. Հունական անբնիկներ, I, Երևան, 1940, էջ 61):

Агатангелос, который свидетельствует, что в древнем пантеоне армян Миһр почитался как сын Арамазда – отца богов, и первым об этом упоминает Агатангелос, отметив также, что в области Дерджан, в селении Багайаридже находился его храм⁸. А Хоренаци, описывая деятельность царя Тиграна Среднего, сына Арташе-са Первого, упоминает, как он вынудил греческих войск отступить, а после этого «решил соорудить храмы» и «установил статую Зевса Олимпийского (арм. Арамазд - Г.В.) в крепости Ани⁹, Афины (арм. Нанэ - Г.В.) – в Тиле, другую статую Артемиды (арм. Анаһит - Г.В.) – в Еризе, Гефеста же (арм. Миһр - Г.Д.) в Багайаридже». Историк продолжает описывать, как «соорудив храмы и устроив перед ними алтари, он повелевает всем нахарарам приносить жертвы, сопровождая их коленопреклонением»¹⁰. Эти свидетельства Хоренаци дают возможность, во первых, установить, что в эллинистический период в Армении, наряду с армянскими именами божеств, упоминались и названия аналогичных олимпийских богов и богинь, и во вторых, делать вывод о том, что поклонение этим богам имело государственное значение, судя по тому, что все нахарары должны были коленопреклоняться им.

Но прежде, чем перейти к освещению образа и культа Миһра в армянской среде, вкратце обратимся к проблеме о времени и месте происхождения Митры и митраизма в науке. Мнения о времени происхождения варьируется от VIII-V тыс. до I в.

⁸ Агатангелос, История Армении, пер. с древнеарм., вступ. статья и коммент. К.С. Тер-Давтян и С.С. Аревшатяна, Ереван, 2004 (далее Агат.), 790.

⁹ Крепость Ани на Евфрате, известная своим храмом бога Арамазда, усыпальница армянских царей Аршакидов (см.: Мовсес Хоренаци, История Армении, пер. с древнеарм., введение и примеч. Г. Саркисяна, Ереван, 1990 (далее Хор.), с. 238, примечание 277).

¹⁰ Хор., II, 14.

до н.э.¹¹, а дату прекращения митраизма, как действующей религии, принято считать V в.н.э., когда он уступил место христианству, а затем и исламу.

Что же касается локализации истоков митраизма, то часть исследователей считает его религией индо-иранского происхождения, поскольку письменные свидетельства о центральной фигуре этого культа – Митре, восходят к ведической и авестийской литературе (II-I тыс. до н.э.). Еще в начале прошлого века выдающийся бельгийский археолог-востоковед Франц Кюмон в своей книге «Мистерии Митры» считает митраизм одним из самых загадочных явлений в истории религии, который, появившись в Древнем Иране еще в конце II тыс. до н.э., быстро распространился на огромной территории от Армении до центральной Европы и оказал огромное влияние на облик дохристианской Европы, распространявшись в I в.н.э. в Римской империи и во многом определив ее духовную и политическую жизнь¹².

В.Н. Топоров пишет, что Митра или Мифра (древнеиндийский *Mitrá*, авестийский *Miθra-*) – это «древнеиранский мифологический персонаж, связанный с идеей договора, а также выступающий как бог солнца», имя которого «восходит к индоевропейскому корню **mi-*: **mei*, имеющему отношение к обозначению идеи посредничества, взаимности, обмена (и меры), закономерности, согласия, состояния мира, дружбы, симпатии». Он также считает, что «древнейшие и наиболее надежные сведения о Митре содержатся в «Авесте», в «Яште» X [«Митра-Михр Яшт»]»¹³.

¹¹ Такую датировку приводит Л. Хачереан (*Խաչերեան Լ., Հայոց ազգային դրոշմը, Կալիֆորնիա, 2001, էջ 178*).

¹² Кюмон Ф., Мистерии Митры, пер. с франц. С.О. Цветковой, СПб, 2000.

¹³ Топоров В.Н., Митра, МНМ, т. 2, с. 154. Об индийской и иранской мифологии см.: Топоров В.Н., Ведийская мифология. МНМ, т. 1, с. 221-226; Он же, Индийская

Несколько иную точку зрения выдвигает В.Д. Неронова, которая полагает, что «культ Митры, одного из древних индоиранских богов, был воспринят зороастризмом и вместе с одной из его более или менее эклектических разновидностей проник в период господства Ахеменидов в Малую Азию. Но Митра, главный бог религии митраизма, не имел с Митрой индоиранцев ничего общего, кроме имени; религия эта, по видимому, сложилась в восточной части Малой Азии и Западной Армении в I в. до н.э. лишь под слабым влиянием зороастризма, в частности зороастрийских дуалистических верований об извечной борьбе добра и зла. Подобно христианству, митраизм обращался прежде всего к низшим слоям населения, обремененным всякими тяготами, созданными Римской империей»¹⁴.

Вкратце рассмотрим образ Митры в индо-иранской мифологии. Известно, что в индийских Ведах Митра – божество дневного света, постоянный спутник Варуны – покровителя ночной тьмы. Восседающие на небесном троне, они вдвоем в качестве Солнечного глаза следили за космическим порядком. В Ведах множество гимнов посвящено им, из коих пять – только Митре. Позднее индийский Митра, как солнечное божество, уступил место Сурье и остался лишь в качестве покровителя права – добродетели, нравственности и правдивости. В религиозно-этических произведениях периода брахманизма Митра управляет днем, а Варуна – ночью, и, соответственно, Митре приносились в жертву растительные плоды светлых оттенков, а Варуне – темных.

мифология, - МНМ, т. I, с. 526-527; Брагинский И.С., Иранская мифология, МНМ, т. I, с. 560-565.

¹⁴ Неронова В.Д., Соперники христианства: гностицизм и митраизм, История Древнего Мира. Упадок древних обществ, под ред. И.М. Дьяконова, В.Д. Нероной, И.С. Свенцицкой, издание 2, исправленное, Москва, 1983, с. 255.

В дальнейшем, в ведический период, культы обоих божеств уступают место двум другим – символизирующему гром и молнию Индре и персонифицирующему огонь Агни, представления о которых были более доступными для восприятия и, тем самым, более близкими простому человеку. Неугасимый огонь был известен как Агни (ср. с лат *Ignis*, русск. Огонь), а зороастрийцы называли его Артар¹⁵ (ср. с арм. „ардар” – „справедливый”).

Култ иранского Митры (*Mithra* – „верность, дружба, согласие, договор”), имеющий древние корни, был связан с пантеистическими представлениями о солнце, свете и огне. Свет воспринимался как зримый образ бога в физическом мире, и ему молились обратившись лицом к свету, т.е. солнцу. Особое уважение придавалось огню, как наиболее важному и доступному для человека тех давних времен источнику света и тепла, потому и священному огню приносились жертвы, и не случайно, что древних иранцев часто считают огнепоклонниками.

Митраизм в Иране, по мнению некоторых исследователей, как отдельный культ, сформировался довольно поздно, и имя Митра не упоминается в древних текстах Авесты, однако в народе он, видимо, пользовался почитанием. Только в V в. до н.э., в целях придать новый импульс маздаистской религии, Артаксеркс II (405-362) узаконил культ Митры, объявив митраизм официальной религией. Со времен походов Помпея (66-63) культ этот был занесен далеко на запад, особенно широко распространившись в римских легионах¹⁶.

Представления о Митре особенно развито проявляются, как уже отмечалось выше, в «Михр-Яште» – одном из самых длинных

¹⁵ Об Агни см.: Топоров В.Н., Агни, МНМ, т. 1, с. 35-36.

¹⁶ Токарев С.А., Религии в истории народов мира, Москва, 1964, с. 332.

и известных текстов Авесты. Известны также праздники, посвященные Митре: Мехреган – как день именин (2-е октября), Ялда – как день рождения (зимнее солнцестояние) и др. В период Парфянского царства (III в. до н.э. – III в.н.э.) митраизм был уже широко распространен в Иране, а в канун принятия ислама был объявлен опасной сектой¹⁷.

Митра нашел отражение и в трудах античных авторов. Так, Плутарх считает Митру посредником между Ормуздом и Ахриманом, что подтверждается и тем, что в пехлевийских источниках у Митры фигурирует эпитет „migāncīg” – „посредник”¹⁸. Это подтверждается также одним упоминанием Езника Кохбаци, в котором Ахриман приглашает Ормузда на празднество, а тот ставит условие, что при этом их сыновья должны сражаться в единоборстве. Побеждает сын Ахримана, духи начинают искать посредника, и поскольку не находят, создают Солнце, чтоб светило судило их¹⁹.

Предметом обсуждений послужило упоминание Геродота о том, что «ассирийцы называют Афродиту Милиттой, арабы – Алилат, а персы – Митра»²⁰, в связи с чем Страбон уточняет, что персы называли Митрой Гелиоса, т. е. Солнце²¹.

¹⁷ Մարգարյան Ե., Հին իրանական կրոնը, Վարդույան Գ., Մարգարյան Ե., Կրոնների պատմություն (ուսումնական ձեռնարկ), պրակ Ա, Հին կրոններ, Երևան, 2006, էջ 66-67:

¹⁸ Плутарх, Исида и Осирис, сост. С. И. Еремеева, Вершины мистической философии, Киев, 1996, 46.

¹⁹ Եզնիկ Կողբացի, Պարսից կրոնի հերթումը, Եղծ աղանդոց, Երևան, 1994, գիրք II, Թ, էջ 114; de Jong A., Traditions of the Magi: Zoroastrianism in Greek and Latin Literature, p. 174.

²⁰ Геродот, История в 9-и книгах, пер. и примеч. Г.А. Стратановского, под общ. ред. С.Л. Утченко, Москва, 1974, кн. I, 131.

²¹ Страбон, География, XV, 3, 13.

Согласно древнему мифу Митра-Михр был рожден из скалы, причем в зороастрийской религии он считался сыном Ахура-Мазды (Ормузд), а в древнеармянской – Арамазда. Митра воспитывался в пастушеской среде, совершил множество подвигов, борясь против злых и темных сил, укротил и принес в жертву Золотого быка, священной кровью которого оплодотворяли землю, в которой вырастали все полезные растения. Затем он вознесся в небеса, откуда со своими шестью тысячами глаз и столькими же ушами наблюдал за добрыми земными созданиями и слушал их голоса, покровительствуя им. Позднее Митра считался воином-освободителем и спасителем (мессия), который своим вторым явлением спасет мир от злых духов и смерти, создав тем самым блаженное земное царство. На земле, очищенной и обновленной огнем, страшному суду Митры будут удостоены все покойники, из коих праведные воскреснут, а виновные – будут наказаны²².

О происхождении армянского Михра тоже мнения расходятся. Гр. Капанцян в свое время полагал, что имя Митра восходит к хеттскому теониму Midra – названию божества, почитаемому в древнейшие времена²³. По мнению К.В. Тревер, культ Михра в Армении получил особое распространение в период расцвета митраизма, когда индо-иранский Митра широко почитался не только в Парфянском царстве и Римской империи, но и в других странах древности, и в те времена имя Митра сопутствовало «солнечному божеству у народов Малой Азии и Месопотамии»²⁴. Т. Авдалбегян, разносторонне изучив культ Михра у ар-

²² Об иранском и индийском Митра и митраизме см.: Топоров В.Н., Митра, МНМ, т. 2, Москва, 1982, с. 154-158.

²³ Капанцян Г., Хеттские боги у армян, Ереван, 1940, с. 31-32.

²⁴ Тревер К.В., Очерки по истории культуры древней Армении, Москва-Ленинград, 1959, с. 86.

мян, отмечает, что ни один бог армянского пантеона не оставил так много следов в словаре армянских личных имен, как Мiհր, и что культ Мiհра несомненно, был одним из главных стержней развития армянской религии²⁵.

С.Б. Арутюнян считает Мiհра божеством среднеперсидского (пехлевийского) происхождения, полагая, что он был внесен в армянский пантеон в V в. до н.э., заменив местного солярного бога²⁶. Автор вышедшей недавно книги о митраизме в политической и религиозно-этической системе Древнего Мира Е. Маргарян пишет, что «огромное значение в формировании митраизма сыграла арийская мифология, корнями уходящая в древнейшую эпоху и непосредственно связанная с Армянским нагорьем и сопредельными территориями в Малой Азии и Иранском плоскогорье»²⁷.

Итак, после приведения этих разнородных мнений о происхождении Митры и митраизма (индо-иранское, малоазийское, западноармянское), рассмотрим, как образ и культ этого бога проявляются в армянской среде и какие следы Мiհр оставил в мифо-эпическом творчестве и в этнографической действительности армян. Как уже отмечалось выше, Мiհр в Армении был типичным солярным богом, а также покровителем добра, справедливости и договора²⁸. Античные источники свидетельствуют о

²⁵ Автор приводит огромный список таких имен, см.: Ավգալբեգյան Թ., Միհրը հայոց մեջ. Հայագիտական հետազոտություններ, Երևան, 1969, էջ 14-21.

²⁶ См.: Арутюнян С.А., Мiհր, МНМ, т. 2, с. 160: Հին հայոց հավատալիքները, կրոնը, պաշտամունքն ու դիցարանը, Երևան, 2001, էջ 30-31).

²⁷ Մարգարյան Է., նշվ. աշխ., էջ 268 (Резюме).

²⁸ Об армянском Мiհре см.: Ալիշան Ղ., Հին հաւատք կամ հեթանոսական կրօնը Հայոց. Վենետիկ, Ս. Ղազար, 1895, էջ 283-288; Մելիք-Օհանջանյան Կ., Միհրա-Միհրը «Սասնա ծռեր»-ի մեջ, Երևան, 1946; Вардумян Г., Дохристианские культы армян, Армянская этнография и фольклор, 18, 1991, с. 116-119; Հարությունյան Ս.Ա., Հայ առաքելաբանություն, Բեյրութ, 2000, 452-463: Հին հայոց հավատալիքները.

персидиком обычае клясться Митре, а Мовсес Хоренаци приводит письмо иранского шахиншаха Шапуха армянскому царю Тирану (Տիրան), в котором шахиншах зовет царя к себе словами: «Клянусь великим богом Миһром, мы не нанесем никакого вреда твоему царству, только ты поспеши повидаться с нами, дабы мы могли поразмыслить об общем благе». После такой клятвы армянский царь отправляется к Шапуху, однако вероломный шахиншах ослепляет его²⁹.

К имени Миһра восходит слово „меһян, меһреан“ (մեհեան, մեհրեան), означающее „языческий храм“. Именем Миһра в армянском календаре назван 8-й день каждого месяца, а также февраль – „меһекан“, т.е. „миһрский“³⁰, 14-го числа которого отмечается народный праздник магического возрождения Солнца – Трндез, ритуальная символика которого заключается в очищении силой огня во избежание зла. В народных представлениях огню, как и воде, приписывались плодоносные свойства, и некоторые праздники и обычаи общественно-семейного характера, дарующие молодоженам плодovitость, и по сей день бытуют в народе. Обычай, распространенный среди молодежи, устраивать в ночь Трндеза хоровод вокруг костра и прыгать через него, восходят к древнейшему миһрскому празднику и заключают в себе представления о животворной силе солнца и огня. Праздничный костер – предвестник весны, призванный согреть землю к концу зимы и ускорить наступление теплых дней. Здесь Миһр выступает также в качестве покровителя семьи и домашнего очага. В хрис-

կրոնը, պաշտամունքն ու դիցարանը, Երևան, 2001, էջ 38-41; Արծրունի Գ., Դիցարան Հայոց. հանրագիտարանային բառարան, Եր., 2003, 150-152:

²⁹ Хор., III, 17.

³⁰ Об армянском календаре см.: Բաղդասարյան Հ.Ս., Օրացույցի պատմություն, Երևան, 1970, էջ 49-145:

тианскую эпоху праздник Триндез был трансформирован в праздник Сретения Господне – арм. Теарнындарадж (Տեարնընդարձ – „навстречу господне”), приношения сорокодневного младенца Иисуса его родителями в храм, где Семион Богопримец встретил святое семейство³¹.

В эллинистический период имя Миһра отождествлялся с именами солнечного Аполлона-Гелиоса, бога огня кузнеца Гефеста, а также бога вулканического огня Вулкана. Богу Солнца Миһр было посвящено множество святилищ в различных местах исторический Армении, из коих особо знаменательным было капище селения Багаяридж провинции Дерджан, где в эллинистическую эпоху была установлена статуя олимпийского бога Гефеста³².

Из сохранившихся святилищ особо знаменателен известный памятник Ванского царства (Биайнили) Дверь Мгера, представляющий собой нишу в скале, в которой, согласно армянскому народному эпосу, был заключен герой последней ветви Мгер Младший. А на скале сохранилась клинописная надпись, в которой упомянуты имена богов и богинь урартского пантеона, числом около 80-и, с количеством жертвенных животных, приносившихся данному божеству. Дверь Мгера – важнейший первоисточник по религии Урарту³³.

Ярким свидетельством солнцепоклонничества древних армян представляет собой и святилище Солнце-бога Коммагенский пантеон, построенный на горе Немруд Армянского Тавра царем

³¹ О празднике Триндез-Теарнындарадж см.: Մանուկեան Ա., Հայ եկեղեցու տոները, Թեհրան, 1969, 59-70, Առաքելյան-Խառատյան Հ., Հայ ժողովրդական տոները, Երևան, 2005, էջ 53-62:

³² Агат., 790; Хор., II, 14.

³³ О пантеоне и религии Ванского царства см.: Հմայակյան Ա., Վանի թագավորության պետական կրոնը, Երևան, 1990:

Антиохом I Ервандуни (69-34). На искусственном холме высотой 50 м, на своих огромных каменных тронах восседали статуи богов древнеармянского пантеона – Арамазда, Миһра, Ваһагна, коммагенской богини-покровительницы и самого Антиоха, а также символизирующих царскую власть льва и орла. Весь комплекс повторяется на восточном и западном склонах холма, и боги как бы встречают восход и провожают заход Солнца, тем самым свидетельствуя об особом почитании дневного светила в древности³⁴. Есть мнение, что митраизм был «одним из инструментов сохранения культурной самобытности и формирования национальной идентичности жителей Коммагены», и что «создание подобного инструмента стало особенно актуальным в период экспансии империалистического Рима»³⁵.

Сохранившийся на территории нынешней Армении единственный языческий храм, возвышающийся над Гарнийским ущельем, в величественной панораме гор, также посвящен богу солнца и считается миһрским. Храм был воздвигнут в I в. н. э., при Трдате I (63-88), в летней резиденции армянских царей в крепости Гарни, на месте более древнего святилища солярного бога, разрушенного во время нашествия римского полководца Корбулона в 57-60 гг. Храм привлекает строгими формами и изяществом декоративного убранства, он окаймлен 24 колоннами, символизирующими часы дня и ночи; ко входу поднимаются высокие каменные лестницы, а внутри есть жертвенный алтарь. На территории храмового комплекса расположена баня, с трубами холодной и горячей воды, а также с красивым мозаичным полом

³⁴ Тирацян Г.А., Культура Древней Армении (VI в. до н.э. – III в. н.э.), Ереван, 1988, с. 109-112; Аракелян Б.Н., Очерки по истории искусства древней Армении (VI в. до н.э. – III в. н.э.), Ереван, 1976, с. 20-24.

³⁵ Մարգարիտի Ե., укр. соч., с. 268.

с антропоморфными изображениями Моря и Океана. Недалеко от бани находится камень с греческой надписью³⁶.

Солнцепоклонничество продолжалось в Армении и в христианскую эпоху, когда действовали поклонники солнца Аревордик – „сыны солнца”³⁷.

Миhr нашел свое отражение и в фольклоре, в частности в эпосе «Сасунские храбрецы», в лице Mhera Старшего и Mhera Младшего. Миhr боролся со злыми и темными силами в образе черного быка, чтобы после ночи наступил светлый день, а Mher Старший убивает льва, чтобы его народ мог жить спокойно. После битвы со львом его называют „Львоубийца Mher”³⁸ – эпитет, который трактуется и как „львиный образ”, а Mher Старший изображался в образе льва – одного из символов солнца в армянском мифомышлении.

А заключение героя последней – четвертой ветви эпоса, Mhera Младшего в Ванской скале, уставшего от мирского зла и людских грехов, и его ожидаемое возвращение, когда миром будут править добро и довольствие, созвучны как с древним обычаем исполнения некоторых миhrских ритуалов в нишах скал и пещерах (в мистериях Митры ритуалы посвящения проводились

³⁶ Гарни I, Аракелян Б.Н., Результаты работы Гарнийской археологической экспедиции Института истории АН Арм. ССР; Гарни II, – Аракелян Б.Н., Результаты работы Гарнийской археологической экспедиции 1954-55 гг. (античный период), Ереван, 1957; Սահինյան Ա.Ս., Գառնիի և Գեղարդի ճարտարապետական հուշարձանները, Երևան, 1983; Տիրազյան Գ., նշվ. աշխ., էջ 114-174, տախտ. XLIII-XLIV:

³⁷ О них упоминает в XI в. Григор Пахлавуни Магистрос в своих «Письмах», в связи с движением тондракийцев (Կոստանեանց Կ., Սաղիստրոսի թղթերը, Ալեքսանդրապոլ, 1910, էջ 161):

³⁸ Սահունցի Դավիթ. հայկական ժողովրդական էպոս, Երևան, 1961; Сасунские удалцы, армянский народный эпос, избранные варианты, пер. К. Мелик-Оганджяна, Ереван, 2004; Daredevils of Sassoun, The Armenian National Epic, transl. by Leon Surmelian, London, 1964; Davit of Sassoun, Armenian Folk Epic by Nairi Zarian, transl. by A. Emin, Yerevan, 2012.

в пещерных храмах – митреумах)³⁹, так и с идеей умирающего-воскресающего (уходящего-возвращающегося) бога – Иисуса Христа. Образы Миһра, Старшего и Младшего Мһеров взаимосвязаны и перекликаются с образом Христа, а страшный суд грешников, который должен последовать приходу Помазанного Спасителя, напоминают правосудную функцию Миһра-Митры, находя отзвук и в спасительной деятельности Сасунских богатырей.

Согласно преданию каждый год, в ночь праздников Вознесения (арм. „hАмбарцум”) и Преображения (в народе называется Вардавар и являет собой праздник воды), когда, по народному поверию, звезды целуются, а горы приветствуют друг-друга, Мһер Младший на своем огненном коне выходит из Ванской скалы, объезжает небеса и землю, но убедившись, что земля не выносит его тяжести, вновь возвращается в Агравак'ар („Вороний камень”). В будущем Мһер выйдет оттуда, спасет „Армянский мир” и обоснует счастливое царство. В предании сохранилась идея о втором явлении бога Миһра и спасении им мира от зла. Согласно другому народному поверию в ночь на праздник Вознесения Господне открывается Дверь Мгера, и внутри виднеется Мгер Младший с Мечом кладенцем, и Крестом войны в руке, верхом на коне К'уркик Джалали, и странники могут войти внутрь и шепнуть свою заветную мечту свисающего с небес Колесу фортуны, и она обязательно сбудется⁴⁰. В этом предании отражена связь Миһра с высшими небесными силами, его посредническая роль между человеком и космосом. Вплоть до 20-го в. Дверь Мһера служил важным культовым центром для местных армян.

Все эти данные об образе армянского Миһра, сведения о его

³⁹ Культура Древнего Рима, тт. 1, 2, Москва, 1985, т. 2, с. 106.

⁴⁰ Ղանալանյան Ա., Միերի Դուռ, Ազոափաթար, Ափանդապատում, Երևան, 1969, էջ 39-41:

культовых центрах в разных частях Армении (Коммагене, Багайаридж, Ван, Гарни и др.), следы его культа в фольклоре (эпос) и отголоски в этнографической действительности (праздничная жизнь), говорят о древнейших местных корнях этого бога солнца, огня и покровителя домашнего очага, о важности идей спасителя, добра и правды, справедливости и договора в древних и средневековых религиозно-мифологических и мировоззренческих представлениях армян.

ԳՈՂԱՐ ՎԱՐԴՈՒՄՅԱՆ

ՀԻՆ ՀԱՅՈՑ ԱՐԵՎԱՅԻՆ ԱՍՏՎԱԾ ՄԻՀԻՐ՝ ԲԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐԴԱՐՈՒԹՅԱՆ ՀՈՎԱՆԱՎՈՐ ԱՄՓՈՓՈՒՄ

Հին հայոց կրոնա-դիցաբանական համակարգում առանձնահատուկ տեղ է գրավել արևային աստված Միհիրը՝ Միթրայի հայկական տարբերակը, որի պաշտամունքը միթրայականությունն անվամբ լայն տարածում է ունեցել Հին Աշխարհում: Միհրի կերպարը և պաշտամունքը հայոց մեջ նշանակալից է եղել: Նա դրսևորել է տարաբնույթ հատկանիշներ, դարերի ընթացքում արտացոլել բազում գործառույթներ՝ արևի, լույսի և կրակի աստված, բարու և արդարության հովանավոր, ընտանիքի պահապան, փրկիչ, միջնորդ մարդկանց ու տիեզերական ուժերի միջև և այլն:

Միհրի պաշտամունքի հետքեր կան Հայաստանի տարբեր վայրերում (Բազահատիճ, Կոմագենե, Վան, Գառնի և այլուր): Միհրականության հետագա արձագանքները տեսնում են դիցավեպում (Մեծ Մհեր, Փոքր Մհեր): Վերապրուկները ազգագրական

իրականության մեջ (տոնակարգ), վկայում են նրա կերպարի և պաշտամունքի տեղական արմատները և կենսունակությունը, ինչպես նաև՝ փրկչական, բարու և արդարության, դաշինքի և համաձայնության գաղափարների կարևորությունը հայոց հին և միջնադարյան մտածողության ու աշխարհընկալման մեջ:

GOHAR VARDUMYAN

THE ARMENIAN SOLAR GOD MIHR – THE PROTECTOR OF THE GOOD AND JUSTICE

SUMMARY

In ancient Armenian religion and mythology a special place occupies the solar god Mihr – the Armenian parallel of Mythra whose cult called Mythraism was widely-spread in the Ancient World. The image and worship of Armenian Mihr was significant, as his versatile image developed during many centuries demonstrating various manifestations: god of sun, light and fire, protector of the good and justice, family patron, saviour, mediator between people and cosmic powers. The traces of Mihr's cult in different places of Armenia (Bagaharich, Commagene, Van, Garni, etc.) his further echoes in folk epic (Mher Senior, Mher Junior) and survivals in ethnographical reality (feasts), testify the native roots and the vitality of his image and cult, as well as the importance of the ideas of saviour, the good and justice, treaty and agreement in ancient and mediaeval Armenian mentality and world-view.

ԱՐԾՐՈՒՆԻՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍԵՊԱԳԻՐ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԵՎ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐՈՒՄ

Արժրունիների մասին վկայություններ առկա են Ք.ա. IX–VIII դդ. սեպագիր արձանագրություններում և միջնադարյան աղբյուրներում: Մատենագիտական վկայությունները մի շարք տարակարծությունների տեղիք են տվել, ինչի արդյունքում որոշ հետազոտողներ Արժրունիներին վերագրել են խեթական¹, ասուրական² կամ մարական³ ծագում: Այնինչ, սեպագիր արձանագրությունների հաղորդած տեղեկությունները լրացնում են Արժրունիների մասին եղած վկայությունները և հաստատում Մովսես Խորենացու և Արժրունյաց տան պատմագիր Թովմա Արժրունու հաղորդածի իսկությունը:

Պատմահայրը հաղորդում է, որ Ք.ա. 681 թ. Ասորեստանի Սենեքերիմ թագավորի որդիները սպանելով իրենց հորը՝ ապաստանել են Հայաստանում. «Որդւոց նորա Ադրամելեքայ և Սանասարայ՝ եկին փախստական առ մեզ: Յորոց գմինն յարևմտից հարաւո աշխարհիս մերո, մերձ ի սահմանս նորին Ասորեստանի, բնակեցուցանէ Սկայորդին մեր քաջ նախնին»⁴:

Սույն դեպքերի վերաբերյալ «Աստուածաշնչում» նշվում է, որ հայրասպան որդիներն ապաստան են գտել Արարատի երկ-

¹ Адонц Н., Армения в эпоху Юстиниана, Ереван, 1971, с. 347.

² Չամչյանց Մ., Հայոց պատմություն, հ. Ա, Երևան, 1985, էջ 98:

³ Տե՛ս Խաչատրյան Ա., Հայաստանի սեպագրական շրջանի քննական պատմություն, Երևան, 1933, էջ 228:

⁴ Մովսես Խորենացի, Պատմութիւն Հայոց, Երևան, 1991, էջ 70:

րում⁵: Այս իրադարձությունները Գր. Ղափանցյանը բնութագրել է որպես ասորեստանցիների դեպի հյուսիս կատարած շարժման հեռավոր արձագանք⁶: Շարունակելով հետագա դեպքերի նկարագրությունը՝ Պատմահայրը նշում է. «Արդամոզանն յարևելից հարավոյ նորին կողման բնակեալ. ի սմանէ ասէ պատմագիրն լինել զԱրծրունիս և զԳնունիս»⁷: Հատկանշական է, որ Պատմահայրն Արծրունիների և Գնունիների նախահորը համարում է Արդամոզանին, այլ ոչ թե Սենեքերիմի որդի Ադրամելեքին, Արդամոզան անունն ունի հնդեվրոպական ծագում⁸: Սույն անցքերին անդրադառնալիս՝ Պատմահայրը նշում է, որ Արծրունիներին ու Գնունիներին ազգակից էին նաև Ադձնիքի բդեշխները: Այս կարգով ուրվագծվում է Հայկազունիների կրտսեր ճյուղից սերած ժառանգական իշխանությունների շղթան Վանա լճի շրջանում՝ Տուրուբերան, Վասպուրական, Ադձնիք նահանգներում:

Մովսես Խորենացին Արծրունիների և Գնունիների անվան ծագման վերաբերյալ հաղորդում է. «Եվ զԱրծրունիսդ գիտեմ՝ ոչ Արծրունիս, այլ արծուի ունիս, որք արծուիս առաջի նորա կրէին: Գիտեմ և զԳնունիդ գինի ունի»⁹: Պատմահայրը նշում է Հադամակերտում տարածված զրույցը Արծրունիների մասին. «Մանկան նիրհելոյ անձրև և արև հակառակեալ, և հովանի թոչնոյ պատանվոյն թալկացելոյ»¹⁰: Զրույցում արծիվն ընկալված է որ-

⁵ Տե՛ս Աստուածաշունչ, Մոսկվա, 1994, Եսայեայ 37, 38, էջ 913: Дьяконов И. М., Ассиро-вавилонские источники по истории Урарту (այսուհետև՝ АВИИУ), „Вестник древней истории“, Москва, 1951, N 3 (62).

⁶ Տե՛ս Капанцян Гр., Историко-лингвистические работы, т. II, Ереван, 1975, с. 101.

⁷ Մովսես Խորենացի, էջ 71:

⁸ Տե՛ս Խաչատրյան Ա., նշվ. աշխ., էջ 228:

⁹ Մովսես Խորենացի, էջ 111:

¹⁰ Նույն տեղում:

պէս Արծրունիների հովանավոր: Ս. Բարխուդարյանը գտնում է, որ Արծիբիդինի աստվածը դեռևս Ք.ա. IX-VII դդ. եղել է Արծրունիների աստվածությունը¹¹: Թովմա Արծրունին նա հաղորդում է. «Կրել արծուիս և բագէս. և ի գինարբուսն ի տեղի մատովակութեան յառաջացուցեալ ի գահ նախարարութեան»¹²: Պատմագիրն իր հայրենի կալվածքը համարում է Հադամակերտը, և Արծրունի տոհմանվան ծագման մասին բերում է մի քանի տարբերակներ, որոնք կրկին աղերսվում են արծվի հետ¹³: Այս առումով դիպուկ է Խ. Սամուելյանի բնորոշումը. «Որքան էլ Թ. Արծրունու մեկնաբանությունները մեզ թվան առասպելական կամ բռնագրոսիկ, այնուամենայնիվ նրանց մեջ կարմիր թելով է անցնում արծվի անվան ու պաշտամունքի հետ կապված մտապատկերը»¹⁴: Պատմիչն, իր տոհմաբանությունը կազմելիս, նշում է Արշեգ, Շավասպ և Մեհրուժան անունները, որոնք հնդեվրոպական ծագում ունեն, իսկ Մեհրուժան (Միթրոբուզան) անունը կրում էին միայն Արծրունիները¹⁵:

Բերված փաստերի համադրումը թույլ է տալիս կարծել, որ ըստ Մովսէս Խորենացու և Թովմա Արծրունու, Արծրունիների անվանումն աղերսվում է արծվի հետ: Այն ամենատարածված և աստվածացված թռչունն էր հին աշխարհի շատ ժողովուրդների առասպելներում. աստվածային կամքի իրականացնողն ու նշանակը: Արծիվը համարվում էր արևի, կրակի, երկնքի ու անմահության աստվածություն. Միջագետքում արծիվը խորհրդանշում էր շումերական Նինուրտա ռազմի աստծուն, Հին Հունաս-

¹¹ Տե՛ս Բархударян С. Г., Урартское происхождение армянского нахарарского рода Арцруни, „Исследования по истории культуры народов Востока“, Москва, 1960, с. 36.

¹² Թովմա Արծրունի և Անանուն, Պատմութիւն տանն Արծրունեաց, Երևան, 1985, էջ 64:

¹³ Տե՛ս նույն տեղում, էջ 73:

¹⁴ Սամուելյան Խ., Հին Հայաստանի կուլտուրան, հ. I, Երևան, 1931, էջ 173:

¹⁵ Տե՛ս Խաչատրյան Ա., նշվ. աշխ., էջ 229:

տանում՝ Ջնսին, Հոռմում՝ Յուպիտերին¹⁶: Լինելով արևի՝ կրակի աստվածություն, մի շարք լեգենդներում հանդիսանում մարդկանց կրակ տվող, ինչպես նաև՝ հերոսներին հովանավորող: Արծիվը հանդիսանում էր ներքին (անդրշիրիմյան) և վերին աշխարհներն իրար հետ կապող, որով էլ աղերսվում էր ջրի (ծովի) հետ¹⁷: Խուռիական առասպելներից մեկում նշվում է, որ Արանցախ (Տիգրիս) գետը փոխակերպվում է արծվի, և թռչում՝ Աքքադ¹⁸: Ենթադրելի է, որ արծվի պաշտամունքը լայն տարածում է ունեցել նաև Հայկական լեռնաշխարհում, սույն պաշտամունքի առաջին վկայությունները հանդիպում են դեռևս Ք.ա. III հազարամյակի (Քարաշամբ և այլն) հուշարձանների վրա¹⁹: Արծվի պատկերումը ավելի մեծ տարածում էր ստացել Ք.ա. IX-VII դդ. հայկական արվեստում: Արծվի գլխով և թևերով մարդ է պատկերված մեր ժամանակաշրջանի կրծքագարդերի (պեկտորալ) վրա, պատկերներում նա ձեռքերին ունի սրբազան հեղուկով անոթ և ծաղիկ: Կրծքագարդերի վրա պատկերված է *Արծիբիդինի* անունով աստվածը, կամ նրա քույրը: Արծիվ բառը հնդեվրոպական բառ է (այն պիտի ունեցած լինի *rg'irijō նախաձևը) և հենց հայկական ծագում ունի²⁰: «Քանի որ հայերենը միակ լեզուն է, որտեղ հնդեվրոպական g'-ն փոխարինվում է ծ-ի»²¹: Այս դեպքում կարելի է միևնույն հայկական բաղադրիչը տեսնել Արծիբի-

¹⁶ St' u Mify narodov mira, Moskva, 1992, t. II, c. 258.

¹⁷ St' u Մարտիրոսյան Հ. Ա., Գիտությունն սկսվում է նախնադարում, Երևան, 1978, էջ 41-42:

¹⁸ St' u Mify narodov mira, c. 260.

¹⁹ St' u Խաչատրյան Ժ., Արծվի տարբեր հորինվածքներով կնքադրոշմներ, գեմաներ և քանդակներ, «Պատմա-բանասիրական հանդես», 2003, N 2, էջ 167:

²⁰ St' u Джаукян Г. Б., Урартские заимствования в армянском языке, „Культурное наследие Востока“, Ленинград, 1985, с. 369.

²¹ Ջահուկյան Գ. Բ., Հայկական շերտը ուրարտական դիցարանում, «Պատմա-բանասիրական հանդես», 1986, N 1, էջ 49:

դինի աստծո անվան մեջ: «Առաջին ուղղականում այն պիտի ունենար ^DAršibidi ձևը, որը, ամենայն հավանականությամբ կազմված է ^DAršibi արմատից և di դիցանվանակերտ մասնիկից (հմմտ. ^DHal-di)»²²: Ոչինչ չի խանգարում *դի* տարրի մեջ տեսնել հնդեվրոպական ծագման հայերեն դիք «Աստված» բառի եզակի ձևը²³: Հետևաբար, ^DAršibidini դիցանունը կարելի է բացատրել որպես «Արծիվ-աստված»:

Արծիբիդինի աստվածը հիշատակվում է Վան քաղաքից ոչ հեռու գտնվող, Միերի դռան արձանագրությունում, որը գրված է Իսպոինիի (Ք.ա. 825-810թթ.) և Մինուայի (Ք.ա. 810-786 թթ.) անունով: Այն միակ ամբողջական արձանագրությունն է, որտեղ հիշատակված է բոլոր աստվածությունների պատվին կատարվող ամենամյա ծիսակարգը: Նշվում է, որ Արծիբիդինի աստծուն զոհաբերվում է ցուլ և 2 խոյ. «^Dar-ši-be-di-ni-e GUD II UDU ^{MES}»²⁴: Արծիբիդինի աստվածը պատկերվել է և՛ մարդու և՛ արծվի տեսքով, իսկ երբեմն էլ՝ երկուսի հատկանիշներով զուգորդված, թերևս, ընկալվելով որպես միջնորդ գլխավոր աստվածության՝ Խալդիի և այլ աստվածությունների միջև²⁵: Կարելի է փաստել, որ Հայկական լեռնաշխարհում, դեռ վաղնջական ժամանակներից, եղել է պատկերացում դիցաբանական թռչնակերպ սուրհանդակի մասին, նման առասպելական արծիվ *Անձուդին*՝ երկնքի և երկրի միջնորդի կերպարի Միջագետքում²⁶: Արծվի պաշտամունքը, ջրի հետ աղերսվելով, հանդիսանում էր նաև արարման առասպելաբանաստեղծական փոխակերպության

²² Հմայակյան Ս., Վանի թագավորության պետական կրոնը, Երևան, 1990, էջ 58:

²³ Տե՛ս Զահուկյան Գ. Բ., նշվ. աշխ., էջ 49:

²⁴ Меликишвили Г. А., Урартские клинообразные надписи (այսուհետև՝ УКН), Москва, 1960, N 27.

²⁵ Տե՛ս Հմայակյան Ս., նշվ. աշխ., էջ 59:

²⁶ Տե՛ս Мифы народов мира, Москва, 1991, т. I, с. 82.

արտահայտում: Վասպուրականում, Գարեգին Սրվանձտյանի գրառած հեքիաթները մեկում, արծիվն ընկալված է որպես էակ, որը կապում է հանդերձյալ աշխարհը երկրի հետ²⁷: «Արծիվ-աստծո» պաշտամունքը Վանա լճի շրջանում առնչվել է Արծրունիների՝ Հայաստանի հնագույն արքայական տներից մեկի հետ²⁸:

Հելլենիստական շրջանում արծվի պաշտամունքի նշանակությունն ավելի է ուժեղանում ու տարածվում՝ ձեռք բերելով արևի աստվածության լրացուցիչ հատկանիշներ: Արծիվը որպես գիևանշան է ծառայել Երվանդունիներին, որոնցից այն ժառանգել են Արտաշեսյանները. Տիգրան Մեծի թագի վրա՝ Արեգակի երկու կողմերում, պատկերված էին արծիվներ²⁹:

Արծվի հետ կապված կարևոր վկայություն կա Մինուա արքայի, Վան քաղաքից ոչ հեռու գտնված, արձանագրությունում, որտեղ նշվում է, որ արքան Արծիբինի, «[a]r-ši-bi-ni» ձիուն նստած ոստնել է մոտ 11 մետր, առաջին ուղղականում Արծիբինին ունենում է հենց Արծիբի ձևը³⁰: Ենթադրելի է, որ Մինուա արքան ձիու անունն աղերսել է արծվի հետ՝ ցանկանալով շեշտել որոշակի հատկանիշներ, և բառը հասկանալի է եղել արքայի և իր շրջապատի համար:

Արծիվ բառն իր արտացոլումն է գտել Միերի դրան արձանագրությունից հայտնի մեկ այլ տեղանվան մեջ. նշվում է, որ Արծունիունի քաղաքի աստվածներին զոհաբերվել է ցուլ և երկու խոյ. «^{URU}ar-šu-ni-u'-i-ni-ni GUD II UDU^{MES}», նույն արձանագրության մեկ այլ հատվածում նշվում է *Արծունի* ձևով «^{URU}ar-šu-

²⁷ Տե՛ս Սրվանձտեանց Գ. Վ., Մանանայ, Կ. Պոլիս, 1876, էջ 182-184:

²⁸ Տե՛ս Հմայակյան Ս., նշվ. աշխ., էջ 60:

²⁹ Տե՛ս Խաչատրյան Ժ., նշվ. աշխ., էջ 163:

³⁰ YKH, N 110.

ni-u'-ni GUD II UDU^{MES}»³¹: *Արծունիունի* բնակավայրը հիշատակվում է նաև Մինուա արքայի, Վանից արևելք գտնված, կրոնական բնույթի արձանագրության մեջ³²: Այն, որ *արծիվ* բառն ունեցել է կարևոր և գործածական նշանակություն ակնառու է. դա են փաստում սեպագիր արձանագրություններից մեզ հասած վկայությունները: Ասորեստանի տիրակալ Սալմանասար III-ը, որպես Արամեի արքայական քաղաք, հիշատակում է Արծաշքու բնակավայրը³³: Արծաշքու բնակավայրը հավանաբար գտնվել է Վանա լճի հյուսիսային ափերի մոտ՝ միջնադարյան Արճեշ քաղաքի մոտակայքում³⁴: Գ. Ղափանցյանն աղերսում է Արծաշքու ու Արծունի բնակավայրերի անունները միմյանց՝ հավանական կապ տեսնելով նրանց միջև³⁵:

Հատկանշական է, որ ըստ Մովսես Խորենացու, Արծրունիների ու Գնունիների տոհմական երկրամասերը գտնվել են «յարևելից հարավոյ»: Եվ հենց արձանագրությունների գտնվելու վայրը Վանա լճից հարավ-արևելք է, ինչն էլ հնարավորություն է տալիս *Արծունիունի* (*Արծունի*) բնակավայրը որոնելու վերոհիշյալ հատվածում, որտեղ էլ հավանաբար բնակավել են համանուն գարմի ներկայացուցիչները: *Արծունի* քաղաքը Գր. Ղափանցյանը դիտարկում է որպես «Ուրարտուի հարազատ քաղաք», որտեղից սերում են Արծրունի իշխանները և Վանի ու Մուծածիրի հետ համարում է պետության հիմնական միավորները³⁶: Ս. Երեմյանը Արծրունիների ժառանգական հայրենիքի տեղադրության մասին նշում է. «Աղբակ Մեծը Արծրունի տոհմի

³¹ УКН, N 27-15, 57.

³² Տե՛ս УКН, N 97:

³³ Տե՛ս АВНИУ, 2-4, N 27.

³⁴ Տե՛ս Пиотровский Б., Ванское царство (Урарту), Москва, 1959, с. 56.

³⁵ Տե՛ս Каланцян Гр., նշվ. աշխ., էջ 101:

³⁶ Ղափանցյան Գր., Ուրարտուի պատմությունը, Երևան, 1940, էջ 48:

ժառանգական հայրենիքն էր»³⁷: Այն գտնվում էր Աղբակ գետի վերին հոսանքի շրջանում, և գավառի կենտրոնն էր Հադամակերտ ավանը:

Ըստ Թովմա Արծրունու շարադրած տոհմական ավանդության՝ Արծրունիները գործուն մասնակցություն են ունեցել Ք. ա. VII-III դդ. Մերձավոր Արևելքում տեղի ունեցած քաղաքական անցքերին: Արծրունիների գործունեության վերաբերյալ նման տեղեկություններն ինչքան էլ նմանվեն ինքնավեհացնող ավանդազրույցների, միննույն ժամանակ վկայում են այս տոհմի խաղացած կարևոր դերի մասին: Այս հանգամանքի օգտին է խոսում նաև այն փաստը, որ Ք. ա. III-I դդ. Մոփքի թագավորական տան անդամների և Արծրունիների տոհմական շատ անձնանուններ նույնական են³⁸:

Բերված փաստերի և դրանց վերլուծությանը վերաբերող գրականության համալիր քննությունը ցույց է տալիս, որ Մովսես Խորենացին իրավացի է, երբ Արծրունիների տոհմանունն աղերսում է արծվի հետ և նրանց տոհմական հայրենիքը տեղադրում՝ Վանա լճից հարավ-արևելք: Արծրունի նախարարությունը սերում է Արծունիունի գարմից, որը դեռ վաղնջական ժամանակներից ապրում էր Վանա լճից հարավ-արևելք ընկած համանուն բնակավայրում՝ Արծվի պաշտամունքի գերակայությամբ: Հնդեվրոպական հիմնաշերտին պատկանող Արծիվ և Արծրունի անուններն ունեն հայկական ծագում: *Արծունիունի* բնա-

³⁷ Երեմյան Ս. Տ., Հայաստանն ըստ «Աշխարհացոյցի», Երևան, 1963, էջ 33: Ս. Բարխուդարյանը հակված է ասորեստանյան արքա Աշուրնաժիրպալ II-ի (Ք. ա. 883-859 թթ.) դեպի հյուսիս կատարած արշավանքը նկարագրող արձանագրության մեջ հիշատակվող Արբակու տեղանունը նույնացնելու հետազայի Աղբակ գավառի հետ (տե՛ս Бархударян С. Г., նշվ. աշխ., էջ 37):

³⁸ Marquart J., Eranšahr, Berlin, 1901, S. 176.

կապալը Վանի թագավորության ժամանակաշրջանում պետության առանցքային միավորներից մեկն էր:

VAHE SARGSYAN

EVIDENCE OF THE ARTSRUNIS IN CUNEIFORM INSCRIPTIONS AND MEDIEVAL SOURCES

SUMMARY

The history of the Artsruni family is a constituent part of the history of Armenian nakharar (princely) houses yet in the period of the Kingdom of Van (Ararat-Urartu). The facts of cuneiform inscriptions and medieval sources testify that since ancient times the Artsruni family lived to the southeast of Lake Van. Their center was the Artsruniuni site according to Biainian cuneiform writings. During the period of the Kingdom of Van it was one of the key units of the state. According to the source studies the family name of the Artsrunis is associated with the bird *artsiv* (eagle) and the Artsrunis were the bearers of this worship. In the pantheon of the Kingdom of Van *artsiv* (eagle) was presented as Artsibidini deity. The names *Artsiv* and *Artsruni*, belonging to the Indo-European layer, are of the Armenian origin.

СВИДЕТЕЛЬСТВА О РОДЕ АРЦРУНИ В КЛИНОПИСЯХ И СРЕДНЕВЕКОВЫХ ИСТОЧНИКАХ

РЕЗЮМЕ

История рода Арцруни – это составляющая часть истории армянских нахарарских (княжеских) домов, начиная с периода Ванского (Арарат-Урарту) царства. Факты, имеющиеся в клинописях и средневековых источниках, свидетельствуют о том, что Арцруни с древних времен жили на территориях к юго-востоку от озера Ван. Центром их рода была местность Арцуниуни, отмеченная в ванских клинописях. В период Ванского царства Арцуниуни был одной из главных единиц государства. Согласно исследованиям, родовое имя Арцруни отождествляется с птицей-орлом, которому и поклонялись Арцруни. В пантеоне Ванского царства орел выступал в ипостаси божества Арцибидини. Имена Арцив и Арцруни, принадлежащие к индо-европейскому пласту, имеют армянское происхождение.

ՍԱՀԱԿ ՊԱՐԹԵՎԻ ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԸ
ՈՐՊԵՍ ՀՈԳԵԻՈՐ ՎԵՐԱԾՆՈՒԹՅԱՆ ՍԿԻԶԲ

Հայոց եկեղեցու նախնական վարչական կազմակերպումը միանգամայն այլ հիմքերով է հաստատվել՝ էականորեն տարբերվելով հոռմեական եկեղեցու նախնական կազմակերպումից: Երբ Հոռմեական կայսրության մեջ քրիստոնեությունը պետական կրոն հռչակվեց, եկեղեցին արդեն իսկ ուներ հաստատուն կազմակերպվածություն, և նրան բավական երկար ժամանակ էր անհրաժեշտ պետական կարգերին հարմարվելու համար: Այլ էր իրողությունը Հայաստանում, որտեղ, ընդհակառակը, քրիստոնեությունը, չունենալով այն ամուր կազմակերպվածությունն ու համախմբվածությունը, ինչն առկա էր կայսրության մեջ, սկզբից նեթ կարծես ընդունվեց որպես դրսից եկած մի նոր կրոն՝ աստիճանաբար հարմարվելով պետական կարգերին: Հետագայում միայն, պետության քաղաքական անկախությունը կորցնելուց հետո, Հայոց եկեղեցին որոշակիորեն ընդունեց այն կարգավիճակը, ինչ որ հաստատվել էր Ընդհանրական եկեղեցում: Եկեղեցու կառավարումը Հայաստանում ուներ նույն այն կառուցվածքը և համակարգը, ինչպիսին տեսնում ենք Արևելքի մյուս եկեղեցիներում: Եկեղեցական ու վարչական բաժանումները խիստ համապատասխանում էին միմյանց:

Առանձին ուշադրության արժանի է այն հանգամանքը, որ Հայաստանում քրիստոնեության ընդունումն իրականացվում էր վերից վար, արքունիքից և նախարարական տներից դեպի հասարակ ժողովուրդը: Գրիգոր Լուսավորիչը սկզբնապես հոգ է տանում Տրդատ Մեծին և նրան շրջապատող իշխաններին դար-

ձի բերելու: Ազնվականները, ըստ ամենայնի, հետևում էին արքային: Հակառակ դրան, հասարակ ժողովրդի շրջանում դեռ երկար ժամանակ պահպանվում են հեթանոսության մնացուկները: Սրան մեծապես նպաստում էր նաև այն հանգամանքը, որ ուսուցիչներն ու քարոզիչները մեծ մասամբ հայերենին չտիրապետող հույներ և ասորիներ էին:

Սկզբնական ժամանակներում ճշմարիտ քրիստոնյա էին համարվում միայն նրանք, ովքեր կարողանում էին հունարենով կամ ասորերենով կաթողալ քրիստոնեական գրվածքները: Հասկանալի է, որ ազնվականության ծանրակշիռ մեծամասնությունը գուրկ էր նման կարողությունից, չհիշատակելով արդեն հասարակ ժողովրդի բացարձակ տգիտության մասին: Այսպիսով քրիստոնեությունը, որպես նոր կրոն, հասկանալի էր միայն ուսյալ ու կիրթ մարդկանց, նրանց, ովքեր տիրապետում էին հունարենին կամ ասորերենին: Այնուամենայնիվ սա չէր խանգարում, որ Հայոց եկեղեցին ընդգծված ազգային նկարագիր ունենար, ուշադրության արժանի մի հանգամանք, որ 4-րդ դարում իսկ նկատելի էր արդեն:

Մայրենի գրի բացակայությունը չափազանց դժվարացնում էր քրիստոնեական ուսմունքի ընկալումը, ինչն անհնար էր անտեսել: Սկսած Լուսավորչի ժամանակներից, մատուցվում էր մի նոր պաշտամունք, որի էությանը ժողովուրդը միայն բանավոր էր հաղորդակցվում, քանի որ մայրենի գրի բացակայության պայմաններում անկարելի էր այն հայերենով գրի առնել: Քրիստոնեության ընդունումից հետո շուրջ մեկ դար նոր կրոնի ընկալման շրջանակում կարևորագույն բացը հայերեն լեզվով քրիստոնեական աղոթքների յուրացման անհնարիությունն էր՝ ի հակակշիռ օտար լեզվի բռնադատության: Սկզբնական շրջա-

նում սոսկ բանավոր եղանակով նոր կրոնի յուրացման հանգամանքն է պատճառը, որ ժամագրքերում առկա սաղմոսների բացատրությունները որոշ չափով տարբերվում են Աստվածաշնչում պարունակվողներից: Այս տարբերությունն ապացուցում է Աստվածաշնչի առաջին և գործնական թարգմանությունը 4-րդ դարում, ապա երկրորդ և արդեն գրական թարգմանությունը 5-րդ դարում¹:

Անհրաժեշտ էր հասարակ ժողովրդի համար դյուրին դարձնել քրիստոնեական հասկացությունների ընկալման հնարավորությունը ու վերջնականապես նրան տոգորել քրիստոնեական հավատի՝ որպես միակ իրական ճշմարտության գիտակցությամբ: Գրերի գյուտը, այսպիսով, քրիստոնեության ընդունումից հետո երկրորդ հեղաշրջիչ իրադարձությունն էր ժողովրդի կյանքում, որը լիովին փոխեց երկրի մշակութային պատկերը և հոգևոր մթնոլորտը²:

Սահակ Պարթևի և Մեսրոպ Մաշտոցի գործունեությամբ մեկ դար առաջ պաշտոնապես ընդունված քրիստոնեությունը ժողովրդի համար դարձավ կենդանի գործուն ուժ: Մայրենի գրի շնորհիվ՝ ազգային ինքնությունը զարգացումը դրվեց ավելի հաստատուն հիմքերի վրա, որը նրան ընձեռում էր նոր միջոցներ և նոր բովանդակություն: Մայրենի գրի զորությամբ ժողովուրդն ուղղորդվեց դեպի հոգևոր բարգավաճման, լուսավորության և քրիստոնեական քաղաքակրթության ճանապարհը: Հիրավի, հայոց գրերի գյուտի և Ս. Գրքի հայերեն թարգմանությամբ վերջնականապես ավարտվեց հայ ժողովրդին քրիստոնյա դարձնելու գործը, որ սկսել էր Գրիգոր Լուսավորիչը: Հետևաբար, Սահակ

¹ Օրմանեան Մ., Ազգապատում, Խ. Ա. Էջմիածին, 2001, էջ 105:

² Արևշատյան Ս., Հայաստանում քրիստոնեության ընդունման պատմական նշանակությունը, Հայաստանը և քրիստոնյա Արևելքը, Երևան, 2000, էջ 22:

Պարթևի հայրապետության շրջանը մեր հոգևոր վերածնության սկիզբն է: Եթե եկեղեցու այսպես կոչված «նախասահակյան» շրջանում եկեղեցին առաջնորդվում էր սոսկ Ընդհանրական եկեղեցու կանոններով, իսկ ժամերգությունը կատարվում էր ժողովրդին անհասկանալի հունարեն կամ ասորերեն լեզուներով, ապա Սահակ Մեծի հայրապետության շրջանում ամեն ինչ դարձավ ընդգծված՝ ազգային լեզուն, գրքերը, եկեղեցին: Գրերի գյուտն անկախ դարձրեց Հայոց եկեղեցին³:

Աստվածաշնչի հայերեն ձեռագրերի բաղդատությունը ցույց է տալիս, որ սկզբնապես այն թարգմանվելով անպատճառ ասորերենից, տարիներ անց խնամքով սրբագրվել է հունարենի համեմատությամբ և ենթարկվել մանրակրկիտ վերստուգության: Դրանով է բացատրվում այն հանգամանքը, որ հնագույն ձեռագրերում գերակշռում են գլխավորապես նախնական՝ ասորերենից կատարված թարգմանության հետքերը:

Նշանակալից է աստվածաշնչյան բնագրի մշակության արժեքը, քանի որ նրա գաղափարներով են տոգորված թե՛ քրիստոնեական աստվածաբանությունը և թե՛ միջնադարյան գրականությունը, արվեստն ու գիտությունը:

Աստվածաշնչի թարգմանությունը ծնունդ է տվել հսկայածավալ մի բնագավառի՝ մեկնողական գրականության, որը հայ մատենագրության ամենատարածված և մեծարժեք ճյուղերից է: Անտարակույս, արևելաքրիստոնեական գրականությունների մեջ չկա մեկ ուրիշը, որ ինքնուրույն և թարգմանական մեկնություններով ավելի հարուստ լինի, քան հայ գրականությունը⁴:

³ Մելիք-Թանգեան Ն., Հայոց եկեղեցական իրավունքը, Բ գիրք /կազմակերպություն և կառավարություն/, Շուշի, 1905, էջ 100:

⁴ B. Otter, La Version arménienne du commentaire des Psaumes de Theodoret: Premier bilan, Revue des Etudes Arméniennes, t. 12, Paris, 1977, p. 169.

Սահակ Պարթևը հանդես է գալիս որպես բուն պարագլուխ և ղեկավար թարգմանիչների այն մեծ դպրոցի, որ մեր ազգային գրականության հիմքը դրեց: Վերջինս իր նախնական, «ոսկեդեն» կոչված շրջանում, բացառությամբ որոշ գործերի, գրեթե ամբողջությամբ թարգմանական է և հոգևոր բովանդակություն ունի:

Աստվածաշնչի թարգմանությունից հետո կարճ ժամանակում հայերեն են թարգմանվում ասորական և հունական հայրաբանության բոլոր կարևոր գործերը: Թարգմանական գրականությանը զուգահեռ, ստեղծվում է նաև ինքնուրույն գրականություն, իր բազմազան ժանրերով՝ աստվածաբանական, մեկնողական, ջատագովական, վարքաբանական, պատմողական և այլն: Անհրաժեշտ էր հարևան քրիստոնեական եկեղեցիներին ցույց տալ և ապացուցել Հայոց եկեղեցու հնությունը, ուղղափառությունը և ինքնուրույնության իրավունքը:

5-րդ դարի առաջին կեսին հոգևոր-եկեղեցական ոլորտում նկատելի է հունական ազդեցության ուժեղացումը: Աղբիանոսի տոհմի ներկայացուցիչներից հետո հենց Սահակ Պարթևի ընտրությունը պայմանավորված էր առաջին հերթին քաղաքական հանգամանքներով, քանզի Արշակունյաց քաղաքականությունը հատկապես 5-րդ դարասկզբին միտվում էր դեպի արևմուտք, իսկ Սահակ Պարթևը, Լուսավորչի տոհմի վերջին ներկայացուցիչը, իր հոգևոր դաստիարակությունը ստացել էր անշուշտ հունական ոգով: Տակավին Ներսես Մեծի հայրապետության շրջանում, փորձ էր արվել իրագործել հունական ոգուն համապատասխան եկեղեցա-ծիսական կարգերի փոփոխություն⁵, սա-

⁵ Ինչպես Մովսես Խորենացին է վկայում, «...զամենայն կարգս ուղղութեան հարցն իւրոց նորոգեաց, այլ և առաւել ևս, քանզի զբարեկարգութիւնս զոր էտես ի Յունաց

կայն 4-րդ դարի վերջին ազգային անկախության բավական ակներև նկրտումները, որոնք վերաբերում էին անգամ հոգևոր ոլորտին, չկարողացան ապահովել լիարժեք հաղթանակ: Սահակ Պարթևն, ահա, ավելի նպատակասլաց էր հաջողությունն ապահովելու գործում, ազգային ձգտումների մասին ունեցած իր խոհական հեռատեսությամբ և զգուշավոր ընթացքով⁶:

Սահակ Պարթևի գործուն ազդեցությամբ 5-րդ դարի գրականությունն իր ողովածությամբ ընդունեց արևմտյան՝ հունական բովանդակություն: Հայ ժողովրդին իր ներքին կյանքով ընդմիջտ կապելով քաղաքակրթության ձգտող Արևմուտքի հետ: Սահակ Պարթևի և Մեսրոպ Մաշտոցի գիտական և հոգևոր գործունեությամբ ամրապնդվեցին Հայոց և հունական եկեղեցիների հարաբերությունները: Հենց կաթողիկոսի գահընկեցության գլխավոր պատճառն ինքնին համակրանքն էր հունական կողմի նկատմամբ: Պարսից արքան Տիգրանում հորդորում էր Սահակ Պարթևին. «...միամիտ կալ ի ծառայութեան մերում, և ոչ խորհել իրս ապստամբութեան՝ պատրել ի մուլար հաւատակցութիւնն Յունաց...»⁷: Նա, հակառակ պարսից պետության կողմից հունարենի դեմ եղած արգելքներին, շարունակում էր իր աշակերտներին Հունաստան ուղարկել՝ նպատակ ունենալով այդպիսով Հայոց եկեղեցին որքան հնարավոր է սերտորեն շաղկապել արևմտաքրիստոնեական աշխարհի հետ:

աշխարհին, մանաւանդ ի թագաւորեալ քաղաքին, ի սմա նկարագրե՝, Մովսէս Խորենացի, Պատմութիւն Հայոց, քննական բնագիրը և ներածութիւնը Մ. Աբեղեանի և Ս. Յարութիւնեանի, լրացումները Ս. Սարգսեանի, Երևան, 1991, գիրք 3, գլ. Ի, էջ 279, N. Garsoian: Nerses le Grand, Basile de Césaree et Eustate de Sebaste, Revue des Etudes Arméniennes, t. 17, Paris, 1983, p. 166.

⁶ Գելգեր Հ., Փաւստոս Բիւզանդ կամ հայկական եկեղեցոյ սկզբնաւորութիւն, Վենետիկ, Ս. Ղազար, 1889, էջ 15:

⁷ Մովսէս Խորենացի, գիրք 3, գլ. ԿԵ, էջ 351:

Եփեսոսի 3-րդ տիեզերական ժողովից հետո հայրենիք վերադարձած Սահակ Պարթևի և Մեսրոպ Մաշտոցի աշակերտները, երկար տարիներ ուսանելով օտարության մեջ, հաղորդակցվել էին հոգևոր-եկեղեցական այնպիսի շրջանների հետ, որոնց համար դավանաբանական խնդիրներն ամենաբուռն հետաքրքրության և վիճաբանության առարկա էին: Բնականաբար, նրանց ուշադրությունից չէր կարող վրիպել գրական, կրոնափիլիսոփայական ու բարոյախրատական նյութերի այն հսկայական քանակությունը, որ 4 երկար դարերի ընթացքում ամփարվել էր Սուրբ Երրորդության և Մարդեղության գաղափարների շուրջ: Ս. Գրքի ընտիր հունարեն օրինակների հետ նրանք իրենց հետ բերում են ս. հայրերի երկեր, ինչպես նաև այսպես կոչված «նիկիական և եփեսոսական» կանոնները, որոնց ներքո հասկացվում էր առաջին տիեզերական ժողովից մինչև երրորդ տիեզերական ժողովն ընկած (325-431 թթ.) ավելի քան մեկ դարի ժամանակահատվածում, Ընդհանրական եկեղեցում ընդունված ինչպես դավանական, այնպես էլ կանոնական որոշումները: Այսպիսով, Հայոց եկեղեցին յուրացրեց այն ամենը, ինչ եկեղեցու պատմության մեջ շատ կարևոր տեղ գրավող մի դարաշրջանում արդեն իսկ հաստատվել էր Ընդհանրական եկեղեցում՝ դեպի Եփեսոսի ժողովի սկզբունքներն առաջնորդող ուղղությամբ:

Սահակ Պարթևի հայրապետության շրջանում հետագա ժամանակների համար շատ որոշակի գծվեց այն ուղին, որով այսուհետ Հայոց եկեղեցին պետք է ընթանար դավանական խնդիրներում, հաստատվեց այն շրջանակը, որի սահմաններում մեր եկեղեցին մնաց դարերի ընթացքում: Ու թեև հետագայում ընդունվեցին որոշ ոչ այնքան էական հավելումներ, եկեղեցին ամեննին չկորցրեց 5-րդ դարից ժառանգած իր ընդհանուր

պատկերը: Արդարև, Ս. Սահակ Մեծի հայրապետության շրջանը սկիզբ է կազմում ինչպես ազգային-եկեղեցական կյանքի տարբեր կողմերի, այնպես էլ Հայոց եկեղեցու դավանանքի պատմության համար⁸:

Հենվելով մեծ վարդապետների՝ Սահակ Պարթևի ու Մեսրոպ Մաշտոցի հեղինակության վրա՝ մեր եկեղեցին դարեր ի վեր շարունակեց ուղիղ և վավերական ընդունել միմիայն այն դավանությունը, որն ընդունվել էր դեռ նախքան Եփեսոսի ժողովը և հաստատագրվել վերջինիս որոշումների արդյունքում: Իսկ վերջինս, ինչպես հայտնի է, Մարդեղության խորհրդի ողղափառ դավանության սկզբունքները որոշելով, իրապես վերջնական ձևակերպում հաղորդեց քրիստոնեական դավանանքին: Շարունակաբար մերժվեց Եփեսոսի վարդապետությանը հակառակ յուրաքանչյուր նոր դավանաբանություն՝ իբրև խորթ և օտարամուտ:

Գրերի գյուտից հետո դպրոցներ բացվեցին միայն Հայաստանի Պարսից բաժնում: Խորենացու վկայությամբ, քանի որ Սահակ Պարթևը շարունակել էր հետնել Ներսես Մեծից հետո այլևս «չգործող ավանդույթին», այսինքն՝ իր ձեռնադրությունը չէր ստացել Կեսարիայից, Բյուզանդական կայսրության գերիշխանության ներքո գտնվող Հայաստանի արևմտյան հատվածում հայ ժողովուրդը ստիպված էր ուղղակիորեն պատժվել՝ զրկված լինելով նորաստեղծ գրով ազգային կրթություն ստանալուց. «...Որք ընդ ձեռնադրութեանն տուգանեցան, վիճակեալք յաթոռն Կեսարու, վարել Յունական դպրութեամբ...»⁹: Սակայն կա-

⁸ Կնիք Հաւատոյ Ընդհանուր սուրբ եկեղեցոյ յՈւղղափառ և Ս. Հոգեկիր Հարցն Մերոց դաւանութեանց յաւուրս Կոմիտաս կաթողիկոսի համահաւաքեալ, հրատարակութիւն Կարապետ եպիսկոպոսի, Ս. Էջմիածին, 1914, էջ LVII:

⁹ Սովսես Խորենացի, գիրք 3, գլ. ԾԴ, էջ 328:

թողիկոսն իր խորագիտությամբ և հստակատեսությամբ գտավ ճանապարհը:

Ինչպես հայտնի է, հինգ պատրիարքությունների՝ Հռոմի, Կոստանդնուպոլսի, Ալեքսանդրիայի, Անտիոքի և Երուսաղեմի գլուխ կանգնած գերագահ պատրիարքները՝ կամ ինչպես այդ ժամանակ էին ասում՝ եպիսկոպոսները, համարվում էին իրարից անկախ, հավասար: Սա մի տեսակ արտացոլված էր այսպես կոչված «հինգ զգայարանների տեսության» մեջ, համաձայն որի պատրիարքները նմանվում էին հինգ զգայարանների, որոնցով կառավարվում էր «մարմինը եկեղեցւոյ», և նրանցից յուրաքանչյուրն իր հերթին ուներ գործունեության սեփական ոլորտը: Սակայն այս տեսությունը իհարկե չէր համապատասխանում իրականությանը: Չխոսելով արդեն հռոմեական եպիսկոպոսի առանձնահատուկ դիրքի մասին, արնեյան չորս պատրիարքությունների մեջ նս երբևէ չէր եղել հավասարություն: Կոստանդնուպոլսի 2-րդ տիեզերական ժողովի 2-րդ կանոնով, ի թիվս այլ հարցերի, նաև, վճռվել էր, որ « Կոստանդնուպոլսացւոյ եպիսկոպոսին ունել զպատիւ աւագութեան յետ Հռոմայ եպիսկոպոսին, վասն զի է եւ սա Նոր Հռոմ»¹⁰: Այսպիսով, մեծ նշանակություն ուներ Կոստանդնուպոլսի պատրիարքի՝ որպես մայրաքաղաքի եպիսկոպոսի, նշանակալից դիրքը: «Նեղոսի Դոքսապատոի կարգագրութիւն...» աղբյուրի մեջ այս առիթով հետաքրքիր մի փաստի ենք հանդիպում. «այլ թեպէտ եւ է պատրիարգ (իմա՝ Կոստանդնուպոլսի պատրիարքը – Կ. Մ.) սակայն ձեռնադրէ զնա Արակլիոյ (իմա՝ Հերակլիայի – Կ. Մ.) մետրա-

¹⁰ Կանոնագիրք Հայոց աշխատասիրությամբ Վ. Հակոբյանի, Խ. Ա. Երևան, 1964, էջ 276:

պաւլիտ»¹¹: Այնուամենայնիվ, Կոստանդնուպոլսի հայրապետները, որպէս տիեզերական պատրիարքներ, ձգտում էին գերիշխանություն սահմանել բոլոր մետրոպոլիտությունների վրա, չնայած վերջիններիս ընդդիմությանը: Այս տեսակետից հատկապէս հատկանշական էր Կեսարիայի մետրոպոլիտության համառությունը: Սահակ Պարթևը, 5-րդ դարի սկզբին հայ ժողովրդի համար բավական դժվարին այս իրավիճակում, նպաստավոր համարելով Կոստանդնուպոլսի պատրիարք գերիշխանական նկրտումներն ու պահանջները, նպատակահարմար է համարում դիմել վերջինիս՝ բողոքելով Կեսարիայի մետրոպոլիտությունից: Հայոց հայրապետը թղթեր է առաքում Թեոդոս կայսերը, Ատտիկոս պատրիարքին և Հայաստանի բյուզանդական հատվածում հռոմեական զորքերի հրամանատար Անատոլիոսին¹²: Բյուզանդական կայսրին ուղղված թուղթը՝ խնդրագրի իրերանգավորմամբ, «...յուսալով ի գրթածութիւն բարերարութեանդ քոյ՝ դիմեալ ապաւինեցայ յոտս ձեր...»¹³, յուրատեսակ հպատակության դրոշմն էր կրում, իսկ պատրիարքին ուղղվածը զուտ իրավասական գերիշխանության տեսակետից առավելություն էր տալիս Կոստանդնուպոլսի պատրիարքների պահանջներին: Վերջիններիս համար անշուշտ բավական հաճելի էր Արևելաքրիստոնեական արդեն իսկ կայացած եկեղեցիներից մեկի՝ Հայոց եկեղեցու հայրապետի թղթերը: Խորենացու վկայությամբ, Թեոդոս կայսրը մեղադրում է Սահակ Պարթևին, թե նա, արհամարհելով հունաց ճարտարներին, հայոց գրերի գյուտն Ատրիքում է որոնել «Եւ առաւել յայսմ մեղադիր եմք, զի արհամար-

¹¹ Նեղոսի Դոքսապատոի Կարգագրութիւն պատրիարքական աթոռոցն, հրատարակութեամբ Ֆրանց Ֆիսկի, Վաղարշապատ, 1902, էջ 20:

¹² Մովսէս Խորենացի, գիրք 3, գլ. ԾԷ, էջ 333-335:

¹³ Նույն տեղում, էջ 333:

հեալ զճարտարօքս, որ ի մերում քաղաքիս՝ յԱսորեաց ոմանց խնդրեցէր զիմաստից զիւտս»¹⁴: Քողարկված նույն դժգոհությունը նկատելի է նաև պատրիարքի թղթում: Ուղղակիորեն չարտահայտելով իր դժգոհությունն, այնուհանդերձ նա մատնացույց է անում հույներից, հունարենից և հունական մշակույթից կաթողիկոսության վերջին շրջանում խույս տալու հայրապետի ջանքերը, կշտամբելով, թե իր նախորդների՝ Գրիգոր Լուսավորչի և Ներսես Մեծի օրինակով, չի հակվել հունաց կողմ. «...ազատ ի մեղադրանաց ոչ թողումք, որ ոչ կանխաւ յիշատակեցէր զսիրելութիւն Գրիգորի և Ներսիսի երանելեաց քոց հարց»¹⁵: Անտարակույս, պատրիարքն ինքն էլ քաջ գիտակցում էր, որ մայրենի գրի և ազգային ինքնագիտակցության պահպանման պահանջն էր իրականում ուղղորդում հայրապետին: Պատրիարք Ատտիկոսը միաժամանակ կշտամբում է հայոց կաթողիկոսին, թե նա, անպատասխան թողնելով Ծննդյան և Աստվածահայտնության տոների տարանջատ կատարմանը վերաբերող Հովհան Ոսկեբերանի կողմից ուղարկված գրությունը, և չանսալով նշանավոր հոգևորականի հորդորներին, շարունակել է հայոց մեջ նույնությամբ կիրառել հիշյալ տոների միասնական կատարումը.¹⁶ «Եւ

¹⁴ Թուղթ Թեոդոսի առ Սահակ, նույն տեղում, էջ 335:

¹⁵ Թուղթ Ատտիկեայ առ Սահակ, նույն տեղում, էջ 336:

¹⁶ Աստվածահայտնության տոներ, ինչպես հայտնի է, սկզբից ևեթ արևելքում կատարվում էր հունվարի 6-ին՝ նշանավորելով միաժամանակ թե՛ Քրիստոսի ծննդյան և թե՛ Հորդանանի մկրտության ժամանակ նրա աստվածային հայտնության տոներ: Պետք է հատուկ ընդգծել, որ եթե սկզբնական շրջանում առավել զորեղ էր մկրտության հիշատակը, ապա մարդեղության խորհրդի կարևորությանը զուգընթաց, տոնի նշանակությունը գլխավորապես բարձրացավ որպես Ծննդյան տոն: 4-րդ դարի վերջերից եետգետե քրիստոնեության մեջ մուտք գործեց Հռոմի սովորությունը, համաձայն որի Քրիստոսի ծննդյան և ոչ աստվածահայտնության, տոներ կատարվում էր 14 օր առաջ՝ դեկտեմբերի 25-ին: Հռոմեական այս սովորույթը սկզբնապես կիրառվեց Կոստանդնուպոլսում, ապա Անտիոքում, Եգիպտոսում, իսկ 451 թ. Քաղկեդոնի ժողովից հետո նաև Երուսաղեմում և Պաղեստինում: Եվ միայն Հայոց

առաւել ընդ այս զարմանամք, եթէ զիա՞րդ թողեր զաղբիւրն եկեղեցւոյ, զհայրն մեր սուրբ Յովհաննէս... Եւ ձեր զանց զնովաւ արարեալ՝ կամեցույք ի սահանական ջրոց զփափագ ծարաւոյն յագեցուցանել...»¹⁷:

Այսպիսով, Սահակ Պարթևի ջանքերով, մայրենի գիրը հասու դարձաւ նաև Արևմտյան Հայաստանում: Խորենացու վկայությամբ «...Երագապէս վարդապետեցին զկողմն արևմտեայ, որպէս զարևելեայն...»¹⁸: Արդարև, Սահակ Պարթևի մեծագույն գործերից մեկն այս կարևորագույն նվաճումը եղաւ՝ արդեն իսկ քաղաքականապէս պառակտված Հայաստանը փրկվեց նաև եկեղեցականապէս պառակտվելուց: Դժվար է պատկերացնել Հայաստանի՝ բյուզանդական հատվածում գտնվող ժողովրդի ճակատագիրը, որը կանգնած էր ազգային լեզուն և եկեղեցին կորցնելու վտանգի առաջ, քանզի քաղաքականապէս տարանջատվելուց հետո հենց լեզուն և եկեղեցին էին նրան տակաւին կապում արևելյան հատվածին: Եվ այս գործում չափազանց կարևորվում է Սահակ Պարթևի դերը, որի շնորհիւ եկեղեցական բարձրագույն աստիճանը ստանում է մի այնպիսի նշանակություն և հեղինակություն, որպիսին բնավ չենք տեսնում մինչ նրա կաթողիկոսական շրջանը:

եկեղեցին է, որ արևելքի հնավանդ սովորության համաձայն, Քրիստոսի ծննդյան և աստվածահայտնության տոներ միասին կատարում է միևնույն օրը՝ հունվարի 6-ին:

¹⁷ Սովսես Խորենացի, գիրք 3, գլ. ԾԷ, էջ 336:

¹⁸ Նույն տեղում:

THE PERIOD OF PATRIARCHATE OF SAHAK PARTEV AS A START OF SPIRITUAL REGENERATION

SUMMARY

After acceptance of Christianity as the state religion, the invention of the Armenian script was one more mighty impulse in the life of Armenian people; it had completely changed the cultural image and the spiritual atmosphere of the state. The invention of the Armenian script and the translation of the Bible had finally completed the process of Christianization of Armenian people, which had started from time of St. Gregory the Illuminator.

The period of Patriarchate of Sahak Partev was the start of spiritual regeneration. Just in this time for the following ages had become clear the dogmata, which is fallen in the basic of theology of the Armenian Church. One of the important deeds of the Catholicos was that owing to him politically divid Armenia had been saved from ecclesiastical division, as the Church, the national language and the Armenian script had united the separated two parts of the Armenian people.

ПЕРИОД ПАТРИАРШЕСТВА СААКА ПАРТЕВА КАК НАЧАЛО ДУХОВНОГО ВОЗРОЖДЕНИЯ

РЕЗЮМЕ

Изобретение письменности в начале V века после принятия в 301 г. христианства в качестве государственной религии было ещё одним мощным импульсом в жизни армянского народа. Армянская письменность и перевод Библии окончательно завершили процесс христианизации армянского народа, начавшийся со времён Св. Георгия Просветителя.

Период патриаршества Саака Партева (387-436) стал началом духовного возрождения. Именно в этот отрезок времени для последующих веков более конкретизируется догматика, которая легла в основу богословского учения Армянской Церкви. Одним из значительных деяний Католикоса было то, что благодаря ему политически расколота Армения избежала церковного разъединения. Церковь, национальный язык и письменность объединили две расколотые части армянского народа.

ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՀԱՅ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ «ՄԱՐ»
ԵՎ «ՔՈՒՐԴ» ԷԹՆՈՆԻՄՆԵՐԻ ՆՈՒՅՆՈՒԹՅԱՆ
ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

Մարերի (մեդացիների) և քրդերի գենետիկական մերձավորության հարցն արդի քրդագիտության կարևոր խնդիրներից է¹: Արևելագետ Վ. Մինորսկին հակված է քրդերի և մարերի միջև նման ընդհանրություն տեսնելուն²: Չհամաձայնելով Վ. Մինորսկու, ինչպես նաև քրդերի ու մարերի միջև գենետիկական կապ տեսնող մյուս հետազոտողների հետ՝ Գ. Ասատրյանը գրում է. «Չկա լուրջ հիմք առաջարկելու հատուկ գենետիկական մերձավորություն հյուսիսարևմտյան իրանական խմբի շրջանակում. այս հնագույն լեզվի և քրդերենի միջև: Վերջինս չի կիսում նույնիսկ մարերի լեզվի ընդհանուր անցումային առանձնահատկությունը, այսինքն՝ *hw->f զարգացումը: Կենտրոնական իրանական բարբառները, և դրանցից առաջին հերթին Քաշանի տարածաշրջանում գտնվողները, ինչպես նաև ազարիական բարբառները (այլ կերպ անվանում են հարավային թաթական) հավանաբար միակն են, որ կարող են հավակնել մարերի լեզվի ուղիղ շառավիղները լինելուն: Ընդհանուր առմամբ քրդերենի և մարերի լեզվի նմանությունն ավելի սերտ չէ, քան մարերի լեզվի և հյուսիսարևմտյան խմբի մյուս լեզուների՝ բելուջերենի, թալի-

¹ Sté u Basile Nikitine, Les Kurdes, Étude sociologique et historique, Paris 1956, p. 8-12:

² Minorsky V., Les origines des Kurds, Actes du XXe Congrès international des orientalistes, Louvain: 1940, 143-152. Sté u նաև՝ Asatrian G., Prolegomena to the Study of the Kurds, "Iran and the Caucasus" 13, 2009, p. 21.

շերենի, հարավկասպիական լեզվի, գաղաերենի, գորանիի միջև մերձակցությունը»³:

Թեպետ Վ. Մինորսկու տեսությունն ընդունելի համարել չի կարելի, սակայն գրեթե բոլոր քուրդ հեղինակները դրա համոզված պաշտպաններն ու հետևորդներն են⁴:

Մարերի և քրդերի գենետիկ ու լեզվական ընդհանրության տեսության կողմնակիցների վեճերից մեկն այն է, որ հայ պատմիչները «քուրդ» և «մար» էթնոնիմները նույնական են համարում: Այսպես Հեթում պատմիչը գրում է. «Ապա տիրեցինք Մարք, որք ռամկօրեն Քիւրտք կոչին»⁵: Վ. Մինորսկին կարծում է, որ քրդերին նշելու համար դեռևս Մովսես Խորենացին է դիմել «մար» էթնոնիմին⁶: Հարցեր են առաջանում՝ ինչո՞ւ են հատկապես XIV-XVII դդ. հայ մատենագիրները քրդերին «մար» էթնոնիմով կոչել. այն մարերի ու քրդերի հնարավոր մերձակցության արտացոլո՞ւմն է հայ պատմագրության մեջ, թե՞ պայմանավորված է աշխարհագրական ու այլ գործոններով, և վերջապես, հայկական սկզբնաղբյուրներում մարերի մասին հիշատակությունները ո՞ր դարից սկսած կարող են վերաբերել քրդերին:

Խնդրո առարկա հարցերի պատասխանները ստանալու համար անհրաժեշտ է վեր հանել հայ պատմագիրների երկերում մարերի և Մարաստանի մասին տեղեկությունները, ինչպես նաև հասկանալ էթնիկական եզրաքանության առանձնահատկությունները:

³ Նույն տեղում:

⁴ Նույն տեղում:

⁵ Հեթում Պատմիչ Թաթարաց. Յեղեալ ի լատին օրինակէ ի հայ բարբառ, ի ձեռն Սկրտիչ արժողակալ վարդապետի Աւգերեան, Վենետիկ, 1842, էջ 72:

⁶ Տե՛ս Monorsky V., Studies in Caucasian history, London, 1953, p. 127-128.

V-XI դդ. հայկական սկզբնաղբյուրներում քուրդ էթնանվանման բացակայությունը,⁷ և միայն XII դ. ի հայտ գալը, տարակուսանք է առաջացրել մասնագետների շրջանում, քանզի, ինչպես գրում է Հ. Մարգարյանը. «...քրդական էթնոսը, գոնե արաբական շրջանում և հետո, անվերապահորեն ծանոթ է եղել հայ հեղինակներին»⁸:

Իրանական բարձրավանդակի հյուսիսարևմտյան շրջանում բնակվող մարական ցեղերը Ք. ա. VI դարի կեսերին Աքեմենյանների հարվածներից կորցնելով պետականությունը՝ սկսեցին աստիճանաբար հեռանալ պատմության թատերաբեմից: Հարավ-արելքից Հայաստանին սահմանակից իրանական այս հնագույն ժողովրդի հետ շփման արդյունքն է Հայկական լեռնաշխարհում «մար» անունը պարունակող տեղանունների առկայությունը: Դրանցից առաջինը Մեծ Հայքի Կորճայք աշխարհի Տմորիք և Կորդուք գավառների արևելյան կողմում գտնվող «Մարաց ամուր աշխարհ» գավառն է⁹, իսկ մյուսը՝ Մեծ Հայքի Վասպուրական աշխարհում գտնվող Մարքն է: Ըստ ճշտված տեղադրության՝ Մարք գավառը գտնվել է Արաքսից հարավ, մաս է կազմել Վասպուրական աշխարհի, և զբաղեցրել Պարսպատունիք ու Մարանդ գավառների կամ հետագայի Ղարադաղի տարածքը¹⁰:

⁷ Ուշագրավ է, որ «Քուրդ» անձնանունն ավելի վաղ է վկայված հայկական սկզբնաղբյուրներում, քան «քուրդ» էթնոնիմը: Տե՛ս Աճառյան Հ., Հայոց անձնանունների բառարան, Կ. Ե, Երևան, 1962, էջ 223-224:

⁸ Մարգարյան Հ. Գ., Զաքարյանների ծագման ավանդությունը միջնադարյան հայ պատմագրության մեջ, «Պատմա-բանասիրական հանդես», 1992, № 2-3, էջ 146:

⁹ Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, Կ. III, Կ-Ն, Երևան, 1991, էջ 724:

¹⁰ Նույն տեղում, էջ 746:

Միջնադարյան հայ մատենագրության մեջ բացի Մեծ Հայքի Մարք և Մարաց ամուր աշխարհի գավառներից բազմիցս հիշատակվում է նաև Մարաստանը (Մեծ և Փոքր Մարաստանները)¹¹:

«Մար» էթնոնիմի և Մարաստանի մասին հայկական աղբյուրների վկայությունների քննությունը սկսենք V դ. հայ մատենագիտության հուշարձաններից, մասնավորապես Մովսես Խորենացու «Հայոց պատմություն»-ից՝ հասկանալու համար, թե դրանք կարո՞ղ են վերաբերել քրդերին, թե՞ ոչ: Պատմահայրը մարերին անդրադառնում է երկու անգամ, և եզակի հայ պատմիչներից է, որ օգտագործում է նաև մեղացի ձևը («գաւառաւ մեղիացի»¹², «գկոդմամբք Մեղացւոց» (մաղացւոց)¹³), որը հունական փոխառություն է՝ ի տարբերություն «մարի»՝ իրանականի¹⁴: Մովսես Խորենացին, պատմելով հայոց Տիգրան արքայի և Մարաստանի տիրակալ Ածդահակի մասին, բազմիցս հիշատակում է մարերի երկրի անունը՝ Մարքը¹⁵ (Մարաստան): Խորենացին նկարագրում է նաև Ածդահակի սերունդների բնակեցումը Հայաստանում. «...բնակեցուցանէ յարեւելեայ ուսոյ մեծի լերինն մինչեւ ի սահմանս Գողթան, որ են Տամբատ, Ոսկիողայ, Դաժգոյնք, եւ որ այլք առ եզերք գետոյն դաստակերտք, յորոց մինն է

¹¹ Նույն տեղում, հ. I, Ա-Դ, Երևան, 1986, էջ 373-374: Մովսես Խորենացին Մարմեո և Մարաց մարզ տեղանունները և Մուրացեան իշխանական տան անունները ևս կապում է մարերի հետ: Այդ կապակցությամբ տե՛ս Սարգսյան Գ., Հատուկ անունների ստուգաբանությունը Մովսես Խորենացու «Հայոց պատմության» մեջ, «Պատմաբանասիրական հանդես», Երևան, 1998, № 1-2:

¹² Մովսես Խորենացի, Հայոց Պատմութիւն, Մատենագիրք Հայոց (այսուհետ՝ ՄՀ), հ. Բ, Ե. դար, Անթիլիաս, 2003, էջ 1809 (այսուհետ՝ Մովսես Խորենացի):

¹³ Նույն տեղում, էջ 1825-1826:

¹⁴ Տե՛ս Գևորգյան Հ., Հայ մատենագրության մեջ մար ցեղանվան վկայությունների և մեկ տարբերակի շուրջ, Բանբեր Մատենադարանի, № 20, Երևան, 2014, էջ 57-58:

¹⁵ Մովսես Խորենացի, էջ 1810, 1823:

Վրանջունիք, մինչեւ հանդէպ ամրոցին Նախճաւանու. եւ գերիս
աւանսն, գիւրամ, եւ զՋուղայ եւ զԽորշակունիս իսկ ի միւս կող-
մանէ գետոյն. զքոյոր դաշտն, որոյ զգլուխն Աժդանական, մինչեւ
ցնոյն ինքն ամուրն Նախճաւանու»¹⁶: Այնուհետև Խորենացին
պատմում է, որ հայոց Վաղարշակ թագաւորի օրոք Աժդահակի
սերունդները Հայաստանում կարգվում են «երկրորդ թագաւո-
րութեանն»¹⁷: Մյուս դէպքում, նկարագրելով Արտաշեսի (հետա-
գայի հայոց Արտաշես I թագաւորը) և Երվանդունի վերջին ար-
քա Երվանդ IV-ի գինաբախումը, նա Արտաշեսին կոչում է մար
(զՄարըդ Արտաշես¹⁸), ինչպես նաև հիշատակում է մարաց գոր-
քերի մասին («Եւ մարաց զաւրացն անցեալ ի կողմն երուանդա-
կան գնդին, նսեմաւ ի վերայ դիականցն բանակէին»¹⁹):

V դ. հայ պատմիչներից Կորյունը, անդրադառնալով Մես-
րոպ Մաշտոցի գործունեությանը և նրա՝ Գողթն գնալուն, օգտա-
գործում է «ի կողմանս մարաց» արտահայտությունը («Եւ յորժամ
ի նոսա զբանն կենաց սերմանեալ, յայտնի իսկ բնակչաց զաւա-
ռին նշանք մեծամեծք երեւէին, կերպակերպ նմանութեամբ դի-
ւացն փախստական լինելով՝ անկանէին ի կողմանս Մարաց»²⁰):
Կորյունի ու հետագա հեղինակների հիշատակած «ի կողմանս
Մարաց»-ը կարելի է թարգմանել ինչպես մարերի կողմերում,
այնպես էլ Մարքի կողմերում: Անտարակույս է, որ գործ ունենք
սոսկ տեղանվան հետ, ինչը դիպուկ նկատել է Մ. Աբեղյանը՝
գրելով. «Այս անվան տակ չպիտի հասկանալ Մեծ կամ Փոքր
Մարաստանը, այլ Արաքսից հարավ գտնվող լեռնային Ղարա-

¹⁶ Նույն տեղում, էջ 1827-1828:

¹⁷ Նույն տեղում, էջ 1858:

¹⁸ Նույն տեղում, էջ 1912:

¹⁹ Նույն տեղում, էջ 1921:

²⁰ Կորիւն, Վարք Մեսրոպայ Վարդապետի, ՄԶ, հ. Ա, Ե. դար, Անթիլիաս-Լիբանան, 2003, էջ 235:

դադը, որը հին Հայաստանի Վասպուրական նահանգի մասն էր կազմում, Պարսպատունիք և Մարանդ գավառները: Հնում այստեղ մարեր (մեդացիք) են բնակվելիս եղել, դրա համար այդ կողմերի անունը մնացել է «Մարք»²¹: Նա, այնուամենայնիվ, նախընտրել է Կորյունի երկրի այս հատվածը թարգմանել ոչ թե «Մարքի կողմերը», այլ «Մարերի կողմերը»²²:

Կորյունը վկայում է նաև Մեսրոպ Մաշտոցին հայոց Վարդաշակ թագավորի տված հրամանի մասին՝ գնալ և ուսուցանել «զխուժադուժ կողմանսն Մարաց»: Պատմիչը հայտնում է, որ տեղի ժողովուրդը խոսում էր «կոշտ ու կոպիտ լեզվով»²³ (...«զխուժադուժ կողմանսն Մարաց, որք ոչ միայն վասն դիւական սաստանայակիր քարուցն ճիւղադութեան, այլ եւ վասն խեցբեկագոյն և խոշորագոյն լեզուին՝ դժուարամատոյցք էին»²⁴): Տվյալ պարագայում խոսքը Մարքի տեղական բարբառի մասին է, որը տարբերվում էր Միջնաշխարհի՝ գրական դարձած լեզվից: Կորյունի այս տվյալը համադրելի է Թովմա Արծրունու՝ Խուրի լեռնականների բարբառի բնորոշման հետ, ըստ որի այն անհասկանալի էր ու դժվար²⁵:

Վ դ. պատմագիրներից Ագաթանգեղոսը, պատմելով Քրիստոսի առաքյալների քարոզչության մասին, տասնյակ տեղանունների շարքում թվում է նաև Մարաստանը. «...*իսկ այլքն սփռեցան ընդ ամենայն տիեզերս. ոմանք ի Մարս եւ ոմանք ի*

²¹ Կորյուն, Վարք Մաշտոցի, աշխարհաբար թարգմանությունը առաջաբանով և ծանոթագրություններով՝ Մ. Աբեղյանի, Երևան, 1979, էջ 62, ծան. 56:

²² Նույն տեղում, էջ 27:

²³ Նույն տեղում, էջ 32:

²⁴ Կորիւն, Վարք Մեսրոպայ Վարդապետի, էջ 242:

²⁵ Թովմա Արծրունի և Անանուն, Պատմութիւն տանն Արծրունեաց, քննական բնագիրը, առաջաբանը և ծանոթագրությունները Մ. Հ. Դարբինյան-Մելիքյանի, Երևան, 2006, էջ 136:

*Պարթևս. ոմանք ի խուժաստան եւ ոմանք ի Միջագետս...»²⁶։
Մեկ այլ տեղում նա գրում է. «... և յԱմդացոց քաղաքէն մինչեւ
առ Մծբին քաղաքաւ, քերէր առ սահմանաւքն Ասորւոցն առ Նոր
Շիրական երկրաւն, և առ Կորդուաւք մինչեւ յամուր աշխարհն
Մարաց...»²⁷։ Ակնհայտ է, որ դարձյալ գործ ունենք տեղանվան
հետ. առաջին դեպքում բուն Մարաստանի, իսկ երկրորդ դեպ-
քում՝ Մեծ Հայքի Մարաց ամուր աշխարհի գավառի։*

Փափստոս Բուզանդը, նկարագրելով հայ Արշակունիների
իշխանության տակ գտնվող երկրամասերում IV դ. բռնկված
ապստամբության և սպարապետ Մուշեղ Մամիկոնյանի ուժե-
րով դրանք ճնշելու մասին՝ «Յադագս Մարաց» ենթավերնագրի
տակ գրում է. «Եւ գկողմանսն Մարաց, քանզի եւ նոքա ապս-
տամբեցին յարքայէն Հայոց, հարկանէր զնոսա մեծապէս եւ զե-
րէր զքազումս ի նոցանէն, եւ մնացորդացն դնէր հարկս, եւ առ-
նոյր պանդանդս»²⁸։ Քանի որ ապստամբությունը Մարաց ամուր
աշխարհում է եղել, ակնհայտ է, որ խոսքը պատմության ասպա-
րեզը վաղուց լքած մարերի մասին չէ։ Ուստի պատմիչը նկատի է
ունեցել Մարաց ամուր աշխարհի գավառի բնակչությանը։ Կար-
ծում ենք՝ «Յադագս Մարաց»-ի տակ պետք է թարգմանել ոչ թե
«Մարերի մասին», այլ «Մարքի մասին», ինչպես Ստ. Մալխաս-
յանցը «Յադագս Կորդուաց, Կորդեաց եւ Տմորեացը» թարգմանել
է «Կորդուքի, Կորդիքի և Տմորիքի մասին»²⁹։

²⁶ Ագաթանգեղոս, Պատմութիւն Հայոց, ՄԶ, հ. Բ, Ե. դար, Անթիլիաս-Լիբանան, 2003, էջ 1632։

²⁷ Նույն տեղում, էջ 1706։

²⁸ Փափստոս Բուզանդ, Պատմութիւն Հայոց, Մատենագիք Հայոց, հ. Ա, Ե. դար, Անթիլիաս-Լիբանան, 2003, էջ 389։

²⁹ Փափստոս Բուզանդ, Հայոց պատմություն, թարգմանությունը և ծանոթա-
գրությունները Ստ. Մալխասյանցի, Երևան, 1987, էջ 321։

V դ. մատենագիրներից Եղիշեն, ով ծանոթ է թե՛ իրանական և թե՛ կովկասյան մի շարք ժողովուրդների, չի վկայում ո՛չ մարերի, ո՛չ էլ քրդերի մասին: Նրանց մասին ակնարկ չունի նաև ոսկեդարի պատմիչներից Ղազար Փարպեցին:

Այսպիսով՝ մարերի մասին V դ. պատմագրական տեղեկությունները Մովսես Խորենացու գրչին են պատկանում: Մարերի մասին նրա հիշատակությունները Հայաստանի ու Մարաստանի միջև հեռավոր շփումների անդրադարձն են, և վերաբերում են հայոց հնագույն պատմության այն ժամանակահատվածին, երբ գոյություն ուներ մարական պետությունը (Ք. ա. VIII դարի սկզբից կամ VII դարից վերջից մինչև Ք.ա. 550 թ.³⁰):

Եթե նույնիսկ ընդունենք, որ Ք. ա. 201 թ. Արտաշեսի ու Երվանդի զորքերի միջև տեղի ունեցած ճակատամարտին մասնակցել են նաև մարերը (կարծում ենք, Մովսես Խորենացու երկում տվյալ դեպքում մարերի հայտնվելը պետք է կապել հեղինակի՝ Արտաշեսին մարական ծագում վերագրելու իրողության հետ), ապա պետք է ամրագրենք, որ պատմահայրը, ով իր «Պատմություն»-ը շարադրել է մինչև 439-440 թթ. և ծանոթ է իր դարաշրջանի աշխարհի հեռու ու մոտիկ ժողովուրդներին, նախորդող վեց դարերի մասին պատմելիս՝ այլևս չի հիշատակում մարերին: Այսինքն՝ մարերը հեռացել էին պատմության ասպարեզից, իսկ քրդերը, որոնց հայ պատմիչները հետագայում պետք է «մար» կոչեին, դեռևս չէին հայտնվել Հայաստանում և հարակից շրջաններում, այդ իսկ պատճառով աղբյուրներում չեն հիշատակվում: Այս պարագայում Վ. Մինորսկու վարկածը, թե Մովսես Խորենացին քրդերին նշելու համար դիմել է «մար» երևոնիմին, անհավանական է և անհամոզիչ:

³⁰ St u Media, Encyclopædia Iranica, <http://www.iranicaonline.org/articles/media>:

V դ. վերոնշյալ հայ մյուս մատենագիրները, որոնք շարադրել են հիմնականում IV-V դդ. պատմությունը, չեն հիշատակում մարերին, այլ արձանագրում են միայն Մարաստան, Մարք գավառ, Մարաց ամուր աշխարհ տեղանունները, որոնց հիմքը «մար» էթնոնիմն է: Դա պատահական չէ, քանի որ հայկական շատ տեղանուններ կազմված են որևէ ցեղի անվան ու հոգնակիակերտ «ք» մասնիկի միջոցով: Հետագայում տեղանունը պահպանվում է, եթե նույնիսկ դրա հիմքում ընկած էթնիկական տարրը դադարում է գոյություն ունենալ: Ընդհանրապես, ցեղանունով և «ք» հոգնակիակերտ ցուցիչով կազմված տեղանունները հայ մատենագրության մեջ բազմաթիվ են. հմմտ.՝ Հայք = Հայաստան, հայեր, Պարսք = Պարսկաստան, փարսեր կամ պարսիկներ, Վիրք = Վրաստան, վրացիներ և այլն, հմմտ. նաև՝ Տայք, Խաղտիք, Կորդուք, Գուգարք, Ուտիք և այլն³¹:

V դ. հայ պատմագիրների երկերի ուսումնասիրությունը միաժամանակ ցույց է տալիս, որ թեպետ դրանցում մարերի մասին վկայություններ չկան, սակայն Մարաստանը որպես տեղանուն նրանց շատ հայտնի է, և այն կիրառում են գրեթե բոլորը: *Հայկական սկզբնաղբյուրներում հին տեղանունների պահպանվելու մասին է վկայում այն հանգամանքը, որ նույնիսկ XIV դ. վերջում հայերեն ձեռագրերի հիշատակարաններում դեռ պահպանվել է Ասորեստան երկրանունը*³², իսկ Ղրիմը հայ գրիչները կոչում են՝ Հոնաց աշխարհ³³:

Հարցի քննության շահերից ելնելով՝ անդրադառնանք «քուրդ» էթնոնիմի ամենավաղ հիշատակություններին: Կարծիք-

³¹ Տե՛ս Գևորգյան Հ., նշվ. աշխ., էջ 58:

³² ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, կազմեց Լ. Ս. Խաչիկյան, Երևան, 1950, էջ 628:

³³ Նույն տեղում, էջ 358:

ներ կան, որ Մեծ Հայքի Կորդուք³⁴ գավառի անվան հիմքում ընկած է «քուրդ» էթնոնիմը, սակայն դա արնելագիտության մեջ անընդունելի տեսակետ է³⁵: «Քուրդ» անվանումն առաջին անգամ հանդիպում է VI-VII դդ. պահլավերեն աղբյուրներում³⁶, սակայն վիճելի է՝ այն էթնիկակա՞ն, թե՞ սոցիալական նշանակությամբ է գործածված: Ա. Փոլադյանի կարծիքով՝ արաբական և այլ աղբյուրների ուսումնասիրությունները ցույց են տվել, որ «քուրդ» եզրը միջնադարում ունեցել է երկու նշանակություն. էթնոնիմից բացի այն նշանակել է «անասնապահ» ու «քոչվոր»: Ընդ որում՝ «քուրդ» էթնոնիմը՝ «անասնապահ», «քոչվոր» նշանակությամբ առաջին հերթին կիրառվել է հենց իրանական ժողովուրդների շրջանում: Այսպես՝ Համզա Իսֆահանին (X դ.) վկայում է, որ պարսիկները դելմնիկներին անվանում էին «Թաբարիստանի քրդեր», իսկ արաբներին՝ «Սուրիստանի քրդեր»: Ա. Փոլադյանը եզրակացրել է, որ իրանական ազդեցությամբ «քուրդ» բառն իր այս նշանակությամբ փոխանցվել է նաև արաբ հեղինակներին³⁷: Գ. Ասատրյանի պնդմամբ էլ՝ պահլավերեն աղբյուրները հստակորեն ցույց են տալիս, որ նախախլամական Իրանում «քուրդ»-ն ունեցել է սոցիալական նշանակություն և տևական ժամանակում է վերածվել էթնոնիմի³⁸:

³⁴ Կորճայք նահանգի և նրա Կորդուք գավառի մասին տե՛ս Հարությունյան Բ. Հ., Մեծ Հայքի վարչա-քաղաքական բաժանման համակարգն ըստ «Աշխարհացոյց»-ի, Երևան, 2001, էջ 271-309:

³⁵ Տե՛ս Basile Nikitine, նշվ. աշխ., էջ 3:

³⁶ Տե՛ս Asatrian G., նշվ. աշխ., էջ 22-28:

³⁷ Поладян А. П., Курды в VII-X веках (по арабским источникам), Ереван, 1987, էջ 11:

³⁸ Asatrian G., նշվ. աշխ., էջ 24-27: Մեկ այլ տեսության համաձայն՝ «քուրդ» էթնոնիմը կապվում է Պոլիբիոսի և Ստրաբոնի հիշատակած Συρτι (կուրտի) ցեղանվան հետ: Գ. Ասատրյանը, ելնելով կուրտիների և վաղնջական քրդերենի կրողների նախնական բնակության վայրերից, անհավանական է համարում կուրտիների ժամանակակից քրդերի նախնիները լինելը: Բայց կարծում է, որ կուրտիների պատմական ասպարեզից անհետանալուց հետո նրանց էթնոնիմը պահպանվում է տա-

Ուստի պատահական չէ, որ V դ. հայկական աղբյուրներում «քուրդ» էթնոնիմը բացակայում է: Բացի այդ քրդագիտության մեջ գերիշխող տեսակետի համաձայն՝ վաղնջական քրդերենի կրողների նախնական բնակավայրերը Իրանի Ֆարս նահանգի հյուսիսային շրջաններում են³⁹, այսինքն՝ Հայկական լեռնաշխարհի սահմաններից և հայ-քրդական հնարավոր շփման գոտուց բավական հեռու: Քրդերի մասին լռում են նաև նախաարարական շրջանի հունական, լատինական, ասորական, ինչպես նաև այլ լեզուներով սկզբնաղբյուրները⁴⁰:

Հաջորդ դարերի ընթացքում Իրանի խորքերից քրդերն սկսում են շարժվել դեպի հյուսիս, ինչը հնարավոր է դարձնում հայ պատմագրության մեջ նրանց մասին վկայությունների ի հայտ գալը: Այս առումով ուշագրավ է Սեբեոսի՝ VII դ. արաբական նվաճումների մասին պատմող հետևյալ դրվագը. «Յայսմ ամի ամստամբեցան Մարք ի ծառայութենէն Իսմայելի և սպանին զիշխանն հարկապահանջին արքային Իսմայելի, ապաւեն և թիկունս իւրեանց արարին զամուրս աշխարհին Մարաց, զանտառս խորաձորս, զվիհս, զվիմուտս, և զխորաձորս դժնդակս՝ որ զգետովն Գազայ և զլերամբն Մարաց, զժիր և զքաջ ազգացն զաւրութիւնս, որ բնակեալ էին ի նոսա, Գելն և Դելումնք»⁴¹: Այսպիսով՝ Աժդահակի և Տիգրանի մասին խորենացիական պատումից հետո VII դ. հայ պատմագրության մեջ կրկին հանդիպում

րածաշրջանի լեզվական դաշտում որպէս հասարակ անուն՝ «ավագակ, քոչվոր ռազմիկ, անասնապահ» նշանակությամբ: Գ. Ասատրյանը դրանով է բացատրում VI-VII դդ. պահլավերեն տեքստերում «քուրդ» անվան սոցիալական, ոչ թէ էթնիկական նշանակությամբ կիրառումը:

³⁹ Նույն տեղում, էջ 30-34:

⁴⁰ Поладян А. П., նշվ. աշխ., էջ 14:

⁴¹ Պատմութիւն Սեբեոսի, աշխատասիրությամբ Գ. Վ. Աբգարյանի, Երևան, 1979, էջ 172:

ենք «մարերին», որոնք ապստամբել են արաբական տիրապետության դեմ: Այդժամ, երբ պատմության ասպարեզից հեռացել էին Իրանի հյուսիս-արևմուտքի հնագույն բնակիչները՝ մարերը, հարց է ծագում, թե «մար» էթնոնիմի տակ ինչ է նկատի ունեցել պատմիչը:

«Աշխարահացոյց»-ի⁴² օրինակներից մեկում Կասպից ծովի հարավային սահմանների նկարագրության մեջ կարդում ենք. «... *հարաւոյ Մարաւք, Գեղաւք, Դիղմովք և Կասքիւք*», ինչը Սեբեոսի երկի հրատարակիչ Գ. Աբգարյանին թույլ է տվել ենթադրելու, որ գործ ունենք այն նույն միջավայրի հետ, ինչ նկարագրում է Սեբեոսը: Ըստ նրա՝ պատմիչի նախնական բնագրում եղել է. «*զլերամբն Մարաց զժիր և զքաջ ազգացն զաւրութիւն, որ բնակեալ էին ի նոսա, Գելն և Դելումնք*», և որ գելերը գիլանցիներն են, իսկ դելումները՝ դայլամիտները (դելմնիկ)⁴³: Սեբեոսի այս վկայությունը հայկական աղբյուրներում հանդիպող առաջին տեղեկությունն է, որ վերագրելի է քրդերին: Հետաքրքիր է, որ արաբական աղբյուրները արդեն VII դ. Ատրպատականում հիշատակում են «քրդերի»⁴⁴, սակայն, ինչպես տեսանք, այն կարող է օգտագործված լինել սոցիալական նշանակությամբ: Դատելով Սեբեոսի նկարագրությունից՝ ապստամբության վայրը Ատրպատականն է (Մարաստան): Այդ իսկ պատճառով հակված

⁴² Հայագիտության մեջ «Աշխարահացոյց»-ի աղբյուրների, ստեղծման ժամանակի և հեղինակի հարցերում կան տարաբնույթ տեսակետներ: Մի բան պարզ է, որ մեզ հասած օրինակները ժամանակի ընթացքում մեծ փոփոխությունների են ենթարկվել: «Աշխարահացոյց»-ի մասին տե՛ս Հարությունյան Բ. Հ., նշվ. աշխ., էջ 5-55:

⁴³ Պատմութիւն Սեբեոսի, նշվ. աշխ., ծան. 653, էջ 360-361:

⁴⁴ Փոլադյան Ա. Պ., Քրդերը և ռազմաքաղաքական անցքերը Ատրպատականում X դարի առաջին կեսին (ըստ արաբական աղբյուրների), «Պատմա-բանասիրական հանդես», 1984, № 2, էջ 87, տե՛ս նաև Поладян А. П., նշվ. աշխ., էջ 21:

ենք մտածելու, որ «մար» էթնոնիմով Սեբեոսը հիշատակել է տեղի իրանական բնակչությանը, բայց ոչ քրդերին:

Մովսես Կաղանկատվացին, կրկնելով Խորենացու ավանդած հայոց վաղնջական պատմության որոշ դրվագներ, նույնպես հիշատակում է մարերին⁴⁵: Նա ևս օգտագործում է Մարաստան տեղանունը՝ «*ի սահմանս Մարաց աշխարհին*»⁴⁶: Թե՛ Կաղանկատվացին, և թե՛ VIII դ. պատմիչ Ուխտանեսը⁴⁷, այնուամենայնիվ, իրենց դարերի անցքերը շարադրելիս, չեն հիշատակում ո՛չ «մար», ո՛չ «քուրդ» էթնոնիմները:

VIII դ. պատմիչ Ղևոնդ վարդապետը թեպետ հիշատակում է Մարաց ավանները «գաւանս Մարաց»⁴⁸ և Մարաստանը («անցանէր ընդ կողմն Պարսից և Մարաց») տեղանունները⁴⁹, սակայն չի գործածում «մար» և «քուրդ» էթնոնիմները:

X դ. հեղինակ Հովհաննես Դրասխանակերտցին ոչինչ չի հաղորդում ո՛չ քրդերի, ո՛չ էլ մարերի մասին:

IX և հատկապես X դ. Ատրպատականում քրդական տարրի աշխուժացման և ռազմաքաղաքական վերելքի ժամանակաշրջանն է⁵⁰: Այս պայմաններում պետք է շփումներ լինեին այնտեղ հաստատված քրդերի ու Վասպուրականի միջև, և սպասելի էր, որ դրանք կարտացոլվեին Թովմա Արծրունու ու Անանունի երկում:

⁴⁵ Մովսես Կաղանկատուացի, Պատմութիւն Աղուանից աշխարհի, ՄՀ, հ. ԺԵ, Ժ. դար, Պատմագրութիւն, Գիրք Բ, Երևան, 2011, էջ 33-36:

⁴⁶ Նույն տեղում, էջ 178:

⁴⁷ Ուխտանես Եպիսկոպոս, Պատմութիւն Հայոց, ՄՀ, հ. ԺԵ, Ժ. դար, Պատմագրութիւն, Գիրք Բ, Երևան, 2011:

⁴⁸ Ղևոնդ Վարդապետ, Պատմաբանութիւն Ղեւոնդեայ Մեծի Վարդապետի Հայոց, ՄՀ, հ. Զ, Ը. դար, Անթիլիաս-Լիբանան, 2007, էջ 738:

⁴⁹ Նույն տեղում, էջ 105:

⁵⁰ Փոլադյան Ա. Պ., էջ 87:

Խոսելով Վասպուրականի թագավոր Գագիկ Արծրունու մասին՝ Արծրունյաց տան պատմիչը գրում է. «Նա ի սիրտս բռնաւորաց Բաբելացւոց, Մարաց եւ Պարսից, Յունաց եւ բարբա-
րոսաց հրացեալ եւ յարաշարժ բնեո՞⁵¹», «... սկսեալ ի Մարաց եւ
Պարսից եւ զբոլոր Ատրպատական⁵²», «... հասեալ ի վերայ Վաս-
պուրական աշխարհիս պարսկական խուժանն ըստ ազգս ազգս
եւ ըստ քաղաքս քաղաքս ի Մարաց եւ ի Պարսից...⁵³»: Մէկ այլ տեղ
էլ նշում է. «Եւ զայն լուեալ չարահնար ազգին Իսմայէլացւոց,
Մարաց եւ Պարսից եւ բոլոր Ատրպատականի արանց պատերազ-
մողաց՝ առհասարակ խաղացին պատերազմունք ի վերայ քա-
ջին Գագկայ իշխանին մեծի»⁵⁴:

X դ. Ատրպատականում մեծ ազդեցություն ձեռք բերած քրդական Ռավադյան⁵⁵ տոհմի՝ Հայաստան կատարած արշա-
վանքներին անդադառնում է Ստեփանոս Տարոնեցի պատմիչը:
Խոսելով Մամլան Ռավադյանի արշավանքի մասին՝ նա գրում է.
«... զբազմութիւն զաւրացն Պարսից եւ Մարաց»⁵⁶: Դժվար է ասել՝
հեղինակը նկատի ունի Մարաստանը եւ Պարսկաստանը, թե՞
մարերին ու պարսիկներին: Նա այնուհետ հիմնականում օգտա-
գործում է «այրուձին Պարսից», «պարսիկք», «պարսկաստա-
նեայք» արտահայտությունները՝ կարծես թե հասկացնելով, որ
արշավողները ոչ միայն «պարսիկներ» են, այլն պարսկաստան-

⁵¹ Թովմա Արծրունի եւ Անանուն, նշվ. աշխ., էջ 334:

⁵² Նույն տեղում, էջ 326:

⁵³ Նույն տեղում, էջ 285:

⁵⁴ Նույն տեղում, էջ 309:

⁵⁵ Ռավադյանների մասին տե՛ս Տեր-Ղևոնդյան Ա., Արաբական ամիրայությունները Բագրատունյաց Հայաստանում, Երևան, 1965, էջ 178-183:

⁵⁶ Ստեփանոս Տարոնեցի Ասողիկ, Պատմութիւն Տիեզերական, ՄՀ. հ. ԺԵ, Ժ. դար, Գիրք Բ, Երևան, 2011, էջ 818:

ցինք⁵⁷: Նշենք, որ Հովհաննես Դրասխանակերտցու այն տեղեկությունը, որ Հայաստանում հաստատված օտար իշխողներից Ջահաֆն «ի պարսիկ տոհմէ», Ա. Տեր-Ղևոնդյանին «հիմք է տալիս ենթադրելու, որ նրանք (Ջահաֆյանները- Գ. Ե.) գուցե քրդական ծագում ունեցած լինեն»⁵⁸:

XI դ. մատենագիրներից Արիստակես Լաստիվերտցին նույնպես լռում է «մար» և «քուրդ» էթնոնիմների մասին: Սակայն սելջուկ-թյուրքերի վերաբերյալ նրա հիշատակումներն արտահայտում են հայ պատմագրության մեջ գերիշխող այն մտայնությունը, ըստ որի, ազգերին անվանում էին այն երկրի անունով, որտեղ վերջիններս բնակվում և որտեղից արշավում են: Այսպես՝ պատմիչը թեև քաջատեղյակ է սելջուկ-թյուրքերի մասին և գիտի, որ նրանք ի «Թուրքաստանէ»⁵⁹ են, այսինքն՝ սերում են այնտեղից, սակայն նրանց երբևէ չի կոչում թուրքեր կամ օրինակ թուրքեստանցիներ: Լաստիվերտցին սելջուկ-թյուրքերին համառորեն անվանում է պարսիկներ՝ «...յորժամ ելին Պարսիկք եւ այլ խուժադուժ ազգք հեթանոսաց...»⁶⁰, իսկ սելջուկյան սուլթան Ալփ Արսլանին անվանում է «զթագաւորն Պարսից»⁶¹: Արիստակես Լաստիվերտցին թեև վստահ է, որ արշավողները պարսիկներ չեն, և նույնիսկ զարմացած նկարագրում է այս նորահայտ ժողովրդի բնութագրական գծերը, սակայն «պարսիկ» անվանելով, արձանագրում է նրանց՝ Պարսկաստանում իշխելը և այդտեղից Հայաստան արշավելը: Հետաքրքիր է, որ նա իր «Պատմության»՝ ողբի նմանվող հիշատակարանում, որում ամ-

⁵⁷ Նույն տեղում, էջ 819-820:

⁵⁸ Տեր-Ղևոնդյան Ա., նշվ. աշխ., էջ 66:

⁵⁹ Պատմութիւն Արիստակիսի Լաստիվերտցոյ վարդապետի վասն անցիցն անցելոց ի յայլասեռն ազգաց, որ շուրջ զմեւք են, ՄԶ, ԺԱ դար, Երևան, 2012, էջ 563:

⁶⁰ Նույն տեղում, էջ 567:

⁶¹ Նույն տեղում, էջ 628:

փոփում է սելջուկ-թյուրքերի արշավանքները, նրանց մասին գրում է. «... և էլ հուր հարաւային...»⁶²: Սա մեկ անգամ ևս ցույց է տալիս, որ պատմիչը կարևորում է սելջուկների՝ հարավից գալը, իսկ հարավն ինչպես այժմ, այնպես էլ Լաստիվերտցու ժամանակներում նույնացվում էր Պարսկաստանի հետ:

Աղբյուրագիտական նյութի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ մինչև X դ. և նույնիսկ X դ. հայ-քրդական շփումները դիպվածային էին և հիմնականում սահմանափակվում էին քրդական ցեղերի կամ առանձին իշխողների դեպի Հայաստան կատարած արշավանքներով և ոչ թե հայ ու քուրդ բնակչության ակտիվ ու անմիջական շփումներով: Լեզվաբանական տվյալները հաստատում են, որ քրդերենում հայերենից փոխառյալ առաջին հատուկենտ բառերը կարող են վերաբերել միայն XI-XII դարերին⁶³, ինչը նշանակում է, որ վաղնջական շրջանում և անգամ X դարում հայ-քրդական սերտ շփումներ չեն եղել:

Սեբեոսից հետո Կադանկատվացին, Ուխտանեսն ու Ղևոնդը իրենց դարաշրջանի պատմությունը շարադրելիս բացարձակ չեն հիշատակում «մար» էթնոնիմը: Վիճակը փոխվում է հատկապես VIII-IX դդ., երբ Իրանի խորքերից քրդերը շարժվում են դեպի հյուսիս⁶⁴ և Ատրպատականում՝ հնագույն Մարաստանի մի մասում, հզորություն ձեռք բերում և X դ. արշավում դեպի Հայաստան⁶⁵: Ուստի հավանական է, Հարավային Հայաստանին

⁶² Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Ե-ԺԲ դդ., աշխատասիրությամբ Ա. Ս. Մաթևոսյանի, Երևան, 1988, էջ 113:

⁶³ Asatryan G., նշվ. աշխ., էջ 35:

⁶⁴ Նույն տեղում, էջ 34:

⁶⁵ Հենց X դ. էլ հայերեն ձեռագրերի հիշատակարաններից մեկում հանդիպում ենք «քուրդ»⁶⁵ բառին: «Թ: սպիտակ աղբնիս ու հիս այլարիս ի վայրենորդին տվաք վկայութիւն քիրդին: ու Սիմաւոնի ու: դ: պատատ փողոցին արտին ենք տվել ի քուրդ ենք տվել»: Տե՛ս Յուզակ Հայերեն Ձեռագրաց Սանասարեան Վարժարանի ի

քաջածանոթ Ասողիկի և հատկապես Թովմա Արծրունու ու Անանունի Մարաց աշխարհի ու մարերի մասին հաճախադեպ հիշատակություններն արդեն իսկ վերաբերում են քրդերին: Այսինքն, հայ պատմիչները քրդերին «մար» են անվանում, ոչ թե այն պատճառով, որ նրանք ու մարերը ցեղային ու լեզվական տեսանկյունից ունեցել են որոշ ընդհանրություններ, այլ այն, որ քրդերին հանդիպում են մի երկրում, որը միջնադարյան հայ պատմագրության մեջ հայտնի էր Մարաստան անվամբ:

Բացի «մար» էթնոնիմից՝ քրդերին նշելու համար, ինչպես տեսանք, գործածվել է նաև «պարսիկ» անվանումը: Հիշենք Ասողիկի վկայությունները Ռավադյանների մասին: Մատթեոս Ուտհայեցին էլ, խոսելով Շադդադյան քրդական տոհմից Աբու-ալ-Ասվարի մասին, նրան համարում է «գօրավարն Պարսից»⁶⁶: Թե՛ Մարաստանը, թե՛ Պարսկաստանը, գտնվում են Հայաստանից հարավ, ինչ էլ քրդերին այս երկու էթնոնիմներով նշելու պատճառն է:

Այսպիսով՝ չենք կարող պնդել, թե Սեբեոսից մինչև Ասողիկ ընկած ժամականահատվածում քրդերին «մար» էթնոնիմով մատնանշելն ամրագրվել էր հայ պատմագրության մեջ և դարձել քարացած ավանդույթ, և որ քրդերին նշելու համար հայ հեղինակները դիմել են միմիայն «մար» էթնոնիմին: Դրա վառ ապացույցն է Մատթեոս Ուտհայեցու «Ժամանակագրությունը»:

XI դ. երկրորդ կեսին և XII դ. առաջին կեսին ապրած Մատթեոս Ուտհայեցին առաջին հայ հեղինակն է, որ օգտագոր-

Կարին, կազմեց Հրաչեայ Յ. Աճառեան, Վիեննա, 1900, էջ 2: Սա մի աղճատված տեքստ է, որն ըստ Գարեգին Հովսեփյանի, ավելի հին է, քան ձեռագրում 986-ով թվագրվող Ավետման մանրանկարը: Նա ձեռագրում հիշատակվող «քուրդ» բառը համարում է անձնանուն: Տե՛ս Գարեգին Ա. Կաթողիկոս, Յիշատակարանք Ձեռագրաց, Հատոր Ա, (Ե. դարից մինչև 1250 թ.), Անթիլիաս, 1951, էջ 150, 1058:

⁶⁶ Մատթեոս Ուտհայեցի, Ժամանակագրութիւն, Վաղարշապատ, 1898, էջ 10:

ծում է «քուրդ» էթնոնիմը: Հարկ է նշել, որ Ուտիայեցին քաջատեղյակ էր քրդերի մասին, քանի որ ապրում էր Եդեսիայում, որտեղ, ի տարբերություն Հայաստանի, քրդերն ավելի վաղ էին հաստատվել: Անդրադառնալով Մրվանյան քրդական տոհմի և Ուտիայի այլ իշխողների միջև ընթացող պայքարին՝ Ուտիայեցին օգտագործում է «քուրդ» բառը. *«Յայսմ ամի ժողով արարեալ ոմն Յեհնուկ անուն, հինգ հազար արամքք զնացեալ ի վերայ Քրդաստանաց, ի գաւառն Ամթայ, ի տեղին՝ ուր Ճեպու-Շահար կոչի... և հասանէր ի հետ՝ որ աւագ էր Քրդացն՝ որում անուն Խալթ ասէին»*⁶⁷: Նա քրդերին մատնանշում է նաև Վասպուրականի կողմերում⁶⁸: Ուտիայեցու էթնանվանական տերմինաբանության մեջ նկատվում է հետաքրիր առանձնահատկություն. նա Միջագետքում և Հայաստանի որոշ վայրերում իշխող Մրվանյաններին «տաճիկ» կամ «քուրդ» է անվանում, իսկ Շաղդադյաններին, որոնք եկել էին Ատրպատական-Մարաստանից, կոչում է «պարսիկ»: Մրվանյան քրդական տոհմի առաջնորդ Նստրուլին նա անվանում է նաև *«մեծ ամիրայն տաճկաց»*⁶⁹: Պատմելով Ալփ Արսլան սուլթանի սպանության մասին՝ Ուտիայեցին գրում է. *«...մեռաւ Աբասլան սուլտանն ի ձեռաց առն անփառաւորի և քրդու»*⁷⁰: Հ. Մարգարյանը կարծում է, որ Ուտիայեցին էթնիկական անվանմանը հաղորդում է բարոյական վարքագծի բնութագրման երանգ, ինչն էլ, ըստ նրա, դիպուկ արտահայտվել է Ուտիայեցու «Ժամանակագրության» աշ-

⁶⁷ Նույն տեղում, էջ 144:

⁶⁸ Նույն տեղում, էջ 91:

⁶⁹ Նույն տեղում, էջ 59:

⁷⁰ Նույն տեղում, էջ 205:

խարհաբար թարգմանությունում. «...մեռավ սուլթան Աբասլանը՝ անարգ և քրդաբարո մարդու ձեռքով»⁷¹:

Ուտիայեցին, քաջածանոթ լինելով քրդերի պատմությանը, չի օգտագործում «մար» էթնոնիմը, չի նույնացնում մարերին և քրդերին: Սա ցույց է տալիս, որ դա հայ պատմագրության մեջ դեռևս ավանդույթ չէր դարձել: Միաժամանակ եղեսացի պատմիչը քրդերին տեղորոշում է Միջագետքում, ոչ թե Մարաստան-Ատրպատականում, ուստի հնարավոր է, որ այդ պատճառով է միայն «քուրդ» էթնանունը գործածում:

Ուտիայեցուն ժամանակակից մեկ այլ հեղինակ՝ Դավիթ Ալավկատորդին (մոտ 1065-1138), օգտագործում է «քուրդ» էթնոնիմը՝ այն ծառայացնելով իբրև տաճիկի, այլազգու հոմանիշ («Վասն Հայ կնոջն, որ լինի առ Քուրդի պատճառս քրիստոնեության», «Վասն կնոջ, որ առ Քուրդի նստի», «Կին, որ շնայ ընդ Քուրդի»⁷²): Այս երկու հեղինակները, որոնք մեր մատենագիրների շարքում առաջինն են ավանդում «քուրդ» ցեղանունը, հակված չեն նրանց նույնացնելու մարերի հետ: Հ. Մարգարյանն այս երկու հեղինակների գործերում «քուրդ» անվան առկայությունը մեկնաբանում է հետևյալ կերպ. «Այսպիսով՝ XII դ., երբ ուժեղացել էր քրդական էթնիկ տարրի ներթափանցումը Հայաստան ու որոշակի տարածքներում իշխանությունը պատկանում էր քրդական տոհմերի (Շադդադյաններ, Այուբյաններ և այլն) «քուրդ» էթնոնիմը արդեն ավանդվում է հայկական սկզբնաղբ-

⁷¹ Մատթեոս Ուտիայեցի. Ժամանակագրություն, թարգմանությունը, ներածությունը և ծանոթագրությունները՝ Հ. Բարթիկյանի, Երևան, 1973, էջ 135: Մարգարյան Հ., նշվ. աշխ., էջ 146:

⁷² Դավիթ Ալավկայ որդի. Կանոնական արեւեսդրութիւն, Մ Հ. հ. ԺԶ, ԺԱ դար, Երևան, 2012, էջ 685-686:

յուներում»⁷³: Ուշադրություն պետք է դարձնել նաև այն հանգամանքի վրա, որ Դավիթ Ալավկաորդին Գանձակի կողմերից էր, ուր տիրապետություն էին հաստատել քրդական Շադդադյան իշխանական տան ներկայացուցիչները:

«Քուրդ» էթնոնիմի մասին լռում է նաև Սամվել Անեցին, թեպետ պատմում է Հայաստանում հաստատված Շադդադյան քրդական տոհմի մասին⁷⁴: Սելջուկների պատմությանն անդրադառնալիս՝ նա հիշատակում է մար-մեղացիներին, սակայն դժվար է ասել՝ նկատի ունի քրդերին, թե ոչ⁷⁵: Ինչպես տեսնում ենք, «մար» և «քուրդ» էթնոնիմների հստակ նույնություն չկա նաև Սամվել Անեցու աշխատությունում: Ս. Անեցու շարունակողներից մեկը քրդերին նույնացնում է պարթևների հետ. «...Պարթևական ազգին, որ Քուրդն կոչի»⁷⁶: Հետաքրքիր է, որ անեցի պատմագիրը սելջուկ-թյուրքերին անվանում է թե՛ սկյութացիներ, թե՛ պարսիկներ⁷⁷:

Զաքարյանների⁷⁸ և միջնադարյան հզոր տիրակալ Սալահ ադ-Դինի մասին XIII դ. պատմիչ Կիրակոս Գանձակեցու հա-

⁷³ Մարգարյան Հ., նշվ. աշխ., էջ 147:

⁷⁴ Տե՛ս Սամուել Անեցի և շարունակողներ, Ժամանակագրություն, աշխատասիրությամբ Կ. Մաթևոսյանի, Երևան, 2014, էջ 206:

⁷⁵ Նույն տեղում, էջ 170:

⁷⁶ Նույն տեղում էջ 224: Նշյալ հատվածն ունի տարբերակներ. «Պարթևական ազգին, որ Գունդն կոչի», «Պարթևական ազգին, որ Գուրդն կոչի»: Նույն տեղում, ծան. 388, էջ 412:

⁷⁷ Նույն տեղում էջ 170, 193:

⁷⁸ Կ. Գանձակեցին Զաքարյաններին վերագրում է քրդական ծագում՝ գրելով «հատուածեալ ի քրդաց»: Կիրակոս Գանձակեցի, Պատմություն Հայոց, աշխատասիրությամբ Կ. Ա. Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1961, էջ 162: Հ. Մարգարյանը բացատրում է, թե ինչու է Կիրակոս Գանձակեցին Զաքարյաններին քրդական ծագում վերագրում: «XIII դ. հայ պատմագրության մեջ որևէ տոհմի «քրդական ծագում» վերագրելը նշանակում էր այդ ընտանիքի տոհմականքների գոյությունը հավաստել հնագույն «մարական» ժամանակներում: Ընդ որում, այդպիսի վերագրումը միաժամանակ ապացուցում էր այդ իշխանական տան չափազանց բարձր

դորդած տեղեկություններն ուղենիշային են հայ պատմագրության մեջ «մար» և «քուրդ» էթնոնիմների նույնության պարզաբանման հարցում: Դրանք օգնում են լույս սփռելու և ի դերն հանելու «մար» և «քուրդ» էթնոնիմների նույնության խնդիրը: Կիրակոս Գանձակեցին, խոսելով Սալահ ադ-Դինի մասին, նշում է, որ նա քուրդ է և սերում է Մասյացոտն գավառից⁷⁹: Հ. Մարգարյանը փորձում է բացատրել Կիրակոս Գանձակեցու նման եզրահանգման դրդապատճառները, քանի որ արաբական ու նաև հայկական աղբյուրներից հայտնի է, որ Սալահ ադ-Դինը սերում է Դվինի մերձակայքից: Ըստ Հ. Մարգարյանի՝ Կիրակոս Գանձակեցին հետևել է «մար»-«քուրդ» նույնացմանը և փորձել պատմական տեղեկությունների հիման վրա պարզել Սալահ ադ-Դինի նախնիների որտեղացի լինելը: Հ. Մարգարյանը եզրակացնում է. «Այդ դեպքում, պարզվում է, «Մասյացոտն»-ի հիշատակությունը ամեննին պատահական չէ: Ըստ Մովսես Խորենացու, Մարաց Ածղահակ թագավորին պարտության մատնելուց հետո, մարերին Մասյացոտնում բնակեցրեց Տիգրան արքան»⁸⁰: Այսպիսով՝ ըստ Հ. Մարգարյանի, գոյություն է ունեցել «մար»-«քուրդ» նույնացում, ինչին էլ հետևել է Գանձակեցին: Ընդունելով «մար»-«քուրդ» նույնացման առկայությունը՝ կարծում ենք, որ այն կրում էր տարերային բնույթ և լիովին ամրագրված չէր միջնադարյան հայ պատմագրության մեջ: Դրությունը, սակայն, փոխվում է Գանձակեցուց հետո. թեպետ նրա ժամանակակիցներ Վարդան

ծագումը: Հայոց միջավայրում «մար» համարվելը ցույց էր տալիս Ածղսուհակի, այսինքն՝ արքայական տոհմից լինելը և, որ ամենակարևորն է, Վաղարշակ թագավորի օրոք «երկրորդ թագաւորութեանն» կարգվելը: Մարգարյան Հ., նշվ. աշխ., էջ 149: Տե՛ս նաև Շահնազարյան Ա. Ի., Զաքարյանների ծագումնաբանությունը, «Լրաբեր հասարակական գիտությունների», 2001, № 1, էջ 41-60:

⁷⁹ Կիրակոս Գանձակեցի, նշվ. աշխ., էջ 150:

⁸⁰ Մարգարյան Հ., նշվ. աշխ., էջ 148:

Վարդապետն⁸¹ ու Սմբատ Սպարապետը⁸² կիրառում են «քուրդ» էթնոնիմը՝ չհիշելով «մար»-ը և հետևաբար չնույնացնելով դրա հետ, սակայն Կիրակոս Գանձակեցուն հաջորդած հայ հեղինակները «մար» և «քուրդ» էթնոնիմները նույնանիշ են համարում և սկսում կիրառել կողք կողքի, ինչը թույլ է տալիս ենթադրել, որ «մար» և «քուրդ» էթնոնիմների համարժեքությանը հայ պատմագրության մեջ «քաղաքացիություն» տվողը հենց Կիրակոս Գանձակեցին է:

Հետաքրքիր է, որ Վարդան վարդապետը և Սամվել Անեցու Շարունակողը, ի տարբերություն Գանձակեցու, Սալահ ադ-Դինի ծննդավայրը տեղադրում են Դվինում, ոչ թե Մասյացոտնում, ինչը կապվում է Աժդահակի ու մարերի հետ⁸³:

Հարցի համակողմանի քննությանն օգնում են հայերեն ձեռագրերի հիշատակարանները: XIII դ. հայերեն ձեռագրերի հիշատակարաններից մեկում վկայվում է «քուրդ» էթնոնիմը. *«Արդ ի յայս ամի ելաւ ազգ մի, որ կոչի թաթար, և փախստական արար զՊարսկաց թագաւորն և աւերեաց զՊարսկաց աշխարհն և երէկ ընդ Միջագետաց աշխարհս ի վայր մենչել յԵդեսսա և ի Սամուսատ և կոտորեաց բազում թուրք և քուրդ և քրիստոնէք...»⁸⁴:*

XIV դ. հայերեն ձեռագրերի հիշատակարաններում կրկին վկայվում է «քուրդ» էթնոնիմը (*«Քուրդ Իպրահիմ աղայի տղան,*

⁸¹ Հաւաքումն Պատմութեան Վարդանայ վարդապետի, Վենետիկ, 1862, էջ 138:

⁸² Տարեգիրք արարեալ Սմբատայ սպարապետի Հայոց, որդոյ Կոստանդեայ կոմսին Կոռիկոսոյ, ի լոյս ընծայեաց հանդերձ ծանօթութեմաբք Կարապետ վարդապետ Շահնազարեանց, Փարիզ, 1859, էջ 60:

⁸³ Հաւաքումն Պատմութեան Վարդանայ վարդապետի, էջ 131: Տե՛ս Սամուել Անեցի և շարունակողներ, նշվ. աշխ., էջ 217:

⁸⁴ Գարեգին Ա Կաթողիկոս, նշվ. աշխ., էջ 878:

որ ի ծնե կուր էր լուսաւորեաց»⁸⁵) և դարձյալ չի հիշատակվում «մար»-ը: Այլ է դրութիւնը պատմիչների երկերում, որոնք միմյանց շատ արագ են արձագանքում:

XIII-XIV դդ. պատմիչ Հեթում Կոռիկոսցին իր «Պատմութիւն Թաթարաց» աշխատության մէջ Մարաց թագավորության մասին խոսելիս գրում է. «... ազգք բնակեալք ի մին ի նոցանէ Մարակինոք ասին և այլք կոչին Կորդուացիք (կամ քիւրտք)⁸⁶: Պատմելով քրդական ծագում ունեցող Այուբյանների մասին՝ Հեթում պատմիչը գրում է. «Ապա տիրեցին Մարք, որք ռամկօրեն քիւրտք կոչին»⁸⁷՝ կարծես ցույց տալով, որ թեպետ ինքը գիտի, որ քրդերի մասին է խոսքը, սակայն նախընտրում է «մար» էթնոնիմը:

Հայաստան ներթափանցած քրդական ցեղերը Վանա լճի շրջակայքում և դրանից հարավ ընկած հատվածներում XIV դդ. ստեղծեցին ինքնուրույն իշխանություններ: Թովմա Մեծոփեցին (1378-1447) քաջածանոթ է քրդերին, և արժեքավոր տեղեկություններ է հաղորդում նրանց մասին: Նա նույնպես «քուրդ» և «մար» էթնոնիմները նույնացնում է՝ «Եւ յետ այսորիկ յետ Բ. (2) ամի նոյն քուրդն յազգէն Մարաց...»⁸⁸, մէկ այլ դեպքում փաստում է. «Բայց արք գաւառին Սասնոյ եւ Խութայ հաւատացեալք եւ անհաւատք յազգէն մարաց...»⁸⁹:

Այսպիսով՝ Մեծոփեցին առաջին հեղինակն է, որ իբրև նույնանիշներ լայնորեն կիրառում է «մար» և «քուրդ» էթնոնիմները:

⁸⁵ ԺՂ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, էջ 499:

⁸⁶ Հեթում Պատմիչ Թաթարաց, նշվ. աշխ., էջ 13:

⁸⁷ Նույն տեղում, էջ 72:

⁸⁸ Թովմա Մեծոփեցի, Պատմագրություն, աշխատասիրությամբ Լևոն Խաչիկյանի, Երևան, 1999, էջ 63:

⁸⁹ Նույն տեղում, էջ 33:

Անդրադառնանք նաև XV դ. հայերեն ձեռագրերի հիշատակարաններում ու մանր ժամանակագրություններում «քուրդ» և «մար» էթնոնիմների կիրառության խնդրին և տեսնենք, թե դրանցից ո՞րին է նախապատվություն տրվել: Ղ. Փիրդալեմյանի հավաքած և հրատարակած XV դ. առաջին կեսին վերաբերող հիշատակարաններում բազմիցս հանդիպում ենք «քուրդ էթնոնիմին»: Օրինակ, XV դ. սկզբում գրված մի հիշատակարանում կարդում ենք. «*Եւ արդ ես խնդուբէկ դերձակս ի յՈստան քաղաքի գնեցի ի քրդէ, զի էր գերի բերած. յիշատակ ինձ...*»: Մեկ այլ դեպքում հանդիպում ենք «... ապա հանդիպեալ նմա քուրդ ոմն», «*յաւուրս Շամշատին քուրդ ամիրային որ նստէր ի Բաղէշ*»⁹⁰ և այլն:

Եվ միայն երկու դեպքում ենք Ղ. Փիրդալեմյանի հրատարակած հիշատակարաններում հանդիպում «մար» էթնոնիմին: Առաջին դեպքում Հարավային Հայաստանում հաստատված քուրդ իշխաններից մեկի մասին խոսելիս ասվում է. «*ի թագաւորութեան ազգին Մարաց Եեգտինշէրի*»⁹¹: Այդ հիշատակարանը վերցված է Հայսմավուրքից, ինչը թույլ է տալիս ենթադրելու, որ նրա հեղինակը պատմագրական ավանդույթի կրող է եղել և ոչ թե հասարակ գրիչ: Փիրդալեմյանի հրատարակած հիշատակարաններից երկրորդի հեղինակը, որտեղ կիրառվում է «մար» էթնոնիմը («*նենգաւոր ազգն Մարաց*»⁹²), Թովմա Մեծոփեցին է: Վերոնշյալ ժամանակաշրջանի հայերեն ձեռագրերի հիշատակարանների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հիշատակագիր գրիչներն ավելի հեռու են պատմագրական ավանդույթից ու ժամանակի շնչով պայմանավորված «քուրդ» էթնոնիմն են գոր-

⁹⁰ Լուսարք Հայոց, Հավաքեալ եւ լոյս ածեալ ձեռամբ Ղեւոնդ վարդապետի Փիրդալեմեան Տոսբեցոյ, Կ. Պօլիս, 1888, էջ 44, 47, 64-65: Տե՛ս նաև էջ 48, 92, 110, 145:

⁹¹ Լույն տեղում, էջ 24:

⁹² Լույն տեղում, էջ 28:

ծածում: Նույնը կարելի է ասել նաև մանր ժամանակագիրների մասին: Դավիթ Մերդինցու տարեգրությունում (XV դ.) կարդում ենք. «*Ի նմին ամի էլաւ Ճհանկիրն Յամթայ ն գնաց Քուրթ թալանել*⁹³»: XV դ. մեկ այլ հեղինակի՝ Մովսես Արծկեցու տարեգրությունում նույնպես հանդիպում ենք քուրդ էթնոնիմին⁹⁴:

Գրիգոր Դարանաղցին (1576-1643) նույնպես կիրառում է «մար» և «քուրդ» եզրույթները՝ բնորոշելու արդեն Հայկական լեռնաշխարհի հարավային և արևմտյան շրջաններում հաստատված ու լեռնաշխարհի մյուս շրջաններում տարածվող քրդական ցեղերին: Դարանաղցին, պատմելով «ումն քուրդ» Չախու Օղլիի մասին, հայտնում է. «... որ էր սա ի մեր քրդագեղորէիցն մարաց»⁹⁵: Պատմիչը խոսում է նաև Հարավային Հայաստանում քրդերի արշավանքների ու ասպատակությունների մասին. «*Թողում ասել զմարաց ազգացն, որ են քրդաց, որ սոքա մերձ լիելով վերին աշխարհացն, հանապազ ասպատակ առնելով ի վերայ նոցա եւ գերի վարելով ի Բաղէշ, ի յԱրճէշ եւ ի Վան եւ յամենայն Ոստան*⁹⁶:

Դարանաղցու կրտսեր ժամանակակից Առաքել Դավրիժեցու «Պատմությունում»-ում դարձյալ «մար» և «քուրդ» ցեղանունները կիրառվում են որպես հոմանիշներ: Այսպես՝ քուրդ Միրշարաֆ իշխանի մասին պատմելիս պատմիչը նրան մեկ անվանում է «...մեծ իշխանն ազգին Մարաց՝ որոյ անունն էր Միրշարաֆ»⁹⁷,

⁹³ Մանր ժամանակագրություններ, XII-XVIII դդ., հ. II, կազմեց Վ. Ա. Հակոբյանը, Երևան, 1956, էջ 211:

⁹⁴ Նույն տեղում, էջ 218-221:

⁹⁵ Ժամանակագրութիւն Գրիգոր Վարդապետի Կամախեցոյ կամ Դարանաղցոյ, Երուսաղեմ, 1915, էջ 34:

⁹⁶ Նույն տեղում, էջ 298:

⁹⁷ Առաքել Դավրիժեցի, Գիրք Պատմութեանց, աշխատասիրությամբ Լ. Ս. Խանլարյանի, Երևան, 1990, էջ 100:

մէկ այլ դեպքում՝ «մեծ պարոնն Քուրդ Միրշարաֆն»⁹⁸: Ղազի խանի մասին պատմիչը գրում է. «Ղազի խան անուն ուն յազգէն քրդաց՝ որ էր մեծ իշխան և կողմնակալ աշխարհին Մարաց»⁹⁹:

Զաքարիա Քանաքեոցին (1627-1699) շարունակում է հայ պատմագրական ավանդույթը՝ գրելով. «Լուան ազգն Մարաց, որ է Քուրտ...»¹⁰⁰: Քանաքեոցին, ինչպէս Մեծոփեցին ու Դարանադցին, «մար» և «քուրդ» էթնոնիմների ընտրության հարցում փոքր-ինչ նախապատվություն է տալիս «քուրդ»-ին՝ այն ավելի հաճախ կիրառելով, ինչը ժամանակի պահանջն էր, ի հակադրություն «մար»-ի, որը սոսկ պատմագրական ավանդույթ էր՝ կենսունակ միայն պատմագիրների երկերում:

«Պատմութիւն քաղաքին Յանւոյ»-ի հեղինակը, Վաչուտյան իշխանական տանը վերագրելով քրդական ծագում, այն կրկին կապում է Աժդահակի հետ՝ գրելով. «Ազգէն Աժդահակայ, որ է Քուրդ»¹⁰¹: Ինչպէս տեսանք՝ Խորենացու՝ մարերի մասին պատումներում Աժդահակը հանդես է գալիս որպէս առանցքային կերպար, և պատմահայր մարերին անվանում էր Աժդահակի սերունդներ:

Այսպիսով՝ Կիրակոս Գանձակեցուց հետո «մար» և «քուրդ» էթնոնիմների նույնությունը փաստում են հետագայի գրեթէ բոլոր հայ մատենագիրները: Միջնադարյան հայ պատմագրության մեջ էթնանվանական եզրաքանության գերիշխող միտումների քննությունից պարզ է դառնում, որ որևէ էթնանուն շրջանառության մեջ դրվելուց հետո այն, պատմագրական ավանդույթով

⁹⁸ Նույն տեղում, էջ 101:

⁹⁹ Նույն տեղում, էջ 63:

¹⁰⁰ Զաքարեայ սարկաւազի պատմագրութիւն, հ. I, Վաղարշապատ, Էջմիածին, 1870, էջ 60:

¹⁰¹ Մխիթար Անեցի, Մատեան աշխարհավէպ հանդիսարանաց, աշխատասիրությամբ Շ. Գ. Մարգարյանի, Երևան, 1983, էջ 119:

պայմանավորված, յուրացվում և լայնորեն կիրառվում է նաև հետագա դարերի մատենագիրների երկերում:

Պատմագրական ավանդույթի ուժի վառ օրինակ է սելջուկ-թյուրքերին «պարսիկ» անվանելը, որի հիմքը դրել է Արիստակես Լաստիվերտցին: Նրան հաջորդած պատմիչները՝ Մատթեոս Ուտհայեցին, Սամվել Անեցին ու Սմբատ Սպարապետը շարունակում են սելջուկ-թյուրքերին «պարսիկ» էթնոնիմով հիշատակել:

Բացի այդ, Թովմա Արծրունին ու Մատթեոս Ուտհայեցին թյուրքերին անվանում են էլամցիներ, ինչն, ըստ Հ. Բարթիկյանի, պայմանավորված է այն հանգամանքով, որ Աստվածաշնչում էլամացիք հայտնի են որպես մեղսաշատ մարդիկ, և հայ պատմիչները թյուրքերին ուզում են նրանց շառավիղները համարել¹⁰²:

Գ. Ասատրյանը, փորձելով գտնել «մար» և «քուրդ» էթնոնիմների նույնությանը պատճառը, գրում է. «Հայ տարեգիրների՝ քրդերին «մար» համարելը սոսկ գրական հնարք է՝ պայմանավորված ավանդույթով, որը ժամանակակից էթնիկական միավորը նույնացնում է որևէ հին ժողովրդի հետ, ինչ հայտնի է ողջ դասական պատմագրությունից: Օրինակ, թաթարները նույնացվում էին պարսիկների հետ՝ «ազգն պարսից», կարա-կոյունլու թյուրքմենները կոչվում էին սկյութական ցեղեր՝ «ազգն սկիւթացւոց»¹⁰³:

Կարծում ենք՝ քրդերին «մար» էթնոնիմով նշելու գործում Գ. Ասատրյանի նշած հանգամանքը առաջնային նշանակություն չէ, որ ունեցել է:

Քրդերին «մար» անվանելու գործում նշանակություն չի ունեցել ո՛չ քրդերի ու ո՛չ էլ մարերի իրանական էթնոլեզվական աշխարհի մաս կազմելը, և ո՛չ էլ մարական ցեղերին ու իրանից

¹⁰² Մատթեոս Ուտհայեցի, նշվ. աշխ., ծան. 1, էջ 323:

¹⁰³ Asatrian G., նշվ. աշխ., էջ 22:

դեպի Միջագետք ու Հայաստան տարածված քրդերին բնորոշ աստանդական կյանքը:

Հայ պատմիչները IX-X դդ. քրդերին մատնանշում են մի վայրում, որը տեղանունների և էթնոնիմների գործածության առումով խիստ ավանդական ու պահպանողական հայ պատմագրության մեջ եղել է Մարաստանը, իսկ նրա բնակիչները, ենթադրաբար, «մարերը»: Եթե մինչ XIV դ. հայ հեղինակների հիշատակած «մար» էթնոնիմին հանդիպում ենք հիմնականում Հայաստանի սահմաններից դուրս, ապա քրդական ցեղերի՝ դեպի Հայաստան շարժի հետ մեկտեղ հայ պատմագրության մեջ «մար» էթնոնիմը դառնում է ավելի գործածական ու հաճախադեպ:

Հայ միջնադարյան պատմագրության մեջ «մար» էթնոնիմին կենսունակություն էր հաղորդում երկու հանգամանք. այն նախ առասպելականացված էր՝ կապված մար Ածղահակի հետ, և ապա իրական մարերը վաղուց էին լքել պատմության թատերաբեմը:

GOR YERANYAN

DISCUSSIONS ABOUT THE ISSUE OF IDENTIFICATION OF KURD AND MEDIAN ETHNONYMS IN ARMENIAN MEDIEVAL SOURCES

SUMMARY

The fact of identification of Kurd and Median ethnonyms in Armenian sources of especially the 15-16th centuries has let some researchers assume that this is the reflection of genetic affinity

between Kurds and Medians in Armenian historiography. The examination of works by Armenian historiographers, however, shows that labelling Kurds by a Median ethnonym is merely a historical tradition due to the circumstance that Armenian historiographers mention Kurds in a country which in Armenian historiography with traditional perspective to ethnonyms and toponyms was considered as Media and its population presumably as Medians.

ГОР ЕРАНЯН

ВОПРОС ОБ ИДЕНТИЧНОСТИ КУРДСКОГО И МИДИЙСКОГО ЭТНОНИМОВ В АРМЯНСКИХ СРЕДНЕВЕКОВЫХ ИСТОЧНИКАХ

РЕЗЮМЕ

Факт идентичности этнонимов курдов и маров (мидийцев), обнаруженный, в частности, в армянских первоисточниках XIV-XVII веков, стал основанием для некоторых исследователей предположить, что это является отражением генетического родства курдов и мидийцев в армянской историографии. Однако после изучения сочинений армянских летописцев становится ясным, что применение этнонима "мидиец" по отношению к курдам - лишь историографическая традиция. Последнее связано с тем, что армянские летописцы упоминали о курдах в стране, которая в армянской историографии (традиционная в вопросах наименований стран и племен) известна как Марастан (Мидия), а ее жители - соответственно мары (мидийцы).

ԱՐՑԱԽԻ ԻՇԽԱՆԱԿԱՆ ՏՆԵՐԻ ԷԹՆԻԿ
ՊԱՏԿԱՆԵԼՈՒԹՅԱՆ ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ
ՆԵՆԳԱՓՈԽՄԱՆ ՇՈՒՐՋ

Աղրբեջանական պատմագիտությունը պետական հովանավորությամբ ոչ միայն հայոց, այլև ամբողջ տարածաշրջանի պատմությունը զուտ քաղաքական նկատառումներով 1930-ական թվականների երկրորդ կեսերից սկսած կամայական հորինվածքի է վերածել: Ընդ որում, Արցախյան հիմնահարցը ենթատեքստ ունենալով, ի բնե հայկական Արցախի նկատմամբ իրենց նկրտումները «հիմնավորելու» և համաշխարհային հասարակայնությանը մոլորեցնելու նպատակով աղրբեջանական պատմահեներն անցել են պատմական ճշմարտության նենգափոխման բոլոր սահմանները՝ գերազանցելով անգամ մինչև վերջերս այդ բնագավառում մրցակից չունեցող թուրքականին: Դրավառ վկայություններից է մասնավորապես վերջին շրջանում իբրև աղրբեջանական պատմագիտության կողմից պատմական իրողությունների կեղծման նշաձողի հետևողական բարձրացման արգասիք Հայաստանի Հանրապետության տարածքը ոչ ավելի, ոչ պակաս «Արևմտյան Աղրբեջան» հռչակելը:

Աղրբեջանական պատմաշինարարների մի քանի սերունդներ հայկական, վրացական, հունահռոմեական, բյուզանդական, արաբական ու ասորական սկզբնաղբյուրների հաղորդումների թյուր մեկնաբանմամբ, նպատակադիր անտեսմամբ, ուղղակի կեղծմամբ կամ հորինմամբ ու պատմահեներության թուրքական զինանոցի այլ մեթոդների կիրառմամբ շրջանառության մեջ են դրել և միմյանց վրա հենվելով հետևողական զարգացնում են

հայատյացությամբ ներծծված հակազիտական երկու թեզ: Դրանք են՝ ա) բուն Աղվանքը ներառել է նաև Կուրի աջափնյակում ընկած հայկական Աղվանքը կամ Հայոց Արևելից կողմերն ընդգրկող՝ Մեծ Հայքի Ուտիք և Արցախ նահանգները, որոնք ի սկզբանե եղել են ոչ թե հայկական ու հայաբնակ, այլ՝ աղվանական ու աղվանաբնակ: բ) Կովկասյան թաթարներ անվամբ հայտնի, իսկ 1936 թ. ադրբեջանցի վերանվանված ժողովուրդը ոչ թե Թուրանից մեր տարածաշրջան թափանցած եկվոր թուրքերի, այլ աղվանների ուղղակի հետնորդներն ու ժառանգորդներն են և տեղաբնիկ են:

Կուրի աջափնյակում ընկած հայկական Աղվանքը կամ Հայոց Արևելից կողմերն այդ գետի ձախափնյակում ընկած բուն Աղվանքի մեջ ներառելու ադրբեջանական նկրտումները նոր թափով շրջանառության մեջ մտան 1965 թ.: Դեռ 1957 թ. Մովսես Կադանկատվացուն (Դասխուրանցուն) ազգությամբ աղվան և աղվաներենով (գարգարերենով) գրած հեղինակ հոչակած¹, Ջ. Յամպոլսկու խմբագրությամբ, Ջ. Բունիաթովի հեղինակած տխրահոչակ մենագրությամբ²: Դրա վերնագիրն իսկ պատմության անթաքույց նենգափոխում է, քանզի մինչև 1918 թ. «Ադրբեջան» անվանմամբ քաղաքական կամ վարչատարածքային միավոր գոյություն չի ունեցել:

Այդ հայատյաց կեղծագրում Ջ. Բունիաթովը պատմաշինարարության թուրքական մեթոդների հմուտ կիրառմամբ՝ բուն Աղվանքի մեջ ներառեց ոչ միայն Ուտիքն ու Արցախը, այլև՝ Սյունիքը, դրանց բնակչությանը հայտարարելով աղվան, այսինքն՝ ադրբեջանցի: Բնականաբար, նա աղվանական (ադրբե-

¹ Ямпольский З. И., К изучению Летописи Кавказской Албании, "Известия" АН Азерб. ССР, 1957, No 9, էջ 154:

² Буниятов З. М., Азербайджан в VII-IX вв., Баку, 1965.

ջանական) ներկայացրեց նաև տեղի վարչաքաղաքական միավորները և դրանցում ստեղծված նյութական ու հոգևոր մշակութային հուշարձանները, իսկ դրանք ստեղծողներին ու տեղական իշխանական տների ներկայացուցիչներին հոչակեց էթնիկապես աղվան: Դա առաջին հերթին վերաբերում է հայկազուն Եռանշահիկ կամ Առանշահիկ տոհմին պատկանող Արցախի IX դ. նշանավոր իշխան Սահլ (Սահակ) Սմբատյանին, և նրա ժամանակակից ու գործակից, ոչ պակաս նշանավոր իշխան՝ Եսայի աբու Մուսեին, որոնք, հատկապես առաջինը, իրենցից հետո Հայոց Արևելից կողմերին, մասնավորապես Արցախին տիրած իշխանական տների մեծ մասի հիմնադիրներն են³: Զ. Բունիաթովը նույն նախանձելի հեշտությամբ աղվան հոչակեց նաև Տարոնի Բագրատունիներից սերող Համամ Բարեպաշտ թագավորին և նրա որդի Ատրներսեհին⁴:

Ընդ որում, ճշմարտության դեմ չմեղանչելու միտումով, հարկ է նկատել, որ պատմության ադրբեջանական կեղծարարներն իրենց հակազիտական դրույթները «հիմնավորելիս» հաճախ հենվում են հայագիտության բնագավառում դժվար գերազնահատելի ավանդ ներդրած որոշ հայ գիտնականների վրիպումների վրա, ինչը ժամանակին փաստել է Բ. Ուլուբաբյանը: Նա ցավով նկատել է, որ «մեր պատմաբաններն ու լեզվաբանները երբեմն, առանց խորանալու իրողությունների պատմական ընթացքի մեջ, իրենց առանձին աշխատություններում Հայոց արևելից կողմանց բնակչության պատմական անցյալի, էթնիկական վիճակի, լեզվի և մշակութային այլ հարցերի առթիվ արտահայտել են սխալ կարծիքներ, թույլ տվել խեղաթյուրումներ ու գի-

³ Նույն տեղում, էջ 185-194:

⁴ Նույն տեղում, էջ 189:

տական ասպարեզ քաշել անհիմն վարկածներ, որոնք էլ, ըստ
երևույթին իրենց հերթին հիմք են հանդիսացել ուրիշների հա-
կագիտական «տեսությունների» համար»⁵:

Պայմանավորված նաև տարբեր պատճառներով հայագի-
տության կողմից համարժեք հակահարված չստանալով (Ա.
Մնացականյանի, Կ. Մելիք-Օհանջանյանի, Բ. Ուլուբաբյանի, Հ.
Անասյանի, Բ. Հարությունյանի, Հ. Սվազյանի, Ա. Հակոբյանի և
այլոց վաստակը չենք ուրանում), Ջ. Բունիաթովի հետևորդները
միահամուռ անցան լայնածավալ հարձակման և միմյանց հե-
տևից հիմնականում ռուսերենով սկսեցին շրջանառության մեջ
դնել Հայոց պատմության աննախադեպ նենգափոխմամբ մեկը
մյուսին գերազանցող աշխատություններ⁶: Դրանցում խնդրո
առարկա մտացածին թեզերը ոչ միայն պաշտպանվում, այլև
զարգացվում էին: Այս կեղծիքաշարում հատկապես առանձնա-
նում են Ֆ. Մամեդովայի աշխատությունները: Նա, չքավարար-
վելով Ջ. Բունիաթովի կողմից Ուտիքը, Արցախն ու Սյունիքը
բուն Աղվանքի մեջ մտցնել, դրանց հավելել է նաև Փայտակարա-

⁵ Ուլուբաբյան Բ. Ա., Դրվագներ Հայոց արևելից կողմանց պատմության (V-VII դդ.),
Երևան, 1981, էջ 58-59:

⁶ Տե՛ս, օրինակ, Алиев К., Кавказская Албания (II в. до н. э. – I в. н. э.), Баку, 1974, նույն-
նի К интерпретации параграфов 1, 3, 4 и 5 главы IV главы XI книги “Географии Стра-
бона, “Вестник древней истории”, 1975, № 3, Мамедова Ф., “История албан” Моисея
Каланкатуйского как источник по общественному строю раннесредневековой Албании,
Баку, 1977, նույնի Политическая история и историческая география Кавказской
Албании (III в. до н. э. – VIII в. н. э.) Баку, 1986, նույնի Кавказская Албания и албаны,
Баку, 2005, Гекюшев Р. Б., О конфессионально-этнической принадлежности
Гандзасарского монастыря, “Материальная культура Азербайджана”, VII, Баку 1973,
նույնի Христианство в Кавказской Албании, Баку, 1984, Алиев С. С., Об этногенезе
азербайджанского народа (к постановке вопроса), “К проблеме этногенеза азер-
байджанского народа, Баку, 1984, Ахундов Д. А., Архитектура древнего и ранне-
средневекового Азербайджана, Баку, 1986, Ахундов Д., Ахундов М., К вопросу о
“спорных” моментах в истории и культуре Кавказской Албании, “Известия АН Азерб.
ССР, 1986, No 2, Алиев И., Карабах в древности, “Известия” АН Азерб. ССР, 1988, No 3
և ուրիշներ:

նը, ինչպես նաև Վասպուրականի Նախճավան ու Գողթան գավառները: Իսկ թե ինչու հենց այդ տարածքները, ինքնին հասկանալի է: Ֆ. Մամեդովայի մտավարժանքների գագաթնակետը «Կովկասյան Ալբանիան ու ալբանները» հոդվածն է: Դրանում նա պատմաշինարարության բոլոր մեթոդների վարժ կիրառմամբ, լրացրել ու խորացրել է իր նախորդ հակահայ կեղծիքները: Գրքի առաջին մասը նվիրված է ադրբեջանական հասկացությամբ Աղվանքի մ. թ. ա. III – մ. թ. VIII դդ. համապարփակ պատմության «լուսաբանմանը», իսկ երկրորդ մասը՝ Ֆ. Մամեդովայի տերմինաբանությամբ «ուշ աղվանների», այսինքն՝ VIII դ. հետո պատմական ասպարեզից դուրս եկած աղվան կոչված ցեղերի հետ էթնիկ որևէ կապ չունեցող Հայոց Արևելից կողմերի հայության պատմության տարբեր դրվագներին՝ մինչև 1836 թ.: «Ուշ աղվաններ» տերմինով չբավարարվելով՝ նա հորինել է նաև «Պատմական Ադրբեջան» հասկացությունը՝ այն հակադրելով «Պատմական Հայաստան» իրողությանը: Ավելին, նա աղվան է դարձրել նաև Կիլիկյան Հայաստանի հայտնի իշխան Օշինին՝ իբրև «փաստարկ» ունենալով նրա Հայոց Արևելից կողմերից, ըստ նրա իբր «Գյանջայից» սերումը⁷: Ֆ. Մահմեդովան IX դարում Հայոց Արևելից կողմերում հայկական թագավորությունների հզորացումը դիտարկում է իբրև աղվանական թագավորությունների վերածնունդ, իսկ դրանց իշխաններին համարում աղվաններ⁸: Նա Ջ. Բունիաթովի հետևությամբ աղվան է համարում մասնավորապես Սահլ Սմբատյանին, Եսայի աբու Մուսեին, Հասան Բարեպաշտին և նրանցից սերված ու հետագայում Հա-

⁷ Мамедова Ф., Кавказская Албания и албанцы, էջ 414-415:

⁸ Նույն տեղում, էջ 391:

յոց Արևելից կողմերին տիրած բոլոր հայկական իշխանական տների ներկայացուցիչներին:

Ընդ որում, Սահլ Սմբատյանին աղվանացնելիս նա Ջ. Բունիաթովի նման ստելով անվարան պնդում է, թե իբր Մովսես Կադանկատվացու (Դասխուրանցու) մոտ Սահլի հայ լինելու մասին տվյալ չկա, և եզրակացնում, որ «Ջ. Մ. Բունիաթովը միանգամայն իրավացիորեն է ժխտում Սահլ իբն Սմբատի հայկական ծագման մասին գիտնականների կարծիքը»⁹: Սակայն, որքան էլ գավեշտական է Արցախյան շարժման արշալույսին Ադրբեջանում Սահլը «դավաճան հայ» հայտարարվեց, քանի որ ադրբեջանցի հռչակված, բայց իրականում պարսիկ Բաբեկին ձերբակալելով արաբներին էր հանձնել, իսկ որոշ ժամանակ անց, կրկին «աղվանացվեց»:

Վերջերս էլ իբրև ադրբեջանական պատմահեռնության «նվաճումների» խտացված ամփոփում շրջանառության մեջ դրվեց հակահայ քարոզչություն իրագործող մեծաքանակ խմբի ղեկավար Ռ. Մեհթինի «Գորիս-2010». աբսուրդի թատրոնի տարեշրջան» պատմանենգությունը, որում ևս Հայոց Արևելից կողմերի մշակութային գործիչներն ու իշխանական տները համարվում են աղվաններ¹⁰: Այդ կեղծագրում նա իր նախորդների նման զլացել է իրեն տալ այն տրամաբանական հարցը, թե ինչու իրենց կողմից համառորեն աղվանական դիտվող այդ նյութական ու հոգևոր մշակույթի կոթողներն ու դրանք ստեղծողները ներկայացված են միայն Կուրի աջափնյակում, իսկ ձախափնյակում՝ ոչ:

Քանի որ հայագիտությունն անհերքելիորեն ապացուցել է, որ բուն Աղվանքն ու Հայոց Աղվանքը (Հայոց Արևելից կողմերը)

⁹ Նույն տեղում:

¹⁰ Мехтиев Рамиз. Горис-2010. Сезон театра абсурда. <http://www.Trend.az>. 29.10.2010 (այսուհետև՝ Мехтиев Рамиз).

սահմանագատվել են Կուր գետով, այդ հարցի քննությունն ավելորդ դիտելով, անդրադառնանք Հայոց Արևելից կողմերի ժողովրդագրական պատկերին և դրանից բխող, Արցախի իշխանական տների էթնիկ պատկանելության մասին հայ և օտար սկզբնաղբյուրների, աղբյուրաբանական կեղծարարների կողմից անտեսվող կամ նենգափոխվող վկայություններին:

Աղբյուրաբանական պատմաշինարարները Հայոց Արևելից կողմերն ի բնե աղվանաբնակ ու աղվանախոս ներկայացնելու նպատակով՝ ոչ միայն չեն ընդունում Արտաշես I-ի ջանքերով միավորված հայկական ու հայախոս տարածքների շարքում Ստրաբոնի կողմից Ուտիքի հյուսիս-արևմտյան Շակաշեն (Սակասենե) գավառի ու Արցախի (Օրքիստենե) հիշատակումը¹¹, այլև Հայոց Արևելից կողմերը, ներառյալ Արցախը, «զեզերք հայկական խոսից» լինելու մասին Մովսես Խորենացու հաղորդումը¹²: Այս և հայկական ու օտար սկզբնաղբյուրների նմանատիպ այլ վկայությունների հետ հաշվի չնստելով, օրինակ, Ջ. Բունիաթովը փորձում է ապացուցել, որ Ուտիքում ու Արցախում հենց սկզբից միայն աղվաններ են ապրել: Այդ նպատակով նա վկայակոչում է VI դ. ասորի հեղինակ Ջաքարիա հռետորի թյուր տեղեկությունը, ըստ որի առանցիներն ու սյունեցիներն առանձին ժողովուրդներ են, և դրան հավելում արաբ հեղինակներ Ալ-Իսթահրիի ու ալ-Մուքադասիի հաղորդումները, թե իբր Առանում առաներեն են խոսում¹³: Սակայն, բանն այն է, որ իրականում այդ հեղինակներն Առանի, այսինքն Հայոց Արևելից կողմերի բնակիչների լեզուն Աղվանից մարզպանության մյուս ժողո-

¹¹ Страбон, География, Пер. статья и коммент. Г. А. Стратанского, Ленинград, 1964, XI, XIV, 4.

¹² Մովսես Խորենացի, Պատմութիւն Հայոց, Երևան, 1991, էջ 112-113:

¹³ Буняттов З. М., նշվ. աշխ., էջ 100:

վորդների լեզվից տարբերելու համար այն առաներեն անվանելով երբեք աղվաններեն չեն դիտել: Նրանց հիշատակած առաներենը հայոց լեզվի տեղական բարբառն է եղել, ինչը հստակ երևում է ինչպես ալ-Մուքադասիի ու ալ-Իսթահրիի, այնպես էլ Իբն Հաուքալի այն ուշագրավ տեղեկությունից, որ Պարտավի բնակիչներն իրենց քաղաքի շուկան կոչում են «ալ-Քուրաքի»՝ շուկայի բացվելու օրվա՝ կիրակիի անունով¹⁴: Փոխարենը Ջ. Բունիաթովն անպատասխան է թողել VII դ. վերջի հայ քերական Ստեփանոս Սյունեցու հաղորդումը, հայոց լեզուն հարստացնող բարբառների (այդ թվում Սյունիքի ու Արցախի բարբառների) մասին¹⁵ և Եսայի Նչեցու (XIV դ.) այն դիտարկումը, որ Ստեփանոս Սյունեցու թվարկած բարբառները, այդ թվում «գԱրցախայինն», հայոց լեզվինն են՝ «ոչ գաւտարագգի ասէ, այլ զհւրոյ լեզուին զխաւսս»¹⁶: Աղբրեջանական «աղվանագետները» հաշվի չեն նստում նաև արաբ պատմագիր ատ-Տաբարիի այն հաղորդման հետ, ըստ որի 837 թ. Բաբեկի ապստամբությունը ճնշած արաբ զորավար ալ-Աֆշինը, լսելով ալ-Բազզ բերդից նրա փախուստի մասին, նամակով դիմել էր այդ պատմագրի խոսքերով ասած՝ «Հայաստանի թագավորներին ու իշխաններին»¹⁷, որոնցից էին նաև Սահլ Սմբատյանն ու Եսայի աբու Մուսեն: Աբու-լ-Ֆարաջն իր հերթին ընդգծում է ոչ միայն Սահլի, այլև՝ նրա հպատակների հայ լինելը: Յակուբին, Ալ-Մասուդին, ադ-Դինավարին ու ալ-Մուքադասին ևս հավաստում են Սահլի հայ լինելը, իսկ Միքա-

¹⁴ «Сборник материалов для описания местностей и племен Кавказа», вып. 38, Тифлис, 1908, էջ 14-15, вып. 29, Тифлис, 1908, էջ 8-9, вып. 38, էջ 87:

¹⁵ Ստեփաննոսի Սյունեցույ, «Մեկնութիւն քերականին», Արոնց Ն., Երկեր, հ. Գ, Երևան, 2008, էջ 187:

¹⁶ Եսայի Նչեցի, Վերլուծութիւն քերականութեան, աշխատասիրությամբ Լ. Գ. Խաչերյանի, Երևան, 1999, էջ 65:

¹⁷ Буниятов З. М., նշվ. աշխ., հավելված, էջ 309: Տե՛ս նաև՝ էջ 311:

յել Ասորին նրան հայկական անվամբ կոչում է «Սահակ Հայկազուն»¹⁸:

Զ. Բունիաթովն ու Ֆ. Մահմեդովան համառորեն փորձում են խեղաթյուրել Մովսես Կաղանկատվացու (Դասխուրանցու) հաղորդումը՝ Սահլ Սմբատյանի հայ լինելու մասին, մինչդեռ աղվան հռչակված այդ հայ հեղինակը, պարզ ու հստակ հայտնում է, որ Առանշահիկները (Եռանշահիկները) Հայկազուն, այսինքն՝ հայ են, փաստում է Զարմիհր Առանշահիկի այդ տոհմին պատկանելը և շեշտում, որ Սահլ Սմբատյանը «Զարմիհրական տոհմեն էր»¹⁹:

Աղբբեջանական պատմագիտությունը համառորեն լռության է մատնում նաև Համամ Բարեպաշտի որդի Ատրներսեհի ժամանակ Աղվանից թագավորությունն այցելած Հովհաննես Դրասխանակերտցու վկայությունն, ինչպես Ատրներսեհի ու Եսայի աբու Մուսեի սերունդներից Սահակ մեծ իշխանի, այնպես էլ տեղի բնակչության հայ ու հայաղավան լինելու մասին. «և նոքա ի ժողովրդեն մերմէ և խաշն արօտի մերոյ էին»²⁰ նշել է կաթողիկոս-պատմիչը: Արցախը ներառող Աղվանից թագավորությունում, հայերից ու հայ իշխաններից բացի, որևէ աղվան բնակչի կամ իշխանի, չի հանդիպել նաև Հովհաննես Դրասխանակերտցուց որոշ ժամանակ անց՝ 958-ին, այնտեղ այցելած Հա-

¹⁸ Նույն տեղում, էջ 324, 325, 329, 332, «Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին», հ. 11, Երևան, 1981, էջ 142-144, ժամանակագրութիւն Միխայելի Ասորտց պատրիարքի, Երուսաղէմ, 1871, էջ 365:

¹⁹ Մովսես Կաղանկատվացի, Պատմութիւն Աղուանից աշխարհի, Երևան, 1983, էջ 172, 330:

²⁰ Յոհաննու կաթողիկոսի Դրասխանակերտեցոյ Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1912, էջ 217:

յոց կաթողիկոս Անանիա Մոկացին²¹: Նա իր պահանջով Արցախ-Խաչենի իշխան Գրիգորի կողմից հրավիրված ժողովի մասնակիցների թվում ոչ մի աղվան չի հիշատակում: Սակայն, քանի որ Կոստանդին Ծիրանաձնի «Բյուզանդական արքունիքի արարողությունների մասին» հանրահայտ աշխատությունում Խաչեն-Արցախի հիշատակումը՝ «Խաչենի իշխանին Հայաստան»²² անտեսել հնարավոր չէ, Ֆ. Մահմեդովան այն խեղաթյուրելով փորձում է համոզել, թե իբր «Հայաստան» բառը լոկ աշխարհագրական հասկացություն է, և Արցախ-Խաչենի վարչաքաղաքական կարգավիճակը չի բնորոշում²³: Պարզ է, որ Ֆ. Մահմեդովայի նպատակը հայկական այդ երկրամասը ոչ այդպիսին ներկայացնելն է: Ասվածի հաշվառմամբ բնավ պատահական չէ Ֆ. Մահմեդովայի պնդումն առ այն, որ Արցախը, Ուտիքը և Սյունիքը «ընդհուպ մինչև XIX դարը ո՛չ էթնիկապես, ո՛չ էլ քաղաքականապես պատմության ընթացքում երբևիցե Հայաստանի մաս չեն կազմել»²⁴:

Իրականում Հայոց Արևելից կողմերի Աղվանք անվանումը՝ լոկ աշխարհագրական իմաստ ունենալը, ինչպես նաև Հայաստանի մաս կազմելն ու հայաբնակ լինելը, XI դ. իրողություններին անդրադառնալիս՝ քանիցս ուղղակիորեն փաստում է նաև ադրբեջանական «աղվանագետների» կողմից ոչ պատահաբար անտեսված Մատթեոս Ուտիայեցին: Դա են վկայում այդ իրապատում պատմիչի հետևյալ հստակ վկայակոչումները.

²¹ Տե՛ս Անանիայի Հայոց կաթողիկոսի յաղագս ապստամբութեան տանն Աղուանից, որ ընդ ժամանակս ժամանակս լեալ իցէ ձեռնադրութիւնն արտաքոյ սուրբ լուսաւորչի աթոռոյն, թուղթ Ա «Արարատ», 1897, մարտ, էջ 144:

²² «Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին», Բյուզանդական աղբյուրներ, Բ. Երևան, 1970, էջ 151:

²³ Мамедова Ф., Кавказская Албания и албаны, էջ 398-402:

²⁴ Նույն տեղում, էջ 401:

«յաշխարհն Հայոց ի յԱղուան գավառի», «յաշխարհն Աղուանից, որ ասի՝ Խորին աշխարհի Հայոց»²⁵:

XII դ. ևս Արցախ-Խաչենի հայաբնակ լինելն, ու տեղի հայ իշխանական տների կողմից կառավարվելը, հավաստում է նաև ադրբեջանական կեղծարարների կողմից աղվան հռչակված Մխիթար Գոշը: Նա իբրև ականատես գրում է. «Ի ժամանակս բռնակալութեան Ղեմացուց (թուրք-սելջուկների – Ա. Շ.) յորում վաղ ուրեմն բարձեալ էր թագաւորութիւնն Հայոց ի սպարսպոտ, և անտերունչք շրջեին մենացորդք իշխանաց, որ բնաւ աշխարհս վարատեալք՝ ոչ հնազանդելով միմեանց, մանաւանդ այնոցիք, որ բնակեալ էին յամուրս աշխարհին Արցախայ»²⁶:

Արցախ-Խաչենը միայն հայաբնակն ու հայ «թաքավերով» կառավարվող է տեսել նաև XIII դ. սկզբներին այնտեղ այցելած պարսկալեզու անանուն հեղինակը²⁷: Ուշագրավ ու խոսուն է, որ նա «թագավոր» բառն օգտագործել է այսօր էլ Հայոց Արևելից կողմերում օգտագործվող բարբառային ձևով, ինչը հերքում է Արցախը 1828 թ. հետո հայերով բնակեցվելու մասին ադրբեջանական բարբառանքները: Այդ աշխատությունն օգտագործած Մ. Հեյդարովը, Ս. Աշուրբեյլին ու Զ. Բունիաթովը փորձել են աղավաղված ներկայացնել այն: Մասնավորապես վերջինս խեղաթյուրել է Խաչենին վերաբերող հատվածը՝ բնագրի Խաչենում «հայեր են ապրում» բառերը «սրբագրելով» «այնտեղ հայեր կան»-ով, ինչը լրիվ խաթարել է պարսիկ հեղինակի խոսքերի

²⁵ Մատթեոս Ուռհայեցի, Ժամանակագրութիւն, Վաղարշապատ, 1898, էջ 221:

²⁶ «Հայոց նոր վկաներ (1155-1843)», աշխատասիրութեամբ Յ. Մանանդեանի և Հ. Աճառեանի, Վաղարշապատ, 1903, էջ 23:

²⁷ «Алжайб ад-Дунйа (Чудеса мира): Критический текст, пер. с персидского, введение, комментарий и указатели Л. П. Смирновой, М., 1993, էջ 199:

իմաստը²⁸: Հայոց Արևելից կողմերը, այդ թվում՝ Արցախը, աղվանաբնակ տեսնելու մարմաջով նա XIII դ. իրողությունները խեղաթյուրված է մեկնաբանել, Գանձակեցի հորջորջված Կիրակոս պատմիչի՝ մինչև V դ. կեսերը գոյատևած բուն Աղվանից թագավորությանը վերաբերող անցյալ ժամանակով ասված հետևյալ խոսքերը. «առաջնորդք նոցա (այսինքն՝ աղվանների – Ա. Շ.) հայալեզուք, հայերենախոսք յուրվք էին. թագաւորքն՝ հնազանդք թագաւորացն հայոց»²⁹: Ավելին, նա աղվաններին համարում է «մերոց» այսինքն հայերիս «զագգայնոց և զհաւատակցաց», այսինքն ազգակիցներ ու հավատակիցներ³⁰: Կիրակոսի խոսքերի նման հստակությունն անգամ այդ անուղղելի հայատյացին ու կեղծարարին չի խանգարել պնդելու, թե իբր «նույնիսկ XIII դարում Առանի ամբողջ բնակչությունը հայերեն չգիտեր և խոսում էր «մայրենի լեզվով», այսինքն՝ աղվաներենով³¹: Եվ դա այն դեպքում, երբ XIII դարում Ներքին Խաչենին տիրած նշանավոր իշխան Հասան Ջալալին՝ նույնքան հայտնի իշխան Վախթանգ Տանգիկի որդուն, անձամբ ճանաչած նույն Կիրակոս պատմիչը գիտի իբրև հայի՝ նրա մասին գրելով մասնավորապես հետևյալը. «այր աստուածապաշտ և երկիւղած, և պարկեշտ հայ ազգաւ»³²: Որ Հասան-Ջալալը հայ էր ոչ միայն ազգությամբ, այլև՝ ազգապահպանմամբ ու ազգային կրթությամբ, մտահոգ, լայնախոհ գործիչ էր: Երևում է թեկուզ այն բառից, որ Արցախի ծնունդ և Վանական վարդապետի աշակերտ Տեր Իսրայելն, ազգապահպանման խնդիր ունեցող «Հայսմավուրքի» խմբագրմանը

²⁸ Տե՛ս Буниятов З. М., Государство атабеков Азербайджана (1136-1235), Баку, 1978, էջ 112, ծան. 320.

²⁹ Կիրակոս Գանձակեցի, Պատմություն հայոց, Երևան, 1961, էջ 192:

³⁰ Նույն տեղում:

³¹ Буниятов З. М., Азербайджан в VII-IX вв., էջ 100:

³² Կիրակոս Գանձակեցի, էջ 358:

ձեռնամուխ է եղել իր ուսուցչի հրամանով՝ ի բավարարումն Հասան-Ջալալի խնդրանքի³³, իսկ դարձյալ «աղվան» հռչակված Վանական վարդապետն իր հերթին իր «Հարցմունք և պատասխանիքը» շարադրել է Հասան Ջալալի, ու ոչ պակաս նշանավոր իշխան Վահրամ Գագեցու խնդրանքով³⁴: Բնականաբար, Հասան-Ջալալի հայ լինելը ենթադրում է, որ հայ էր ոչ միայն նրա հայրը, այլև՝ բոլոր նախորդները, ներառյալ մեզ հայտնի նրա նախնին՝ Սահլի հայր Սմբատը:

Այս պարզ ճշմարտության հետ չեն հաշտվում նաև Ա. Ասլանովն ու Ռ. Մեհթինը: Վերջինս Հասան-Ջալալին ու արցախցիներին աղվանացնելու նպատակով անգամ չի խուսափել դա «փաստագրող» վիմագիր հորինելուց: Ըստ նրա՝ Հասան-Ջալալը «Գյանջասարի», այսինքն Գանձասարի վանքում արձանագրություն է թողել, որում այն անվանված է «Ալբանիայի աթոռանիստ տաճար»՝ կանգնեցված «իմ ալբան ժողովրդի համար»³⁵: Իրականում Հասան-Ջալալի ժամանակ Աղվանից աթոռանիստը դեռ Գանձասարում չէր, այլ Խամշի վանքում: Իսկ Գանձասարի վանական համալիրի սուրբ Հովհաննես տաճարի շինարարական արձանագրության մեջ նա ընդամենը նշել է, որ իր հայր Վախթանգի կտակի համաձայն, մոր՝ Խորիշահի հետ, որն, ի դեպ, հայկական Ջաքարյան իշխանական տան դուստր էր, (1216-1238 թթ.), իրենց տոհմական գերեզմանատանը եկեղեցի է կառուցել. «շինեցուք եկեղեցի ի գերեզմանատանն հարց մերոց ի Գանձասար»³⁶:

³³ ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն Ա (1401-1450 թթ.), կազմեց՝ Լ. Ս. Խաչիկյան, Երևան, 1955, էջ 369:

³⁴ Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. No 2189, էջ 211ա:

³⁵ Мехтиев Рамиз, էջ 13:

³⁶ «Ղիվան հայ վիմագրության», պրակ V, Երևան, 1982, էջ 38:

Ռ. Մեհթիսն աղվան է հռչակել նաև Սահլ Սմբատյանի սերունդ ու XII դ. երկրորդ կեսին և XIII դ. սկզբներին Վերին Խաչենում իշխած Հասան Կրոնավորյալին ու նրա որդի Վախթանգին³⁷: Սակայն իրականությունն այն է, որ ըստ Ջ. Բունիաթովի միայն աղվաներեն իմացող Հասանը, 1182 թ. Դադի վանքի մի խաչքարի պատվանդանի վրա, իր մայրենի հայերենով, ինքնագիր, ծածկագիր, վիմագիր է թողել³⁸, իսկ Մխիթար Գոշը նրան ու որդուն՝ Վախթանգին, 1184 թվակիր հայտնի հիշատակարանում հիշում է իբրև հայ իշխանների³⁹: Հայ էին XII-XIII դարերում Արցախում գերիշխող երեք իշխանատներից ոչ միայն այս երկուսը, այլև Դոփյանները, որոնք կրում էին իրենց տատի՝ Խորիշահի քույր Դոփի անունը: Այդ իշխանական տան սերունդ Սարգիս եպիսկոպոսը 1312 թ. վախճանված իր հոր՝ իշխան Գրիգորի մասին գրելիս ընդգծում է նրա «իշխան Հայոց» լինելը, ապա իրենց տոհմական տիրույթները թվարկելուց հետո հավելում, որ Դոփյանների իշխանությունը «ի մեր նախնեաց մնացեալ հայրենիք է»⁴⁰: Իսկ որ նրա նախնիները ևս հայ էին, ինքնին հասկանալի է: Հասան-Ջալալյանների հայկական իշխանատուն լինելը փաստված է նաև 1456 թվակիր մի հիշատակարանում, որտեղ ասված է. «ի հայրապետութեան Աղուանից նահանգի տեառն Յոհաննիսի՝ որդոյ մեծի իշխանին՝ Հայոց պարոն Ջալալին»⁴¹: 1317 թ. իր իշխանատոհմի հայ լինելն ընգծել է նաև արցախյան սերմամբ

³⁷ Мехтиев Рамиз, էջ 14:

³⁸ Պետրոսյան Հ., Դադի վանքի ծածկագիր արձանագրությունը, «Իրան-Նամե», 1998, No 1-2, էջ 38-40:

³⁹ «Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Ե-ԺԲ դդ.», աշխատասիրությամբ Ա. Ս. Մաթևոսյանի, Երևան, 1988, էջ 242-243:

⁴⁰ «ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», կազմեց՝ Լ. Ս. Խաչիկյան, Երևան, 1950, էջ 84:

⁴¹ «ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», կազմեց՝ Լ. Ս. Խաչիկյան, մասն Ա, էջ 384:

Խաղբակյան-Պոռշյան իշխանատոհմի շառավիղ Իաչի իշխանը⁴²:

Այսպիսով, հայկական և օտար սկզբնաղբյուրների միահամուտ վկայությունների համաձայն, հակառակ պատմության աղբյուրների կեղծարարների, Արցախի բոլոր իշխանատոհմերը հայկական են:

ARTASHES SHAHNAZARYAN

AZERBAIJANI ATTEMPTS TO FALSIFY THE ETHNIC BELONGING OF ARTSAKH PRINCLEY HOUSES

SUMMARY

Since 1930 the historiography in Soviet Azerbaijani being supported by the government and having political issues, has been engaged in falsifying the Armenian history. Illegally falsifying historical facts, they made an attempt to prove that the Utik and Artsakh provinces of Great Armenia were not originally Armenian and were not populated by the Armenians but were «Alban» and populated by the Albans. They also declared the alien Tatars the direct followers of the Albans and indigenous inhabitants.

According to this anti-scientific conception, and by falsifying, ignoring and wrongly interpreting Armenian and foreign sources, the princely houses of Artsakh are declared to be «Alban» that is, as if «Azerbaijani». Anyway the historical reality is that these princely houses are of the Armenian origin. This historical fact is easily proved by the sources that referred to their history and the evidence provided by the representatives of these princely houses.

⁴² «Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. ԺԳ դար», կազմեց Ա. Ս. Մաթևոսյան, Երևան, 1984, էջ 183: «ԺԶ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», էջ 128:

ОБ АЗЕРБАЙДЖАНСКОЙ ФАЛЬСИФИКАЦИИ ЭТНИЧЕСКОЙ ПРИНАДЛЕЖНОСТИ КНЯЖЕСКИХ ДОМОВ АРЦАХА

РЕЗЮМЕ

Начиная с 1930-ых годов историческая наука в Советском Азербайджане исходя из сугубо политических соображений, при государственной поддержке занимается подтасовкой фактов армянской истории.

На основе беспрецедентной фальсификации исторических реалий азербайджанские историки пытаются „доказать“, что области Утик и Арцах Великой Армении изначально являлись не армянскими и армянонаселенными, а «алуанкскими», где жили «алуане», при этом объявляя пришлых татар прямыми потомками алуанков и коренным населением этих областей.

Исходя из этой антинаучной концепции, посредством фальсификации, а также игнорирования и превратной интерпретации армянских и иноязычных первоисточников княжеские дома Арцаха объявляются «алуанкскими», то есть, якобы, «азербайджанскими». Однако исторические реалии явствуют о том, что все эти княжеские дома являлись армянскими. Сказанное подтверждается данными всех первоисточников, касающихся этих княжеских домов, а также свидетельствами их представителей.

ԵՐԵՄԻԱ ՉԵԼԵՊԻ ՔՅՈՄՈՒՐՃՅԱՆԻ

«ՕՐԱԳՐՈՒԹԻՒՆ» ԵՐԿԸ

XVII դարում հայ պատմագրական միտքը զարթոնքի փուլ թևակոխեց, որը որոշակիորեն երկատված էր: Մի կողմից այն հավաստարիմ եղավ դասական մատենագրության ավանդույթներին և մինչ այդ ընդունելի գրական նախընտրություններին, մյուս կողմից՝ ճկունություն և ընկալունակություն ցուցաբերեց նոր շրջանի գրականության հայտագրած սկզբունքների, և ժանրային բազմազանության ու առանձնահատկությունների հանդեպ, որոնք, խնդրո առարկա ժամանակաշրջանում, թեև որոշակիորեն սաղմնային վիճակում էին, սակայն գալիս էին ազդարարելու պատմագրական միջավայրի կերպափոխումները, վերջինիս սոցիալ-հասարակական հենքի ընդլայնմամբ: Այս համապատկերում Երեմիա Քյոմուրճյանի «Օրագրութիւն» երկը չափազանց հետաքրքրական և արժեքավոր է, տեսնելու աշխարհայացքային փոփոխությունների ամբողջ հերթագայությունը, նորամույծ մտածական կառույցների և ժանրային ձևերի կիրառումը, որով էլ պայմանավորվեց արժեքային տեղաշարժերի այն ողջ կենսուղին, որ բնութագրական եղավ XVII դարի հայ պատմագրության համար: Պատկերը հետաքրքիր է երկասիրության ժանրային պատկանելության հարցի քննության արդյունքում. համաշխարհային գրական փորձի համապատկերում օրագրությունների հայտնվելու նախապատմության ու զարգացման ընթացքի վերաբերյալ տարամետ կարծիքները, առանձին բացառություններով, սակայն հաշտ են XVII դարը իբրև առաջին օրագրությունների ի հայտ գալու ժամանակաշրջան դիտարկե-

լու հարցում¹: Օրագրությունների միջով անցնում է պատմագրության «մարդեղացման» ճանապարհը, ինչպես դիպուկ նկատում է Վ. Ժիվովը. «մարդու մասնավոր կյանքը ձեռք է բերում մշակութային արժեք»²: Պիտի ասել, որ ինչքան էլ վերապահումով մոտենանք XVII դարը համաշխարհային մշակույթի պատմության մեջ իբրև մարդու հոգեմտավոր անհատականության վավերացման «դարագլուխ»³ համարող ուսումնասիրություններին, չենք կարող չնկատել, որ հայ պատմագրությունը շատ ընկալունակ և ճկուն եղավ այդ նոր հայացքների յուրացման հարցում: Երեմիա Քյոմուրճյանի «Օրագրութիւն»-ը հետաքրքիր քննություն է բռնում ժանրային ատանձնահատկությունների այդ ընդհանրության մեջ դիտարկելիս: Պատմագիտության մեջ գործը հայտնի է ոչ իր հեղինակային անվանումով: «Օրագրութիւն» վերտառությունը հետագայի ուսումնասիրողների նախաձեռնության հետևանք է. Ղևոնդ Փիրդալեմյանը գործը տեսել է ձեռագիր վիճակում և փոքրիկ մի հիշատակագրությամբ այն կոչել «Օրագրութիւն»: Ձեռագրի հրատարակության գործը ստանձնած Մեսրոպ արք. Նշանյանը, Ղ. Փիրդալեմյանի հետևությամբ, պահպանել է այդ անվանումը և մեկընդմիջտ մոռացության մատնել հեղինակային վերնագիրը: Ինքը՝ Երեմիա Քյո-

¹ Որոշ ուսումնասիրողներ օրագրական ավանդույթների սկզբնավորումը տեսնում են XVI դարում: Տե՛ս Криволапова Е., К вопросу о генезисе жанра дневника, Ученые записки: электронный научный журнал Курского государственного университета (<http://scientific-notes.ru>), 2012, N 1 (21), էջ 3:

² Նույնը, էջ 5:

³ Солонин Ю.Н., Дудник С. И., Судьба субъективного жанра в контексте европейской культуры XVII - XX веков, XVII век в диалоге эпох культур. Материалы Международной научной конференции "Шестые Лафонтеновские чтения", СПб., 2000, стр. 11.

մուրճյանը, իր երկը խորագրել է «Ժայմանակայգիր եւ պատմութիւն»⁴:

Երեմիա Քյոմուրճյանը երկը սկսել է գրել 1648 թ. հունիսի 11-ից, ավարտել 1662 թ. հոկտեմբերի 24-ին: Կ. Դանիելյանը կասկածի տակ է առնում այն հանգամանքը, որ Քյոմուրճյանը երկը շարադրել է 1648 թ.-ից՝ համարելով, որ այդ գրառումները չեն կարող պատկանել «12-14-ամյա անչափահաս երեխայի» գրչին⁵: Հարցի առնչությամբ կցանկանայինք մի քանի դիտարկում կատարել. 1648 թ. դեպքերի շարադրանքը մեզ մոտ նույնպես որոշակի կասկածներ է հարուցել. նախ՝ դեպքերը շարադրված են ակնհայտ տարբեր մոտեցմամբ, քան, օրինակ, հաջորդ տարվա ընթացիկ գրառումների ոճն է: Շարադրանքն ավելի հասուն մարդու ստեղծագործություն է թվում, գրի է առնված սուլթան Իբրահիմ I-ի (1640-1648) գահընկեցության պատմությունը: Կարծում ենք, որ 1648 թ. դեպքերը ներկայացված են հետահայաց (ռետրոսպեկտիվ) կերպով, ինչին հետևում է, որ 1648 թ. Իբրահիմ I-ի գահընկեցության պատմությունը հետագայի շարադրանք է և բնագրի մեջ ներմուծվել է ավելի ուշ շրջանում: Երեմիա Քյոմուրճյանի՝ մեր տրամադրության տակ եղած ձեռագրերին հպանցիկ հայացքն անգամ ցույց է տալիս, որ նրա աշխատելանոճին շատ հարագատ է, ըստ երևույթին, հետագայում լրացնելու դիտավորությամբ ամբողջ էջեր բաց թողնելու սովորությունը: 1648 թ. հասուն շարադրանքի հանգամանքը, այսպիսով, դեռ հիմք չի համարելու, որ «Օրագրութիւն»-ը չէր կարող լինել պա-

⁴ Դիտելի է, որ շարադրանքում նա երկը կոչում է նաև «պատմագրութիւն», Օրագրութիւն Երեմիա Չէլեպի Քեօմիւրճեանի, հրատ. Մեսրոպ արքեպս. Նշանեան, Երուսաղէմ, 1939, էջ 374 (այսուհետև՝ Օրագրութիւն):

⁵ Դանիելյան Կ., Հայ մեմուարային գրականության պատմությունից, Երևան, 1961, էջ 73-74:

տանի Երեմիայի ստեղծագործության արգասիք: Արդեն հաջորդ տարվա՝ 1649 թ. դեպքերի շարադրանքից⁶, որ առավել օրագրային բնույթ ունի (օգոստոսի 3-ից սկսած) պարզ է, որ դեպի Երուսաղեմ շուրջ 10 ամիս (5 օր պակաս) տևած ուխտագնացության այս կամ այն անցքերը Երեմիա Քյոմուրճյանը գրի է առել հենց ընթացքում. «Եւ վասն տկարութեան մերում ի ճանապարհի չկարացի յամենայն աւուր (ընդգծումը՝ Գ.Ա.) գրել զիջևանի տեղիսն մեր»⁷: Ավելին՝ պատանի հեղինակն իր առջև խնդիր է դրել գրելու յուրաքանչյուր օրվա անցուդարձը, այլ բան, որ դա նրան ամբողջապես չի հաջողվել: Երկը շարադրելու պահին օրագրողի տարիքի կապակցությամբ չափազանց արժեքավոր է մեկ այլ տեղեկությունն ևս. 1658 թ. ապրիլին՝ իր 22-ամյակը բոլորելու նախաշեմին, արդեն հաստատապես հասուն երիտասարդության շրջան մուտք գործած Երեմիան խոստովանում է, որ «Օրագրութիւն»-ը սկզբնական շրջանում որոշակիորեն արտացոլում է իր առաջին գրչափորձերը. «Այսքան զոր ծրիցի, խաղալիկ անմտութեանս, յըսկիզբն տարուս մինչ ի կատարած տարոյս, և տեսողացդ զայս զիս կատակելոյ. ողջ լիջիք ի Տէր սրբութեամբ»⁸: Այլ հարց է, թե այս գրառումները Երեմիան կատարել է իր անձնակա՞ն նախաձեռնությամբ, թե՞ ժամանակի երևելիներից մեկի հուշումով, որոնք քիչ չէին պատանու շրջապատում: Մեզ հայտնի աղբյուրագիտական տվյալները լռում են այս առնչությամբ. կարծում ենք՝ ձեռագրական ավանդույթներից հայտնի «ստացող» իմաստով մատյանը պատվիրատու չի ունեցել, բայց ձեռ-

⁶ 1649 թ. շարադրանքը նա սկսում է փետրվարի 14-ից, թեև մինչև օգոստոսի 3-ն ընկած ժամանակահատվածի իրադարձությունները ներկայացնում է խիստ համառոտակի, սակայն պարզօրոշ է, որ այդ շրջանի գրառումները նույնպես արված են ներկա ժամանակով:

⁷ Օրագրութիւն, էջ 16:

⁸ Օրագրութիւն, էջ 68:

նարկը սկսելու խորհրդատու Քյոմուրճյանը ունեցել է, որ կարող էին լինել իր հայրը՝ Մարտիրոս Քյոմուրճյանը, ուսուցիչը՝ Հովհաննես քահանան, Եղիազար Այնթապցին, որ մեծ հեղինակություն էր Քյոմուրճյանի համար, և վերջապես՝ իր խնամակալ Ամբակումը: Ըստ էության, հենց վերջինս էլ ամենից սերտ առնչությունն ունի Երեմիայի օրագրական այս գրառումների հետ: Նշենք, որ պատանին դեպի Երուսաղեմ վերոնշյալ ուխտագնացության գնում էր Ամբակումի և նրա կնոջ հետ: Արդեն հիշատակել ենք Երուսաղեմ կատարած ճամփորդության առաջին իսկ օրից է Երեմիան ձեռնամուխ լինում շարադրելու ուղևորության մանրամասները՝ «յամենայն աւուր»: Այս ճամփորդությունը մեծ կարևորություն ուներ Ամբակումի համար, քանի որ մի կողմ թողնելով բոլոր գործերը՝ նա Սուրբ Երկիր շտապեց Ամենայն Հայոց կաթողիկոս Փիլիպոս Ա-ի հրավերով, և կարող էր ցանկություն ունենալ հավերժացնելու իր համար այդչափ թանկ հանդիպման օրակարգը: Իսկ ակնառու ընդունակություններով իր պատանի ազգականը թերևս ամենից հարմար թեկնածուն էր այդ գործն ի կատար ածելու համար: Սրան լրացնելու է գալիս «Օրագրութիւն»-ից մի վկայություն, մահվան մահճում գտնվող Ամբակումը, ի թիվս երկարաշունչ պատգամների և ցանկությունների, իր հոգեգավակին խնդրում է նաև. «Ո՛վ որդեակ իմ, գրեա՛յ զայս ամենայն ի մատենի քում առ յիմոյ յիշատակի»⁹:

Փորձենք այժմ քննել երկի ժանրային պատկանելության հարցը, պարզել՝ ինչքանով է արդարացված երկի հեղինակային անվանումը ստվերում թողնելը, և եթե «Օրագրութիւն», ապա որքանով է այս ստեղծագործությունը համապատասխանում օրագրային ժանրի առանձնահատկություններին ու ընդհանուր

⁹ Օրագրութիւն, էջ 313:

սկզբունքներին: Օրագրությունների առաջին բնութագրիչը ժամանակագրական կարգի խստագույն պահպանումն է՝ տարվա, ամսվա, օրվա և անգամ օրվա ժամերի ճշգրիտ հիշատակմամբ: Այս առումով Երեմիա Քյոմուրճյանը գերազանցում է բոլոր սպասելիքները. երկը նա շարադրել է, ինչպես արդեն նշեցինք, 1648 թ. հունիսի 11-ից 1662 թ. հոկտեմբերի 24-ը (բացառություն է միայն 1651 թվականը, որը հեղինակը գրի չի առել): 14 տարվանից յուրաքանչյուրը գրի է առնված առանձին և հեղինակի կողմից հստակ տարբերակված է: Երևում է անգամ, որ նոր տարվա շարադրանքը սկսելը նրա կենսագործունեության անբաժան մասն է եղել. «Թվին ՌՃ եւ Ե-ն Հայոց շնորհօքն Քրիստոսի սկսայ զայս ինչ սակաւ իրս, որ եւ ողորմութիւն Քրիստոսի օգնեսցէ հասուցանել ի ծար քանիս»¹⁰: Ամիսների անխախտ հերթագայությունը, չի կարելի ասել, որ պահպանվել է շարադրանքի ամբողջ ընթացքում: Ամենամսյա հաջորդականությամբ դեպքերը ներկայացված են միայն 1653, 1654, 1655, 1656 թվականների կտրվածքով, այս շարքին կարելի է դասել նաև 1657-ը՝ մի բացառությամբ, որ տարվա մինչև նոյեմբերի վերջն ընկած իրսդարձություններն են գրառված: Վերը նշված տարիների շարադրանքը ամբողջ երկի համապատկերում ամենից ընդարձակն ու մանրամասն է: Պատկերն ավելի գունեղ է օրերի շարունակականության տեսակետից. չափազանց շատ են օրերի չընդհատվող հերթականություն ունեցող հատվածները: Օր առ օր շարադրված են 1656 թ. ապրիլ-հուլիս ամիսների դեպքերը¹¹ (կամեկ-երկու օրվա բացթողում, որ այս պարագայում էական չէ): Օրավուր գրառումների ընդհատումները չնչին քանակի են

¹⁰ Նույնը, էջ 140:

¹¹ Օրագրութիւն, էջ 137-193:

հասցված 1656-1657 թթ. համար առհասարակ: Ժամանակագրական բնույթի հիշատակությունները Քյոմուրճյանի մոտ մանրաքնին ճշգրտության են հասցված. նա տեղեկություններ է հայտնում օրվա ժամերի դրությամբ անգամ. «[1655, 2 հուլ.] Եւ ի լուսանալ առաւօտուս՝ օր Բշի (երկուշաբթի՝ Գ.Ա.) եկաք ի բնակութիւնս մեր: Եւ ատուրս է-րդ ժամուն եղն զի հնչեաց հողմն մի յոյժ սաստիկ»¹²: Հավելենք նաև, որ հնարավորության դեպքում նա անպայման ամսաթվի կողքին հիշատակում է նաև եկեղեցական տոները, անգամ եթե դրանց չէին հաջորդում հիշարժան դեպքեր¹³: Հետաքրքրական է, որ պատմիչի համար ելակետային են նաև մահմեդական տոնացույցի նշանակալի օրերը¹⁴:

Հաջորդ հարցը, որ կցանկանայինք դիտարկել ուսումնասիրվող թեմայի շրջանակներում, տեքստային միջավայրում՝ օրագրողի անձնականության (ինդիվիդուալիզմ), հեղինակային ինքնագիտակցության, հարաբերակցության, հարցն է իրեն շրջապատող պատմաքաղաքական իրականության հետ, որի խորության աստիճանով էլ թերևս չափվում է ոչ գեղարվեստական բնույթի օրագրությունների, ինչպիսին քննարկվող երկն է, աղբյուրագիտական արժեքը: Երեմիա Քյոմուրճյանի «Օրագրութիւն»-ը երկատված է կենցաղայնության հասնող հիշատակությունների և հասարակական-քաղաքական կարևորագույն նշանակության իրադարձությունների արձանագրման՝ հեղինակի ցուցաբերած զրական մոտեցումների միջև: Չի կարելի ասել, որ Քյոմուրճյանի համար ծրագրային հարց է եղել ինքնակենսագրական տվյալների հաղորդումը. շարադրանքի էջերում դրանք նա հայտնում է բավական վայրիվերո և երկրորդական պլանում:

¹² Նույնը, էջ 80:

¹³ Նույնը, էջ 35, տե՛ս նաև՝ էջ 38, 41, 42, 45 և այլն:

¹⁴ Նույնը, էջ 56, տե՛ս նաև՝ էջ 57, 58 և այլն:

Օրագրական այս գրառումներում, նաև անթիվ-անհամար են հիշատակումներն իր առօրյա հոգսերի, այցերի, հանգստի, հիվանդությունների, անգամ՝ երազների և այլ կենցաղային տվյալների վերաբերյալ: Շարադրանքը պարզապես հեղեղված է բազմաթիվ այլ անձանց վերաբերող նմանատիպ վկայություններով նույնպես, որոնցից շատ քչերն են քաղաքական դեմքեր. նրանք գլխավորապես Երեմիայի ծանոթներն են, մտերիմները, ազգականները: Հեղինակն առանձնակի բժախնդրություն ու հետևողականություն է ցուցաբերում կնուներների, հարսանիքների, թաղումների մասին հիշատակություններ թողնելիս¹⁵, որոնք խիստ հակիրճ ու տեղեկատվական բնույթի են: Աչքի է զարնում մեկ այլ երևույթ ևս. օրագրողը անսպասելիորեն ընդհատում է շարադրանքը, երբ այս կամ այն դեպքից նեղսրտում կամ պարզապես հոգնում է գրելուց. «Զգուիմ գծրելն մեծ աղմկիս եղելուցս»¹⁶: Արդյոք Քյոմուրճյանի նման «անփութության» պատճառն այն էր, որ իր այս գրառումների համար նա չէր նախատեսել հասցեատեր-ընթերցող: Անշուշտ՝ ոչ: «Օրագրութիւն»-ը մենախոսություն է, ինչը, որպես կանոն, բխում է օրագրական ժանրի առանձնահատկություններից¹⁷, սակայն սա ներփակ ինքնախոսություն չէ, հեղինակն ունի իր երևակայական ընթերցողը, նա հաճախ է դիմում երկխոսության: Քիչ չեն նաև ճառախոսական բնույթի հարցադրումներն ու երկարաշունչ տրակտատները, որոնք նա հղացել է՝ ի դատապարտումն Կ. Պոլսի հայ գաղթավայրում ծայր առած տարատեսակ արատավոր երևույթների:

¹⁵ Օրագրութիւն, էջ 56, տե՛ս նաև՝ էջ 57, 58, 59, 60 և այլն:

¹⁶ Օրագրութիւն, էջ 95, տե՛ս նաև՝ էջ 122:

¹⁷ Богданова Е. В., Языковые особенности жанра дневника. Филологические науки. - Вопросы теории и практики, Тамбов, 2008, № 1 (1), стр. 4.

Օրագրությունների դեպքում հեղինակի անձը մեծապես պայմանավորում է դրանց աղբյուրագիտական արժեքը. քննության առարկա երկն այդ իմաստով շահեկան դիրքում է գտնվում: Երեմիա Քյոմուրճյանը բազմակողմանի կապեր ուներ ոչ միայն հայկական միջավայրում, այլև առնչվում էր օսմանյան մտավոր և քաղաքական շրջանակների, Կ. Պոլսում դիվանագիտական առաքելությամբ հանդես եկող եվրոպացիների հետ: Շփումների բազմազանությունը մի կողմից, մյուս կողմից՝ մշակութային նման փոխազդեցությունները, ինչ խոսք, բարենպաստ պայմաններ պիտի ստեղծեին Երեմիա Չելեպիի օրագրական գրառումների համար: Իր ազգակցական կապերի, հետագայում նաև զբաղեցրած հասարակական դիրքի բերումով՝ Քյոմուրճյանը գրեթե ողջ գիտակցական կյանքի ընթացքում թե՛ ականատես, և թե՛ մասնակից է եղել իր ժամանակի սոցիալ-քաղաքական իրադարձային տեղաշարժերին: Հետևել է նաև Օսմանյան կայսրության ներքին ու արտաքին քաղաքական գործընթացներին: Դրանով հանդերձ, Երեմիա Քյոմուրճյանը կուսակցական պատմագիր է: XVII դարի երկրորդ կեսին պոլսահայ կյանքը փոթորկած տարամետ ուժերի բախումներն ու դավերը չշրջանցեցին նաև նրան: Հատկապես «Օրագրութիւն»-ը շարադրելու տարիներին մեծ էր նրա համակրանքն ու նվիրումը ժամանակաշրջանի ակնառու գործիչներից մեկի՝ Եղիազար Այնթապցու հանդեպ: Երեմիան Եղիազարի կուսակցության անթաքույց համակիրն է, և չի խորշում դրանից: Շարադրանքի տարբեր հատվածներում բազմաթիվ են այսպիսի հիշատակումները. «Եւ մերայինքս ելին անտի և եկին», «մերայինք ցրուեալ ամենեքեան գնացին»¹⁸, «Եւ օրս մեր կողմքն գրեցին թուղթ...»¹⁹: Հեղինակի կողմ-

¹⁸ Օրագրութիւն, էջ 100:

նակալությամբ է բացատրվում միտումնավոր լռությունների ու դադարների հաճախականությունը, որ առկա է երկի տարբեր դրվագներում: Քյոմուրճյանը գուրկ չէ վերլուծական կարողություններից ու դիտողունակությունից, սակայն դրանք գործի է դնում ոչ բոլոր դեպքերում: Շարադրանքի բովանդակային պատկերը մեծապես փոխվում է նաև Քյոմուրճյանի հետաքրքրությունների ու զբաղմունքների ազդեցությամբ. հացագործության ոլորտում պատմագրի ունեցած շահադիտություններով պայմանավորված՝ օրինակ, շարադրանքում մեծ տեղ են զբաղեցնում իր վերահսկողությամբ գործող փոխն առնչվող տարատեսակ մանրամասները, կենցաղային ու վարչարարական բնույթի տվյալներ, որոնք մեծ կարևորություն ունեն հեղինակի համար²⁰:

Քյոմուրճյանի անձը և գործունեությունը, սակայն, Օրագրության միակ աղբյուրը չէ: Պատմագիրը չափազանց մեծ տեղ է տվել դեպքերին ականջալուր և ականատես եղողների հաղորդած տվյալներին. անհաշվելի են այն վկայությունները, որոնք Քյոմուրճյանը հայտնում է՝ որպես նախադասության գերադաս բաղադրիչ ունենալով «լուաք», «լու եղև», «տեսողքն պատմեցին», «ասացին թե» և նմանաբնույթ արտահայտությունները: Սակայն ի՞նչ սկզբունքով էր Քյոմուրճյանը նախապատվություն տալիս այս կամ այն սկզբնաղբյուրին, ժողովրդի շրջանում տարածված լուրերն առանց բացառության էին ընդունելի նրա համար, թե՞ ընտրողաբար էր մոտենում իր տվյալներին: Կարծում ենք՝ հնարավորության դեպքում աշխատում էր հիմք ընդունել իրադարձություններին մոտ կանգնած վկաների տեղեկությունները՝ ահավասիկ. «Եւ այսօր յորում ի Վլանկա կանգնեալ կայաք՝

¹⁹ Նույնը, էջ 140 և այլն:

²⁰ Նույնը, էջ 36, տե՛ս նաև՝ էջ 42, 60 և այլն:

շաչն ի շարն և Բ Բ և Գ Գ ոգի գային ի պատերազմէն»²¹ կամ «շա-
 քաթ [1657, հուլ. 11]. Երեկոյիս մարդ եկն ի պատերազմէն. ստոյգ
 համբաւ ոչ կայր այլ խառն»²²: Բացի այդ, շրջանառվող լուրերին
 ևա ցուցաբերել է որոշակի քննական մոտեցում, փորձել է հա-
 մադրել դրանք և ավելի ստույգ պատկեր ներկայացնել ընթերցո-
 ղին. «Եւ պատճառ Բ զիտեա այսմ՝ զի ասացին թէ վեզիրն, որ
 զտէֆտէրտարն առաջին փոխեաց, վասն որոյ և դըզլար աղա-
 սին՝ ձեռնատուութեամբ վալիտին՝ զիւր արմատն ի նմանէե-
 հան, և երկրորդ՝ ներգործութիւն ի վեզիրէ ասացին...»²³: Մեկ այլ
 տեղ կարդում ենք. «...պատճառ բազում ասացին, բայց երկուս
 ստուգեցաւ...այս Բ պատճառաւ տարեալ առաջի իւր, ոչինչ խօ-
 սեալ՝ այլ ամենայն կերպարանօքն կախէր»²⁴:

Տվյալների մյուս ստվար խմբի համար աղբյուր են ծառայել
 մունետիկների հայտարարությունները, որոնց աղբյուրագիտա-
 կան արժեքը շատ ավելի բարձր է, քանի որ դրանք հրապարա-
 կում էին արքունական որոշումները, որոնք ամենաբազմազան
 բնույթի էին, որոնք վերաբերում էին քաղաքական, տնտեսական,
 ռազմական, ազգային փոքրամասնությունների և այլ խնդիրնե-
 րին, գործօրինակ. «Եւ մունետիկն աղաղակեաց յամենայն տեղիս
 թէ Բացվի չարսուն և խանութքն. և բացաւ օրս և չընչինս էւս
 գնացի ի խանութ...»²⁵: Ավելի քան պարզ է, որ Քյոմուրճյանն իր
 «Օրագրութիւն»-ը չի գրել կատարյալ մենության մեջ, ներամ-
 փոփ՝ կտրված արտաքին աշխարհի ազդակներից: Ուսումնա-
 սիրվող ժամանակաշրջանում պատմագրական խնդիրների տա-

²¹ Նույնը, էջ 189:

²² Նույնը, էջ 256, տե՛ս նաև՝ էջ 383 և այլն:

²³ Նույնը, էջ 389:

²⁴ Նույնը, էջ 396-397:

²⁵ Նույնը, էջ 121, տե՛ս նաև՝ էջ 169, 201 և այլն:

րածական միջավայրի փոփոխությունների հետագիծը պատկերացնելուն մեծապես օգնում է ինքը՝ հեղինակը: Հոր հիվանդության պատճառով 1658 թ. փետրվարի 24-ից մարտի 8-ն ընկած ժամանակահատվածի անցքերը Քյոմուրճյանը չի ներկայացրել և պատճառաբանում է, թե ինչու. «...և ապա սակաւ սակաւ նուաստացաւ ցաւն մինչ Մարտի Ը յերրորդում շաբաթուպահոցն, և ապա օրս գնացի ի խանութ (ընդգծումը-Գ.Ա.): Վասն որոյ և այսմ զբաղմանց խափանեցաւ իր գրոյս, բայց փոքր ի շատէ գոր երթեալ նստեաք մերձ առ իշխանսն՝ լսեաք գոր լիներն»²⁶: Այսպիսով, ինչպես երևում է, «Օրագրութիւն»-ը նա զլխավորապես գրել է հացավաճառության գործին զուգահեռ, մի միջավայրում, որ, ըստ էության, քաղաքային անցուդարձի խաչմերուկ էր և գործը շարադրելու համար աղբյուրագիտական հենք էր ապահովում: Ըստ երևույթին, Քյոմուրճյանի նստավայրը գտնվում էր քաղաքի բանուկ հատվածում: 1656 թ. մայիսի 3-ին նա գրում է. «Եւ ի դէպ յետնուցս Հինտիստանայ էլչի եկաւ ի թագաւորն և ի ժամուս այս դիհս անցաւ»²⁷: Այսպիսով, մեր իրականության մեջ պատմագրական ավանդույթների համակարգում կատարված այս տեղաշարժերը, չենք վախենա ասել, որ նոր էին և արմատական:

Օրագրության ժանրին բնորոշ մյուս առանձնահատկությունը, որ մենք կցանկանայինք դիտարկել Երեմիա Քյոմուրճյանի ստեղծագործության համապատկերում, լեզվաոճական տարբերակումների և քերականական կառույցների կիրառման հարցն է: Ինչպես արդեն նշեցինք, ռետրոսպեկտիվ շարադրանքի սկզբունքը, որը սովորաբար հատուկ չէ օրագրություններին,

²⁶ Նույնը, էջ 271:

²⁷ Նույնը, էջ 170:

հիմնականում կարելի է խորթ համարել նաև Երեմիա Քյոմուրճյանի Օրագրության համար։ Նկարագրվող դեպքերը տեղի են ունենում շատ մոտ անցյալում, հնարավոր է՝ միայն երբեմն գրառված են մեկ-երկու օրվա տարբերությամբ, ուստի շարադրանքի ընդհանուր կառուցվածքում բայերը գործածվում են գլխավորապես ներկա և անցյալ ժամանակներով։ Երեմիա Քյոմուրճյանի «Օրագրութիւն»-ը բայական ժամանակաձևերի առումով հետևյալ պատկերն ունի. առավել հաճախ գործածված է անցյալ ժամանակը՝ անցյալ անկատար և կատարյալ ժամանակաձևով, հանդիպում են նաև ներկա ժամանակով գործածված բայական կառույցներ, որոնք հիմնականում համապատասխանում են արդի հայերենի սահմանական եղանակի ներկա ժամանակին։ Այն հատվածներում, որտեղ հեղինակային շարադրանքը վերաճում է երկխոսության, կիրառված է, բնականաբար, բուն հրամայական կամ հրամայական եղանակի ներկա ժամանակաձևը՝ երկրորդ դեմքով։ Օրագրություններին պակաս հատուկ են ապառնի ժամանակով հիշատակումները։ Քյոմուրճյանի Օրագրության էջերում ավելի հաճախ հանդիպում է երկրորդ ապառնի ժամանակաձևը։

Երեմիա Քյոմուրճյանի «Օրագրութիւն»-ը չափազանց արժեքավոր է նաև իր՝ պատմագրություն բերած լեզվով։ Լեզվի հարցում միջնադարյան հայ պատմագրության՝ երբեմն մաքրամոլության հասնող բացարձակ դիրքորոշումը ուսումնասիրվող ժամանակաշրջանում կարծես թե խմբագրվում է։ Պատմագրական շփումների սոցիալական միջավայրի փոփոխությունն իր հերթին մեծ ազդեցություն է թողնում լեզվական շերտի վրա։ «Օրագրութիւն»-ը գրված է շատ պատկերավոր, գունեղ ու հետաքրքիր լեզվով։ Առավելապես գերիշխող է խոսակցական լեզ-

վի բառամթերքը: Քյոմուրճյանի լեզուն շատ յուրատիպ տեղ է բռնել գրաբարի, միջին հայերենի և օսմաներենի միջակայքում: Ժանրային առանձնահատկություններով պայմանավորված՝ շարադրանքին հատուկ են կրկնաբանությունները, ավելի հաճախ՝ փուլայնությունը, անկախ զարգացումներից՝ տարեշրջանների հաջորդականությունն անփոփոխ է: Արդեն նշեցինք, որ հեղինակը կարող է կամայականության կամ մեկ այլ պատճառով կիսատ թողնել շարադրանքը, սրան գումարվում են նաև հատվածականությունը, հաղորդումների՝ տեղ-տեղ սեղմ ու հակիրճ բնույթը:

Վերը վկայված բոլոր առանձնահատկությունները Երեմիա Քյոմուրճյանի «Օրագրութիւն» երկասիրության ժանրային պատկանելության հարցում կշեռքի նժարը փոխում են հոգուտ վերջինիս օրագրային պատկանելության՝ ինքնըստինքյան արդարացնելով երկի՝ հետագայի միջամտությամբ քաղաքացիություն ստացած ժանրային ձևաչափը: Մեր դիտարկումները, սակայն, բերել են այն եզրակացության, որ ելնելով մի շարք նկատառումներից՝ «Օրագրութիւն»-ը չի կարելի անվերապահորեն համարել օրագրային ժանրի ստեղծագործություն: Պատմագրություն գրելու հավակնոտ ցանկությունը չի սոսկ, որ ընկած է Երեմիա Քյոմուրճյանի ընտրած խորագրի հիմքում: Երկն իր մի շարք առանձնահատկություններով հարում է նաև պատմությանը հատուկ չափորոշիչներին: Որքան էլ Երեմիայի «Օրագրութիւն»-ը առլեցուն է անձնական և կենցաղային բնույթի տվյալներով, այն նախևառաջ մեծապես անդրադարձումն է կարևորագույն հասարակական-քաղաքական տեղաշարժերի, որոնք դիտարկելի են պատմության համատեքստում և կարող են ընթեռնելի լինել պատմական տեքստի շրջանակներում: Երեմիա Քյոմուրճյանի «Օրագրութիւն»-ը ոչ

միայն մեզ հայտնի միակ հիմնական սկզբնաղբյուրն է XVII դարի երկրորդ կեսին հայության արևմտահայ հատվածում տեղ գտած իրադարձային գործընթացների լուսաբանման, այլն՝ համակողմանի հետևում է օսմանյան ներքին ու արտաքին կյանքում տեղի ունեցող դեպքերին: Հեղինակի ուշադրությունը մեծապես գրավում են օսմանյան կառավարման համակարգում տեղի ունեցած փոփոխությունները, վեզիրների պաշտոնակալության ընթացքն ու հերթագայությունը, կայսրության արտաքին քաղաքական անցքերը, մայրաքաղաք եկող դեսպանագնաց պատվիրակությունները և վերջապես՝ ջալալիական խռովությունները: Օսմանյան քաղաքական օրակարգի նկատմամբ հեղինակի նման բժախնդիր և հետևողական վերաբերմունքի պատճառներից մեկն էլ օսմանյան իրականության մեջ հայկական շահախնդրություններն ավելի ստույգ ձևակերպելու և դրանք հնարավորինս կայսրության քաղաքական օրակարգից բխեցնելու դիտավորությունն էր: Ավելի էական էր, սակայն, Քյոմուրճյանի ունեցած քաղաքացիական ինքնագիտակցության հարցը, որն օսմանյան էր: Այն, որ Երեմյա Չելեպին չի գրել սոսկ ինքնաբուխ մի շարադրանք՝ թելադրված օրերի տպավորություններով, այլ որոշակիորեն ծրագրել է իր աշխատանքը, պարզորոշ է նաև հետևյալ վկայությունից. «...Եւ ապա հրամայեաց պատրիզն, և գնաց յեկեղեցիսն, յաւել զմի ի ամիս նստէր, զոր յետոյ ասասցուք ի տեղոջ իւրում (ընդգծումը՝ Գ.Ա.)»²⁸: Կա մեկ այլ հանգամանք նս. սկսած 1659 թ., մասամբ նաև 1658 թ.՝ հեղինակը չի պահպանում ամենօրյա շարադրանքի ավանդույթը՝ դեպքերը ներկայացնելով խիստ համառոտակի և ընդհանրական: Օրագրության շարադրանքի՝ համարյա ամենօրյա ուղիքներ վերոհիշյալ տարեշրջաններից սկսած՝ նկատելիորեն

²⁸Նույնը, էջ 338:

բեկվում է. անգամ իր առօրյա գործողությունները մանրամասն գրի առնող Քյոմուրճյանը սկսում է ավելի ընտրողաբար վերաբերվել ներկայացվող նյութին, հեղինակի ուշադրության կենտրոնում հայտնվում են բացառապես հասարակական-քաղաքական անցքերը: Տպավորություն է ստեղծվում, որ նա հետահայաց կերպով շարադրել է այն դրվագները, որոնք առավել կարևոր է համարել: Շարադրանքում տեղ գտած կրճատումները խոստովանում է նաև պատմագիրը. «Ջոչ գրելն իմ ի մեջ աւագ պահոցս թէ զի եղև, զպատճառն նս եղաք խոստովանօրէն, յոր ընդ ատուրսն փոխեցին զմեծ դատին որ աստ ի քաղաքս: Նաև թումայ անուանեալն, գորոյ զգալն և զոչ ընդունելն յեկեղեցիսն և ուր ուրեք հանդիպիլն, անդէն նս զթողուլն և զընդունելն ոչ գրեցաք»²⁹: Կարծում ենք՝ այս դեպքում դեր է խաղացել նաև ժամանակի պակասը, որ պայմանավորված էր հեղինակի թե՛ գրական, թե՛ հասարակական հարաճուն գործունեությամբ:

Երեմիա Քյոմուրճյանի «Օրագրութիւն»-ը մեզ հայտնի պատմական օրագրություններից առանձնանում է իր ունեցած աղբյուրագիտական հենքով, որը ոչ միայն վերը քննարկված «առաջին ձեռք» տեղեկություններն են, այլև՝ զանազան նամակներ, թղթեր, դատավարական վճռագրեր ու հրամաններ, կամ դրանց պատճենները, որոնք հասու էին նոտարական գործառույթներ իրականացնող Երեմիա Քյոմուրճյանին, դրանք շատ հաճախ նա անձամբ էր գրում կամ ընթերցում պատրիարքարանի ժողովների ժամանակ: Նամակների հեղինակներն ու հասցեատերերը ամենատարբեր մարդիկ են՝ Ամենայն Հայոց կաթողիկոս Հակոբ Ա Ջուղայեցին, Եղիազար Այնթափցին, Երուսաղեմի Աստվածատուր պատրիարքը, Սսի Խաչատուր կաթողիկոսը

²⁹Նույնը, էջ 276:

և ուրիշներ: Երեմիա Քյոմուրճյանը բազմիցս մեջբերումներ է կատարում նաև օսմանյան վեզիրների և տարատեսակ բարձրաստիճան պաշտոնյաների նամակներից, որոնց բովանդակությունը իրեն ծանոթ է եղել: Փաստորեն, մենք գործ ունենք վավերագիր միավորների կիրառման երևույթի հետ, որոնք գործում հղված են բնօրինակի, պատճենված կամ միջնորդավորված ձևով: Տեղ-տեղ, սակայն, հեղինակին ոչ միշտ էր հաջողվում պարզել նամակների բովանդակությունը. «[1657, 6 փետրվ.] Ուրբաթ օրս պատրիզն Հոռոմոց մտեալ ընդ փաշան, տեսեալ զգործս յառաջմանէ. և օրս վեզիրն խիլայեաց գնա և գորս ընդ նմա՝ կապայ զգեցուցանելով, և Բ թղթիւք ել ի տանէ վեզիրին և ոչ զհտացաք թէ զինչ էր ի թղթին»³⁰:

Բացի արխիվային հիմքից՝ «Օրագրութիւն»-ը գրելիս Երեմիա Քյոմուրճյանն օգտագործել է նաև սկզբնաղբյուրային նշանակության այլ երկեր: Այսպես, 1658 թ. ջալալիական հերթական ապստամբություններից մեկի ընթացքը ներկայացնելիս Քյոմուրճյանը գրում է. «Եւ յաւարտումն բանից (ընդգծումը՝ Գ.Ա.) Հասանեացն ապստամբից տեսեր զի գրեցաւ թէ իբրև ոչ կարացին պարտել կամ ահացուցանել յայս կողմ»³¹: Պատմական աղբյուրները նա վկայակոչում է՝ առանց դրանք հղելու. «...Եւ զայլն զկնի որդին (խոսքը օսմանյան հռչակավոր վեզիր Ֆազըլ Ահմետ փաշայի մասին է՝ Գ.Ա.) առաւելացոյց, զոր պատմեն զիրքս (ընդգծումը՝ Գ.Ա.)»³²: Գլխավորապես իր ընդարձակ ճառախոսությունների ժամանակ ի հայտ են գալիս Երեմիա Քյոմուրճյանի պատմահայեցողության որոշ տարրեր: Շարադրանքի ընթացքում նա վկայակոչում է մի շարք հեղինակների և գրական

³⁰ Նույնը, էջ 227:

³¹ Նույնը, էջ 305:

³² Նույնը, էջ 380:

հուշարձաններ, որոնք աներկբա հեղինակություն էին միջնադարյան հայ պատմագրական մտքի համար, թեև պատմագիրը բառացի մեջբերումներ չի կատարում, սակայն կարծես թե չկամենալով զանց առնել ընդունված պատմագրական ավանդույթները, և իր երկին ավելի արժանահավատություն հաղորդելու համար, Քյոմուրճյանը դիմում է գրական որոշակի հնարքների: Այսպես, տեղ-տեղ նա իր շարադրանքը կառուցում է պատմական գուգահեռումների և համեմատությունների հիման վրա, որոնց մի սայրը գտնվում է անցյալում՝ անտիկ աշխարհի հերոսապատում դրվագներում, աստվածաշնչյան թեմաներում, հայոց պատմության քառուղիներում և այլուր³³, իսկ մյուս սայրը՝ իր ժամանակներում:

Հաջորդ դիտարկումը, որ կցանկանայինք անել Երեմիա Չելեպիի «Օրագրութիւն» երկի ժանրային հարցի վերաբերյալ ժամանակագրական կարգին է առնչվում. արդեն նշեցինք, որ օրագրական ժանրի հիմնական առանձնահատկությունը, որ ժամանակագրական մանրագննությունն ու ճշգրտությունն է, առավելագույնս արտացոլված է Քյոմուրճյանի Օրագրության մեջ: Տեղ-տեղ օրվա ժամերի արձանագրման հասնող շարադրանքը դույզն-ինչ կասկածի տեղիք չի տալիս, որ հեղինակը տառացիորեն հետևում է օրագրային սկզբունքներին, սակայն երկում Երեմիա Քյոմուրճյանի գործածած ժամանակագրական մոտեցումն ավելի խորքային է, քան մեզ հայտնի մյուս օրագրություններում է: Նա հմտորեն տիրապետում էր տոմարական գիտելիքներին, ինչն իր ժամանակներում յուրաքանչյուրին չէր տրված: Հեղինակը ուշի-ուշով հետևում է լուսնի փուլերի հաջորդականությանը, և հնարավորության դեպքում իր ժամանա-

³³ Օրագրութիւն, էջ 289, տե՛ս նաև՝ էջ 290-291, 309, 312, 387:

կային հիշատակումները գուգադրում այդ տվյալներով³⁴: Երեմիա Քյոմուրճյանի կիրառած նման մոտեցումն ավելի շատ աղերսվում է ավանդական պատմագրության ժամանակագրական սկզբունքներին:

Այսպիսով, վերը կատարված դիտարկումները հիմք ընդունելով՝ կարծում ենք, որ Երեմիա Քյոմուրճյանի «Օրագրութիւն» երկասիրությունը մեծապես համապատասխանելով օրագրական ժանրի ընդհանուր սկզբունքներին, լիիրավ է մի կողմից հավակնելու XVII դարում գրական նոր նախընտրությունների առաջամարտիկներից մեկի դերին, մյուս կողմից՝ մի շարք բնորոշումներով կրում է դասական մատենագրության դրոշմն ու ազդեցությունը:

GAYANE AYVAZIAN

THE WRITING BY YEREMIA CHELEBI QYOMURTCHYAN "DIARY"

SUMMARY

In the history of Armenian historiographic thought of the 17th century was marked as a period of "a new ascent". The work of Yerernia Qyomurtchyan - "Diary" represents in the best way the entire trajectory of historiographic shifts that have occurred during this period and connects a variety of traditional and new historiographic principles. The work transmits the history of only 14 years (1648-1662), but is notable for its large volumetric

³⁴ Օրագրութիւն, էջ 243, տե՛ս նաև՝ էջ 252, 270, 370 և այլն:

comprehension. Personal and household data, as well as important social-political events served as material for periodic records of the author. The main source of the writing is the author himself, as well as the people around him and his reality. Qyomurtchyan is one of the first authors who attaches great importance and cultural value to private life of the people in the context of the historical document.

ГАЯНЭ АЙВАЗЯН

ПРОИЗВЕДЕНИЕ “ДНЕВНИК” ЕРЕМИИ ЧЕЛЕБИ КЕМУРЧЯНА

РЕЗЮМЕ

В истории армянской историографической мысли 17-ый век ознаменовался периодом “нового подъёма”. Произведение “Дневник” наилучшим образом отображает всю траекторию историографических сдвигов произошедших в этот период и связывает между собой множество традиционных и новых историографических принципов. Труд передает историю лишь 14 лет (1648-1662), но обособлен большим объёмным охватом. Материалом для периодических записей автора служили как личные-бытовые данные, так и важные общественно-политические события. Главным источником изложения является сам автор, а так же окружающие его люди и действительность. Кёмурчян является одним из первых авторов, кто придает большое значение и культурную ценность частной жизни человека в контексте исторического документа.

ՎՐԱՅ ԻՇԽԱՆՆԵՐ ԲԱՐԱԹՈՎՆԵՐԻ ՊԱՅՔԱՐԸ ՀԱՂՊԱՏԻ ՎԱՆՔԻ ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ XIX ԴԱՐՈՒՄ

XVIII դարի վերջերին Վրաստանի, ապա՝ նրա հետ միասին Ռուսաստանի կազմի մեջ մտած Լոռու տարածքում ձևավորվում է հողատիրության բազմաշերտ համակարգ: Արևելյան Հայաստանի ոչ մի տարածքում չընթացավ այնպիսի պայքար, ինչպիսին էր ոռու ջինովնիկների, վրացի և հայ կալվածատերերի ու հայոց եկեղեցու միջև սկսված պայքարը՝ կապված հողերի ձեռքբերման կամ պահպանման հետ: Պայքարը չդադարեց մինչև դարավերջ և ակնհայտորեն խոչընդոտ դարձավ տարածքի տնտեսական կյանքի զարգացման համար: Եթե ոռուական կառավարությունը շահագրգռված էր տեղում հանքարդյունաբերության ու գյուղատնտեսության զարգացման համար և փորձում էր ամեն գնով՝ հողագնումից մինչև բռնագավթումներ, տիրանալ լավագույն հողերին, ապա վրացի ազնվականներն օգտվելով առիթից, փորձում էին իրենց հերթին տեր դառնալ հայ տոհմիկ ազնվականների կամ վանքապատկան հողերին: Նման պայմաններում հայ ազնվականներին մնում էր միայն պահպանել իրենց դարավոր ժառանգական կալվածքները, իսկ հայոց եկեղեցին փորձում էր անձեռնմխելի պահել վանքապատկան հողատիրությունը:

XIX դարի սկզբին Լոռու գավառում հողատիրության հիմնական ձևը ազնվականական և վանքապատկան հողատիրությունն էր, երբ հողը տոհմիկ հայ իշխանների, մելիքների կամ նշանավոր վանքերի կալվածք էր:

Վրացի ազնվականներին XVIII դ. վերջերից հաջողվեց Լո-
ռիում աստիճանաբար ձեռք բերել կալվածքներ: Դրան նպաս-
տեց Լոռու՝ Վրաստանի տիրապետության տակ գտնվելու հան-
գամանքը: Վրացական արքունիքի ուշադրության կենտրոնում
հայտնվեցին նաև Ալավերդու և Ախթալայի պղնձահանքերը:
Գեորգի XII թագավորի (1798-1800) օրոք մոուրավների (վրացի
իշխաններից նշանակված գավառապետներ) պաշտոն զբաղեց-
րած իշխանների և ազնվականների ցուցակում Բորչալուում և
Շնողում հիշատակվում է իշխան Դավիթ Աբաշիձեն, Լոռիում
կալվածքներ ունեին վրացի ազնվականներ Օրբելիանիները և
Բագրատիոն Մուխրանսկին¹: XIX դ. սկզբներից մինչև 1830-
ական թթ., ռազմաքաղաքական իրադրության հետևանքով երկ-
րամասում ավերվել էին բազմաթիվ բնակավայրեր, անկում էր
ապրել սոցիալ-տնտեսական կյանքը: Դրա հետևանքով բնակ-
չության հետ տարածքը լքում են նաև Լոռու հայ տոհմիկ ազն-
վականներից շատերը, իսկ լքված հողերը ժամանակի ընթաց-
քում ձեռք են բերում նոր սեփականատերեր: Այս ամենի արդ-
յունքում Փամբակի երկրամասում ավատական կամ կալվածա-
տիրական հողատիրությունն իսպառ անկում ապրեց, իսկ Լոռու
գրեթե ամբողջ սարահարթն անցավ վրացի ազնվականներ Օր-
բելիանիներին, հետո՝ Բագրատիոն Մուխրանսկուն, ապա դար-
ձան բարոն Կուզենբախի, Շարիֆովի, Սագինովի և այլոց սեփա-
կանությունը², ովքեր էլ սկսում են այդ հողերը վարձակալության
տալ տեղի գյուղացիներին: Հովհ. Թումանյանն իր «Բորչալվում»
ճանապարհորդական ակնարկում գրում է. «Ամենալավ, բերրի
հողերը պատկանում են գանազան իշխանների, թավադների ու

¹ Акты, собранные Кавказской археографической комиссией, т. 1, Тифлис, 1866, док. 157, с. 195.

² Վիրաբյան Ս., Եթիմյան Գ., նշվ. աշխ., էջ 140-141:

աղալարների: Այդ հողերի վրա բահրով ապրում է ոանճապար ժողովուրդը, հերկում, ցանում, հնձում... վաստակի մի քառորդը յուր տիրոջը տալու պայմանով»³:

Լոռու ամենահզոր և ունևոր վրաց իշխանական տոհմը Բարաթովներն էին, որոնք դեռևս 1796 թ. վրաց Հերակլ II թագավորի (1744-1798) կողմից որպես պարզև ստացել էին Հաղպատ գյուղը՝ այնտեղ բնակություն հաստատելու պայմանով⁴: Այդ պահից սկսած՝ Բարաթովների կողմից պայքար էր գնում հայ ազնվականների և Հաղպատի վանքի դեմ՝ իրենց տրված տիրույթների պահպանման և ընդլայնման համար, որը տևում է ամբողջ XIX դ. ընթացքում:

XIX դ. սկզբին Հաղպատի վանքին էին պատկանում Շնող, Ճոճկան, Ախթալա և այլ գյուղեր, այգիներ, արոտավայրեր ու Մադանի պղնձահանքը: Սակայն գյուղի որոշ հողատարածքներ զավթում է տեղի կալվածատեր իշխան Բարաթովը: «Հաղպատի բնակիչներն աղքատ են և հարկերի տակ ճնշված, որովհետև գյուղի հողերը ոչ թե արքունական են, այլ պատկանում են իշխան Բարաթովին, որ բերքի 1/5 ինքն է վերցնում»⁵: «Մեղու Հայաստանի» ամսագրի մի թղթակցության մեջ գրված է. «Վրացի իշխան Բարաթովները շատ կալվածքներ ունեն Հաղպատում, Հաղպատ գյուղն էլ իր բնակիչներով սրանց է պատկանում, մասամբ էլ վանքին»⁶: Դարակեսին Բարաթովների հողերը բաղկացած էին երկու խոշոր և մի քանի մանր հողակտորներից՝ ընդ-

³ Թումանյան Հովհ., Երկերի լիակատար ժողովածու, հ. 6, Ե., 1994, էջ 28:

⁴ Երիցեան Ալ., Ամենայն հայոց Կաթողիկոսութիւնը և Կովկասի Հայք XIX դարում, մասն Ա, Թիֆլիս, 1894, էջ 215:

⁵ Լալայեան Ե., Բորչալուի գավառ, ա. թ., էջ 80:

⁶ «Մեղու Հայաստանի», Թիֆլիս, 1861, 15-ը հուլիսի, N 29:

հանուր առմամբ մի քանի տասնյակ հազար դեսյատին⁷: Մի խոշոր հողակտորը՝ Խրամի ավազանին էր, հասնելով մինչև Թիֆլիսի գավառ, մյուսը՝ Դեբեդի աջ ափին Հաղպատ գյուղն էր, մեծ մասամբ բնակեցված Բարաթովներին հարկատու գյուղացիներով⁸, իսկ գյուղի ամառանոցը պատկանում էր Թիֆլիսաբնակ իշխան Ջաքարիա Դավիթովիչ Բարաթովին⁹:

XIX դ. հայոց եկեղեցու, և նրա իրավասության տակ գտնվող տարածքների բնակչության հոգևոր կյանքը կազմակերպելու մեջ մեծ դեր էր կատարում Վրաստանի և Իմերեթի հայոց վիճակային Կոնսիստորիան¹⁰, որը հաշվետու էր Էջմիածնի սինոդին: Կոնսիստորիայի իրավասության շրջանակներում եղել է նաև եկեղեցական կալվածքների, շինությունների, ուխտատեղերի կառավարումը, նաև դրանց շուրջ առաջացած վեճերի կարգավորումը: Հոգևոր կազմակերպություն հանդիսացող Կոնսիստորիան, ակտիվորեն միջամտում էր վանական տարածքների շուրջ մղվող պայքարին, և հողային վեճերի քննությունը դարձել էր նրա գործունեության կարևոր մասը: Քանի որ Լոռու վանքապատկան ամենախոշոր հողատերերը Հաղպատ-Սանահինի և Էջմիածնի վանքերն էին, ուստի նման վիճելի հարցերը ծագել են հիմնականում նշված վանքերի և գյուղերի կալվածատերերի միջև:

⁷ 1 դեսյատինը հավասար է 1,0925 հա:

⁸ Ерицов А., Экономический быт государственных крестьян Борчалинского уезда Тифлисской губернии, Тифлис, 1899, с. 106.

⁹ Հայաստանի ազգային արխիվ (ՀԱԱ), ֆ. 66, ց. 1, գ. 5, էջ 7:

¹⁰ Ռուսական կառավարության հաստատած 1836 թ. եկեղեցական կանոնադրության համաձայն 1837 թ. կայսրության սահմաններում ստեղծվում են հայոց հոգևոր 6 թեմեր՝ թեմական կամ վիճակային կոնսիստորիաներով (հոգևոր վարչություններ): 1837 թ. օգոստոսի 6-ին հիմնադրվում է խոշորագույն թեմերից մեկը՝ Վրաստանի և Իմերեթի Հայոց վիճակային Կոնսիստորիան, որի իրավասությունը տարածվում էր բուն Վրաստանի, Գանձակի, Ղազախի, Շամշադինի և Լոռու հայոց եկեղեցիների ու ծխերի վրա:

Սինոդի կողմից մշտապես հաշվետվություն էր պահանջվում Կոնսիստորիայից, իր իրավասության տակ գտնվող կալվածքների վերաբերյալ: Կոնսիստորիան իր հերթին նման հաշվետվություն էր պահանջում տեղի վանահայրերից: Առկա է Կոնսիստորիայի 1885 թ. դեկտեմբերի 27-ի հրամանը՝ Հաղպատի վանահայր, վարդապետ, Հովսեփ Խարազյանցին (1866-1890)՝ վանքապատկան կալվածքների վերաբերյալ մանրամասն տեղեկություններ կազմելու և փաստաթղթերը ներկայացնելու մասին¹¹: Պահպանվել են Կոնսիստորիայի օրագրության պատճենները և տեղի վանահայրերի կողմից գրված բազմաթիվ այլ գրություններ, որոնք պարունակում են Վրաստանի վիճակում գտնվող կալվածքներին վերաբերող տվյալներ¹²: Դրանցում բավական թիվ են կազմում վրացի իշխան Բարաթովների և հայ ազնվականների ու կրոնական գործիչների միջև մղված պայքարի վերաբերյալ փաստաթղթերը: Դեռևս 1806 թ. հունվարի 25-ի դրությամբ Կոնսիստորիայի թղթաբանական գրասենյակում կազմվել է գործ՝ Հաղպատի վանքի կալվածքների տնօրինության շուրջ հայոց եկեղեցու և իշխան Դավիթ Բարաթովի միջև եղած վեճի մասին, որն ընդգրկում է մինչև 1844 թ. սեպտեմբերի 15-ն ընկած ժամանակահատվածը¹³: Այն փաստից, որ վեճն ընթացել է գրեթե քառասուն տարի, կարելի է ենթադրել, որ Կոնսիստորիային չի հաջողվել լուծում տալ դրան: Վեճն ընթանում էր հիմնականում վանքապատկան արտատեղերի շուրջ, որոնց վերաբերյալ կազմվում է առանձին գործ՝ մոտ 56 էջի սահման-

¹¹ Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 235ա, վավ. 11:

¹² Նույն տեղում, թղթ. 187, վավ. 130, թթ. 1-79, թղթ. 235ա, վավ. 3, թղթ. 237գ, վավ. 275, թթ. 1-8, թղթ. 208ա, վավ. 2455:

¹³ ՀԱՍ, ֆ. 53, ց. 1, գգ. 2364, 2393, 2398:

ներում¹⁴: Իսկ խոտհարքի պատճառով Հաղպատի վանքապատկան և Բարաթովի գյուղացիների միջև ընդհարման մասին գործն ընդգրկում է 205 էջ:

1815-1816 թթ. Հաղպատ գյուղի սեփականության համար պայքարը շարունակվում էր ազնվականներ Բարաթովների, Պոպունաբեկովների և Թիֆլիսի հայոց հոգևոր թեմի միջև¹⁵: Նրանք բոլորն էլ գյուղը համարել են իրենց սեփականությունը: Դրանից ելնելով, Վիրահայոց թեմի առաջնորդ Ներսես արքեպիսկոպոս Աշտարակեցին, 1815 թ. գրություն է հղում Կովկասի կառավարչապետ Ա. Երմոլովին՝ Հաղպատ գյուղն իր բնակիչներով, Հաղպատի վանքին պատկանելու մասին¹⁶: Ամենայն հայոց կաթողիկոս Հովհաննես Կարբեցին (1831-1842) 1833 թ. ապրիլի 21-ին Կովկասի քաղաքացիական մասի կառավարչապետ Գ. Ռոզենին խնդրում է Հաղպատի գյուղացիներին ազատել կալվածատեր Բարաթովների շահագործումներից¹⁷: Նա նշում է. «Հաղպատի վանքը նույն անվամբ գյուղով սկզբից նեթ պատկանում էր էջմիածնի ս. աթոռին»: Վրացի իշխաններն աստիճանաբար սեփականացնելով վանքի հողերը տիրել են ամբողջ գյուղին՝ եկեղեցու սեփականությանը թողնելով չնչին ցանքատեղի: Վանքապատկան հողերի գյուղացիները մի քանի անգամ զանգատվում են իրենց զանազան նեղություններ պատճառած իշխան Դավիթ Բարաթովից, որն այդ ժամանակ տիրում էր Հաղպատ գյուղին:

«Մենք քանիցս խնդրել ենք իշխանին անձամբ և այլոց միջոցով վերջ տալ ս. աթոռի ճորտերի տառապանքներին: Լինելով

¹⁴ Նույն տեղում, գ. 2393:

¹⁵ Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 27, վավ. 79, թթ. 1-2, վավ. 106, թթ. 1-11:

¹⁶ Նույն տեղում, վավ. 58, թթ. 1-5:

¹⁷ Նույն տեղում, թղթ. 78, վավ. 41, թթ. 1-4:

Վրաստանի վիճակում (խնդրեցինք) իշխան Բարաթովին բար-
յացական վերաբերվել նրանց...: Իսկ այժմ վերոհիշյալ հինգ
ճորտ ընտանիքները նորից գանգատվում են իշխան Բարաթովի
անիրավություններից..., և խնդրում են մեզ վերաբնակեցնել
իրենց Հաղպատից այլ տեղ...»¹⁸:

Խնդրագրում նշվում է, որ Բարաթովի կամայականութ-
յունները հասնում են այն աստիճանի, որ ձմռանը վանքի ճոր-
տերին արգելել է իրենց անասունները պահել Հաղպատում, և
արածեցնել գյուղի դաշտավայրերում. գյուղացիները ստիպված
անասուններին պահում են «գյուղի յայլաներում», հեռու իրենց
տներից: Կաթողիկոսը խնդրում է կառավարչապետին, հրամա-
յել ում հարկն է՝ արգելել Բարաթովին նեղություն պատճառել
այդ հինգ ընտանիքներին, և չպահանջել նրանցից ավելորդ հար-
կեր, որովհետև նրանք ս. աթոռի հողագործներ են, ու հազիվ կա-
րողանում են կատարել վանքի ծառայությունները: Նա Ռոզենի
ուշադրությունը հրավիրում է այն փաստի վրա, որ եթե գյուղա-
ցիները, նեղվելով Բարաթովի անօրինական պահանջներից, հե-
ռանան Հաղպատից և բնակվեն այլ վայրում, ապա վանքի միա-
բանները՝ չունենալով սեփական հողագործներ, և չկարողանա-
լով ապահովել վանքի տնտեսական կարիքները, ստիպված կլի-
նեն հեռանալ Հաղպատից, ընդգծելով՝ «որում և կայանում է իշ-
խան Բարաթովի ցանկությունը»¹⁹:

Բողոքի հիման վրա կազմվել է գործ՝ ուղղված Վրաստանի
բարձրագույն կառավարության Գործադիր հանձնաժողովին,
որում նշվում է, որ վերջինս պարտավորվում է ստուգել Հաղպա-

¹⁸ Социально-политическое и экономическое положение Восточной Армении после присоединения к России (1830-1870), Документы и материалы по истории армянского народа, под ред. Н. А. Тавакаляна, Ереван, 1993, док. 21, с. 87-88.

¹⁹ Նույն տեղում, էջ 88:

տի հողերի պատկանելության հարցը²⁰: Վրաստանի քաղաքացիական նահանգապետ Պ. Զավիլեյսկին, 1836 թ. հուլիսի հրամանագրով Բորչալուի գլխավոր պրիստավ Բագրատիոն Մուխրանսկուն հրահանգում է մանրամասն քննություն անցկացնել «...յաղագս արժատեղիոյ պատկանելոյ Հաղպատի վանից...», որը իշխան Դավիթ Բարաթովն, անօրինական յուրացրել էր²¹: 1836 թ. սեպտեմբերի 2-ին հոգևոր կառավարության ներկայացուցչի ներկայությամբ՝ որպես վկաներ, հարցաքննվում են Հաղպատի շրջակայքում տեղակայված Շնող և Ուզունլար (Օձուն) գյուղերի բնակիչները, որոնք հաստատում են, որ գյուղի արժատեղիներն ի սկզբանե պատկանել են Հաղպատի վանքին, իսկ հողագործներն էլ այն ժամանակին վարել են: Թիվ 2572 գործին կցված է նաև ցուցակ՝ Դավիթ Բարաթովի կողմից հափշտակված հաղպատցիների գույքի մասին: Ութ կետով նշվում է, թե որ գյուղացուց ինչ է յուրացվել²²:

Գյուղացիների բողոքներն ընդդեմ կալվածատերերի, մանավանդ այնպիսի հզորների, ինչպիսիք Բարաթովներն էին, հիմնականում մնում էին անլուծելի, ինչին նպաստում էր բարձրաստիճան չինովնիկների հովանավորչական կեցվածքը կալվածատերերի նկատմամբ: Դրա վառ ապացույցն է հետևյալ փաստը. 1839 թ. հունիսի 9-ին Հաղպատի վանքի հոգևորական Աբրահամ Իսրայելյանը գրում է ոմն բարձր սրբազնության, որ Հաղպատի վանքապատկան գյուղացիների անասուններն արածեցնելու իրավունքի մասին նահանգապետի գրությունը ներկայացրել է Բորչալուի պրիստավին, բայց վերջինս մերժել է այն՝ պատճառաբանելով, որ, ըստ իր նախորդի ժամանակից արձա-

²⁰ ՀԱԱ ֆ. 53, ց. 1, գ. 2184, թ. 23:

²¹ Նույն տեղում, թ. 23:

²² Նույն տեղում, գ. 2572, թ. 5:

նագրության, արոտները պատկանում են իշխան Բարաթովին²³։ Բացի այդ, հողային վեճերի քննությամբ տեղերում զբաղվել են նաև իրենք՝ հողատեր-ազնվականները, քանի որ շատ գյուղերը XIX դարում չեն ունեցել տանուտեր և գյուղական դատավոր, այլ անմիջապես ենթարկվել են գավառապետին և հաշտարար դատավորին²⁴։

Թեև Հաղպատի արոտավայրերի վերաբերյալ փաստաթղթային գործը 1844 թ. սեպտեմբերի 15-ով ավարտվում է, այնուամենայնիվ, հարցը լուծում չի ստանում։ Թիվ 2393 գործից տեղեկանում ենք, որ դարձյալ վեճ է ընթացել հայ հոգևորականության և իշխան Զաքարիա Բարաթովի միջև՝ Հաղպատի Գլիգնաձոր և Խաչիդուռ թաղամասերի արոտավայրերի շուրջ։

Հաղպատի Վանահայր Հ. Խարազյանցը Վրաստանի և Իմերեթի հայոց վիճակային Կոնսիստորիային ուղղված 1866-1868 թթ. իր գրությունների մեջ բազմիցս նշում է իշխան Բարաթովի կողմից վանքապատկան հողերի նկատմամբ կատարած ոտնձգությունների, ինչպես նաև՝ տեղի գյուղացիների և իր հետ ունեցած լարված հարաբերությունների մասին²⁵։ 1868 թ. փետրվարի 26-ին վանահայրը Կոնսիստորիային ուղղած հայտարարության մեջ խնդրում է պաշտպանել վանքապատկան սեփականությունը Զ. Բարաթովի ինքնակամ գործողություններից։ Նմանատիպ բովանդակությամբ դիմում-հայտարարություն է արված նաև 1868 թ. հուլիսի 9-ին։ Հաղպատի բնակիչները շարունակ բողոքներ են ներկայացնում իշխան Բարաթովից, որ նա իրենցից պահանջում է բազմաթիվ հարկեր և կոռ, նաև տարբեր ծառայություններ, որոնք իրենց պարտավորությունների մեջ չեն

²³ Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 89, վավ. 198, թթ. 1-2։

²⁴ Լալայեան Ե., նշվ. աշխ., էջ 77։

²⁵ Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 214, վավ. 95, թթ. 1-32։

մտնում²⁶: Դիմումներն ապարդյուն են անցնում, իսկ վրացի ազնվականները շարունակում են ընդլայնել իրենց կալվածքներն ու ակտիվորեն միջամտել գավառի տնտեսական կյանքին:

«Իշխան-ադյուտանտ Լորիս-Մելիքովին և նրա կնոջը պատկանող Բորչալուի գավառի Ալավերդու կալվածքի Բաժանման վերաբերյալ» 1869 թ. սեպտեմբերի 10-ից մինչև 1870 թ. սեպտեմբերի 25-ը տևած գործից տեղեկանում ենք, որ հողաբաժանման աշխատանքների առիթով հանձնաժողովի կողմից հրավիրված Լոռու հողատեր-ազնվականների շարքում են նաև Բարաթովները²⁷: 1869 թ. սեպտեմբերի 10-ին հողաչափ Էրզինովը (Երզնկյան) նշված տարածքների հողատերերին խնդրում է ներկայանալ Ալավերդու գործարան: Հրավիրված էին Արդությանները (14 հոգի), ազնվական Ալեքսանդր Զարվրիկը, Զաքարիա Դավիթովիչ Բարաթովը, 6 հոգի Մելիքովներից, իշխան Ջավախովը: Քանի որ այդ տարածքների համար մշտապես վեճ էր ընթանում Բարաթովների հետ, ապա հանձնաժողովը պետք է առաջին հերթին լուծում տար այդ հարցերին: Հատուկ ցուցակով նշված էին այն գյուղերը, որոնք պետք է բնակիչներ ուղարկեին՝ վկայություն տալու Միխայիլ Լորիս-Մելիքովի, և իշխան Զաքարիա Բարաթովի միջև Ալավերդու կալվածքի շուրջ եղած վեճի վերաբերյալ. նախատեսված էր Հաղպատ գյուղից 8, Աքորիից՝ 15, Շահնազարից՝ 8, Բրդաձորից՝ 6 հոգի²⁸: Բայց գործի քննության ընթացքում Բարաթովները կարողանում են պահպանել իրենց կալվածքները և անգամ յուրացման ճանապարհով ընդլայնել: Ալ. Շիրվանզադեն, ով 1888 թ. ճանապարհորդում էր

²⁶ Социально-политическое и экономическое положение Восточной Армении после присоединения к России (1830-1870), док. 21, с. 87-88.

²⁷ ՀԱԱ, ֆ. 66, ց. 1, գ. 5, թթ. 11-21:

²⁸ Նույն տեղում, էջ 89-93:

Լոռու գյուղերով, գրում է. «Հաղպատում գանգատներ էին լսվում, թե կալվածատեր ոմն իշխան Բարաթովը հետզհետե խլում է գյուղի հողերը, թե գյուղացիները քանի գնում, այնքան աղքատանում են»²⁹: 1888-1890 թթ. Վրաստանի հայոց Կոնսիստորիայի և Հաղպատի վանահայր Հովսեփ Խարազյանի միջև փոխադարձ գրություններում դարձյալ խոսք է գնում Բարաթովների մասին՝ կապված վիճելի տարածքների հետ³⁰: 1893 թ. հուլիսի 21-ին Հաղպատի նոր վանահայր Հակոբ Նորատունկյանը (1891-1895) Կոնսիստորիային գրում է իշխան Բարաթովի գլխավորությամբ մի խումբ հաղպատցիներ կողմից վանքի պարսպի տակ ապօրինի կերպով շինություն կառուցելու մասին՝ նշելով, որ պատրաստվում է այդ հարցով դիմել գավառապետին³¹:

Երբ 1895 թ. հաստատվում է Թիֆլիս-Կարս երկաթուղու կառուցման որոշումը, և Հաղպատի հողատարածքների մի մասը նախատեսվում է պետականացնել՝ տրամադրելով շինարարությանը, ավելի են սաստկանում վեճերը վանականների և Բարաթովների միջև: Եկեղեցական գործիչները, դրանով մտահոգված, փորձում են մասնակից լինել վանքապատկան հողերի գնահատման գործընթացին: 1895 թ. նոյեմբերի 1-ին Կոնսիստորիան հատուկ գրությամբ Հակոբ Նորատունկյանին կարգադրում է երկաթուղու շինարարության վարչությունում հոգևորականների կողմից ներկայացուցիչ կարգել Տիգրան Տեր-Դավթյանին՝ գնահատելու այն հողերը, որոնց վրայով անցնելու է երկաթուղին: Նույն թվականի դեկտեմբերի 13-ին հետևում է Նորատունկյանի պատասխան հայտարարությունը՝ վանքապատկան հողերի գնահատման վերաբերյալ, որում խոսվում է Բարաթով-

²⁹ Շիրվանզադե Ալ., Երկերի ժողովածու, Ե., հ. 9, 1961, էջ 36-37:

³⁰ Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 236գ, վավ. 14, թղթ. 236է, վավ. 15:

³¹ Նույն տեղում, թղթ. 236ժ, վավ. 22, թ. 3:

ների, հետ ծագած անհամաձայնության մասին³²: Երկաթուղու կառուցման կապակցությամբ Բարաթովների հետ ծագած վեճի մասին պահպանվել են նաև Նորատունկյանի դիմումների մի քանի սևագրություններ³³: Վեճերն ընթացել են հիմնականում հողերի դիմաց պետության կողմից հատկացվելիք դրամական փոխհատուցման շուրջ:

Կոնսիստորիայի արխիվում առկա են բազմաթիվ հրամանագրեր, Բարաթովների կողմից սեփականացված վանքապատկան հողերի գործի դատական քննության վերաբերյալ, որոնք ընդգրկում են 1897-1900 թվականները. դրանցից են Կոնսիստորիայի հրամանգները Հաղպատի նոր վանահայր Գեղամ Բաբաջանյանցին, ինչպես նաև բազմաթիվ գործեր, որոնք ընդգրկում են Բարաթովի կողմից Հաղպատի վանքապատկան կալվածքների գրավման կամ դրանց դեմ կատարած ոտնձգությունների մասին եղած վավերագրերը³⁴: Երդվյալ հավատարմատար Հովհաննես Սպենդիարովի՝ Կոնսիստորիային ուղղված 1900 թ. փետրվարի 21-ի գրությունից տեղեկանում ենք, որ իշխան Բարաթովը երկաթգծի շինարարության համար հատկացված 60 դեսյատին վանքապատկան հողի դիմաց ստացել է 20 հազար ռուբլի վարձատրություն: Կալվածատիրոջ դեմ հարուցվել է գործ, սակայն, ինչպես իր գրության մեջ կանխատեսում է Հ. Սպենդիարովը. «...այդ խնդրով բացված դատական գործը անհուսալի է»³⁵:

Փաստորեն վանահայրերն ի գործու չլինելով սեփական մեթոդներով պայքարել օտար սեփականատերերի դեմ՝ դիմում

³² Նույն տեղում, թղթ. 236ժա, վավ. 173, 174, թ. 1:

³³ Նույն տեղում, վավ. 184, թթ. 1-3:

³⁴ Նույն տեղում, թղթ. 214, վավ. 98, թղթ. 219, վավ. 105, թթ. 1-11, թղթ. 236ժ, վավ. 22, թթ. 1-3, թղթ. 237ա, վավ. 96, թ. 3:

³⁵ Նույն տեղում, թղթ. 237գ, վավ. 276:

էին ավելի բարձր կրօնական կազմակերպությունների, ինչպիսին էր Վրաստանի հայոց վիճակային Կոնսիստորիան, սակայն վերջինս սահմանափակվում էր սոսկ գործեր հարուցելով, որոնք մնում էին թղթի վրա: Այդ հանգամանքը, ինչպես նաև վանքապատկան հողերի մի մասի անցումը կալվածատերերի կամ կապալառուների ձեռքը, վերջիններիս համար ստեղծում է նպաստավոր հանգամանքներ՝ ժամանակի ընթացքում դրանք սեփականացնելու: Նման պայմաններում հողերի մի մասը հայտնվում է վիճահարույց իրավիճակում, ինչը կարող էր տնել տարիներ: Արդյունքում վանքապատկան հողերի մի մասն օտարվում էր, երբեմն հենց հայ ազնվականների նախաձեռնությամբ: Իշխաններ Լորիս-Մելիքյանները, Օրբելիանիները, Կոբուլովները, Մելիքովները և այլք սկսում են վաճառել իրենց կալվածքների մի մասը կամ տալ երկարաժամկետ վարձավճարով: Կարծում ենք, որ հողը վաճառելու ազնվականների պատրաստակամությունն ամենից առաջ պայմանավորված էր քաղաքների աճով, առևտրի և արհեստների զարգացումով:

XIX դարի վերջերին Լոռու գավառում Բարաթովները պահպանում էին իրենց գրեթե բոլոր կալվածքները, որոնց սահմանները հասնում էին Դեբեդ գետի աջ ափերը, Շնող, Արճիս և Ճալա գյուղերի մոտ, մինչև Եղիգարովներին պատկանող Քյորփի գյուղ³⁶: Այնինչ Լոռիում, ինչպես նաև Փամբակում՝ գյուղացիական շատ տնտեսություններ բացարձակապես հողագուրկ էին և ստիպված էին կալվածատերերից վարձակալել հողեր, ամառային ու ձմեռային արոտավայրեր: Բարաթովները Ծալկայում և Լոռիում որպես ամառանոցներ և ձմեռանոցներ բավական ընդարձակ տարածքներ էին տրամադրում հողագուրկ գյուղացի-

³⁶ Ерицов А., Экономический быт государственных крестьян ..., с. 99-100, 103.

ներին՝ հիմնականում Ծաթեր գյուղի բնակիչներին:

Այսպիսով, վրացի իշխանների նորանոր հողեր ձեռք բերելու, ինչպես նաև հողօգտագործման վարձավճարային ձևի առաջացման հետևանքով կրճատվեցին Հաղպատի հողատարածքները: Վանքապատկան նախկին գյուղացիները վերածվեցին կալվածատիրականի՝ հարկեր մուծելով և պարտավորություններ կատարելով նոր հողատիրոջը: Վանքի տնտեսությունը գնալով թուլացավ, վանքն այլևս ի գործու չէր սեփական միջոցներով հոգալ կարիքները: 1885 թ. Հաղպատի վանահայր Խարազյանն իր հայտարարության մեջ Կոնստանդնուպոլիսից դրամական օժանդակություն է խնդրում վանքի համար³⁷: 1891 թ. նույնատիպ խնդրանքով հանդես է գալիս հաջորդ վանահայր Հակոբ Նորատունկյանը՝ Կոնստանդնուպոլիս տեղեկացնելով վանքի տնտեսության աղքատ վիճակի մասին³⁸: Հաղպատի հաջորդ վանահայր Ջ. Լալայանը Թիֆլիսի հայոց թեմի առաջնորդ Մեսրոպ սրբազանին գրում է վանքի տնտեսական խղճուկ դրության մասին³⁹: Ավելին, Թիֆլիս-Կարս երկաթգծի կառուցման հետևանքով կալվածատերերին հողերի դիմաց գումար հատկացնելն, առհասարակ, կասկածի տակ էր դնում հողերի երբեք վանքերին պատկանելու հանգամանքը, ինչի մասին ժամանակին հայ էկեղեցական գործիչները Կոնստանդնուպոլիս գգուշացրել են⁴⁰: Այդուհանդերձ, Հաղպատի վանքը կարողացավ անգամ XIX դարավերջին և XX դարասկզբին պահպանել իր հողատիրությունը: Ազնվականական հողատիրությունը վերջնականապես անկում ապրեց երկրամասում խորհրդային կարգերի հաստատումից հետո:

³⁷ Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 236ա, վավ. 8:

³⁸ Նույն տեղում, թղթ. 236ը, վավ. 21:

³⁹ Նույն տեղում, թղթ. 236ժ, վավ. 22, թ. 1-3:

⁴⁰ Նույն տեղում, թղթ. 237գ, վավ. 276:

THE STRUGGLE OF THE GEORGIAN FAMILIES BARATOVS FOR THE HAGHPATS EARDS

SUMMARY

Since the 18th century the monastery Haghpats was given to the Georgian Baratovs as a hereditary domain at the time of the King Herakli. Later some more regions were occupied by Baratovs.

There are many archive materials at the Armenian Consistory of Georgia and Imereti concerning the regions, occupied by Baratovs. However there are facts showing that the of Haghpats preserved the part of their own estates until the end of the 19th and the beginning of the 20th century.

АСМИК АМИРДЖАНИЯН

БОРЬБА ГРУЗИНСКИХ КНЯЖЕСКИХ РОДОВ БАРАТОВЫХ ЗА ОСВОЕНИЕ ЗЕМЕЛЬ АХПАТСКОГО МОНАСТЫРЯ В XIX ВЕКЕ

РЕЗЮМЕ

С конца XVIII в. при правлении грузинского царя Иераклия армянское селение Ахпат со своими землями было отдано как наследственное земельное владение грузинским князьям Баратовым. После этого Баратовы захватили новые земли.

Факты свидетельствуют, что Ахпатский монастырь смог сохранить часть своих земель вплоть до конца XIX - начала XX вв.

ՀԱՅ ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ ԴՐՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՑՈՒՄԸ
ԿՈՎԿԱՍԻ ՀԱՅՈՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ԱՐԽԻՎԱՅԻՆ ՆՅՈՒԹԵՐՈՒՄ (1896 թ.)

1890-ական թթ. Աբդուլ Համիդ II-ի կազմակերպած արևմտահայության զանգվածային կոտորածներից հրաշքով փրկված արևմտահայերի մի մասը հարկադրաբար բռնեց գաղթի ճանապարհը։ Ապրուստի անգամ տարրական միջոցներից զուրկ փախստականները գտնվում էին սոցիալ-տնտեսական ծանր վիճակում։ Սննդի և կենցաղային տարրական պայմանների բացակայության հետևանքով նրանց շրջանում տարածված էին տարափոխիկ տարբեր հիվանդություններ։ Այս պայմաններում ծառանում էր արևմտահայերին նյութական և բարոյական օգնություն ցուցաբերելուն միտված շտապ միջոցառումներ ձեռնարկելու անհրաժեշտությունը։

Փախստականներին օգնության ձեռք մեկնեց արևելահայ, սփյուռքահայ և ռուս առաջադեմ հասարակությունը, ստեղծվեցին բարեգործական, հասարակական և կրոնական տարբեր կազմակերպություններ և ընկերություններ։ 1897 թ. Մոսկվայում լույս տեսավ Գր. Ջանշյանի խմբագրությամբ «Братская помощь пострадавшимъ въ Турции Армянамъ»¹ գիրքը, որի վաճառքից ստացված ողջ եկամուտը պետք է ուղարկվեր հայ փախստականներին։ Եվրոպական հասարակությունը ևս փորձեց թեթևացնել տառապյալ հայ ժողովրդի վիճակը։ Հանգանակություններ կատարվեցին ԱՄՆ-ում, Մեծ Բրիտանիայում, Գերմանիայում, Ֆրանսիայում, Շվեյցարիայում, Դանիայում, Ռուսաստա-

¹ Ст'я Братская помощь пострадавшимъ въ Турции Армянамъ, Москва, 1897:

նում և այլուր: Գերմանիայում 1896 թ. սեպտեմբերից մինչև 1899 թ. փախստականներին օգնելու համար հավաքվում է 1.800.000 մարկ (շուրջ 800.000 ռուբլի)²: Մեծ Բրիտանիայից մինչև 1896 թ. ղեկտեմբեր ամիսը ուղարկվում է շուրջ 250.000 ֆրանկ³: 1897 թ. տվյալներով հայ փախստականների համար Ֆրանսիայում հանգանակվել էր 350.000 ֆրանկ, ԱՄՆ-ում՝ 2.000.000 ֆրանկ, Շվեյցարիայում՝ 200.000⁴, իսկ Դանիայում՝ 14.000 ֆրանկ⁵:

Այս մարդասիրական գործի զգալի մասն իր վրա վերցրեց 1881 թ. նոյեմբերի 15-ին Թիֆլիսում բժիշկ Բ. Նավասարդյանի նախաձեռնությամբ հիմնադրված Կովկասի Հայոց բարեգործական ընկերությունը (այսուհետև՝ ԿՀԲԸ), որը ղեկավարում էին Խորհուրդը և Տեղական վարչությունը:

Հիմնախնդրի վերաբերյալ Հայաստանի ազգային արխիվի ԿՀԲԸ ֆոնդում պահվում են բազմաթիվ արխիվային վավերագրեր, որոնց զգալի մասն անտիպ է: Նրանց որոշ մասն օգտագործել է անվանի պատմաբան Լեոն (Առաքել Բաբախանյան) իր «Երեսնամեակ Հայոց բարեգործական ընկերության Կովկասում, 1881-1911» աշխատության մեջ⁶:

Սույն հոդվածում մենք, հենվելով բացառապես ՀԱԱ-ի ԿՀԲԸ-ի արխիվային վավերագրերի (նիստերի արձանագրություններ, զեկուցագրեր, խնդրագրեր, հաշվետվություններ, վիճակագրական տվյալներ և այլ) և ժամանակի մամուլի վրա, կներկայացնենք հայ փախստականների դրությունը և նրանց ցուցաբերվող օգնությունը:

² «Մուրճ», Թիֆլիս, 1899, № 4-5, էջ 546:

³ Նույն տեղում, 1896, № 1, էջ 157:

⁴ «Տարազ», 1897, № 1, էջ 18:

⁵ Նույն տեղում, №12, էջ 206:

⁶ Նույն տեղում:

Այսպես, քանի որ ԿՀԲԸ-ի կանոնադրությունը թույլ չէր տալիս գործունեություն ծավալել կառավարչապետության տարածքից դուրս, 1896 թ. սեպտեմբերի 5-ի № 22 նիստում ԿՀԲԸ-ի Խորհուրդը քննարկում է Կովկասի կառավարչապետության տարածքում ապաստանած փախստականների օգնության կազմակերպման հարցը⁷: Իսկ արդեն 1895 թ. աշնանից, երբ կոտորածներ սկսվեցին Տրապիզոնում և նրա շրջակայքում, փախստականները սկսեցին հատել նաև Կովկասի կառավարչապետության սահմանը: 1895 թ. նոյեմբերի 13-ին Վրացա-խմերեթական թեմի առաջնորդ Գեորգ արքեպիսկոպոս Սուրենյանցն ահազանգող նամակով դիմում է Խորհրդին և խնդրում առանց ժամանակ կորցնելու քայլեր ձեռնարկել փախստականներին օգնելու համար: Կովկասի սահմանն անցած արևմտահայերի առաջին քարավանը կազմված էր շուրջ 4.000 հոգուց, որոնց մեծ մասը կանայք և երեխաներ էին⁸:

1896 թ. սեպտեմբերից ԿՀԲԸ հիմնական խնդիրն էր՝ ընդունել և տեղավորել փախստականներին: Սակայն ընկերության անբավարար միջոցները Խորհրդին հարկադրում են սեպտեմբերի 5-ի նիստի ժամանակ Խորհրդի նախագահ Ա. Անանյանին արտոնել դիմել իշխանություններին՝ թույլ տալու ի նպաստ փախստականների հանգանակություններ կատարել⁹: Սակայն կառավարչապետությունը մերժում է¹⁰:

Հավանաբար, դա պայմանավորված է այն ժամանակվա կառավարչապետ Գրիգորի Գուլիցինի հակահայ վերաբերմունքով: Վերջինս ձգտում էր սահմանափակել ցանկացած հայկա-

⁷ Հայաստանի ազգային արխիվ (ՀԱԱ), ֆ. 28, ց. 1, գ. 39, թ. 72 շրջ.-76 շրջ.:

⁸ Լեո. Երեսնամեակ Հայոց բարեգործական ընկերութեան Կովկասում, 1881-1911, Թիֆլիս, 1911, էջ 112:

⁹ ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 39, թ. 77:

¹⁰ Նույն տեղում, թ. 91:

կան հասարակական կազմակերպության գործունեությունը, որը կարող էր հայության շրջանում հեղինակություն ձեռք բերել:

Ձգտելով իր ձեռքում կենտրոնացնել փախստականներին տրամադրվող օգնությունը և ցույց տալ, որ կառավարությունը «հոգում է» փախստականների խնդիրը՝ Գ. Գուլիցինը 1896 թ. դեկտեմբերի 11-ից թույլատրում է Ռուսական կայսրությունում հանգանակություններ կատարել՝ պայմանով, որ ստացված օգնությունն ուղարկվի համապատասխան պետական մարմիններին, որոնք այն կբաշխեն ստացված իրերը կամ գումարները:

Չնայած նրան, որ իշխանությունները ԿՀԲԸ-ին թույլ չտվեցին ի նպաստ փախստականների հանգանակություններ կազմակերպել, այնուամենայնիվ մամուլի արձագանքների շնորհիվ ԿՀԲԸ-ն սկսում է ստանալ օգնություն: Խմբակային և անհատական օգնություն էին ուղարկում ԿՀԲԸ-ին՝ համարելով, որ ընկերությունը քաջատեղյակ է փախստականների դրությանը:

Փախստականների մեծ մասը կանայք, երեխաներ և ծերեր էին, ովքեր գրեթե ամեն օր օգնության խնդրանքով դիմում են ԿՀԲԸ-ին: Նրանց օգնություն կազմակերպելու համար Խորհուրդը որոշեց իր կազմից առանձնացնել մի մասնաժողով, որը պետք է շրջեր և ծանոթանար փախստականների կացությանը և զեկուցեր Խորհրդին, որպեսզի հնարավոր լիներ որոշել, թե որ զավառում կամ գյուղում ապաստանածներն ինչպիսի օգնության կարիք ունենին¹¹: Խորհուրդը մասնաճյուղերի նախագահներին հրահանգում է կազմել համապատասխան հանձնաժողովներ և վիճակագրական տեղեկություններ հաղորդել փախստականների թվաքանակի, սեռի, տարիքի, ակնկալվող օգնության տեսակի և չափի մասին:

¹¹ Նույն տեղում, թ. 93 շրջ.:

Ընկերության մասնաճյուղերն անցնում են գործի: 1896 թ. հոկտեմբերի 18-ի նիստում ԿՀԲԸ-ի Խորհուրդը քննարկում է Թիֆլիսի մասնաճյուղից ստացված զեկուցագիրը: Այստեղ մանրամասն նկարագրվում էր փախստականների սոսկալի վիճակը և նշվում, որ նրանց շտապ հարկավոր է բնակարան, անկողին, հագուստ, որովհետև շատերը քնում են խոնավ հատակին, չունեն հագուստ ու տաք ծածկոցներ, ինչի պատճառով հիվանդանում են: Բժշկական տարրական օգնության բացակայության հետևանքով զգալի թիվ էին կազմում մահացության դեպքերը: Մասնաճյուղը նաև նշում էր, որ իրենց հնարավորություններով ամենավատ վիճակում գտնվող ընտանիքների համար բնակարան են վարձել և պայմանավորվել մի քանի ճաշարանների հետ, որպեսզի փախստականներին կերակուր տան 7 կոպեկով: Դանվագագույնն էր, որ կարող էին անել նյութական համեստ միջոցներ ունեցող մասնաճյուղերը:

1896 թ. հոկտեմբեր 25-ին ստացվում է Սուրմալուի մասնաճյուղի զեկուցագիրը, ուր նշվում էր, որ Իգդիրում և շրջակա գյուղերում գտնվում է 775 փախստական: Նոր փախստականների հոսքը շարունակվում էր: Սկզբնական շրջանում նրանց սնունդով և կացարանով են ապահովել տեղի գյուղացիները: Փախստականների համար կարևոր և չլուծված խնդիր է մնում հագուստը և անկողինը: «Պատկելով սառը եւ խոնավ մարագներում առանց տաք հագուստի եւ ծածկոցի, գաղթականները վարակւել են գանազան հիւանդութիւններով և որովհետև ոչ մի բժշկական օգնութիւն չը կայ ոչ ևս հիւանդանոցներ ուստի հիւանդների թիւը օր ըստ օրէ աւելանում է»-, ասվում է փաստաթղթում¹²: Իգդիրի մասնաճյուղը նույնպես անհրաժեշտ օգնություն էր խնդրում: ԿՀԲԸ

¹² Նույն տեղում, թ. 100:

Խորհուրդը որոշում է փախստականների համար Իգդիր ուղարկել 500 ռուբլի և մի քանի արկղ հագուստ: Միևնույն ժամանակ Խորհուրդը մասնաճյուղից պահանջում է հաշվետվություն ներկայացնել կատարված ծախսերի մասին:

Շատ ծանր վիճակում էին գտնվում նաև Կարսում ապաստանած մոտ 4500 փախստականները¹³:

ԿՀԲԸ մասնաճյուղերի համար մեծ խնդիր էր նաև այն, որ ձմռան ցրտաշունչ օրերն էին մոտենում և գրեթե մերկ փախստականներին պատսպարելու խնդիրն ավելի է դժվարանում: Նրանց հիմնականում տեղավորել էին գոմերում: Բոլոր մասնաճյուղերի համար մեծ խնդիր էր բժշկական օգնությունը: Հիվանդներին և առողջներին տեղավորել էին միևնույն սենյակում, ինչի հետևանքով հեշտությամբ տարածվում էին տարափոխիկ հիվանդությունները: Գրեթե իսպառ բացակայում էր բուժօգնությունը: Քննելով այդ հարցը՝ Խորհուրդը գալիս է այն եզրահանգման, որ հարմար չէ բժիշկներ ուղարկել, այլ հարկավոր է յուրաքանչյուր շրջանում գտնվող բժիշկների հետ բանակցել և պայմանավորվել որոշակի գումարի դիմաց բժշկական օգնություն ցուցաբերել հիվանդներին:

Միևնույն ժամանակ, փախստականների թիվն օրեցօր ավելանում էր: Օրինակ՝ Վաղարշապատի տեղական վարչությունը խորհրդին գրում էր, որ գաղթականների թիվն օրեցօր ավելանում էր և, եթե մոտ մեկ ամիս առաջ ըստ Վաղարշապատի 24 գյուղից հավաքած տվյալների, նրանց թիվը հասնում էր մոտ 500-ի¹⁴, ապա դեկտեմբերի 20-ի դրությամբ փախստականների թիվը հասնում էր 1150-ի¹⁵:

¹³ Նույն տեղում, գ. 358, թ. 130:

¹⁴ Նույն տեղում, գ. 357, թ. 112:

¹⁵ Նույն տեղում, գ. 921, թ. 137:

Ուսումնասիրելով մասնաճյուղերի զեկուցագրերը՝ փախստականներին կարելի է բաժանել երեք խմբի.

1. համեմատաբար ապահով վիճակ ունեցողներ, այսինքն այն անձիք կամ ընտանիքները, որոնք նախօրոք կարողացել էին վաճառել իրենց ունեցվածքը և փոքր-ինչ ապահով վիճակում գաղթել բնօրրանից: Այսպիսի փախստականներին թիվը փոքր է.

2. չքավորության մեջ գտնվող, բայց աշխատելու ընդունակ ընտանիքներ, որոնք անգործ էին մնացել: Այս խմբին անհրաժեշտ էր օգնություն ցուցաբերել մինչ կգտնեին աշխատանք.

3. ընտանիքներ, որոնք ծայրահեղ աղքատության մեջ էին և ընտանիքի անդամների մեծ մասը հիվանդ էին: Այս խմբին հարկավոր էր ավելի երկարատև օգնություն ցուցաբերել:

Զեկուցագրերի հետ մեկտեղ՝ Խորհուրդը մասնաճյուղերից պահանջում էր նաև մանրակրկիտ հաշվետվություն ծախսված գումարի մասին:

ԿՀԲԸ-ի 1897 թ. փետրվարի 4-ին Արիստակես Եպիսկոպոս Սեդրակյանին¹⁶ ուղարկված հաշվետու զեկուցագրում՝ մանրամասն տեղեկություններ էր հաղորդվում Կովկասում գտնվող փախստականների թվի, դրության և նրանց ցուցաբերվելիք օգնության մասին: ԿՀԲԸ Խորհրդի քարտուղար Համբարձում Առաքելյանը զեկուցման մեջ նշում էր, որ փախստականները կենտրոնացած են գլխավորապես Կարսի մարզում (24. 000) Երևանի նահանգում (10.000) փախստական¹⁷: Նկարագրվում է նաև փախստականների սոսկալի վիճակը: Այնուհետև փաս-

¹⁶ Սեդրակյան (Մելիք-Առաքելյան) Արիստակես Սեդրակի, բանասեր, պատմաբան, եկեղեցական գործիչ, Եպիսկոպոս, Էջմիածնի միաբանության անդամ: 1882 թ.՝ Եպիսկոպոս: 1869-1882-ին՝ Երևանի Ս. Կարապետ, Էջմիածնի Ս. Գայանե վանքի վանահայր: 1867-1906-ին՝ Տաթևի, Արցախի, Վրացա-Խմելքիայի և Աստրախանի հայոց թեմերի առաջնորդ:

¹⁷ ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 967, թ. 34:

տաթղթում խոսվում է խորհրդի ստացած նվերների և դրանց բաշխման մասին: Մինչև 1897 թ. սկիզբը խորհուրդը ստացել է 19.248 ռ., 74 կ. օժանդակություն՝ ի նպաստ հայ փախստականների: Այնուհետև մանրամասն նշվում էր, թե այդ օժանդակությունից որքանը որ շրջանի փախստականներին է ուղարկվել:

Արևմտահայ փախստականների դրության և օգնության կազմակերպման խնդրում զգալի էր նաև ԿՀԲԸ Բաթումի մասնաճյուղի գործունեությունը¹⁸: Մասնաճյուղի հանձնաժողովների հիմնական նպատակն էր Բաթումի մասնաճյուղին աջակցող և փախստականների խնդրով զբաղվող անձանց գեկույցները լսելով՝ Բաթումում ապաստանած արևմտահայ փախստականների համար, ճիշտ և տեղին օգնության կազմակերպումը: Այդ անձիք տեղում ծանոթանում էին փախստականների դրությանը, գեկուցում նիստերի ժամանակ, որտեղ էլ որոշվում էր նրանց տրվելիք օգնության չափը: Արձանագրություններում մանրամասն նկարագրված է, թե փախստականներին որքան գումար է տրվել և ինչ նպատակով: Ցուցակներում նշված է նաև փախստականի ընտանիքի անդամների թիվը և որտեղից գաղթելը: Այդ արխիվային վավերագրերից կարելի է եզրակացնել, որ փախստական ընտանիքների միջին թիվը 5-6 հոգի էր, որոնց հիմնական մասը գաղթել էր Տրապիզոնից, Վանից, Բաբերդից և այլ վայրերից:

Հարկ է փաստել, որ հայկական հասարակական և կրոնական կազմակերպությունները ոչ լիակատար օգնություն կազմակերպեցին Համիդյան ջարդերից փրկված հայ փախստականներին: Դրա պատճառն այն էր, որ հայության ողջ ուշադրությունը կենտրոնացած էր Արևմտյան Հայստանում և Փոքր Ասիայի հայաբնակ

¹⁸ Նույն տեղում, թ. 10-93:

վայրերում իրականացվող զանգվածային ջարդերի, Սասունի և Զեյթունի ապստամբներին օգնություն կազմակերպելու վրա, ուստի Կովկասի կառավարչապետություն հասած փախստականները մնացել էին ոչ պատշաճ ռազմության կենտրոնում:

Բացի դրանից, ցարական կառավարության, մասնավորապես Կովկասի կառավարչապետ Գ. Գոլիցինի հակահայ վերաբերմունքով էր պայմանավորված նրանց ցուցաբերած ոչ լիակատար օգնությունը: 1901 թ. նոյեմբերին նահանգապետերին ուղղված շրջաբերականով Գոլիցինը հրամայում էր 1893 թ. հետո Կովկասում հաստատված փախստականներին տեղեկացնել, որ նրանք պետք է իրենց կամքով հեռանան կայսրության տարածքից և այս դեպքում նրանց օգնություն ցույց կտրվի: Իսկ այն փախստականները, ովքեր չեն ցանկանում թողնել «ռուսական հողը», պարտավոր են ռուսահպատակություն ընդունել, և նրանց կտրվի «պատշաճաւոր անցագիր»¹⁹: Այս դեպքում նրանց և իրենց սերունդներին թույլատրվելու էր քաղաքներում անշարժ գույք ձեռք բերել հպատակություն ընդունելուց քսան տարի հետո: Այս կանոնները տարածվում էին մինչև 1901 թ. փետրվարի 1-ը Ռուսական կայսրությունում ապաստանածների վրա: Դրանից հետո եկածներն արտաքսվելու էին կայսրության սահմաններից²⁰: Այս ամենից գատ հայկական հասարակական կազմակերպությունները և նոր ձևավորված ազգային կուսակցությունները չունեին բավարար փորձ և հմտություն փախստականներին օժանդակելու համար:

¹⁹ «Մուրճ», 1901, № 11, էջ 246:

²⁰ Անանուն Դ., Ռուսահայերի հասրակական զարգացումը, հատոր երրորդ (1901-1918), Վենետիկ, 1926, էջ 1-12:

THE STATE OF ARMENIAN REFUGEES ACCORDING TO
ARMENIAN BENEVOLENT SOCIETY OF THE CAUCASIAN
ARCHIVES (1896)

SAMMURY

Different benevolent, social and religious organizations gave the helping hand to Armenians who were saved from Abdul Hamid's massacres. One of such organizations was Armenian Benevolent Society of the Caucasus in 1881. According to the ABSC archives documents and reports we show the Armenian refugees' conditions and the ABSC humanitarian help to emigrants in this article.

ЛИЛИТ КОСЯН

ПОЛОЖЕНИЕ АРМЯНСКИХ БЕЖЕНЦЕВ ПО
АРХИВНЫМ ДОКУМЕНТАМ КАВКАЗСКОГО
АРМЯНСКОГО БЛАГОТВОРИТЕЛЬНО ОБЩЕСТВА (1896)

РЕЗЮМЕ

Спасшимся от организованной турецким султаном Абдул Гамидом резни армянам протянули руку помощи различные благотворительные, социальные и религиозные организации. Созданное в 1881 году Кавказское Армянское Благотворительное общество осуществляло гуманитарную помощь беженцам. В данной статье основываясь на архивных документах и отчетах полученных из филиалов общества, представлено положение армянских беженцев и оказываемая им помощь.

ՄՈՒՍԱԼԵՌՅՈՒՆԵՐԻ ԿԱՄԱՎՈՐԱԳՐՈՒՄԸ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԼԵԳԵՈՆԻՆ

1916 թ. աշնանը ֆրանսիական իշխանությունները, երկարատև քննարկումներից հետո, որոշեցին Կիպրոսում կազմավորել Արևելյան լեգեոն, որի մեջ ընդգրկվելու էին հայ և սիրիացի կամավորներ: Դա պայմանավորված էր այն հանգամանքով, որ 1916 թ. մայիսին ստորագրված Սայքս-Պիկոյի համաձայնագրով պատերազմից հետո Ֆրանսիային էին անցնելու Օսմանյան կայսրությանը պատկանող Լիբանանը, Սիրիան, Կիլիկիան, Խարբեռդի, Դիարբեքիի և Սեբաստիայի նահանգները¹: Արևելքում աննշան ուժեր ունեցող Ֆրանսիայի համար անհրաժեշտություն էր, իր դրոշի ներքո մարտնչող հայերից, սիրիացիներից ու լիբանանցիներից ստեղծել կամավորական բանակ: Տեղի ժողովուրդների զինվորագրումը ֆրանսիական հրամանատարական կազմ ունեցող ազգային զորամասի մեջ, բացի ռազմական ներուժն օգտագործելուց, հնարավորություն էր տալիս Ֆրանսիայի քաղաքական ու մշակութային ազդեցությունը տարածել նրանց միջավայրում: Հայերին ռզնորում էր թուրքերի դեմ մարտնչելու և ֆրանսիական հովանու ներքո լայն ինքնավարություն ձեռք բերելու հնարավորությունը:

Ֆրանսիացի դիվանագետ Ժորժ Պիկոն և բրիտանացի՝ Մարկ Սայքսը հայկական զորամաս կազմավորելու համար Լոնդոնում 1916 թ. հոկտեմբերի 27-ին համաձայնության եկան

¹ Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923), պրոֆ. Ջ. Կիրակոսյանի խմբագրությամբ, Երևան, 1972, էջ 384-385:

Հայ ազգային պատվիրակության նախագահ Պողոս Նուբար փաշայի հետ²: Նախատեսվում էր հայկական զինուժն օգտագործել Կիլիկիան ազատագրելու համար:

Արևելյան լեզեոնի կազմավորումը հանձնարարվեց փոխգնդապետ Լուի Ռոմիոյին: Վերջինս Եգիպտոսում մեծ աջակցության հանդիպեց հայկական բոլոր կառույցների կողմից: Լեզեոնի առաջին գումարտակը նախատեսվում էր կազմավորել մուսալեոցի և եգիպտահայ կամավորներից: Ի տարբերություն հայերի՝ կամավորագրվել ցանկացող սիրիացիների թիվը փոքր էր³:

Ինչպես հայտնի է, Մուսա լեռան հերոսական ինքնապաշտպանությունից հետո ավելի քան 4.000 հայեր ապաստան էին գտել Եգիպտոսում: Պորտ Սալիդում՝ Սուեզի ջրանցքի ափին, մուսալեոցիների համար ստեղծվել էր վրանավան: Հերոս լեռնականները բազմիցս դիմել էին ֆրանսիական և բրիտանական իշխանություններին, որպեսզի իրենց հնարավորություն տրվի կովելու թուրքերի դեմ⁴: Պետք է նշել, որ այդ դիմումները, ի վերջո, պատճառ դարձան, որ ստեղծվի Հայկական կամ Արևելյան լեզեոնը:

Լ. Ռոմիոյի պահանջով երրորդ կարգի թարգմանիչ սպա Ժերպիանիոնը մանրամասն վիճակագրություն անցկացրեց Պորտ Սալիդում և առաձնագրույց ունեցավ մուսալեոցի տղամարդկանց հետ: Ըստ այդմ՝ զինծառայության համար պիտանի ճանաչվեցին 450 մարդ. 70-ը՝ 16-17 տարեկան, 300-ը՝ 18-35 տա-

² Boghos Nubar's Papers and the Armenian Question 1915-1918. Documents, Edited and translated by Vatche Ghazarian, Waltham, 1996, p. 393-397.

³ Պեյլերյան Ա., Մեծ տերությունները, Օսմանյան կայսրությունը և հայերը ֆրանսիական արխիվներում (1914-1918), հ. 1, Երևան, 2005, էջ 369:

⁴ Պողոսյան Ս., Կիլիկիան ազատագրելու ծրագրերը 1915 թ., «Պատմա-բանասիրական հանդես», 2006, թիվ 2, էջ 13-21:

րեկան, 80-ը՝ 35 տարեկանից բարձր: Մոտ 100-120 տղամարդկանց, որոնք վիրավորվել կամ հիվանդ էին և պիտանի չէին շարային ծառայության համար, Լ. Ռոմիոն նախատեսում էր օգտագործել Կիպրոսում ճամբարի կառուցման և թիկունքային աշխատանքների համար: 18-35 տարեկան բոլոր 300 հայերը նախկինում զինվորական պատրաստություն էին ստացել ֆրանսիացիների կողմից: Այս ցուցակագրվածներին կարող էին միանալ նաև այն մուսալեոցիները, որոնք աշխատելու համար ճամբարից հեռացել էին Եգիպտոսի այլ քաղաքներ: Հայրենի հողի համար կովելու գաղափարը չափազանց բարձր բարոյահոգեբանական մթնոլորտ էր ստեղծել հայերի մոտ: Լ. Ռոմիոն վստահ էր, որ չպետք է հայերին երկար ժամանակ անգործության մատնել, որպեսզի նրանք չվհատվեն: Նա համոզված էր, որ միայն մուսալեոցիները բավարար կլինեն, եթե իրենք ցանկանան անկանոն զորամաս ստեղծել՝ Ալեքսանդրետում դիվերսիոն գործողություններ իրականացնելու համար: Իսկ եթե Ֆրանսիան ավելի մեծ ու հեռահար նպատակ ունի՝ համագործակցություն հայ և սիրիացի ղեկավարների հետ, ազդեցության տարածում այդ ժողովուրդների վրա, ապա՝ Լ. Ռոմիոն կարծում էր, որ պետք է հայերից ու սիրիացիներից ստեղծել լուրջ ռազմական կառույց, որի համար անհրաժեշտ է երկարատև և շարունակական աշխատանք կատարել⁵:

Ինչպես տեսնում ենք, Լ. Ռոմիոն վճռական էր տրամադրված և իրեն վստահված գործին վերաբերվում էր ամենայն պատասխանատվությամբ: Փաստորեն, միայն մուսալեոցիները պատրաստ էին տրամադրելու 600 կամավոր: Մուսալեոցի բոլոր

⁵ Պեյլերյան Ա., նշվ. աշխ., հ. 1, էջ 372-376:

տղամարդիկ առանց խտրականության պատրաստակամություն հայտնեցին կովելու ատելի թուրքերի դեմ:

Դեռևս 1915 թ. աշնանից ֆրանսիացի ծովայինները սկսել էին մարզել մուսալեոցի երիտասարդներին՝ Կիլիկիայում դիվերսիոն գործողությունների ուղարկելու համար, սակայն հետագայում այդ նախագծից հրաժարվեցին: 1916 թ. ամռանը այդ հայ մարտիկները պարեկային ծառայություն էին կատարում Միջերկրականի կղզիներում: Մուսա լեռան հերոսամարտի կազմակերպիչներից Եսայի Յադուբյանի գլխավորությամբ մի խումբ կամավորներ տեղակայվել էին Կիլիկիայի ափերից մի քանի հարյուր մետր հեռավորության վրա գտնվող մի ամայի կղզում: Նրանց դեկավարում էր ֆրանսիական բանակի հայազգի ծովային սպա Շառլ-Տիրան Թեքեյանը: Այստեղ նրանք առանձին էին, ռազմականի հետ հաղորդակցություն չունեին և պետք է թշնամու հարձակման դեպքում ինքնուրույն պաշտպանվեին: Նրանց սնունդ էր բերում հունական «Ագիատիկ» առագաստանավը, որը գալիս էր 15 օրը մեկ, երբեմն էլ՝ ավելի ուշ: Ջրի պակասը լրացնելու համար հայ մարտիկները ստիպված էին, իրենց կյանքը վտանգելով, գիշերով նավել հանդիպակաց ափը և այնտեղ գտնվող ձորակի աղբյուրից ջուր վերցնել: Նրանք ապրում էին կղզու քարայրներում, իսկ գիշերները դիմի նվազակցությամբ կատարում էին ազգային երգեր, որը միշտ բարձր էր պահում նրանց մարտական ոգին ու եռանդը: Հայ մարտիկները կղզուց հետևում էին թշնամու քայլերին, նրանց նավերի ու սուզանավերի տեղաշարժերին, գաղտնի անցնում էին թուրքական ափը և թարմ տեղեկություններ հավաքում հակառակորդի մասին, կատարում դիվերսիոն գործողություններ թշնամու թիկունքում: Օգոստոսին կղզուն մոտեցավ բրիտանական ռազմանավ: Տ. Թեքեյանը բրի-

տանացի ծովային սպաների հետ մասնակցեց դիվերսիոն գործողությանը: Նրանք ոչնչացրեցին մի քանի ժամ հեռավորության վրա գտնվող թուրքական նավթամբարը, որտեղ գերմանական սուզանավերն էին լիցքավորվում⁶:

Փաստորեն, մուսալեոցիների զգալի մասն արդեն զինվորական համապատասխան ուսուցում էր ստացել ֆրանսիացիների կողմից, մասնակցել էր Կիլիկիայի ափամերձ կղզիների պաշտպանությանը և դիվերսիոն գործողությունների:

Լեզեոնի կազմավորման համար բրիտանական իշխանությունները հատկացրին Կիպրոսի արևելյան հատվածը՝ Ֆամագուստայից 24 կմ հյուսիս գտնվող Մոնարկա բնակավայրը:

1916 թ. նոյեմբերի 25-ին Ֆրանսիայի ռազմական նախարար՝ գեներալ, Պիեր Ռոքը, վարչապետ Արիստիդ Բրիանին տեղեկացրեց Արևելյան լեզեոնի կազմավորման ընթացքի մասին⁷: Նամակին կից ներկայացվեց Լ. Ռոմիոյի գեկուցագիրը, որով վերջինը պահանջում էր ապահովել մուսալեոցիների ընտանիքների անվտանգությունը, որպեսզի հարազատների մասին անընդհատ մտածելը չազդի հայ զինվորների բարոյահոգեբանական վիճակի վրա: Իսկ նրանց երեխաների կրթությունը կազմակերպելու գործում հույս ուներ ստանալ ֆրանսիացի միսիոներների աջակցությունը: Միաժամանակ, Պ. Ռոքը ճիշտ չէր համարում, որ մուսալեոցիների ընտանիքները տեղափոխվեն Կիպրոս:

Երկու վաշտ կազմավորելու համար նոյեմբերի 29-ին Մարսելից Պորտ Սայիդ ուղարկվեց անհրաժեշտ հրամանատարական կազմ, զինամթերք, հանդերձանք և անհրաժեշտ այլ պա-

⁶ Թեքեյան Շ.-Տ., Մուսա լեռան հայերի փրկությունը (հիշողության էջեր), Երևան, 2002, էջ 43-49:

⁷ Պեյլերյան Ա., նշվ. աշխ., հ. I, էջ 378-381:

րագաներ⁸: Լ. Ռոմիոն նախատեսում էր մուսալեոցիներից կազմավորել 2 վաշտ, եզիպտահայերից ու ռազմագերի հայերից՝ 1 վաշտ, նս 1 վաշտ՝ Եզիպտոսում կամավորագրված լիբանանցիներից: Լեզեոնի քահանա նշանակվեց Մուսա լեռան ինքնապաշտպանության գործուն կազմակերպիչներից գեյթունցի Աբրահամ Տեր-Գալստյանը, որն ամրակազմ, եռանդուն մարդ էր՝ սիրված մուսալեոցիների կողմից: Նա ստացավ փոխլեյտենանտի աստիճան⁹: Ինչպես տեսնում ենք, առաջնահերթ նախատեսվում էր հայերից կազմավորել երեք վաշտ, որով կձևավորվեր մեկ գումարտակ:

Լ. Ռոմիոն կարողացավ սերտ համագործակցություն հաստատել բրիտանական իշխանությունների հետ, որն օգտակար եղավ լեզեոնի և Պորտ Սայիդի ճամբարին առնչվող բազմաթիվ հարցեր լուծելու համար: Նա բրիտանական ռազմական իշխանությունների ուշադրությունը հրավիրեց Պորտ Սայիդի ճամբարի կառավարման մեջ թերացումների, հայերի նկատմամբ ոչ բարեհաճ վերաբերմունք ցույց տված բրիտանացի պաշտոնյաների վրա: Վերջինները գլխավորապես Սիրիայի հրեաներ էին¹⁰:

Նոյեմբերի 30-ին, ժամը 16-ին Ժերպհանիոնի գլխավորությամբ լեզեոնի առաջին ստորաբաժանումը՝ 54 մուսալեոցիներ, «Մարոկկո» նավով մեկնեցին Կիպրոս: Նրանք բժշկական քննություն էին անցել բժիշկ Արշարունու մոտ: Այս խմբում ընդգրկված էին որմնադիրներ, ատաղձագործներ, հյուսներ, քանի որ նման արհեստավորներ էին անհրաժեշտ ճամբարի հիմնադրման համար: Նրանց անհրաժեշտ համազգեստների մի մասը՝ կարճ շալվարներ, պաճիճներ, կոշիկներ հատկացվեցին

⁸ Պեյլերյան Ա., նշվ. աշխ., հ. I, էջ 378-379:

⁹ Նույն տեղում, էջ 411-412:

¹⁰ Նույն տեղում, էջ 412:

բրիտանական պահեստներից, իսկ կանաչ-շագանակագույն կտորից պատմուճաններ, և ամառային գլխարկներ ստացան ֆրանսիական հյուպատոսի նախաձեռնությամբ գործող «Զինվորի կտորեղեն», ֆրանսիական բարեգործական ընկերության կողմից: Մեկ ամսվա համար անհրաժեշտ սնունդ, գույք և գործիքներ տրամադրեցին Պորտ Սայիդի և Իսմայիլիայի բրիտանական ապրանքային պահեստները¹¹:

Դեկտեմբերի 2-ին, ժամը 9-ին, «Մարոկկո» նավը փոթորկի պատճառով դժվարությամբ մոտեցավ Մոնարկայի կառավարություն: Կարողացան ափ դուրս բերել միայն անձնակազմը և գույքի մեծ մասը, իսկ մթերային ապրանքները որոշվեց բեռնաթափել Ֆամագուստայի նավահանգստում, որին նավերը կարող էին մոտենալ ցանկացած եղանակի: Հաշվի առնելով նման հանգամանքները՝ Լ. Ռոմիոն որոշեց ապահով ցամաքային կապ հաստատել Ֆամագուստայի և Մոնարկայի միջև: Դեկտեմբերի 5-ին նա Պորտ Սայիդից Կիպրոս ուղարկեց Իսմայելիեյի բրիտանական գլխավոր շտաբից ստացած մոտոցիկլետն ու հեծանիվը¹²:

Յուրաքանչյուր շաբաթ Պորտ Սայիդից մեկ նավ էր մեկնում Մոնարկա: Ճանապարհը տևում էր 30-40 ժամ: Անթալիայի ծոցի մոտ գտնվող Կաստելլորիգո կղզուց, ուր պարեկություն էին անում լեզեռնականները, դեպի Պորտ Սայիդ մեկնող նավը ամիսը 2 անգամ կանգ էր առնում Մոնարկայում: Այդպիսով, լեզեռնականների ճամբարը ամսեկան 6 անգամ հաղորդակցվում էր Պորտ Սայիդի հետ, ուր մնացել էին մուսալեոցիների ընտանիքները: Հեռագրական կապը պահպանվում էր 2 կմ դեպի հյուսիս-արևմուտք գտնվող Տրիկիոմոյի գրասենյակից, որը միացած

¹¹ Նույն տեղում, էջ 408:

¹² Նույն տեղում:

էր Ֆամագուստայի հեռագրագծին, իսկ նրա միջոցով՝ Պորտ Սայիդին¹³:

Մինչև գորանոցների կառուցումը կամավորների առաջին խումբը տեղավորվեց բրիտանացիների տրամադրած 6 կոնաձև վրաններում: Մոնարկայում գտնվող միակ կացարանը այգեպանի տնակ էր, որը Կիպրոսի անտառների վարչությունը տրամադրեց լեզեոնի հրամանատարական կազմին: Առաջին խումբը Կիպրոս ժամանելու պահին իր տրամադրության տակ ուներ միայն 3 հրացան, որը նրանց էր հատկացրել «Ժյուլ Ֆերրի» նավը: Դեկտեմբերի 3-ին Լ. Ռոմիոն Պորտ Սայիդից ուղարկեց 600 հրացան, որը ստացել էր «Սպահան» նավի ժամանումից հետո¹⁴:

Լ. Ռոմիոն հիացած էր հայ կամավորների կարգապահությունից ու վստահելիությունից: Չնայած միայն Ժերպիանիոնն էր գտնվում մուսալեոցիների առաջին խմբի մոտ, սակայն նա մեծ հեղինակություն էր վայելում և տիրում էր կատարյալ կարգապահություն: Լ. Ռոմիոն համոզված էր, որ իրեն անհրաժեշտ են Ժերպիանիոնի նման ջանասեր ու հաստատակամ սպաներ, իսկ կոպիտ և գրգռված պահվածքով սպաները չէին կարող հաջողության հասնել հայերի մոտ: Հայ զինվորներին ֆրանսերեն սովորեցնելու գործը հանձնարարվեց Վանի նախկին միսիոներ, զինվոր Նասսին, որը «Սպահան» նավով դեկտեմբերի 3-ին ժամանել էր Պորտ Սայիդ¹⁵:

Լ. Ռոմիոն, տեսնելով, որ մուսալեոցիները փայլուն հրաձիգներ են, որոշեց նրանցից կազմել գնդացրորդների ջոկատներ: Գնդապետ էդուարդ Բրեմոնը խոստացավ Սուեզից մեկ գնդացիր և ուսուցանող անձնակազմ ուղարկել: Լ. Ռոմիոն դիմեց գե-

¹³ Նույն տեղում, էջ 408-409:

¹⁴ Նույն տեղում, էջ 409:

¹⁵ Նույն տեղում:

ներալ Պ. Ռոջին, որպեսզի Սուեզի գնդացիների մի մասը տրամադրեն լեգեոնին¹⁶:

Լեգեոնի առաջին գումարտակը կազմավորվեց 1916 թ. դեկտեմբերին՝ 600 մուսալեոցիներից ու 300 եգիպտահայերից: 1917 թ. մարտին նրանց միացան 236 հայ ռազմագերիներ, որոնք Միջագետքից Հնդկաստան էին տարվել: Միացվեցին նաև Սինայում գերված մի քանի խումբ հայեր¹⁷:

Մուսալեոցիների զինվորագրումից հետո կարևոր էր նաև ուշադրության կենտրոնում պահել նրանց ընտանիքները: Հայ զինվորը չէր կարող բարոյահոգեբանական ու մարտական բարձր որակներ ցուցաբերել, եթե անընդհատ մտահոգված լիներ իր ընտանիքի վիճակով: Հետևաբար, ֆրանսիական իշխանությունները սկսեցին քննարկել Պորտ Սայիդի ճամբարի հոգածությունն իրենց ձեռքը վերցնելու հարցը: Դա պայմանավորված էր նաև ֆրանսիական մշակույթն ու ազդեցությունը հայերին ներարկելու, սեփական կրթությունն ու դաստիարակությունը նոր սերնդի վրա տարածելու ձգտումով: Ֆրանսիացի պաշտոնյաներն այդ հարցի հետ կապված ունեին նաև ֆինանսական որոշակի հաշվարկներ:

1917 թ. մայիսի 20-ին վարչապետ Ալեքսանդր Ռիբոյին ուղարկած զեկուցագրում, Կահիրեում Ֆրանսիայի դեսպան Ալեքսանդր Դեֆրանսը ներկայացրեց իր և Լ. Ռոմիոյի տեսակետները Պորտ Սայիդի հայկական ճամբարի վերաբերյալ: Նշում էր, որ մուսալեոցիները լեգեոնի ամենակարգապահ և մարտունակ տարրն են: Հետևաբար՝ իրենց խնդիրն է անուշադրության չմատնել նրանց ընտանիքները: Նա իր գոհունակությո-

¹⁶ Նույն տեղում, էջ 412:

¹⁷ Լազեան Գ., Հայաստան եւ Հայ Դատը (Վաւերագրեր), Գահիրէ, 1946, էջ 191:

յունն էր հայտնում, որ, ի տարբերություն սիրիացիների, հայերի կամավորագրությունը Եգիպտոսում, Հնդկաստանում, Ամերիկայում հաջողությամբ էր ընթանում, որ բոլոր հայ առաջնորդները խրախուսում էին կամավորագրությունը, հանգանակություններ էին անում կամավորների ու նրանց ընտանիքների համար, հայկական բոլոր հոսանքները միասնաբար էին հանդես գալիս: Ճիշտ չէր համարում, որ հայ գաղթականների հոգածությունը մնար բրիտանացիների ձեռքում, մանավանդ որ պատերազմից հետո իրենք պարտավորված կլինեին փոխհատուցել այդ ծախսերը: Անհրաժեշտ էր համարում այդ գործը վերցնել իրենց ձեռքը, հայ երեխաներին ապահովել ֆրանսիացի ուսուցիչներով, հայերի մեջ ներարկել ֆրանսիական ոգի: Տղամարդկանց զինվորագրումից հետո ճամբարում մնացել էին մոտ 3.400 հոգի, որից մոտ 1.000-ը՝ երեխաներ: Ա. Դեֆրանսը և Լ. Ռոմիոն իրենց հիացմունքն էին հայտնում, որ հայերը կազմակերպել էին գերազանց գործող արհեստանոցներ, որոնցում ընդգրկված էին բոլոր չափահասները: Ճամբարի ծախսերը, եթե հոկտեմբերին օրական 1.000 ֆրանկ էր, ապա՝ տղամարդկանց հեռանալուց ու արհեստանոցների բացվելուց հետո զգալիորեն նվազել էին: Ա. Դեֆրանսը և Լ. Ռոմիոն խնդրում էին անհրաժեշտ քայլեր ձեռնարկել հայ գաղթականներին հնարավորինս արագ ֆրանսիական խնամատարության տակ վերցնելու համար¹⁸:

1917 թ. հուլիսի 19-ին Ֆրանսիայի ԱԳՆ Ասիա-Օվկիանիայի վարչության կազմած զեկուցագրում հավանություն էր տրվում Ա. Դեֆրանսի առաջարկներին, նշվում էր, որ դրանք կարևորել էր նաև ռազմական նախարարությունը: Առաջարկվում էր տրամադրել անհրաժեշտ ֆինանսներ՝ բրիտանացիներ-

¹⁸ Պեյլեյյան Ա., նշվ. աշխ., հ. I, էջ 472-474:

րին փոխհատուցելու, և ճամբարի ծախսերն ամբողջությամբ ֆրանսիական վարչությանը հանձնելու համար¹⁹:

1918 թ. հունվարի 9-ին Ֆրանսիայի վարչապետ Ժորժ Կլեմանյոյին Պորտ Սալիդի ճամբարի վիճակի մասին զեկուցագիր ներկայացրեց գնդապետ Է. Բրեմոնը: Մուսալեոցիներին ամեն օր միանում էին նոր գաղթականներ, օրինակ՝ Պետրայից Ակսաբայի վրայով ժամանել էր 80 մարդ: Այդ պահին ճամբարում կենտրոնացած էին 4.000 գաղթականներ: Պորտ Սալիդի բրիտանական զորքերի հրամանատար գնդապետ Էլգուդը ճամբարի ամսական ծախսը հաշվարկում էր 30.000 ֆրանկ, որը Է. Բրեմոնի կարծիքով չափազանցված էր, քանի որ բնակչությունը ներգրավված էր տարբեր աշխատանքներում և հավանաբար ոչ միայն ծախսերը փակում էր, այլ՝ նույնիսկ շահույթ էր ապահովում: Ճամբարի հրամանատարը բրիտանացի լեյտենանտ էր: Հայկական կազմակերպություններն այնտեղ բացել էին անգլիացի ու ամերիկացի ուսուցիչներով դպրոցներ: Ճամբարով զբաղվում էին տարբեր անգլիախոս կրոնական կառույցներ: Է. Բրեմոնին մտահոգում էր, որ ամեն ինչ արվում էր անգլերենով, իսկ Ֆրանսիայի մասին չէին խոսում, ինչպես նաև Ֆրանսիան փոխհատուցելու էր ճամբարի ծախսերը մեծ Բրիտանիային, իսկ շահույթը կմնար վերջինին: «Պատերազմի ավարտին մենք գործ կունենանք, ուրեմն, անգլերեն լեզվով կրթված, մեզ արհամարհող մի բնակչության հետ, որը համոզված կլինի, որ միայն Անգլիան է զբաղվել իրենով, և այդուհանդերձ, ամեն ինչի համար մենք պետք է վճարենք»: Նա առաջարկում էր ճամբարի կառավարումը վերցնել իրենց վրա, և պարտավորվել բրիտանացիներին, պատերազմից հետո բրիտանացիներին փոխհատուցել բոլոր ծախսերը: Առաջարկում էր որևէ

¹⁹ Նույն տեղում, հ. II, Երևան, 2005, էջ 14-16:

ֆրանսիացի լեյտենանտի կամ կապիտանի նշանակել ճամբարի կառավարիչ՝ նրան դնելով Պորտ Սալիդի բազայի հրամանատարի ենթակայության տակ: Սպային պետք է օգնեին մի ֆրանսիացի ուսուցիչ և աշխարհիկ ուսուցչուհի: Բժշկական ծառայությունն ապահովելու էր Պորտ Սալիդի բազան: Նշում էր, որ որքան ուշացնեն լուծումը, այնքան «մենք մեր ծախսերով անգլիականացված և հատկապես ամերիկականացված հայեր կգտնենք: Մենք պետք է, այսպիսով, ավելին անենք, մեր փողերով՝ մեր դեմ ուղղված կամ նվազագույնը մեզ շրջանցած երերուն իրավիճակը վերականգնելու համար»²⁰:

Այսպիսով, ֆրանսիացի գործիչները մուսալեոցի մարտիկների, և նրանց ընտանիքների հետ կապված ամենատարբեր հաշվարկներ էին կատարում: Հայ լեռնականներն անմիջապես արձագանքեցին զինվորագրվելու առաջարկին, քանի որ դրանով հայրենիքն ազատագրելու և պապենական օջախները վերադառնալու հնարավորություն էին ստանում: Իսկ նրանց ընտանիքներն անտրտունջ դիմանում էին Պորտ Սալիդի ավազների վրա կառուցված վրանավանի դժվարություններին, և բրիտանացի կառավարիչների ապօրինություններին՝ հուսալով, որ շուտով կվերադառնան հայրենի եզերք:

Ինչպես տեսնում ենք, մուսալեոցիներն առաջինն էին, որ արձագանքեցին Արևելյան լեզեոնին կամավորագրվելու Ֆրանսիայի կոչին: Հետաքրքիր է նշել, որ գրեթե առանց բացառության բոլոր տղամարդիկ զինվորագրվելու ցանկություն հայտնեցին: Ֆրանսիական հրամանատարությունը չափազանց գոհ մնաց մուսալեոցի զինվորներից, քանի որ նրանք աչքի էին ընկնում կարգապահությամբ ու բարձր մարտունակությամբ: Ֆրանսիա-

²⁰ Նույն տեղում, էջ 125-126:

կան իշխանությունները ցանկանում էին նաև Պորտ Սայիդի ճամբարի կառավարումն իրենց ձեռքը վերցնել, որպեսզի հայ գաղթականների մոտ ամրապնդեին Ֆրանսիայի հեղինակությունն ու ազդեցությունը, հայերին հեռու պահեին այլ երկրների քաղաքական ու մշակութային ազդեցությունից: Սակայն այդ հարցը մնաց չլուծված:

Հայ կամավորները կամավորագրվեցին Կիպրոսում կազմավորվող Արևելյան լեգեոնին, որպեսզի նպաստեին հայրենիքի ազատագրմանը: Հետագայում հայկական զորախումբը մեծ ներդրում ունեցավ Կիլիկիան ազատագրելու, ապա՝ տեղի հայերի ինքնապաշտպանությունը կազմակերպելու գործում:

Փաստորեն, մուսալեոցիները, որոնք հերոսական ինքնապաշտպանության միջոցով փրկվել էին Մեծ եղեռնից, հանդիսացան Արևելյան կամ Հայկական լեգեոնի առաջամարտիկները: Նրանք հերթական անգամ ցույց տվեցին հայի քաջությունն ու բարձր մարտական որակները, բարձր պահեցին մեր ազգային հպարտության դրոշը:

SAMVEL POGHOSYAN

THE VOLUNTEERING OF MUSA DAGH ARMENIANS IN THE ARMENIAN LEGION

SUMMARY

The Armenians of Musa Dagh, who were saved from the genocide by their heroic self-defense, became the volunteers of the Armenian Legion. Since 1915, about 300 young people from Musa Dagh had received military training by the French sailors and

participated in patrol and reconnaissance operations. The French command was extremely pleased with the Musa Dagh soldiers, because they were really disciplined and had high efficiency. The French authorities wanted to take over the management of the camp in Port Said, in order to reinforce the reputation and influence of France over Armenian immigrants and to keep them away from political and cultural influence of another countries.

САМВЕЛ ПОГОСЯН

ВОЛОНТЕРСТВО МУСАДАГСКИХ АРМЯН В АРМЯНСКИЙ ЛЕГИОН

РЕЗЮМЕ

Армяне Муса-дага, спасшиеся от геноцида своей героической самообороной, стали добровольцами Армянского легиона. С 1915 года около 300 молодых людей из Муса-дага получили военную подготовку у французских моряков и приняли участие в патрульных и разведывательных операциях. Французское командование было крайне довольно солдатами Муса-Дага, тем, что они были дисциплинированными и имели хорошую военную подготовку. Французские власти желали взять управление лагерем в Порт-Саиде, чтобы укрепить репутацию и влияние Франции среди армянских беженцев, держать их подальше от политического и культурного влияния других стран.

ՀԱՅ ԶԻՆՎՈՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ
ՀԱՐԱՎԻ ՈՉ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ
ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐՈՒՄ
1918-1920 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

Առաջին աշխարհամարտի սկզբից մինչև 1917 թ. վերջը ռուսական բանակ գորակոչվեց մոտ 250 հազար հայ¹: Նրանց զգալի մասին ցարական իշխանությունը տեղափոխեց Ռուսաստանի հյուսիս-արևմուտք՝ գերմանական և ավստրոհունգարական բանակների դեմ կռվելու:

1917 թ. հոկտեմբերյան հեղաշրջումից հետո Ռուսաստանի արևմտյան ռազմաճակատը բոլշևիկյան, գերմանական և ավստրոհունգարական քարոզչության հետևանքով սկսեց քայքայվել²: Այնտեղ ծառայող հայ զինվորների մի մասը, հայրենիք անցնելու ակնկալիքով, մեկնեց Ռուսաստանի հարավ, որը վերածվել էր ոչ խորհրդային ուժերի հավաքատեղի:

Հոկտեմբերյան հեղաշրջումից հետո Պետրոգրադից փախուստի դիմած և Նովոչերկասկում հաստատված ցարական նախկին գեներալ Մ. Ալեքսեևը կազմակերպեց հակախորհրդային ուղղվածության զինված ուժեր, որ պաշտոնապես անվանվեց Կամավորական բանակ: Վերջինին աջակցեց Դոնի զինվորական կառավարության ղեկավար ատաման Կալեդինը: 1918 թ. օգոստոսի 3-ին Կամավորական բանակը գրավեց Եկատերինո-

¹ Տե՛ս Կարապետյան Մ., Հայաստանի Հանրապետության բանակը (1918-1920 թթ.), Երևան, 1996, էջ-16:

² Տե՛ս Базанов С.Н., К истории развала русской армии в 1917 году. Армия и общество 1900 – 1941 гг., Статьи и документы, Москва, 1999, с. 51-76.

դարը (այժմ՝ Կրասնոդար), որը դարձավ հարավի հակա-խորհրդային ուժերի կենտրոնը՝ նոր ստեղծված պետական կազմավորման՝ «Հատուկ խորհրդակցության» մայրաքաղաքը: Այս կազմավորման և նրա զինված ուժերի նպատակն էր տա-պալել բոլշևիկյան վարչակարգը և վերականգնել Ռուսական կայսրությունը՝ 1914 թ. սահմաններով³: 1918 թ. սեպտեմբերի 25-ին գեներալ Ալեքսեևի մահից հետո Ա.Դենիկինը վերակազմա-վորեց Կամավորական բանակը և ստանձնեց գլխավոր հրամա-նատարի պաշտոնը, իր ձեռքում կենտրոնացնելով ռազմական և վարչաքաղաքացիական իշխանությունը: 1918 թ. դեկտեմբերի 26-ին նա հռչակվեց Ռուսաստանի հարավի զինված ուժերի գե-րագույն գլխավոր հրամանատար⁴:

Ռուսաստանի հարավի ոչ խորհրդային պետական կազմա-վորումները, և դրանց կողմից հովանավորվող առանձին ան-հատներն ու կազմակերպություններն ամեն ջանք գործադրեցին հայ զինվորներին իրենց գորքերի շարքերը ներգրավելու հա-մար: Իրենց հերթին, հայրենիք վերադառնալ ցանկացող հայ զինվորները, փակ ճանապարհների և երկաթուղու անկանոն գործելու հետևանքով հարկադրված էին շաբաթներով և ամիս-ներով մնալ Ռուսաստանի հարավի բնակավայրերում և սնունդ, հագուստ ու գումար հայթայթելու նպատակով մտնել ոչ խորհրդային պետական կազմավորումների գորքերի շարքերը: Ռուսաստանի հարավի ոչ խորհրդային պետական կազմավո-րումները փորձում էին Կամավորական բանակ, Դոնի ու Կուբա-

³ Տե՛ս Պետրոսյան Գ., Հայաստանի Հանրապետության հարաբերությունները Ռու-սաստանի ոչ խորհրդային պետական կազմավորումների հետ (1918-1920 թթ.), Երևան, 2006, էջ 10, 67:

⁴ Տե՛ս Նույնի, Հայաստանի Հանրապետության առնչությունները Ռուսաստանի հա-րավի ոչ խորհրդային պետական կազմավորումների հետ (1918 թ. հունիս-նոյեմ-բեր), Երևան, 2004, էջ 40:

նի գորքեր գորակոչել նաև տեղացի հայերին և Ռուսաստանի հարավում ապաստանած հայ գաղթականներին, որոնց թիվը 1918 թ. վերջին միայն Հյուսիսային Կովկասում անցնում էր 200 հազարից, որից 70 հազարը տեղացի հայեր էին, իսկ մնացածը՝ գաղթականներ⁵:

Մինչև 1919 թ. սկիզբը Ռուսաստանի հարավում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական և հյուպատոսական մարմինների բացակայության և երկրամասի հայկական ազգային կազմակերպությունների անկազմակերպ գործելու հետևանքով հազարավոր հայեր գորակոչվեցին ոչ խորհրդային պետական կազմավորումների գորքեր⁶: Զորակոչված հայերից կազմավորվեցին առանձին հայկական զումարտակներ, վաշտեր և ջոկատներ: Հայ զինվորականների թվաքանակը 1918-1919 թթ. ընթացքում հասնում էր մինչև տասերկու հազարի⁷:

Ռուսաստանի հարավի ոչ խորհրդային զինված ուժերը հայերից բաղկացած առանձին ռազմական ստորաբաժանումներն օգտագործեցին Վրաստանի և Խորհրդային Ռուսաստանի դեմ: Օրինակ՝ 1919 թ. սկզբին Սոչիի շրջանը գրավելու համար Կամավորական բանակը օգտագործեց Հյուսիսային Կովկասի հայաշատ բնակավայրերում ազգությամբ ռուս կամ հայ սպաների կազմավորած և Սոչի տեղափոխած հայկական ջոկատներին, որոնք 1919 թ. հունվարի վերջին հարվածեցին Սոչիում գտնվող վրացական գորքին թիկունքից և թևերից, որի հետևանքով վեր-

⁵ Տե՛ս Մինասյան Ս., Հայ գաղթականությունը Հյուսիսային Կովկասում 1918-1920 թթ., ատենախոսություն, է.00.01 – «Հայոց պատմություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի համար, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, Երևան, 2010, էջ 16, 52:

⁶ Տե՛ս ՀԱԱ ֆ. 200, ց. 1, գ. 100, թ. 81, ց. 2, գ. 44, թ. 4:

⁷ Տե՛ս նույն տեղում, գ. 100, թ. 81, ց. 2, գ. 44, թ. 4:

ջինս անձնատուր եղավ⁸: Սոչի տեղափոխած հայկական ջոկատների հիմքի վրա, ամենայն հավանականությամբ 1919 թ. սկզբին կամ կեսերին, ձևավորվեց հայկական գումարտակը, որտեղ 1919 թ. ընթացքում ծառայում էր 300-1500 հայ զինվոր⁹:

Կամավորական բանակի կողմից խորհրդային և վրացական զորքերի դեմ հայկական ջոկատների օգտագործումը խորհրդային Ռուսաստանի և Վրաստանի իշխանությունների մոտ այն տպավորությունը ստեղծեց, որ հայերը և Հայաստանի կառավարությունը Ա.Դենիկինի հետ դաշնակցած պայքարում են իրենց դեմ: Նման կարծրատիպերի առաջացումը կանխելու և ՀՀ բանակը փորձառու զինվորներով համալրելու նպատակով 1919 թ. սկզբից Ռուսաստանի հարավում ոչ խորհրդային զորքերի ռազմական հաջողությունների և խորհրդային զորքերի հեռանալուց հետո վերաբացված հայկական ազգային կազմակերպությունները հայ գաղթականներին ու ռազմագերիներին աջակցելուց բացի, հարաբերությունների մեջ մտնելով երկրամասի հակախորհրդային իշխանությունների հետ, փորձում էին նաև պաշտպանել Ռուսաստանի հարավի հայությանը գորակոչից և տեղափոխել Հայաստան¹⁰:

1919 թ. առաջին ամիսներին Ռուսաստանի հարավի հայկական կազմակերպությունների՝ մասնավորապես Ռուսական կարմիր խաչի ընկերության հայկական կոմիտեի ջանքերի շնորհիվ հաջողվեց մինչ 1919թ. սեպտեմբերի 25-ը հետաձգել հայ գաղթականների գորակոչի խնդիրը, և սկսել նրանց տեղափոխություն-

⁸ Տե՛ս նույն տեղում, ց. 1, գ. 295, թ. 51:

⁹ Տե՛ս նույն տեղում, գ. 551, թ. 1, 3, գ. 409, թ. 3:

¹⁰ Տե՛ս «Ժողովրդի ձայն», 1919, փետրվարի 26, N 43, «Մշակ», 1919, փետրվարի 27, N 45 և մարտի 1, N 46, ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 73¹, թ. 102, Հայերի կոտորածները Բաքվի և Ելիզավետպոլի նահանգներում 1918-1920 թթ., փաստաթղթերի և նյութերի ժողովածու, Երևան, 2003, էջ 334:

նը Հայաստան¹¹: Գաղթականներ և ռազմագերիներ տեղափոխող շոգենավերը Բաթում էին ուղևորվում Նովոռոսիյսկից, Օդեսայից և Սև ծովի ափերին գտնվող այլ քաղաքներից:

1919 թ. ապրիլ-մայիս ամիսներին Հայաստանի քաղաքական և տնտեսական դրության բարելավումը հնարավորություն ընձեռեց իշխանություններին զբաղվել Ռուսաստանի հարավի հայ գաղթականների օգնության և հայրենադարձության հարցերով¹²: Ռուսաստանի հարավում Հայաստանի Հանրապետության ներկայացուցչությունների ջանքերով հայերի ներգաղթը ավելի կազմակերպված ընթացք ստացավ, որի շնորհիվ 1919 թ. ընթացքում Ռուսաստանի հարավից Անդրկովկաս տեղափոխվեց ավելի քան 50 հազար հայ գաղթական և ռազմագերի¹³:

Ռուսաստանի հարավի զինված ուժերի գլխավոր հրամանատարությանը կից Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ Հ. Սադաթեյանի՝ Ռուսաստանի հարավի զինված ուժերի գորքերում ծառայող հայերին ազատելու, և Հայաստան փոխադրելու, ջանքերը 1919թ. կեսերին հաջողությամբ պսակվեցին: 1919 թ. օգոստոսի 4-ին Տազանրոզից Ռուսաստանի հարավի զինված ուժերի հրամանատարության շտաբի հերթապահ գեներալ-մայոր Ս. Տրուխաչովի՝ Հ. Սադաթեյանին ուղարկած նամակից տեղեկանում ենք, որ Ա.Դենիկինը թույլատրել է Անդրկովկասում ծնված հայերին, որոնք վերադարձել էին ավստրո-գերմանական գերությունից և միջոցների սղության պատճառով մտել են Կամավորական բանակ, նաև Անդրկովկասում ծնված այն հայերին, որոնք գորակոչվել են Կամավորական բանակի տարածքից, ուղարկել հայրենիք՝ Անդրկովկաս: Հրամանի համաձայն, հայրե-

¹¹ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 295, թ. 24, ց. 2, գ. 75, թ. 2. ֆ. 275, ց. 1, գ. 10, թ. 117:

¹² Տե՛ս Նույն տեղում, ֆ. 275, ց. 1, գ. 10, թ. 116:

¹³ Տե՛ս Մինասյան Ա., նշվ. աշխ., էջ 90:

նիք մեկնող հայերը պետք է ուղարկվեին Եկատերինոդարի ռազմական հրամանատարի մոտ, որն էլ հայ ռազմիկներին հանձնելու էր Ռուսաստանի հարավի գինված ուժերի գլխավոր հրամանատարությանը կից Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցչությանը, որը կազմակերպելու էր հայ ռազմիկների տեղափոխությունը Հայաստան¹⁴: Հայ ռազմիկներին հայրենիք ուղարկելու ծախսերը հոգալու համար Հ. Սադաթեյանը շրջում է Հյուսիսային Կովկասի հայաշատ համայնքներում և ունևոր հայերից գումարներ հավաքում¹⁵: Հ. Սադաթեյանի ջանքերի շնորհիվ 1919 թ. աշնանը Հայաստան ուղարկելու նպատակով խորհրդային զորքերի դեմ կռվող 820 հայ զինվորներից բաղկացած հայկական գումարտակը ռազմաճակատից տեղափոխվեց Տազանրոզ, որտեղից էլ պետք է անցներ Բաթում¹⁶: Ընդհանուր առմամբ, նախատեսվում էր Հայաստան տեղափոխել 2800 հայ զինվորի¹⁷: Վրացական իշխանությունների դժգոհությունը չառաջացնելու համար որոշվեց հայ զինվորների մի մասին հայրենիք տեղափոխել գաղթականի տեսքով¹⁸:

Սակայն 1919 թ. հոկտեմբերից Ռուսաստանի հարավի գինված ուժերի ռազմական անհաջողությունների հետևանքով կամավորական բանակում և կազակների զորքերում ծառայող հայ զինվորների Հայաստան տեղափոխման գործը ոչ միայն դժվարացավ, այլև առաջացավ ևս նոր խնդիր: Կամավորական բանակի ռազմական անհաջողությունների հետևանքով 1920 թ. սկզբից Ռուսաստանի հարավում սկսվեց համատարած գորա-

¹⁴ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 275, ց. 1, գ. 5, թ. 46:

¹⁵ Տե՛ս նույն տեղում, ֆ. 200, ց. 1, գ. 385, թ. 6:

¹⁶ Տե՛ս նույն տեղում, ֆ. 275, ց. 5, գ. 40, թ. 97:

¹⁷ Տե՛ս նույն տեղում, ց. 4, գ. 197, թ. 151:

¹⁸ Տե՛ս նույն տեղում, թ. 133:

կոչ: Հունվար-մարտ ամիսներին Ռուսաստանի հարավի հայերին գորակոչից ազատելու, իսկ արդեն գորակոչվածներին Հայաստան ուղարկելու գործընթացը երկրամասի տարբեր շրջաններում տարբեր ընթացք ունեցավ:

Կուրբանում, Ստավրոպոլում և Թերեքի արևմտյան ու կենտրոնական հայաշատ շրջաններում (մասնավորապես Հանքային ջրերում և Վլադիկավկազում, շնորհիվ Հայաստանի Հանրապետության ներկայացուցիչների՝ Հ.Սաղաթեյանի, Ա.Տոնյանի, Յ. Օվեյանի, Բախչիսարայցևի, Ա.Քալանթարի, Հ.Սառիկյանի, Պ.Հովհաննիսյանի ակտիվ գործունեության, հայերին գորակոչից ազատելու գործընթացը հաջողությամբ պսակվեց¹⁹: Տեղական իշխանությունը հայերին մինչև 1920 թ. մարտի 10-ը գորակոչից տարկետում տրամադրեց: 1920 թ. հունվար-մարտ ամիսներին Հ. Սաղաթեյանը, երկրամասի հյուպատոսները, և գաղթականների հարցերով զբաղվող հայկական կազմակերպությունները կազմակերպեցին գորակոչից ազատված գաղթականների, և հայ ռազմիկների տեղափոխությունը Հայաստան: Կուրբանից հայրենիք մեկնողները հիմնականում Եկատերինոդարում ու Արմավիրում ապաստանած և 1919 թ. օգոստոսից Նովոռոսիյսկում մնացած գաղթականներն էին, ու Կամավորական բանակից և կազակների զորքերից ազատված հայ ռազմիկները: Նրանք Ռուսաստանի հարավի գլխավոր հրամանատարությանը կից Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցչության, երկրամասի հյուպատոսարանների, և տեղական հայկական կազմակերպությունների նյութական աջակցությամբ 1920 թ. հունվարից մեկնեցին Նովոռոսիյսկ, մասամբ՝ Տուապսե և Անապա, որտեղից պետք է անցնեին Փոթի և Բա-

¹⁹ Տե՛ս նույն տեղում, ֆ. 200, ց. 1, գ. 594, թ. 6:

թում²⁰: Նրանց տեղափոխության և պարենի կարիքները հոգաց Ռուսաստանի հարավի զինված ուժերի զլխավոր հրամանատարությանը կից Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցչությունը:

1920 թ. հունվարի 10-ին Նովոռոսիյսկ ժամանեց Հ. Սադաթեյանի կողմից քաղաքի հյուպատոս նշանակված Ա. Տոնյանը: Նրա ջանքերով հունվարի 13-ին բացվեց հայկական հյուպատոսարանը, որի առաջնային խնդիրներից էր Նովոռոսիյսկում կուտակված 10.000 գաղթականների և ռազմագերիների օգնության կազմակերպումը²¹:

Հայրենիք մեկնող հայ զինվորներին օգնեցին Նովոռոսիյսկի իշխանությունները, որոնք հայ զինվորների տեղափոխման համար քաղաքի հայկական հյուպատոսարանին անվճար տրամադրեցին «Վոզրոժդենիե» և «Կին» նավերը: Նովոռոսիյսկի իշխանությունը Եկատերինոդարից քաղաք ժամանած հայ զինվորներին նաև անվճար շոր և ուտելիք բաժանեց²²:

1920 թ. հունվար-մարտ ամիսներին Նովոռոսիյսկի հյուպատոսի ջանքերով «Ռուս», «Լյա-ֆորտունա», «Պրագա», «Վոզրոժդենիե» և «Կին» նավերով Փոթի և Բաթում ուղարկվեցին մոտ 2000 հայ ռազմիկ և գաղթական, որոնցից 700-ը՝ անվճար: Մարտի վերջին Հ. Սադաթեյանի կողմից Սոչիում լիազոր նշանակված Ա. Հակոբյանի ջանքերի շնորհիվ Թիֆլիս տեղափոխվեց Սոչիի հայկական գումարտակի մնացորդները՝ 200 վիրավոր զինվոր²³:

Թերեքի արևելյան շրջաններում (Գրոզնի, Մոզդոկ, Ղզլար) և Դադստանում տեղի իշխանությունների անբարյացակամ վե-

²⁰ Տե՛ս նույն տեղում, գ. 613, թ. 10:

²¹ Տե՛ս նույն տեղում, գ. 536, թ. 1, 24:

²² Տե՛ս նույն տեղում, թ. 25:

²³ Տե՛ս նույն տեղում, գ. 551, թ. 2, 4:

րաբերմունքի, մարգային կենտրոններից կտրվածության, ինչպես նաև գաղթականների ու նրանց խնդիրներով զբաղվող հայկական կազմակերպությունների միջոցների սղության պատճառով չհաջողվեց հայ գաղթականներին գորակոչից ազատել և նրանք համալրեցին շրջանի ոչ խորհրդային գորքերում ծառայող հայերի շարքերը²⁴։ Վերջինների հետագա ճակատագիրը հայտնի չէ։

Ռուսաստանի հարավում Հայաստանի Հանրապետության ներկայացուցիչների և տեղի հայկական կազմակերպությունների գործադրած ջանքերի շնորհիվ մինչև 1920 թ. մարտ հնարավոր եղավ հայրենիք տեղափոխել հիմնականում Ռուսաստանի հարավի ոչ խորհրդային գորքերում ծառայող հայ զինվորներին։ Տասնյակ հազարավոր գորակոչի ենթակա հայեր մնացին երկրամասում, որոնք մարտի 10-ից հետո պետք է գորակոչվեին ոչ խորհրդային գորքերի շարքեր։

1920 թ. փետրվար-մարտ ամիսներին խորհրդային գորքերի առաջխաղացման հետնանքով, Ռուսաստանի հարավում Հայաստանի Հանրապետության ներկայացուցիչների մի մասը հեռացավ երկրամասից, և հայ գաղթականներին գորակոչից պաշտպանելու գործը հիմնականում ընկավ Վլադիկավկազի հյուպատոս Հ. Սառիկյանի ուսերին։ Նա 1920 թ. մարտի 2-ին դիմեց Հյուսիսային Կովկասի գորքերի հրամանատարին՝ խնդրելով դադարեցնել հայ գաղթականների գորակոչը, կամ երկարացնել նրանց տարկետման իրավունքը²⁵։ 1920 թ. փետրվարի վերջին՝ մարտի սկզբին, Հյուսիսային Կովկասում խորհրդային գորքերի ռազմական հաջողությունները և երկրամասի ոչ խորհրդային պետական կազմավորումների պարտությունը

²⁴ Տե՛ս նույն տեղում, ֆ. 275, ց. 4, գ. 13, թ. 8, գ. 15, թ. 9, 15, 18, 20, 23։

²⁵ Տե՛ս նույն տեղում, գ. 4, թ. 66։

օրերի խնդիր դարձրին: Ուստի մի քանի հազար հայ գաղթականների գորակոչը էական նշանակություն չէր կարող ունենալ ռազմական գործողությունների հետագա ընթացքի վրա: Նկատի առնելով այդ հանգամանքը՝ Հյուսիսային Կովկասի գորքերի հրամանատարն րնդառաջեց Հ. Սառիկյանի խնդրանքին, և հայ գաղթականների տարկետման իրավունքը երկարացրեց մինչև մայիսի 1-ը²⁶: Փաստորեն, Հ. Սառիկյանի շնորհիվ Հյուսիսային Կովկասի հայ գաղթականների գորակոչի հարցը չեզոքացվեց, վերացավ նաև օր առաջ գաղթականներին Հայաստանի Հանրապետություն ուղարկելու անհրաժեշտությունը:

1920 թ. փետրվարի 14-ին խորհրդային գորքերը, ճեղքելով Կամավորական բանակի պաշտպանությունը ներխուժեցին Հյուսիսային Կովկաս²⁷: Փետրվարի 29-ին Կարմիր բանակը գրավեց Ստավրոպոլը, մարտի 17-ին՝ Եկատերինոդարը, մարտի 22-ին՝ Վլադիկավկազը, մարտի 23-ին՝ Ղզլարը, մարտի 24-ին՝ Գրոզնին, մարտի 30-ին՝ Պետրոպոսկը, իսկ ապրիլի 7-ին՝ Տուապսեն: Ռուսաստանի հարավի գրեթե ողջ տարածքում հաստատվեց խորհրդային իշխանություն:

²⁶ Տե՛ս նույն տեղում, գ. 13, թ. 21, 22:

²⁷ Տե՛ս Слободин В., Белое движение в годы гражданской войны в России (1917–1922 гг.), Москва, 1996, էջ 54:

ARMENIANS IN THE FORCES OF THE ANTI-SOVIET STATE FORMATIONS OF THE SOUTH OF RUSSIA IN 1918-1920

SUMMARY

During the First World War, around 250 thousand Armenians were called to serve in the Russian army. The main part of these Armenians was sent to fight against the German and Austro-Hungarian armies to the North-West of Russia. After the collapse of the Western Front some part of Armenians, with the hope to return home, moved to the South of Russia, where anti-Soviet state formations, started mobilize them in the army against their will. The Volunteer Army and Cossack's forces also mobilized Armenians, prisoners of war, who started to return home after the First World War and Armenian refugees who found shelter in the South of Russia in 1918. By the beginning of 1919 in the armies of the anti-Soviet state formations of the South of Russia served several thousand Armenians who took part in the fights against Bolshevik and Georgian troops. Since the beginning of 1919 and till the March of 1920, due to the activity of the diplomatic mission and consular offices of the Republic of Armenia in the South of Russia and with the permission of the authorities of anti-Soviet state formations of the region the main part of Armenian soldiers, who had served in the Volunteer Army and Cossack's forces and had wished to return home, were transferred to Armenia, to serve in the Armenian army.

**АРМЯНСКОЕ ВОИНСТВО В ВООРУЖЕННЫХ СИЛАХ
АНТИСОВЕТСКИХ ГОСУДАРСТВЕННЫХ
ОБРАЗОВАНИЙ ЮГА РОССИИ В 1918-1920 ГОДАХ**

РЕЗЮМЕ

В годы Первой мировой войны в русскую армию было призвано около 250 тысяч армян, подданных Российской Империи. Значительная часть из них была отправлена на северо-запад России, для борьбы против германских и австро-венгерских армий. После развала Западного фронта часть армян, в надежде вернуться на родину, перешла на Юг России. Здесь их начали принудительно призывать в войска. Ряды Добровольческой армии и казачьих войск пополнялись также за счет военнопленных армян, которые после окончания войны возвращались из германского и австро-венгерского плена на родину. К началу 1919 г. в войсках антисоветских государственных образований Юга России уже насчитывалось несколько тысяч армян. С начала 1919 г. до марта 1920 г., благодаря деятельности дипломатического представительства и консульских учреждений Республики Армении на Юге России, большинство армян были отправлены в Армению, для службы в армянской армии.

ԱԶԳԱՅԻՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԱՆՏԵՍՈՒՄԸ ՈՐՊԵՍ

1921 թ. ՓԵՏՐՎԱՐՅԱՆ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅԱՆ

ՊԱՏՃԱՌՆԵՐԻՑ ՄԵԿԸ

1920 թ. թուրք-հայկական պատերազմում հայկական բանակի ծանր պարտությունները կանխորոշեցին պատերազմում Հայաստանի պարտությունը: Օգտվելով ռազմաքաղաքական նպաստավոր իրավիճակից՝ Հայաստանի ռազմահեղափոխական կոմիտեն 1920 թ. նոյեմբերի 29-ին խորհրդային բանակի ուղեկցությամբ մտավ Իջևան, որտեղ հայտարարեց դաշնակցական կառավարության տապալման և Հայաստանի խորհրդայնացման մասին¹: Հռչակագրում Հայհեղկոմը խոստանում էր խորհրդային Ռուսաստանի օգնությամբ վերականգնել երկրի քայքայված տնտեսությունը և կառուցել նոր կյանք:

1920 թ. դեկտեմբերի 2-ին մի կողմից ՌՍԴԽՀ լիազոր ներկայացուցիչ Բ. Լեզրանի և մյուս կողմից Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչներ Դրոյի և Համբարձում Տերտերյանի միջև Երևանում ստորագրվեց համաձայնագիր: Համաձայնագրով սահմանվում էր իշխանության խաղաղ փոխանցման սկզբունքները, որոնք հիմնականում հետևյալներն էին. Հայաստանում մինչև խորհուրդների համագումարի հրավիրումը իշխանությունը ժամանակավորապես անցնում էր ռազմահեղափոխական կոմիտեին, որի մեջ մտնում էին 5 կոմունիստ և 2 ձախ-դաշնակցական, Դաշնակցության և մյուս սոցիալիստական կուսակցությունների ներկայացուցիչները հալածանքի չէին են-

¹ Հայաստանի ազգային արխիվ (ՀԱԱ). ֆ. 113, ց. 1, գ. 1, թ. 1-2:

թարկվելու կոմունիստական կուսակցության դեմ նախկինում տարած պայքարի համար, Խորհրդային Ռուսաստանը երաշխավորում էր Խորհրդային Հայաստանի անկախությունը²:

Հայաստանի խորհրդայնացումից կարճ ժամանակ անց բոլշևիկյան իշխանությունը ակտիվ պայքար սկսեց, այսպես կոչված, ժողովրդի թշնամիների դեմ: Դեկտեմբերին ձերբակալվեցին ՀՀ նախկին կառավարության մի շարք անդամներ (այդ թվում նախկին վարչապետ Հ. Օհանջանյանը): Ավելի ուշ ձերբակալվեցին և աքսորվեցին հայկական բանակի 1.000-ից ավելի սպաներ: Ձերբակալվածներին ուղարկեցին Բաքվի և Խորհրդային Ռուսաստանի բանտերը: Անխնա հալածվում էր հայ մտավորականությունը, կողոպտվում հայ գյուղացիությունը:

Ժողովրդի համբերության բաժակը լցվեց, և 1921 թ. փետրվարին ապստամբություն սկսվեց բոլշևիկյան իշխանությունների դեմ: Փետրվարի 18-ին ապստամբ ուժերը մտան Երևան: Բոլշևիկները և կարմիր զորամասերը հեռացան Ղամարլու (Արտաշատ):

Երևանի գրավումից անմիջապես հետո Սիմոն Վրացյանի գլխավորությամբ ստեղծվեց «Հայրենիքի փրկության կոմիտե», որը պետք է կառավարեր երկիրը մինչև կառավարության ձևավորումը: Կոմիտեն փետրվարի 18-ին ժողովրդին ուղղված իր առաջին ուղերձում կոչ արեց պաշտպանել կարգ ու կանոնը, խստիվ կատարել Կոմիտեի բոլոր կարգադրությունները³: Հայաստանի տա-

² Խատիսեան Ա., Հայաստանի Հանրապետության ծագումն ու զարգացումը, «Հայրենիք» ամսագիր, 1926 թ., հոկտեմբեր, էջ 101-102 (նշված վերնագրով Բոստոնի «Հայրենիք» ամսագրում 1925-1927 թթ. Ալեքսանդր Խատիսյանի հրատարակած հոդվածաշարը հետազայում առանձին հատորով հրատարակվել է Աթենքում և Բեյրութում: Տե՛ս Խատիսեան Ա., Հայաստանի Հանրապետության ծագումն ու զարգացումը, Աթենք, 1930, 367 էջ, Խատիսեան Ա., Հայաստանի Հանրապետության ծագումն ու զարգացումը, Պեյրութ, Բ հրատ., 1968, 488 էջ):

³ ՀԱԱ, ֆ. 37, ց. 1, գ. 9, թ. 5 և 2րջ.:

րածքի մի մասի վրա վերականգնվեց անկախությունը, որը տևեց մեկ ու կես ամիս:

Հայ բոլշևիկները Խորհրդային Ռուսաստանի աջակցությամբ ապրիլի 2-ին մտան Երևան: Ավելորդ արյունահեղությունից խուսափելու համար որոշվեց Երևանը հանձնել առանց մարտի: «Հայրենիքի փրկության կոմիտեն», զորքը և մեծ թվով բնակիչներ Բաշ-Գառնի-Դարալագյազ գծով բռնեցին դեպի Զանգեզուր տանող ճանապարհը, այնտեղից էլ անցան Պարսկաստան:

1921 թ. փետրվարյան ապստամբության պատճառները քննության ենթարկվեցին ինչպես Խորհրդային Հայաստանում, այնպես էլ նոր կազմավորվող սփյուռքում:

1920-1930-ական թվականների սփյուռքահայ հասարակական-քաղաքական միտքը ապստամբության պատճառների մեջ առանցքային էր համարում բոլշևիկյան իշխանությունների վարած բռնազրավումների և ձերբակալությունների քաղաքականությունը, գործադրած բռնությունները, արտաքին-քաղաքական խնդիրները լուծելու անկարողությունը: Փետրվարյան ապստամբության պատճառների մեջ էական էր նաև բոլշևիկների բացասական վերաբերմունքը դեպի ազգային խնդիրները: Ինչպես դիպուկ նկատել է Գարեգին Նժդեհը, ազգային խնդիրների մերժումով բոլշևիկները «կ'աշխատեին Հայաստանում կեանքի կոչել «նոր» հայը՝ անաստուած, անընտանիք, անհայրենիք»⁴:

Արևմտահայության և Արևմտահայաստանի խնդիրների հանդեպ խիստ բացասական վերաբերմունքի առաջամարտիկը Երևանի «Կոմունիստ» թերթն էր, որի հրապարակումների հետևանքների մասին է վկայում Արմեն Սևանը (Հովհ. Դևեճյան)⁵:

⁴ Նժդեհ Գ., Իմ պատասխանը, Սոֆիա, 1937, էջ 63:

⁵ Արմեն Սևան, Փետրուար 18-ի յեղափոխությունը, «Վեմ», 1936, Դ տարի, թիվ 1, էջ 95 (Արմեն Սևանը փետրվարի 18-ի աչքի ընկնող դերակատարներից մեկն է եղել, և

Արևմտահայության և Արևմտահայաստանի խնդրի հանդեպ «Կոմունիստ»-ի վերաբերմունքին կարելի է ծանոթանալ թերթից վերցված հետևյալ ընդարձակ մեջբերման մեջ. «Մենք կոմունիստներս և Հայաստանի Խորհրդային իշխանությունը բոլորովին չենք ցատում, երբ բանտրագիտացիական Հայաստանից իսպառ կոչնչանան տաճկահայ սպեկուլիանտներն ու թալանչիները, որ տասնեակ տարիների ընթացքում քամել են աշխատատուր ժողովրդին, և տաճկահայ ինտելիգենտները, որ ժողովրդի մեջ սնել են այն հաւատը, որ փրկությունը իմպերիալիստական Եւրոպայից է գալու կամ Տաճկաստանի ոչնչացման մեջն է։...Մեզ համար «հայոց հարցը» տնտեսական անհրաժեշտութեան և սոցիալական արդարութեան խնդիր է։... Ուստի Հայաստանի Խորհրդային իշխանությունը դեն է շարտում «Միացեալ և անկախ Հայաստանի» ծրագիրը, որ մշակել էին Անտանտան ու հայ բուրժուաները՝ հայ եւ տաճիկ աշխատատուրութեանը ստրկացնելու և կողոպտելու համար»⁶։

Փաստորեն, բոլշևիկյան պաշտոնաթերթը հրապարակավ մարտահրավեր է նետում հայ մտավորականությանը, Արևմտահայաստանի խնդիրը համարում միայն սոցիալական և տնտեսական հարց։ Ամենագավեշտալին այն է, որ հայ կոմունիստները Միացյալ Հայաստանի գաղափարը համարում են հայ և թուրք «աշխատավորությանը» կողոպտելու համար առաջացած մի հորինվածք։ Կարծում ենք, «Կոմունիստ»-ի նմանատիպ հրապարակումները ոչ միայն չէին բխում հայ ժողովրդի շահերից, այլև ուղղակիորեն սադրիչ նպատակներ էին հետապնդում։

Փետրվարյան ապստամբության ղեկավարներից Կարո Սասունին նույնպես փաստում է, որ արևմտահայության դեմ պայքա-

«Վեմ»-ում հրապարակված նրա գրությունը ղեպքերի ճշգրիտ արձանագրությունն է, որ գրել է ղեպքերից անմիջապես հետո, թարմ տպավորության տակ)։

⁶ «Կոմունիստ», Երևան, 26 դեկտեմբերի 1920 թ.։

րի «առաջամարտիկի դերը ստանձնել էր «Կոմունիստ» թերթը, որի հունվարյան երկու խմբագրականները խիստ գրգռիչ եղան⁷: «Մեզ հետ կամ մեզ դեմ» վերնագրով խմբագրականում ճնշում էր գործադրվում արևմտահայերի վրա, ովքեր իրենց լռությամբ դեմ էին արտահայտվում խորհրդային իշխանություններին: «Միացյալ և անկախ Հայաստանի խնդիրը» վերնագրված խմբագրականը դարձյալ ուղղված էր արևմտահայերի դեմ և «Բացորոշ կերպով ասում էր, թե «Տաճկահայաստանի անկախութեան մասին խօսք անելն իսկ անելորդ է. Թե «յեղափոխական եւ դեմոկրատիկ» Թուրքիայի ոչ մի կտոր հողը չպետք է գրաւուի. Թե իմպերիալիստների տուած երազներով սնելն անելորդ է, եւ թե նրանք, որ դեռ կը հանդգնին այդ յոյսերով ապրել՝ պիտի տրորուին եւ ճգմուին «յեղափոխական» ալիքների տակ: «Մենք,- ասում էին բոլշեւիկները,- մեր ձեռքն ենք կարկառած «եղբայրական, յեղափոխական» Թուրքիային, եւ ովքեր, որ կ'ուզեն իրենց ծննդավայր դառնալ, պետք է գնան եւ ենթարկուեն Տաճկաստանի յեղափոխական իշխանութեան»⁸: Մեր կարծիքով, համաշխարհային հեղափոխության տենդով վարակված հայ բոլշեւիկների այս պահվածքը առնվազն քաղաքական անհեռատեսության դրսևորում կարելի է համարել:

Ավելին, բոլշեւիկները կարծում էին, որ արևմտահայերն են թուրքական իշխանությունների՝ Հայաստանի հանդեպ ունեցած վատ տրամադրվածության գլխավոր պատճառը⁹:

Բոլշեւիկյան իշխանությունները երկրի և ազգաբնակչության խնդիրներին հետամուտ լինելու, արևմտահայ գաղթականների հոգսերը թեթևացնելու փոխարեն, վերջիններիս ստիպում

⁷ Սասունի Կ., Փետրուարեան ապստամբութիւնը, «Հայրենիք» ամսագիր, 1925 թ., հոկտեմբեր, էջ 95:

⁸ Նույն տեղում:

⁹ Նույն տեղում:

էին կովի ելնել «դաշնակցականների», «խմբապետների» և այլ կարգի «հակահեղափոխական տարրերի» դեմ, որպեսզի հաղթանակի բանվորագյուղացիական հեղափոխությունը, ինչից հետո, ըստ բոլշևիկների, գաղթականների դրությունը կբարելավվի¹⁰: Նրանք գաղթական արևմտահայերին էլ էին տրամադրում և մղում քաղաքացիական պատերազմի. «Գաղթականութեան շահերը պահանջում են, որ նա ակտիւ մասնակցէ յեղափոխութեան խորացման և ամրացմանը թէ քաղաքացիական կռիւ և թէ կոմունիստական շինարարական աշխատանքի ֆրոնտներում»¹¹: Փաստորեն, արևմտահայերի խնդիրները լուծելու փոխարեն, վերջիններիս հայ կոմունիստ ղեկավարները մղում էին «դասակարգային» պայքարի:

Կ. Սասունին նշում է, որ «դասակարգային» կովի անվան տակ բոլշևիկյան իշխանությունը առանձնահատուկ պայքար էր մղում արևմտահայ աշխատավորության դեմ¹²: Նրա պնդմամբ՝ բոլշևիկներին գայրացնում էր արևմտահայերի համերաշխ միասնականությունը, Արևմտյան Հայաստանի ազատագրման և անկախության վերանվաճման փայփայվող գաղափարը: Բացի այդ, ընչազուրկ արևմտահայերը պատրաստ էին առանց պառակտումների պայքարելու հանուն իրենց իրավունքների պաշտպանության՝ ընդդեմ բռնությունների և հալածանքների¹³:

Այսպիսով, տարագիր հայ գործիչների գնահատմամբ 1921 թ. փետրվարյան ապստամբության պատճառներից մեկը արևմտահայության հանդեպ բոլշևիկյան իշխանության ունեցած ակնհայտ թշնամական վերաբերմունքն էր: Իրենց հայրենի օջախները վերա-

¹⁰ «Կոմունիստ», 8 փետրվարի 1921 թ.:

¹¹ Նույն տեղում:

¹² Սասունի Կ., նշվ աշխ., էջ 95:

¹³ Նույն տեղում:

դառնալ ցանկացող, Արևմտահայաստանի ազատագրումը տենչացող այս մարդկանց բոլշևիկները մեղադրում էին «հեղափոխական թուրքիայի» դեմ «հանցանք» գործելու մեջ: Բոլշևիկների կողմից գործադրված բռնություններն առավել դաժանաբար էին կիրառվում արևմտահայերի նկատմամբ:

Թերևս նաև սրանով էր պայմանավորված այն փաստը, որ ապստամբների հիմնական մասն արևմտահայեր էին¹⁴:

Բացի արևմտահայության հանդեպ ունեցած արհամարհական վերաբերմունքից, բոլշևիկյան իշխանություններն անարգում էին Հայաստանի անկախության գաղափարն ընդհանրապես: Այս կապակցությամբ «Դրոշակ»-ի խմբագրականը մատնանշում. «Անվերջ ծաղրի առարկա էր արւում Հայաստանի անկախութեան գաղափարը, հայիտյում ու սրբապղծում էին ժողովրդի բոլոր նւիրական հասկացողութիւնները և ամենագոեհիկ ձևով մարտահրաւեր էր ուղղում երկրին: Եւ արդիւնքը չուշացաւ: Ժողովուրդը չդիմացաւ բռնութեան, թալանին ու իր իդէալների գազանային ոտնահարումին և մի մարդու պէս ոտքի ելաւ»¹⁵:

Դեկտեմբերի 2-ի համաձայնագրով բոլշևիկները պարտավորվել էին պահպանել Հայաստանի անկախությունը: Անկախության արժեքն արդեն ճաշակած ժողովրդի համար խիստ ցավազին էր իր իշխանությունների կողմից այդ գաղափարի ոտնահարումն ու արհամարհանքը: Հայ ժողովուրդի բոլոր խավերն ակնկալում էին իշխանություններից անկախության ամրապնդում: Ինչպես գրում է Կ. Սասունին, «Հայաստանի անկախութեան հարցը, Տաճկահայաստանի ազատագրումը եւ առհասարակ բռնակալական

¹⁴ Միմոնյան Ա., Զանգեզուրի գոյամարտը 1920-1921 թթ., Երևան, 2000, էջ 418:

¹⁵ Խմբագրական, Փետրուարի 18, «Դրոշակ», 1926 թ., թիվ 2, էջ 39:

լուծելից ազատ մնալու խնդիրները մեծապես յուզում էին հասարակութեան միտքը»¹⁶:

Բոլշևիկների կողմից Հայաստանի անկախության գաղափարի ոտնահարման մասին է գրում նաև Հայրենիքի փրկության կոմիտեի անդամ Հակոբ Տեր-Հակոբյանը (Իրազեկ). «Հայ ժողովուրդը, որ Անկախ Հայաստանի եռագոյնի տակ եւ իր հարազատ Դաշնակցական իշխանութեան օրով, սովորել էր ազատ եւ ինքնանկախ կեանքի, խորհրդայնացած Հայաստանում նա ապրում էր իր ազատութիւնը կորցրած թռչունի նման, կալանաւորի վիճակում – շարունակական մղձաւանջի ու սարսափի ներքոյ»¹⁷: Կարծում ենք, Իրազեկի հայտնած այս մտահոգությունը նա կարող էր հակաբոլշևիկյան ըմբոստության հասունացման պատճառ լինել:

Հայաստանի անկախության կորստի հանդեպ իր մտահոգություններն է հայտնում նաև ականավոր հասարակական-քաղաքական գործիչ Արշակ Ալպոյաճյանը: Լինելով դաշնակցությանն ընդիմադիր դիրքերում, վերջինս, այնուամենայնիվ խիստ վերապահումներով էր մոտենում բոլշևիկների իրականացրած քաղաքականությանը: «Հայաստան իր ինքնորոշ և հայացի դրոշմը կը կորսնցնէ վերստին, ռուսականութեան ենթարկուելով, մանաւանդ Դեկտ.ի վերջերը՝ երբ երկրի ներքին կառավարութիւնն իրապէս կ'անցնէր Չեկա-ին», - գրում է Ա. Ալպոյաճյանը¹⁸: Փաստորեն, նույնիսկ սփյուտքում գործող ոչ դաշնակցական գործիչներն էին քննադատում ազգային խնդիրների հանդեպ բոլշևիկների վարած քաղաքականությունը: Ա. Ալպոյաճյանի նման գործիչը

¹⁶ Սասունի Կ., Փետրուարեան ապստամբութիւնը, «Հայրենիք» ամսագիր, 1925 թ., նոյեմբեր, էջ 87:

¹⁷ Իրազեկ, Դաշնակցութիւնը եւ Փետրուար 18-ը, «Հայրենիք» օրաթերթ, Բոստոն, 19 փետրուարի 1931 թ.:

¹⁸ Ալպոյաճեան Ա., Անկախ Հայաստան, «Ամենուն տարեցոյցը» (կազմ. Թեոդիկ), ԺԶ Տարի, Կ. Պոլիս, 1922, էջ 250:

մտահոգություն էր հայտնում Հայաստանի անկախությունից հրաժարվելու հայ բոլշևիկների քաղաքականության հանդեպ:

Հետաքրքիր է Կ. Պոլսի «Ճակատամարտ» թերթի այն մեկնաբանությունը, որ ապստամբությունը պայքար էր անկախությունը վերանվաճելու համար: Թերթը գրում է. «Բայց անվիճելի է մեկ իրողություն, - Հայ ժողովուրդը թոթափելով դաժան և օտարոտի լուծ մը, ոչ մեկին ասպարեզ կը կարդայ: Ան կոուէր է եւ պիտի կոուի, բացարձակապէս անկախ եւ ազատ ապրելու համար»¹⁹: Բոստոնի «Հայրենիք» օրաթերթում մատնանշվում է նաև այն հանգամանքը, որ հայ ժողովրդի համար «ազատ եւ ինքնանկախ» ապրելուց անտանելի էր դարձել «շարունակական մղձաւանջի ու սարսափի ներքոյ»²⁰: Ժողովուրդն իսկապէս գիտակցում էր անկախության արժեքը²¹: «Հայրենիք» օրաթերթն այս պայմաններում բնական էր համարում, որ իրավիճակը հանգեւում էր ըմբոստության՝ «ապստամբութեան միջոցով փշրելու իրեն խեղդող շղթաները եւ վրէժխնդիր լինելու իր դահիճներից»²²: Փաստորեն, փետրվարյան ապստամբությունը սկսւում գնահատվում էր յուրովի՝ պայքար հայ ժողովրդի անկախության վերականգնման համար:

Այսպիսով, տարագիր հայ հասարակական-քաղաքական միտքը փետրվարյան ապստամբության գլխավոր պատճառներից մեկը համարում էր բոլշևիկների կողմից Հայաստանի անկախության գաղափարի ստորադասումը: Ժողովուրդը, ըստ հայ մտածողների, բոլշևիկների գալուց հետո ավելի զգաց անկա-

¹⁹ «Ճակատամարտ», Կ. Պոլիս, 2 մարտի 1921 թ.:

²⁰ «Հայրենիք» օրաթերթ, 19 փետրուարի 1931 թ.:

²¹ Արշակունի Ա., Փետրուարի ապստամբութիւնը, «Հայրենիք» ամսագիր, 1927 թ., փետրուար, էջ 46:

²² «Հայրենիք» օրաթերթ, 19 փետրուարի 1931 թ.:

խության կարևորությունն ու արժեքը, որի համար պատրաստակամություն հայտնեց զենք վերցնելու:

Անկախությունից զատ ոտնահարվում էին նաև այլ ազգային արժեքներ՝ դրանք որակվելով որպես բուրժուական ստեղծագործություններ: «Ազգի, հայրենիքի, ժողովրդապետության, ազասության, հաւասարության գաղափարները համարւեցան հակայեղափոխական հասկացողութիւններ: Հայ լեզուն անհետացաւ բոլոր պետական եւ հասարակական հիմնարկութիւններէն:... Լըզրանի հետ կնքւած համաձայնագիրը մոռացութեան տրւեցաւ ամբողջութեամբ», - գրում է Արմեն Սևանը²³: Փաստորեն, սեփական իշխանության ամրապնդման, համաշխարհային հեղափոխության մասնիկը լինելու ակնկալիքով հայ բոլշևիկները 1921 թ. փետրվարյան ապստամբությանը նախորդող շրջանում որդեգրել էին համաշխարհային հեղափոխության գաղափարն ազգային արժեքներից վեր դասելու քաղաքականություն, որը սվիններով ընդունվեց ժողովրդի կողմից:

Այսպիսով, 1921 թ. փետրվարյան ապստամբության պատճառների մեջ, 1920-1930-ական թթ. սփյուռքահայ-հասարակական-քաղաքական մտքի գնահատմամբ, առանցքային էր ազգային խնդիրների վերաբերյալ բոլշևիկների ունեցած բացասական քաղաքականությունը, Արևմտահայաստանի և արևմտահայության խնդրի անտեսումը: Իրենց հայրենի օջախները վերադառնալ ցանկացող, Արևմտահայաստանի ազատագրումը տենչացող արևմտահայերին բոլշևիկները մեղադրում էին բանվորագյուղացիական հեղափոխությանը չաջակցելու, «հեղափոխական Թուրքիայի» դեմ «հանցանք» գործելու մեջ:

²³ Արմեն Սևան, Փետրուար 18-ի յեղափոխութիւնը, «Վեմ», 1936, Դ տարի, թիւ 1, էջ 92:

Փետրվարյան ապստամբության իրականացման համար էական եղավ նաև բոլշևիկների կողմից Հայաստանի անկախության գաղափարի ստորադասումը: Բոլշևիկները ոտնահարեցին 1920 թ. դեկտեմբերի 2-ի համաձայնագրով Հայաստանի անկախությունը երաշխավորելու իրենց պարտավորությունը: Բոլշևիկների իշխանության գալուց հետո հայ ժողովուրդն ավելի զգաց անկախության կարևորությունն ու արժեքը, որի համար դիմեց ապստամբության:

KHACHATUR STEPANYAN

VIOLATION OF NATIONAL ISSUES AS THE CAUSE OF THE REBELLION IN 1921

SUMMARY

One of the causes of the February rebellion of 1921 in Armenia was the the policy of Bolsheviks towards national interests of the Armenian people. Western Armenians who aspired to libarate Western Armenia and return home were blamed for not supporting the revolution of workers and peasants and the Soviet power.

After Armenia's Sovietization and the beginning of the Bolsheviks' repressions the Armenian people felt more the importance and value of national independence and took up arms in February 1921.

ПОПИРАНИЕ НАЦИОНАЛЬНЫХ ПРОБЛЕМ КАК ОДНА ИЗ ПРИЧИН ФЕВРАЛЬСКОГО ВОССТАНИЯ 1921 Г.

РЕЗЮМЕ

Одной из причин февральского народного восстания в Армении в 1921 г. стала политика большевиков по отношению к национальным интересам армянского народа. Желая освободить Западную Армению и вернуться в свои родные дома западных армян большевики обвиняли в том, что те не поддерживают рабоче-крестьянскую революцию и советскую власть.

После советизации Армении и начала большевистских репрессий армянский народ еще более почувствовал важность и цену национальной независимости, для чего и взялся за оружие в феврале 1921 г.

ՀՍԽՀ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ԺՈՂԿՈՄԱՏԻ
ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ
1921-1922 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

Հայաստանի խորհրդայնացումից հետո բնակչության լայն զանգվածների շրջանում զաղափարաքաղաքական ու մշակութային քարոզչություն իրականացնելու և պետության բոլոր ոլորտներում միակուսակցական համակարգ հաստատելու գործընթացում Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության (ՀՍԽՀ) իշխանությունները կարևոր դերակատարություն էին հատկացնում հրատարակչական-քարոզչական աշխատանքներին: Այս նպատակին ծառայելուն էին ուղղված զաղափարախոսական ուղղվածություն ունեցող գրքերը, թերթերն ու ամսագրերը:

1920-ական թթ. ՀՍԽՀ ժողովրդական կոմիսարիատները հրատարակում էին գրքեր և գերատեսչական պարբերականներ, որտեղ տվյալ ժողկոմատին վստահված ոլորտների գործունեությունը լուսաբանելուն զուգահեռ, ներկայացվում էր Խորհրդային Հայաստանի քաղաքական ուղղվածությունը, պետության և իշխող կոմունիստական կուսակցության իրականացրած քաղաքականությունը:

Մյուս պետական գերատեսչությունների թվում՝ 1921-1922 թթ. ակտիվ հրատարակչական գործունեություն էր իրականացնում նաև ՀՍԽՀ արտաքին գործերի ժողովրդական կոմիսարիատը: Այսպես՝ 1921 թ. ապրիլ-հունիս ամիսների համար հատկացված գումարների որոշ մասը ժողկոմատը նախատեսում էր օգ-

տագործել տպագրության ու քարոզչության համար¹: 1921 թ. ապրիլի երկրորդ կեսին կամ մայիսի սկզբին պատրաստված մի փաստաթղթում ժողկոմատի Տեղեկատու բաժնի առջև ծառացած խնդիրների առնչությամբ նշվում էր. «մի կողմից արտաքին գործերի կոմիսարիատը բացարձակապես զրկված է վկայություններից այն մասին, թե ինչ է կատարվում այլ երկրներում և հայկական գաղութներում, իսկ մյուս կողմից այդ գաղութները, հայրենի երկրի մասին նորությունների ծարավ լինելով, սնվում են պատահական, եվրոպական մամուլի հաճախ սուտ տեղեկություններով»²: Փաստորեն, քարոզչական գործունեության համար կարևոր նշանակություն կարող էր ունենալ մամուլի հրատարակումը, ինչին և ձեռնամուխ եղավ Արտգործժողկոմատը:

1921 թ. հունիսից ՀՍԽՀ արտգործժողկոմատը սկսեց սեփական պարբերականի հրատարակումը³: Պարբերականի ամբողջական անվանումն էր՝ «Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության արտաքին գործերի ժողովրդական կոմիսարիատի ինֆորմացիոն բաժնի բյուլետեն» (կրճատ՝ «Բյուլետեն»): Այն հրատարակվել է մինչև 1922 թ. մարտը, և դադարեցվել արտգործժողկոմատի լուծարման շրջանում:

«Բյուլետեն»-ն արժանի ուշադրության չեն արժանացրել խորհրդահայ մամուլի մասնագետները: Պարբերականին անդրադառնալիս նրանք բավարարվել են սոսկ հիշատակելով կամ լավագույն դեպքում մի քանի տող են նվիրել՝ չփորձելով նույնիսկ

¹ Տե՛ս Հայաստանի ազգային արխիվ (ՀԱԱ), ֆ. 117, ց. 1, գ. 101, թ. 10-11:

² Նույն տեղում, ֆ. 114, ց. 1, գ. 31, թ. 73:

³ Խորհրդային Ռուսաստանի արտգործժողկոմատը ևս հրատարակում էր իր ամսագիրը ("Бюлетень народного комиссариата иностранных дел РСФСР"), որի նյութերի հիմնական մասը վերաբերում էր ՌՍԴԽՀ արտաքին քաղաքականության հարցերին և համաշխարհային մամուլի տեսությանը:

պարգել հրատարակված համարների քանակը⁴: Մեր ուսումնասիրությունը ցույց է տվել, որ լույս է տեսել պարբերականի ընդամենը 10 համար: Պարբերականի խմբագիրը և հոդվածների հեղինակները չեն նշվում, սակայն կարելի է ենթադրել, որ զգալի աշխատանք էր իրականացնում ժողկոմատի տեղեկատու բաժնի վարիչ Գեղամ Անտելեպյանը: Օրինակ՝ «Բյուլետենի» թիվ 5-6 միացյալ համարում անստորագիր տպագրված արտերկրի հայկական մամուլի տեսությունը Գ. Անտելեպյանի ստորագրությամբ վերահրատարակված է «Խորհրդային Հայաստան» թերթում⁵: Պարբերականի նյութերի մեքենագրումը կատարում էր Էվելինա Աբրահամյանը⁶: Այն լույս էր տեսնում ՀՍԽՂ զինվորական շտաբի տպարանում⁷:

Պարբերականում հրատարակվող նյութերը ձեռք էին բերվում զանազան աղբյուրներից: ՀԿ(Բ)Կ կենտկոմի տեղեկատու բաժնին ուղղված Արտգործժողկոմատի տեղեկատու բաժնի վարիչի տեղակալ Հարություն Թուրշյանի 1921 թ. հուլիսի 23-ով թվագրվող գրության մեջ նշվում էր, որ «Բյուլետենների բովանդակությունը առնված է թերթից (խոսքը «Խորհրդային Հայաստան»-ի մասին է – Հ. Ս.) և Հայաստանի կյանքից»⁸: Սա առանձնապես վերաբերում է պարբերականի առաջին համարներին: Հե-

⁴ Տե՛ս «Հայոց պարբերական մամուլը. լիակատար ցուցակ հայ լրագրության սկզբից մինչև մեր օրերը (1794-1934)», կազմեց Գ. Լևոնյանը, Երևան, 1934, էջ 113, «Հայ պարբերական մամուլի մատենագիտություն (1794-1967)», կազմեց Ա. Կիրակոսյանը, Երևան, 1970, էջ 345, «Հայ պարբերական մամուլը: Մատենագիտական համահավաք ցուցակ (1794-1980)», կազմեց Մ. Բաբլոյանը, Երևան, 1986, էջ 139, Ավագյան Ս. Դ., Համառոտ ակնարկներ Սովետական Հայաստանի պարբերական մամուլի պատմության (1920-1930 թթ.), Երևան, 1989, էջ 193-194:

⁵ Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 10 սեպտեմբերի 1921 թ., N 169:

⁶ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 114, ց. 1, գ. 237, թ. 7:

⁷ Տե՛ս նույն տեղում, ց. 2, գ. 21, թ. 76:

⁸ Նույն տեղում, ֆ. 1, ց. 1, գ. 122, թ. 96:

տագայում «Բյուլետենում» տպագրված որոշ նյութեր արդեն արտատպվում էին «Խորհրդային Հայաստան» թերթում:

1921 թ. հունիսին տպագրված «Բյուլետենի» առաջին համարում հրատարակված էր տեղեկատվություն Ալեքսանդր Մյասնիկյանի գլխավորած ՀՍԽՀ ժողովրդական կոմիսարների խորհրդի առաջին կազմի վերաբերյալ⁹: Շատ արագ այն լավ ընդունելություն գտավ մյուս գերատեսչությունների կողմից¹⁰: Կարծում ենք, սա հիմնականում պայմանավորված էր այնտեղ հրատարակվող նյութերի բազմազանությամբ:

Պարբերականի տարբեր համարներում ընթերցողները ծանոթանում էին կառավարության անդամների և Հայկոմկուսի ղեկավար գործիչների կյանքի ու գործունեության մանրամասներին: Անդրադարձ էր կատարվում նաև կուսակցական միջոցառումներին, Կարմիր բանակին, խորհուրդների համահայաստանյան առաջին համագումարին: «Բյուլետեն»-ի առաջնային նպատակներից էր Խորհրդային Հայաստանի արտաքին հարաբերությունների ու ՀՍԽՀ արտգործժողկոմատի գործունեության լուսաբանումը: Հանրապետության արտաքին քաղաքական հարցերի առնչությամբ պարբերականում ներկայացվում էր տարբեր երկրներում Խորհրդային Հայաստանի դիվանագիտական և հյուպատոսական ներկայացուցչությունների ստեղծման ու գործունեության ընթացքը, նաև ժողկոմատի հայտագրերը, 1921 թ. հոկտեմբերի 13-ին ստորագրված Կարսի պայմանագրի տեքստը:

Արտգործժողկոմատի հրատարակած պարբերականում մեծ տեղ էր հատկացված նաև Խորհրդային Հայաստանի սոցիալ-տնտեսական կացության, քաղաքականության, արտաքին

⁹ Տե՛ս «ՀՍԽՀ արտաքին գործերի ժողովրդական կոմիսարիատի ինֆորմացիոն բաժնի բյուլետեն», 1921, N 1, էջ 1:

¹⁰ Տե՛ս ՀԱԱ ֆ. 114, ց. 2, գ. 91, թ. 23-24:

տնտեսական կապերի և ՀՍԽՀ-ին խորհրդային մյուս հանրապետություններից և արտասահմանի հայկական գաղթավայրերից տրամադրվող օգնության լուսաբանմանը: Պարբերականն անդրադառնում էր նաև արևմտահայության խնդիրներին, ՀՍԽՀ իշխանությունների և ՀԿ(Բ)Կ կենտկոմի կողմից արևմտահայ գաղթականության ներկայացուցիչների «համագումարների» և «միտինգների» կազմակերպմանը: Վերը թվարկված հիմնախնդիրներին գուգահեռ՝ «Բյուլետենը» լայնորեն անդրադառնում էր պետության կողմից մշակույթի, կրթության և գիտության ոլորտների զարգացմանն ուղղված քայլերին, հողային հարցին ու գյուղատնտեսությանը, արհմիությունների գործունեությանը, երիտասարդությանն առնչվող խնդիրներին, Խորհրդային Հայաստանի տարածքային հարցերին, Անդրկովկասյան դաշնության կազմավորմանն ուղղված գործողություններին: Պարբերականում հրատարակված են նաև ամենատարբեր նյութեր՝ ՀՍԽՀ ժողկոմխորհի դեկրետներ, որոշումներ, շրջաբերականներ, սփյուռքահայ մամուլի տեսություններ, առանձին կոչեր, հայտարարություններ, լրատվություններ: Բացի հանրությանը հուզող տարբեր հարցերի մասին տեղեկացնելուց, այդ ամենը նպատակ էր հետապնդում ներկայացնել և քարոզել ՀՍԽՀ իշխանությունների առաջին ձեռնարկումներն ու ծրագրերը¹¹:

ՀՍԽՀ իշխանություններն առաջին ձեռնարկումների մեջ կարևոր դերակատարություն էին հատկացնում հակախորհրդային ուժերի և առանձնապես Հ. Յ. Դաշնակցության դեմ ուղղված գաղափարաքարոզչական պայքարին¹²: Ուստի՝ օրի-

¹¹ Տե՛ս Սուքիասյան Հ. Կ., ՀՍԽՀ արտգործժողկոմատի տեղեկատու բաժնի բյուլետենը (1921-1922 թթ.), «Լրաբեր հասարակական գիտությունների», 2008, N 3, էջ 87-93:

¹² Մանրամասն տե՛ս «Հ. Յ. Դաշնակցությունը և խորհրդային իշխանությունը (փաստաթղթերի և նյութերի ժողովածու)», պատ. խմբ. և կազմող՝ Վ. Ն. Ղազախեցյան, Երևան, 1999:

նաչափ է, որ «Բյուլետենում» ընդարձակ անդրադարձներ կան ՀՅԴ-ի գործունեության տարբեր դրվագներին: Խորհրդային Հայաստանում ծավալված հակադաշնակցական գաղափարաքարոզչական պայքարը միտված էր կազմակերպական առումով ՀՅԴ-ն կազմալուծելուն գուգահեռ նաև գաղափարական տեսակետից ջախջախել նախկին կառավարող կուսակցությանը, ինչը և տվեց իր որոշակի արդյունքները: «Բյուլետենում» հրատարակված շուրջ երկու տասնյակ հոդվածներում ներկայացված են այդ պայքարի հիմնական ուղղություններն ու խորհրդային փաստարկների հիմնավորումները¹³:

Հայտնի է, որ 1917 թ. հոկտեմբերյան հեղափոխությունից (հեղաշրջում) հետո Խորհրդային Ռուսաստանի արտաքին գործերի ժողկոմատը, Բալթյան ճակատի նավաստի Ն. Մարկինի գլխավորությամբ, ձեռնամուխ էր եղել ցարական և ժամանակավոր կառավարությունների գաղտնի պայմանագրերն ու գրառությունները հրատարակելու գործին: Թերթերում հրատարակվելուց հետո՝ այդ փաստաթղթերը տեղ գտան «Նախկին արտաքին գործերի նախարարության արխիվի գաղտնի փաստաթղթերի ժողովածու» խորագրի ներքո հրատարակված 7 գրքերում: Նախկինում գաղտնի փաստաթղթերի հրատարակումը ՌՍԴԽՀ արտգործժողկոմատի հրատարակչական-քարոզչական գործունեության հիմնական ուղղություններից էր: Ճիշտ է նկատվել, որ «Խորհրդային արտաքին քաղաքական գերատեսչության գոյության սկզբում գաղտնի պայմանագրերի հրապարակումը, անկաս-

¹³ Տե՛ս Սուքիասյան Ն., ՀՍԽՀ արտգործժողկոմատի «Բյուլետենը» հակադաշնակցական գաղափարաքարոզչական պայքարում (1921-1922 թթ.), «Բանբեր Հայաստանի արխիվների», 2008, N 2, էջ 235-243:

կած, հանդիսացավ տեղեկատվական-քարոզչական աշխատանքի ոլորտում նրա առավել կարևոր միջոցառումներից մեկը»¹⁴:

Միանգամայն հասկանալի պատճառներով հակադաշնակցական գաղափարաքարոզչական պայքարում ՀՍԽՀ իշխանությունները կարևոր դերակատարություն էին հատկացնում արտաքին գործերի ժողկոմատին: Պատահական չէ, որ հրատարակվող պարբերականում հակադաշնակցական գաղափարաքարոզչական պայքար ծավալելուն զուգահեռ, ՀՍԽՀ արտգործժողկոմատը, ՌՍԴԽՀ արտգործժողկոմատի օրինակով, ձեռնամուխ եղավ նախկին՝ դաշնակցական կառավարությունից ժառանգություն մնացած փաստաթղթերի հրատարակմանը: ՀՍԽՀ և ՀԿ(Բ)Կ ղեկավարները խնդիր էին դրել դրանք օգտագործել հակադաշնակցական գաղափարաքարոզչական պայքարում:

Արդեն 1922 թ. մայիսին ՀՍԽՀ արտաքին գործերի ժողովրդական կոմիսարիատի խորագրի ներքո 26 էջ ծավալով հրատարակվեց նախկին իշխանությունների փաստաթղթերի առաջին խումբը՝ «Դաշնակցական կառավարության դոկումենտներից. I. Ա. Ահարոնյանի զեկույց-նամակները» վերնագրով¹⁵:

Արտգործժողկոմատի կողմից գրված ներածականում (այն թվագրված է 1922 թ. մայիսի 10-ով) նշվում էր, որ հրատարակվող փաստաթղթերը «բավական բնորոշ են ու արժեքավոր ընկած կառավարության (և կուսակցության) իսկական դեմքը պարզելու համար»: Նշվում էր, որ, բացի հրատարակվողներից, դաշնակցական կառավարության արտաքին գործերի նախարարության արխիվում կան նաև այլ արժեքավոր փաստաթղթեր, որոնք լույս են

¹⁴ Романов А. С., Зарождение советской системы международной информации: информационная деятельность НКВД РСФСР (1917-1923 гг.), «Отечественная история», Москва, 2008, N 4, с. 132.

¹⁵ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 122, ց. 1, գ. 74, թ. 1:

սփռում հայ-վրացական, հայ-ադրբեջանական, հայ-ուսական հարաբերությունների, Հայկական հարցում ՀՅԴ-ի վերաբերմունքի, Ա. Ահարոնյանի գլխավորած պատվիրակության աշխատանքների սկզբունքների վրա, ինչը «մինչև այսօր էլ գաղտնի է պահվում հայ ժողովրդից և անգամ Դաշնակցության ամենալայն շարքերից»: Վերջում տեղեկացվում էր, որ ժողկոմատը մտադիր է «մոտիկ ապագայում այդ դոկումենտներից ևս հաջորդաբար լույս աշխարհ հանել»¹⁶: Սակայն Արտգործժողկոմատը հնարավորություն չունեցավ շարունակելու նախկին կառավարության փաստաթղթերի հրատարակման շարքը, որովհետև, պայմանավորված Անդրկովկասյան դաշնության ստեղծման և նրա մեջ մտնող հանրապետությունների արտաքին հարաբերություններն իրականացնող մարմինների կենտրոնացմամբ, ՀՍԽՀ կենտրոնական գործադիր կոմիտեի 1922 թ. հուլիսի 3-ի որոշմամբ լուծարվեց¹⁷:

Մեծ կարևորություն տալով ՀՅԴ-ի դեմ ուղղված այս փաստաթղթերի հրատարակմանը՝ գրքի համար առաջաբան գրելու գործը ստանձնել էր անձամբ ՀՍԽՀ Ժողկոմխորհի նախագահ Ալեքսանդր Մյասնիկյանը (Ալ. Մարտունին նրա գրական կեղծանունն էր): Գրքի առաջաբանում առաջ քաշված հակադաշնակցական դիրքորոշումները հետագայում զարգացում ստացան նրա «Կուսակցությունները գաղութահայության մեջ» հայտնի աշխատությունում¹⁸: Այդ գաղափարները տասնամյակներ շարունակ հանդիսացան Սփյուռքում գործող հայկական կուսակցությունների (առանձնապես ՀՅԴ-ի) գնահատման չափանիշ:

¹⁶ «Դաշնակցական կառավարության դոկումենտներից. I. Ա. Ահարոնյանի զեկույցնամակները Ալ. Մարտունու առաջաբանով», Երևան, 1922, էջ 2:

¹⁷ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 112, ց. 1, գ. 20, թ. 24:

¹⁸ Տե՛ս Մարտունի Ա. (Մյասնիկյան Ա.), Կուսակցությունները գաղութահայության մեջ, Թիֆլիս, 1924, էջ 27-101:

«Դաշնակցության փաստաթղթերից» վերնագրված առաջաբանում Ա. Մյասնիկյանը քննադատում է դաշնակցականների եվրոպամետությունը և տարբեր փաստեր ներկայացնում Անդրկոպկասում անգլիական ներկայացուցիչների թուրքամետու հակահայկական քաղաքականությունից: Այնուհետև կասկածի տակ է առնում Հայաստանի առաջին հանրապետության անկախությունը՝ մատնանշելով, որ պետության համար կարևոր հարցերի (նաև՝ տարածքային խնդիրների) կարգավորման գործընթացում դաշնակցական դեկավարներն առաջնորդվել են անգլիացի սպաների խորհուրդներով, նաև պատրաստակամություն հայտնել այլ պետությունների հովանավորությունն ընդունել: Այնուհետև Ա. Մյասնիկյանն անդրադառնում էր քեմալական Թուրքիայի, Վրաստանի, Ադրբեջանի, Հյուսիսային Կովկասում գործող հակախորհրդային Կամավորական բանակի դեկավար գեներալ Անտոն Դենիկինի հետ ՀՀ իշխանությունների հարաբերություններին:

Առաջաբանի վերջում Ա. Մյասնիկյանն անդրադարձել է նաև Փարիզում գտնվող ՀՀ և Հայ ազգային պատվիրակությունների փոխհարաբերություններին: Գլխավորապես կանգ առնելով Պողոս Նուբարի անձի և գործելաոճի՝ Ա. Ահարոնյանի գնահատականների վրա՝ նա նշում է երկու պատվիրակությունների փոխադարձ անվստահության, Հայկական հարցի լուծման վերաբերյալ Եվրոպայում ընթացող քննարկումներում Հայաստանը ներկայացնելու գործում մենաշնորհ ձեռք բերելու մրցակցության մասին¹⁹:

Այնուհետև գրքում հրապարակված է Փարիզից Ավետիս Ահարոնյանի ուղարկած 4 նամակներնը՝ ուղղված ՀՀ արտաքին գործերի նախարարներ Սիր. Տիգրանյանին (24 ապրիլի 1919 թ.) ու

¹⁹ Տե՛ս «Դաշնակցական կառավարության դոկումենտներից ...», էջ 3-9:

Այ. Խատիսյանին (7 օգոստոսի, 8 օգոստոսի, 17 սեպտեմբերի 1919 թ.): Նամակներում Ա. Ահարոնյանն անդրադարձել է Փարիզում գումարված արևմտահայերի համագումարին (1919 թ. փետրվար), ՀՀ և Հայ ազգային պատվիրակությունների միջև գոյություն ունեցող հակասություններին, առաջարկելով քայլեր կատարել միացյալ կառավարություն ու միացյալ պառլամենտ կազմելու ուղղությամբ: Ա. Ահարոնյանը հատկապես կանգ է առել 1919 թ. մայիսի 28-ին Հայաստանը «միացյալ և անկախ» հռչակելու հանգամանքի վրա՝ ներկայացնելով այդ խնդրի կապակցությամբ Պոդոս Նուբարի դիրքորոշումը, անդրադարձ կատարում Անդրկովկասից անգլիական զորքերի դուրսբերմանը, Հայաստանի ներքին քաղաքական խնդիրներին՝ մասնավորապես առաջարկելով շուտափույթ վերականգնել կոալիցիան Հայ ժողովրդական կուսակցության հետ, ինչն ընդհատվել էր 1919 թ. մայիսի 28-ի ակտին ժողովրդականների անհամաձայնության հետևանքով²⁰:

Փաստաթղթերի հրատարակման գլխավոր նպատակը պարզորոշ մատնանշվում է գրքի առաջաբանի վերջին տողերում: Տեղեկացնելով, որ դաշնակցականների գործունեության վերաբերյալ կան բազում գրավոր փաստեր, Ա. Մյասնիկյանը նշել է. «Եվ որքան ավելի լայն ժողովրդականություն ստանան նրանք (այսինքն՝ հակադաշնակցական փաստերը – Հ. Ս.), որքան շատ կարդան և շատերը իմանան դրանց մասին, այնքան ավելի լավ Հայաստանի խորհրդային կարգերի և առհասարակ հայ աշխատավորության համար»²¹: Հենց այս գործելաոճով էլ տասնամյակներ շարունակ առաջնորդվել է խորհրդային քարոզչամեքենան:

Ամփոփելով կարող ենք փաստել, որ ՀՍԽՀ արտաքին գործերի ժողկոմատի հրատարակչական գործունեության ուսումնա-

²⁰ Տե՛ս նույն տեղը, էջ 10-26:

²¹ Նույն տեղում, էջ 9:

սիրությունը պատկերացում է տալիս այդ ոլորտում նորաստեղծ խորհրդային պետության քաղաքականության, սկզբունքների ու առանձնահատկությունների մասին: 1921 թ. հունիսից մինչև 1922 թ. մարտը ժողկոմատի հրատարակած «Բյուլետենը», արտաքին քաղաքականությանն առնչվող հարցերին անդրադառնալուն զուգահեռ, բացահայտում էր նաև այլ ոլորտներում խորհրդային Հայաստանի ձեռքբերումներն ու առկա խնդիրները՝ միաժամանակ կատարելով խորհրդային գաղափարների քարոզչություն, ինչը բնորոշ է եղել ժամանակի մամուլին: Հրատարակվող պարբերականին զուգահեռ՝ 1922 թ. ՀՍԽՀ արտգործժողկոմատը ձեռնամուխ եղավ նաև գրքերի պարբերական հրատարակությանը: Ժողկոմատի լուծարմամբ պայմանավորված՝ հրատարակվել է այդ շարքի միայն առաջին գիրքը: Խորհրդային իշխանությունների կողմից Հ. Յ. Դաշնակցության դեմ մղվող գաղափարաքարոզչական պայքարում կարևոր դերակատարություն է ունցել ՀՍԽՀ արտգործժողկոմատը: Այդ ուղղությամբ ժողկոմատի գործունեությունը դրսևորվել է հրատարակվող պարբերականի համարներում ու հրատարակած գրքում:

HAMO SUKIASYAN

THE PUBLISHING ACTIVITY OF THE PEOPLE'S COMMISSARIAT OF FOREIGN AFFAIRS OF SSRA IN 1921-1922

SUMMARY

In 1921-1922 the People's Commissariat of Foreign affairs of Soviet Armenia executed a productive publishing activity. Studying the publishing activity of the People's Commissariat we form an idea

about the principles and features of the policy of Soviet Armenia in this aspect.

The "Bulletin", having been published from June 1921 until March 1922, was presenting the achievements and existing problems of Soviet Armenia, at the same time preaching the Soviet ideology. In 1922 the People's Commissariat undertook a periodic publication of books. Due to dissolution of the People's Commissariat only the first book of this series was published.

АМО СУКИАСЯН

ИЗДАТЕЛЬСКАЯ ДЕЯТЕЛЬНОСТЬ НАРОДНОГО КОМИССАРИАТА ИНОСТРАННЫХ ДЕЛ ССРА В 1921-1922 ГОДАХ

РЕЗЮМЕ

В 1921-1922 гг. народный комиссариат иностранных дел ССРА развернул продуктивную издательскую деятельность. Изучение этого вопроса способствует формированию представления о принципах и особенностях политики Советской Армении.

В опубликованном с июня 1921 г. по март 1922 г. "Бюллетене" наркомата были представлены достижения и проблемы Советской Армении. В 1922 году наркомат предпринял периодическое издание книг. Из-за расформирования народного комиссариата была опубликованна только первая книга этой серии.

ԼՂԻՄ-Ի ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ՆՐԱ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿՈՐՈՒՍՏՆԵՐԸ (1920-1930-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐ)*

Ռուսաստանում 1917 թվականին միապետության անկումից հետո կայսրության փլուզման գործընթացը տարածվեց դեպի ծայրամասային շրջանները: 1918 թ. ապրիլի 9 (22)-ին Անդրկովկասյան Սեյմը Անդրկովկասը հայտարարեց Ռուսաստանից անկախ դաշնային հանրապետություն, իսկ արդեն մայիսի վերջին ստեղծվեցին Վրաստանի, Հայաստանի և «Արևելակովկասյան մուսուլմանական հանրապետություն» («Ադրբեջան») անկախ պետությունները: Ղարաբաղում (պատմական Արցախ) նույնպես կողմնորոշվեցին դեպի անկախությունը: 1918 թ. հուլիսի 22-26-ին Շուշիում հրավիրված երկրամասի հայության 1-ին համագումարում Ղարաբաղը հռչակվեց վարչատարածքային անկախ միավոր, ընտրվեց Ազգային խորհուրդ և Ժողովրդական կառավարություն: Հայաստանի Առաջին Հանրապետության ռազմաքաղաքական օժանդակությամբ արցախահայությանը հաջողվեց դիմակայել 1918-1920 թթ. ճակատագրական փորձություններին, թուրք-թաթարական զավթողական ցեղասպան քաղաքականությանը: 1920 թ. ապրիլի 23-29-ը տեղի ունեցած Ղարաբաղի հայության 9-րդ համագումարի կողմից երկրամասը հռչակվեց Հայաստանի Հանրապետության անբաժանելի մասը:

* Հռչակածը պատրաստվել է ՀՀ ԿԳՆ Գիտության պետական կոմիտեի գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորմամբ իրականացվող «13-6A402» ծածկագրով թեմայի ուսումնասիրության շրջանակներում:

Նույն օրերին, սակայն, տարածաշրջանում ընթանում էին իրադարձություններ, որոնք կտրուկ փոխեցին ռազմաքաղաքական դրությունը: Դա կապված էր Անդրկովկասում Խորհրդային Ռուսաստանի քաղաքականության աշխուժացման, նրա 11-րդ Կարմիր բանակի տարածաշրջան ներխուժելու հետ: Դրա արդյունքում 1920 թ. ապրիլի 28-ին Ադրբեջանը հռչակվեց խորհրդային հանրապետություն: Վերջինիս «արդար պահանջներին» աջակցելու նպատակով Կարմիր բանակի հրամանատարությունը և քաղաքական ղեկավարությունը շտապեցին վերջնագրեր ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարությանը՝ Ղարաբաղից (նաև Զանգեզուրից) հայկական գործառնաքերը դուրս բերելու պահանջով: Հակառակ դեպքում սպառնում էին զրավել դրանք ռազմական միջամտությամբ: Արցախահայությանն այլ ելք չէր մնում, քան Ղարաբաղը հռչակել խորհրդային, ինչը տեղի ունեցավ մայիսի 25-ին Թաղավարդ գյուղում հրավիրված արցախահայության 10-րդ համագումարում: Խորհրդային Ադրբեջանի նկրտումները Ղարաբաղի նկատմամբ թեև գնալով ուժգնանում էին, սակայն Թիֆլիսում 1920 թ. օգոստոսի 10-ին ՌՍԴԽՀ կառավարության և Հայաստանի Հանրապետության միջև ստորագրված համաձայնագրով Ղարաբաղը (նաև Զանգեզուրն ու Նախիջևանը) հայտարարվեցին «վիճելի տարածքներ» և «Ժամանակավորապես» զինագրավվելու էին խորհրդային գորքերի կողմից: Դա, սակայն, «չէր կանխորոշելու վիճելի տարածքների նկատմամբ Հայաստանի Հանրապետության կամ Ադրբեջանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության իրավասությունը»¹:

¹ Нагорный Карабах в 1918–1923 гг., Сборник документов и материалов, Ереван, 1992, с. 574–575.

Այսպիսով, Ղարաբաղը 1918–1920 թթ. հանդիսանում էր առանց ճշգրիտ սահմանների վարչատարածքային առանձին միավոր և, ինչպես իրավացի նկատում է Ա. Մանասյանը, «դե-ֆակտո ներկայանում էր իբրև սուվերեն պետական կազմավորում»²:

Հայաստանի Հանրապետության խորհրդայնացմամբ 1920 թ. նոյեմբերի վերջին դեկտեմբերի սկզբին նոր իրադրություն ստեղծվեց նաև Ղարաբաղի հարցում: Ադրբեջանի հեղկոմը 1920 թ. նոյեմբերի 30-ին հանդես եկավ դեկրետով, որում նշվում էր, որ Խորհրդային Ադրբեջանի և Խորհրդային Հայաստանի միջև այլևս սահմանային խնդիր գոյություն չունի, Ջանգեզուրն ու Նախիջևանը անցնում են Հայաստանին, իսկ Ղարաբաղի լեռնային մասին տրվում է ինքնորոշման իրավունք: Դեկրետը դեկտեմբերի 2-ին հրապարակվեց Բաքվի «Կոմունիստ» թերթում: Ավելին, Ադրբեջանի հեղկոմը շուտով «Բոլորի՛ն, բոլորի՛ն, բոլորի՛ն» խորագրով դիմումով (որում Լեռնային Ղարաբաղին վերաբերող մասը տարբերվում էր դեկրետում նշվածից) ազդարարեց. «Այսօրվանից վերացված են հայտարարվում սահմանների մասին վեճերը Հայաստանի և Ադրբեջանի միջև: Լեռնային Ղարաբաղը, Ջանգեզուրը և Նախիջևանը համարվում են ՀՍԽՀ մասեր»: Որոշում-դիմումը տպագրվել է Երևանի «Կոմունիստ» թերթի 1920 թ. դեկտեմբերի 7-ի համարում:

Ղարաբաղյան հիմնախնդրի կարգավորման սեփական քաղաքականություն էր իրականացնում տարածաշրջանում կուսակցական ղեկավար մարմին հանդիսացող ՌԿ(Բ)Կ կենտկոմի կովկասյան բյուրոն: Վերջինիս կողմից 1921 թ. հունիսի 3-ին ընդունված որոշման 5-րդ կետով Խորհրդային Հայաստանի կառավարությանը հանձնարարվում է Հոչակազրով հայտարարել «Լեռ-

² Манасян А., Карабахский конфликт: Ключевые понятия и хроника, Ереван, 2005, с. 161.

նային Ղարաբաղի Հայաստանին պատկանելության մասին»³։ Բյուրոյի որոշումն ընդունվել էր միաձայն, կողմ արտահայտվողների թվում էր նաև Ադրբեջանի հեղկոմի նախագահ Ն. Նարիմանովը։ Ի կատարումն Կովկասյան բյուրոյի որոշման՝ ՀՍԽՀ ժողկոմխորհը, կառավարության նախագահ Ա. Մյասնիկյանի ստորագրությամբ, 1921 թ. հունիսի 12-ին ընդունեց համապատասխան հայտարարություն. «Ադրբեջանի ՍԽՀ հեղկոմի հոչակագրի (նկատի է առնվում 1920 թ. նոյեմբերի 30-ի դեկրետը – Խ.Կ.) և Հայաստանի ու Ադրբեջանի ՍԽՀ-ների կառավարությունների միջև եղած համաձայնության հիման վրա հայտարարվում է, որ Լեռնային Ղարաբաղը այժմվանից կազմում է Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության անբաժան մաս»⁴։ Հայտարարությունը հայերեն, ռուսերեն ու ադրբեջաներեն հրապարակվեց ժամանակի մամուլում՝ Երևանի «Խորհրդային Հայաստան» թերթում՝ հունիսի 19-ին, իսկ Բաքվի «Բակինսկի ռաբոչի» ռուսալեզու թերթում՝ հունիսի 22-ին։

Այսպիսով, Հայաստանի Առաջին և Երկրորդ (Խորհրդային) հանրապետությունները վճռական էին Լեռնային Ղարաբաղը հանրապետությանը միացնելու հարցում։ Իրադարձությունները, սակայն, այլ ընթացք ստացան, թուրք-ադրբեջանաբուլշևիկյան ալյանսին հաջողվում է կասեցնել խնդրի արդարացի լուծումը և երկրամասն անջատել մայր Հայաստանից։

1921 թ. հունիսի 25-ին Թիֆլիսում հրավիրված Անդրկովկասի հանրապետությունների ներքին սահմանները որոշող հատուկ հանձնաժողովի⁵ անդրանիկ նիստում ադրբեջանական

³ Ст. у Нагорный Карабах в 1918–1923 гг., էջ 633։

⁴ Նույն տեղում, էջ 636։

⁵ Հանձնաժողովը ստեղծվել էր ՌԿ(Բ)Կ կենտկոմի կովկասյան բյուրոյի 1921 թ. մայիսի 2-ի որոշումով և պետք է կարգավորեր Անգրկովկասի խորհրդային հանրապետությունների միջև տարածքային-սահմանային վեճերը։

կողմը Ղարաբաղի հարցում որդեգրում է անգիջում վարքագիծ: Հանձնաժողովում Հայաստանի միակ ներկայացուցիչ Ա. Բեկզադյանի՝ Լեռնային Ղարաբաղի հարցը հոգուտ Խորհրդային Հայաստանի որոշելու առաջարկությանը հետևում է Ադրբեջանի ներկայացուցիչ Մ. Հուսեյնովի խնդրանքը՝ հարցի քննարկումը հետաձգելու մասին: Վերջինս դա պատճառաբանում է նրանով, որ չի ստացել խնդրի վերաբերյալ Բաքվի հրահանգներն ու լիազորությունները⁶: Ստեղծված իրավիճակում, որը սպառնում էր ձախողել հանձնաժողովի աշխատանքները, նրա նախագահ Ս. Կիրովը և ՌԿ(Բ)Կ կենտկոմի կովկասյան բյուրոյի անդամ Գ. Օրջոնիկիձեն հունիսի 26-ին շտապում են հեռագրել Բաքու՝ Ն. Նարիմանովին. «Խնդրում ենք շտապ հրավիրել քաղբյուրո և ժողկոմխորի ու լուծել Ղարաբաղի հարցը»: Օրջոնիկիձեն և Կիրովը հայտնում են հարցի վերաբերյալ իրենց մոտեցումը. «Անհրաժեշտ է ղեկավարվել այսպիսի սկզբունքով՝ ոչ մի հայկական գյուղ չպետք է միացվի Ադրբեջանին, ինչպես և ոչ մի մուսուլմանական գյուղ չի կարելի միացնել Հայաստանին»⁷: Նույն օրը հրավիրվում է Ադրբեջանի կոմկուսի կենտկոմի քաղբյուրոյի և կազմբյուրոյի համատեղ նիստ, որտեղ Օրջոնիկիձեի և Կիրովի առաջարկությունն արմատապես սխալ է համարվում: Ինչ վերաբերվում է Ղարաբաղի խնդրում Բեկզադյանի հարցադրմանը, ապա ընդունվում է հետևյալ որոշումը. «Նկատի ունենալով Լեռնային Ղարաբաղի տնտեսական բացարձակ կապն Ադրբեջանի հետ՝ հարցը պետք է լուծել հենց այդ իմաստով»⁸: Որոշման մասին հաջորդ օրը Բաքվից հաղորդելով Թիֆլիս՝ Հուսեյնովին, նշվում է, որ հակառակ դեպքում Նարիմանովը սպառնացել է

⁶ Ст. u Нагорный Карабах в 1918–1923 гг., էջ 642:

⁷ Հայաստանի ազգային արխիվ (ՀԱԱ), ֆ. 1, ց. 1, գ. 105, թ. 7–10:

⁸ Нагорный Карабах в 1918–1923 гг., с. 645.

Ադրբեջանի ժողկոմխորհի հրաժարականով: Պատասխանում Հուսեյնովը Նարիմանովին նկատում է, որ որոշումը սառնությամբ կրնդունվի, որովհետև իր հետ զրույցում Օրջոնիկիձեն շիտակ հայտնել է, որ Ղարաբաղի հարցի լուծումը խորհրդային իշխանության պատվի հարցն է և պետք է լուծել վերջնական ու այն ձևով, «ինչպես ես Ձեզ երեկ հաղորդել եմ»⁹: Սակայն անգամ բոլշևիկ բարձրաստիճան ղեկավարների «վճռական հրահանգը» չազդեց Նարիմանովի վրա, Ղարաբաղի հարցում Ադրբեջանը շարունակեց իր կոշտ քաղաքականությունը: Հանդիպելով ադրբեջանական կողմի նման դիրքորոշմանը՝ Ա. Բեկզադյանը հունիսի 27-ին հրաժարվում է մասնակցել սահմանների որոշման հանձնաժողովի հետագա աշխատանքներին և պնդում, որ պետզի տարածքային հարցերը փոխանցվեն ՌԿ(Բ)Կ կենտկոմի կովկասյան բյուրոյի քննարկմանը: Հավելենք, որ հանձնաժողովում Ա. Բեկզադյանն առաջ էր քաշել նաև Լոռին ու Ախալքալաքի գավառը Խորհրդային Հայաստանի մաս ճանաչելու հարցը, որը, սակայն, մերժվել էր հանձնաժողովի 3 ադրբեջանցի և 2 վրացի ներկայացուցիչների կողմից:

Ղարաբաղի հարցը քննարկվում է 1921 թ. հուլիսի 2-7-ը Թիֆլիսում գումարված ՌԿ(Բ)Կ կենտկոմի կովկասյան բյուրոյի պլենումի հուլիսի 4-ի նիստում, որին Գ. Օրջոնիկիձեի հրավերով մասնակցում էր Հյուսիսային Կովկասում (Նալչիկում) արձակուրդում գտնվող ՌԿ(Բ)Կ կենտկոմի անդամ Ի. Ստալինը: Նիստում քվեարկության արդյունքում ընդունվում է արդարացի որոշում. «Լեռնային Ղարաբաղը մտցնել ՀՍԽՀ կազմ»: Որոշմանը, սակայն, դեմ է արտահայտվում Ադրբեջանի ներկայացուցիչ Ն. Նարիմանովը: Նա պնդում է, որպետզի հարցի վերջնական կարգավորումը փոխադրվի Մոսկվա՝ ՌԿ(Բ)Կ կենտկոմ: Պլենումն ըն-

⁹ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 1, գ. 105, թ. 11:

դառաջում է Նարիմանովին և նրա առաջարկի ոգով ընդունում նոր որոշում. «Քանի որ Ղարաբաղի մասին հարցն առաջացրել է լուրջ տարաձայնություններ, ՌԿԿ կենտկոմի կովկասյան բյուրոն անհրաժեշտ է համարում այն փոխադրել ՌԿԿ վերջնական որոշմանը»¹⁰: Սակայն հաջորդ օրը՝ հուլիսի 5-ին, հրավիրվում է Կովկասյան բյուրոյի պլենումի արտահերթ նիստ, ուր վերանայվում են Ղարաբաղի հարցի վերաբերյալ հուլիսի 4-ի պլենումի որոշումները: Պլենումը որոշում է. «Ելնելով մուսուլմանների ու հայերի միջև ազգային խաղաղության և Վերին ու Ներքին Ղարաբաղների տնտեսական կապի անհրաժեշտությունից, Ադրբեջանի հետ նրա մշտական կապից՝ Լեոնային Ղարաբաղը թողնել ԱդրՍԽՀ սահմաններում՝ նրան տրամադրելով մարզային լայն ինքնավարություն, վարչական կենտրոնը՝ ինքնավար մարզի կազմում գտնվող Շուշի քաղաքն է»: Ադրբեջանի կոմկուսի կենտկոմին հանձնարարվում է որոշել ինքնավար մարզի սահմանները և ներկայացնել Կովկասյան բյուրոյի հաստատմանը¹¹:

ՌԿ(բ)Կ կենտկոմի կովկասյան բյուրոյի պլենումի հուլիսի 5-ի ոչ օրինական որոշումով խախտվեց միջազգային իրավունքի հիմնարար՝ ազգերի ինքնորոշման իրավունքի սկզբունքը, ոտնահարվեցին Լեոնային Ղարաբաղի բնակչության ճնշող մեծամասնությունը կազմող հայության իրավունքները, անտեսվեցին Խորհրդային Հայաստանի շահերը: Ահա թե ինչու ՀԿ(բ)Կ կենտկոմը 1921 թ. հուլիսի 16-ին որոշեց, որ Ղարաբաղի հարցի վերաբերյալ Կովկասյան բյուրոյի պլենումի բանաձևն «իրենց չի բավարարում»¹²: Հայկոմկուսի առաջին համագումարում (26–29 հունվարի 1922 թ.) ելույթում փորձելով հերքել իր և ՀԿ(բ)Կ

¹⁰ Нагорный Карабах в 1918–1923 гг., с. 649–650.

¹¹ Տե՛ս նույն տեղում, էջ 650:

¹² ՀԱԱ, ֆ. 1, ց. 1, գ. 39, թ. 18:

կենտկոմի հասցեին հնչած խիստ քննադատությունը և ծանր մեղադրանքները, որ վերջիններս Ղարաբաղի հարցում չդրսևորեցին վճռականություն և առավել հաստատակամ չպնդեցին երկրամասը Խորհրդային Հայաստանին միացնելու հարցում, Ա. Մյասնիկյանը, կարծես արդարանալով, որ Ն. Նարիմանովի օրինակով չի պնդել դարաբաղյան հարցի վերջնական լուծումը ՌԿ(բ)Կ կենտկոմ փոխադրելու հարցում, նշում է միայն, որ Կովկասյան բյուրոյի պլենումի նիստը հիշեցնում էր Անդրկովկասի հանրապետությունների նախկին ղեկավարների պայքարը. «Այսպես՝ Ադրբեջանն ասում էր, եթե Հայաստանը պահանջի Ղարաբաղը, ապա մենք նավթ չենք մատակարարի»¹³:

Կովկասյան բյուրոյի պլենումի հուլիսի 5-ի որոշումից հետո Ադրբեջանի ղեկավարությունը ջանք ու եռանդ չէր խնայում ստանալու արցախահայության համաձայնությունը Ադրբեջանի գերիշխանությունը ճանաչելու հարցում: Այդ նպատակին հասնելու համար ադրբեջանական իշխանությունները Լեոնային Ղարաբաղի տարբեր շրջաններում լայն քարոզարշավ անցկացրեցին, սակայն ամենուրեք հանդիպեցին «սառը դիմադրության»: Բաքվի ջանքերով Ստեփանակերտում հրավիրված շրջանի գործադիր կոմիտեների ներկայացուցիչների 1921 թ. հուլիսի 28-ի համագումարի աշխատանքների մասին Ղարաբաղից Երևան ուղարկած գաղտնի զեկուցագրերից մեկում նշվում է. «Դրությունն օրհասական է, խնդրում ենք միջոցներ ձեռնարկել Լեոնային Ղարաբաղը Խորհրդային Հայաստանին միացնելու համար»¹⁴: Այդպիսին էր Արցախի ողջ հայ բնակչության միահամուռ ցանկությունը, սակայն դրա հետ ոչ-ոք հաշվի չէր նստում, ավելին՝ Ադրբեջանն անգամ չէր շտապում կյանքի կոչել ամբողջ

¹³ Նույն տեղում, ց. 2, գ. 2, թ. 13, 23:

¹⁴ Нагорный Карабах в 1918–1923 гг., с. 653–654.

Լեոնային Ղարաբաղին ինքնավարություն տրամադրելու մասին հուլիսի 5-ի որոշումը: Նրա իշխանությունների հեռահար նպատակն էր. առժամանակ մոռացության մատնել խնդիրը, իսկ հետագայում հասնել նրան, որպեսզի երկրամասը տարալուծվի ԱդրՍԽՀ վարչական շրջանների մեջ: Այդ մասին է վկայում հետևյալ ուշագրավ փաստը. ԱդրԿ(Բ)Կ կենտկոմի կազմբյուրոյի և քաղբյուրոյի 1921 թ. սեպտեմբերի 26-ի նիստում, որը նախագահում էր կենտկոմի քարտուղար Ս. Կիրովը, ձայների մեծամասնությամբ որոշվում է. «Խնդրել Կապբյուրոյին, որպեսզի վերանայի Լեոնային Ղարաբաղն առանձնացնելու մասին իր որոշումը, իսկ մինչ այդ ինքնավարություն չառանձնացնել»¹⁵:

Ադրբեջանական կողմի նենգամիտ այս ծրագիրը, սակայն, հաջողություն չունեցավ: Չհանդուրժելով Լեոնային Ղարաբաղին ինքնավարություն տրամադրելու որոշման կատարման միտումնավոր ձգձգումը Ադրբեջանի կողմից, 1922 թ. հունիսի 5-ին ՀԿ(Բ)Կ կենտկոմի պլենումը որոշում է դիմել ՌԿ(Բ)Կ կենտկոմի անդրկոպկասյան երկրային կոմիտեին (որը փոխարինել էր ՌԿ(Բ)Կ կենտկոմի կոպկասյան բյուրոյին)՝ որպեսզի կատարվի 1921 թ. հուլիսի 5-ի որոշումը¹⁶: Ընդառաջելով հայկական կողմին, ՌԿ(Բ)Կ կենտկոմի անդրերկրկոմի նախագահությունը 1922 թ. հոկտեմբերի 27-ին ԱդրԿ(Բ)Կ կենտկոմին հանձնարարում է «կյանքի կոչել այդ որոշումը»¹⁷:

«Լեոնային Ղարաբաղի ինքնավարության անցկացման» հարցը քննարկվում է 1922 թ. դեկտեմբերի 14-ին Բաքվում հրավիրված Անդրերկրկոմի պլենումի նիստում, որը նախագահում էր

¹⁵ К истории образования Нагорно-Карабахской автономной области Азербайджанской ССР. 1918–1925: Документы и материалы, Баку, 1989, с. 96–97.

¹⁶ Տե՛ս և Нагорный Карабах в 1918–1923 гг., էջ 660:

¹⁷ Տե՛ս և К истории образования Нагорно-Карабахской автономной области Азербайджанской ССР, էջ 127:

Անդրերկրկոմի քարտուղար Ա. Մյասնիկյանը: Նիստում ընդունվում են համապատասխան որոշումներ, տրվում դրանցից բխող կարգադրություններ: Որոշվում է ԱդրՍԽՀ ժողկոմխորհին կից կազմավորել Լեոնային Ղարաբաղի գործերով հատուկ կոմիտե¹⁸: Հաջորդ իսկ օրը՝ դեկտեմբերի 15-ին, Բաքվում հրավիրված ԱդրԿ(Բ)Կ կենտկոմի բյուրոյի նախագահության նիստում Անդրերկրկոմի պլենումի որոշումներն ընդունվում են ի կատարում. հաստատվում են Լեոնային Ղարաբաղի գործերով կենտրոնական հանձնաժողովի (Կիրով, Միրզաբեկյան, Կարակոզով) և յոթ հոգանոց կոմիտեի կազմերը: Վերջինիս հանձնարարվում է կարգավորել բոլոր հողային վեճերը Շուշիի, Ջաբրայիլի և Ջևանշիրի գավառների շրջանում¹⁹: «Լեոնային Ղարաբաղի ինքնավարության անցկացման մասին» և դրանից բխող վերը նշված որոշումները հաստատվում են Անդրդաշնության Միութենական խորհրդի նախագահության 1922 թ. դեկտեմբերի 22-ի նիստում²⁰:

Այսպիսով, հայկական կողմի համառ ջանքերի շնորհիվ Լեոնային Ղարաբաղը որպես ինքնավարություն առանձնացնելու 1921 թ. հուլիսի 5-ի որոշումը կարծես մոտ էր կյանքի կոչվելուն: Բաքվում, սակայն, այլ կերպ էին տրամադրված. ադրբեջանական կողմը շարունակում էր հարցի կարգավորումը ձգձգելու և վիժեցնելու հետևողական փորձերը: Ուստի՝ Անդրերկրկոմին այլ ելք չէր մնում, քան 1923 թ. հունիսի 27-ին հերթական անգամ անդրադառնալ հիմնախնդրին և հանձնարարել Ադրբեջանի կոմկուսի կենտկոմին այլևս չձգձգել և մեկամսյա ժամկետում Լեոնային Ղարաբաղն առանձնացնել իբրև ինքնավար մարզ: Ընդամենը մի քանի օր անց՝ հուլիսի 1-ին, ԱդրԿ(Բ)Կ կենտկոմի

¹⁸ Տե՛ս *Нагорный Карабах в 1918–1923 гг.*, էջ 662:

¹⁹ Տե՛ս նույն տեղում, էջ 663:

²⁰ Տե՛ս նույն տեղում, էջ 664:

նախագահությունը ստիպված է լինում առաջարկել Ադրբեջանի Կենտրոնականին (ԿԳԿ) հռչակել Լեռնային Ղարաբաղի ինքնավարությունը և ստեղծել «Ղարաբաղի ինքնավար մարզ»՝ Խանքենդի կենտրոնով: Հռչակագրում հանձնարարվում է նշել, որ ինքնավարության «սահմանները և այլնը կորոշվեն հատուկ հանձնաժողովի կողմից»: Վերջինս որոշելու էր. «1) Ինքնավար Ղարաբաղի սահմանները: 2) Քրդստանի տեղադրությունը: 3) Դաշտային Ղարաբաղի վարչական փոփոխությունները»²¹:

Վերջապես, 1923 թ. հուլիսի 4-ին Ադրբեջանի խորհուրդների ԿԳԿ-ի նախագահությունն ընդունում է համապատասխան որոշում, որի արդյունքում էլ հուլիսի 7-ին լույս է տեսնում «Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզ» (ԼՂԻՄ, ռուսերեն՝ «Автономная область Нагорного Карабаха» (АОНК)²²) կազմավորելու մասին Կենտրոնականի դեկրետը: «Մարզի կանոնադրությունը մշակելու, Ղարաբաղի ինքնավար մարզին վարչական միավորները փաստացի հանձնելու, նաև ինքնավար մարզի սահմանները որոշելու համար ստեղծվելու էր խառը հանձնաժողով՝ Լեռնային Ղարաբաղի, Քրդստանի և ԱդրՄԽՀ կենտրոնական իշխանության ներկայացուցիչներից»: Հանձնաժողովին հանձնարարվում է աշխատանքներն ավարտել մինչև 1923 թ. օգոստոսի 15-ը²³:

Այսպիսով, արցախահայության, Խորհրդային Հայաստանի և Անդրդաշնության ղեկավարության, մասնավորապես՝ Ալեքսանդր Մյասնիկյանի, հաստատակամ և հետևողական ջանքերի

²¹ К истории образования Нагорно-Карабахской автономной области Азербайджанской ССР, с. 149–150.

²² 1936 թ. ընդունված ԽՍՀՄ նոր Սահմանադրությամբ մարզը «АОНК»-ից վերանվանվեց «НКАО»-ի՝ «Нагорно-Карабахская автономная область».

²³ К истории образования Нагорно-Карабахской автономной области Азербайджанской ССР, с. 151–153.

շնորհիվ Խորհրդային Ադրբեջանի իշխանությունները ստիպված էին երկու տարվա համառ դիմադրությունից հետո նահանջել և Լեռնային Ղարաբաղին տրամադրել ինքնավարություն: Դրա շնորհիվ էր նաև, որ Խորհրդային տարիներին արցախահայությանը հաջողվեց դիմակայել Ադրբեջանի սադրանքներին և ազգային խտրականության քաղաքականությանը, Արցախը չհայաթափվեց:

Ադրբեջանական կողմը, սակայն, Ղարաբաղի հարցում նոր ծուղակ էր նախապատրաստել՝ խախտելով ՌԿ(Բ)Կ կենտկոմի կովկասյան բյուրոյի պլենումի հուլիսի 5-ի որոշումը, որով ինքնավարություն պետք է տրամադրվեր ամբողջ Լեռնային Ղարաբաղին. 1923 թ. հուլիսի 7-ի դեկրետով ինքնավարություն էր կազմավորվելու միայն «Լեռնային Ղարաբաղի հայկական մասում»: Ավելին, նույն օրը՝ հուլիսի 7-ին, հրավիրված «Ինքնավար Ղարաբաղի և Քրդստանի սահմանները որոշելու հանձնաժողովի» նիստում որոշվում է «Լեռնային Ղարաբաղի առանձնացումից (որպես ինքնավար մարզ – Կ.Խ.) մնացած Ղարաբաղի դաշտային մասերից ստեղծել մարզային վարչություն Ադղամ կենտրոնով»: Հանձնաժողովը որոշում է նաև «Կազմավորել Ինքնավար Քրդստան, որի կենտրոններն ու սահմանները որոշել ինքնավար Լեռնային Ղարաբաղի սահմանների հաստատումից հետո»²⁴:

1923 թ. հուլիսի 16-ին ԱդրԿ(Բ)Կ կենտկոմի նախագահության ընդունած որոշման մեջ նշվում է. «ա) Այն ազատ հողատարածքները, որոնք մնացել են Սկոբելևսկայի հասարակության ուսական ամայացած գյուղերից, մտցնել Ինքնավար Ղարաբաղի սահմանների մեջ: բ) Շուշի քաղաքը մտցնել Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի կազմի մեջ: գ) Ղարաբաղի դաշտային մա-

²⁴ Նույն տեղում, էջ 153–154:

սից կազմել երկու գավառ: դ) Քրդերով զբաղեցրած տարածքներում ստեղծել «Քրդական գավառ»: ե) Հանձնարարել Ժողկոմխորհին խորհրդային կարգով որոշել այդ գավառների ճշգրիտ սահմանները և վարչական կենտրոնները»²⁵: Որոշումը հաստատվում է Ադրբեջանի ԿԳԿ-ի նախագահության 1923 թ. հուլիսի 21-ի նիստում²⁶:

Ջարգացնելով ընդունված որոշումները՝ ԱդրԿ(բ)Կ կենտկոմի նախագահությունը 1923 թ. հուլիսի 30-ին որոշում է. «ա) Քրդստանի, Ջաբրայիլի և Աղդամի գավառների սահմանները հաստատել ըստ ներկայացված քարտեզի: բ) Քրդստանի գավառի գավառային կենտրոնը համարել Փիրիջանը: գ) Ջաբրայիլ գավառի գավառային կենտրոնը Կարյազիինից տեղափոխել Ջաբրայիլ: դ) Աղդամ գավառի կենտրոն համարել Աղդամ քաղաքը: ե) Ադրբեջանի Կենտգործկոմին և Ժողկոմխորհին՝ անմիջապես կյանքի կոչել Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի ստանձնացման և նոր գավառների վարչական վերաբաժանման հետ կապված բոլոր խնդիրները»²⁷:

Այսպիսով, տեղի տալով և առանձնացնելով «Լեռնային Ղարաբաղի հայկական մասը»՝ որպես ինքնավար մարզ, Ադրբեջանը տենդագին կրճատում էր դեռևս թղթի վրա գոյություն ունեցող ԼՂԻՄ-ի տարածքներն ու սահմանները, դրանք այնպես «ճշգրտում», որպեսզի մարզը լինի առավել փոքր սահմաններով և անջատվի Խորհրդային Հայաստանից:

Ադրբեջանի ԿԳԿ-ի 1923 թ. օգոստոսի 6-ի հրամանագրով Ղարաբաղի այն հատվածները, որոնք Ադրբեջանի ղեկավարության նենգամիտ քաղաքականության արդյունքում չէին ընդ-

²⁵ Նույն տեղում, էջ 154–155:

²⁶ Տե՛ս նույն տեղում, էջ 157:

²⁷ К истории образования Нагорно-Карабахской автономной области Азербайджанской ССР, с. 159–160.

գրկվելու ԼՂԻՄ-ի կազմում, ներառվեցին արհեստականորեն ստեղծված Աղդամի, Ջաբրայիլի և Քրդստանի գավառների կազմում, որոշվեցին նրանց տարածքն ու վարչական սահմանները: Ըստ այդմ՝ նոր վարչամիավորները պետք է ունենային հետևյալ կառուցվածքը.

1. *Աղդամի գավառ*՝ Աղդամ կենտրոնով (ներառելու էր նախկին Շուշիի և Ջևանշիրի գավառների հարթավայրային մասերը):

ա) տարածքային ընդգրկումը՝ Բորսունլու գյուղից բեկված գծով Թարթառ²⁸ (Тертер) քաղաքով մինչև Ղարա-Ղոյունլու, ապա՝ Նամերլի և Նափրավենդ (իմա՝ Փափրավենդ) գյուղեր, Չուլլուդաղ (Чолодах, 2972), Աղդամի բլրաշարը, Ղզըլ-Ղայայի կողքով, Ուչթափալար, որտեղից արևելք՝ մինչև այն վայրը, որը գտնվում էր Աղդամի, Ջաբրայիլի և Ղարաբաղի գավառների հատման կետում, մոտավորապես 5 վերստ Կուրոպատկինո գյուղից դեպի հյուսիս-արևելք, այստեղից՝ արևելք, մինչև Սալյանի գավառի սահմաններում գտնվող Փեյդամբար գերեզմանոցը:

2. *Ջաբրայիլի գավառ*՝ Ջաբրայիլ կենտրոնով (ներառելու էր նախկին Կարյազինոյի գավառի հարթավայրային հատվածը):

ա) տարածքային ընդգրկումը՝ Սալյանի գավառի սահմաններում գտնվող Փեյդամբար գերեզմանոցից դեպի արևմուտք մինչև այն վայրը, որը գտնվում էր Աղդամի, Ջաբրայիլի և Ղարաբաղի գավառների հատման կետում՝ Կուրոպատկինո գյուղից մոտավորապես 5 վերստ հեռավորության վրա: Այստեղից՝ Ղարաբաղի կողմից, բեկված գծով Վեյսալու ձմեռոցով [(Зимовник, հետագայում՝ Ներքին Վեյսալու (թրք.՝ Aşağı

²⁸ Հռչակվածում օգտագործված ուսալեզու փաստաթղթերում նշված աղավաղված տեղանունների, ինչպես նաև սահմանագծերի ճշտումները Գեղամ Բադալյանի:

Väysali)), Նոր Նիկոլասկա, Դիվանալրար գյուղ, Ավշարի, Դուդուկչի (Քյուրաթաղ), Կարյազինո (հետագայում՝ Ֆիզուլի), Իշըխլու, Քոչ-Ահմեդլի, Սուլեյմանլու, Ղըշլաղ, Էֆենդիլար, Ջաֆրայիլ, Ադջաքենդ (Аджикенд, իմա՝ Խանձաձոր), Թեժլար գյուղերով, Ադ-Բուլաղ աղբյուրով մինչև Թարքայան-Յալի սար և Բաղիր-Բեզլու գյուղ, այնուհետև՝ Հազարու (Акера) գետակի²⁹ հունով ներքև մինչև Էֆենդիլար գյուղը, այստեղից հարավ-արևմուտք՝ մինչև Աղավյուրտ (իմա՝ Եղվարդ) գյուղը, որտեղից՝ հին վարչական սահմանով մինչև Նյուվադի (Аювадинский) գյուղը:

3. *Քրդստանի գավառ*՝ Փիրիջան (իմա՝ Փիրջահան) կենտրոնով (ներառելու էր նախկին Ջևանշիրի արևմտյան՝ Թարթար գետի վերին ավազանում ընկած հատվածները, ինչպես նաև ՀՍԽՀ-ից կտրված Ջանգեզուրի գավառի արևելյան՝ Լեոնային Ղարաբաղին հարող հատվածները, ուր 1930 թ. կազմավորվեցին Քյալբաջարի (Քարվաճար), Լաչինի (Բերձոր) և մասամբ Ղուբաթլուի գավառները):

ա) տարածքային ընդգրկումը՝ Մոավի լեոների (Муров-дар) գագաթներով Ղարաբաղի կողմից բեկված գծով հետևյալ կետերով՝ Էղերյուրտ կամ Աղըրյուրտ (Эгенюр) լեռ, Ալաղայա լեռ, այնուհետև՝ Լիսագորսկ, Ջամինկյում լեռնագագաթով մինչև Բաղըր-Բեզլու գյուղ: Այստեղից Ջաֆրայիլի գավառի կողմից Հազարու գետով ներքև մինչև Էֆենդիլար գյուղ, որտեղից հարավ-արևմուտք՝ մինչև Աղավյուրտ գյուղ, ապա՝ ՀՍԽՀ կողմից Խնձորեսկ (Инзирак³⁰) գյուղի միջով մինչև Ղզըլբողազդար (сиг-

²⁹ Սահմանն այդ հատվածում անցնելու էր նախ՝ Փոքր Հազարու գետակով (թրք.՝ Kicik Hakara, հայտնի է նաև Զինգյանակապ անվամբ), նոր հետո՝ բուն Հազարուով:

³⁰ Ռուսալեզու փաստաթղթում նշվում է բնակավայրի թյուրքական արտասանության (Xanzirak) աղավաղված տարբերակը՝ վերցված ռուսական 5-վերստանոց քարտեզի համապատասխան պլանշետից:

нал Александр Дали-Дар³¹), որտեղից լեռնաշղթայով՝ մինչև Դա-
վա-Գյոզի (Ուղտիակունք) լեռ, այնուհետև՝ վարչական հին
սահմանով մինչև սկզբնական կետ³²:

Նշված փաստաթղթում աչքի է զարնում հետևյալ հանգա-
մանքը: Եթե նորակազմ ԼՂԻՄ-ի արևելյան, հարավային և
արևմտյան սահմաններն արձանագրված են ըստ կողմնորոշիչ
որոշակի կետերի, ապա հյուսիսային սահմանագիծն ուղղակի
բացակայում է: Բանն այն է, որ նախկին ցարական վարչական
բաժանումով Լեռնային Ղարաբաղի հյուսիսային բաղկացուցիչ
հատվածը կազմող պատմական Գյուլիստանի մելիքության
զգալի մասը, որը գրավում էր Կուրի Բարակջուր (թրք.՝ İncä-çay)
վտակի միջին ավազանը, ինչպես նաև նույն գետի մեկ այլ վտա-
կի՝ Կուրակի (թրք.՝ Küräk-çay) վերին հոսանքի շրջանում
գտնվող Գետաշեն ավանն իր հարակից մի քանի բնակավայրե-
րով, կցված էին Ելիգավետպոլի գավառին: Այս՝ ավելի քան 1000
քառ. կմ ընդհանուր տարածք զբաղեցնող գուտ հայաբնակ
շրջանների ներառումը ԼՂԻՄ-ի կազմում Խորհրդային Ադրբե-
ջանի ղեկավարության տեսանկյունից կարող էր «վտանգավոր»
նախադեպ ստեղծել Հյուսիսային Արցախի մյուս շրջանների
(Ոսկանապատ, Քարհատ, Բանանց և այլն) ու հարևան Գարդ-
մանի տարածաշրջանի՝ գրեթե մինչև ՀՍԽՀ-ի հյուսիս-արևել-
յան սահմանագլուխը հոծ անընդմեջ շերտով բնակվող հայու-
թյան համար, որն անպայման կփորձեր ժամանակի ընթացքում
միավորվել այս նորաստեղծ հայկական պետական կազմավոր-
ման հետ: Անհրաժեշտ էր ամեն գնով բացառել որևէ հնարավո-

³¹ Սահմանագծի ուղղության քննությունը թույլ է տալիս վերոհիշյալ աղավաղ-
ված սեղանունը սրբագրել նշված ձևով (ճշտումն ըստ 5-վերստանոց քար-
տեզի՝ Кызыл-Богасдары):

³² К истории образования Нагорно-Карабахской автономной области Азербайд-
жанской ССР, с. 173–175.

րություն՝ Խորհրդային Հայաստանի անմիջական սահմանակցությամբ, միասնական հայկական ինքնավարության ձևավորման համար: Սրանով, կարծում ենք, կարելի է բացատրել այն փաստը, որ 1923–1924 թթ. Լեռնային Ղարաբաղի վերոհիշյալ մասերը մտցվեցին նորաստեղծ Գյանջայի (Գանձակ) գավառի մեջ՝ դրանով իսկ ԼՂԻՄ–ի հյուսիսային սահմանները «համընկեցնելով» երբեմնի ցարական վարչամիավորի հարավային սահմանագծին, որն անցնում էր Մոավի լեռների արևելյան ջրբաժանով և Բարակջրի հունով: Բացի այդ՝ հայկական մարզից դուրս էր թողնվել Լեռնային Ղարաբաղի հյուսիս–արևմտյան հատվածը կազմող Վերին Խաչենը (Ծարա երկիր)՝ Թարթառ գետի վերին ավազանում, որը զբաղեցնում էր շուրջ 2000 քառ. կմ³³: Վերջինս դեռ 1922 թ. ստացել էր «Քրդստան» (Курдистан) կեղծ անվանումը՝ վերակազմավորվելով որպես առանձին գավառամաս Ջևանշիրի գավառի կազմում³⁴: Խորհրդային Ադրբեջանի ղեկավարության 1923 թ. նոր որոշումով այս տարածքին կցվեց նաև Հազարու գետակի ողջ վերին ավազանը զբաղեցնող նախկին Ջանգեզուրի գավառի արևելքը, որը մինչ այդ, կտրվելով ՀՍԽՀ–ից, մտնում էր, այսպես կոչված, Ղուբաթլուի գավառի մեջ: Ինչպես հայտնի է, նորակազմ վարչամիավորը վերանվանվեց «Քրդստանի գավառ» (ոչ պաշտոնական անվանումը՝ «Կարմիր Քրդստան»):

Այսպիսով, ադրբեջանական ղեկավարության նպատակաուղղված քաղաքականության հետևանքով Լեռնային Ղարաբաղի երկրամասի ընդհանուր տարածքից, որը կազմում էր շուրջ 8000 քառ. կմ, 1923–1924 թթ. անջատվեց մոտ 3000 քառ. կմ–ը:

³³ Հաշվարկները Գ. Բաղդասյանի:

³⁴ St u Azerbaidzhanская сельско–хозяйственная перепись 1921 года. Таблицы: Джеванширский уезд. Баку, 1922, էջ 82:

Նորաստեղծ ԼՂԻՄ-ը, որի ամբողջական սահմանները դեռ որոշված չէին, այսուհետև կարող էր հավակնել ընդամենը 5000 քառ. կմ տարածքի:

Խորհրդային Ադրբեջանի նորաստեղծ Աղդամի, Ջաբրայիլի և Քրդստանի գավառների տարածքները որոշելուց հետո անգամ ԼՂԻՄ-ի տարածքային և սահմանային խնդիրների վերջնական կարգավորման գործընթացը դժվարությամբ էր ընթանում: Ուստի ԱդրԿ(Բ)Կ կենտկոմի նախագահությունը 1924 թ. ապրիլի 17-ին «ոչ հաջողված» է համարում այդ խնդիրները կարգավորող հատուկ հանձնաժողովի աշխատանքները և կազմում նոր հանձնաժողով՝ ԱդրՍԽՀ ժողկոմխորհի նախագահ Ղ. Մուսաբեկովի նախագահությամբ: Վերջինիս պատասխանատվությամբ հանձնաժողովին հանձնարարվում է մինչև 1924 թ. մայիսի 1-ը ավարտել ԼՂԻՄ-ի վարչական սահմանների վերջնական հաստատման և հողային հարցերի կարգավորման (ինչպես ԼՂԻՄ-ում, այնպես էլ ԼՂԻՄ-ի և հարևան գավառների միջև) աշխատանքները³⁵:

Լեոնային Ղարաբաղը որպես ինքնավար մարզ առանձնացնելու և նրա տարածքն ու վարչական սահմանները որոշելու աշխատանքներին գուգահեռ ընթանում էին նաև ԼՂԻՄ-ի Սահմանադրության (Կանոնադրության) ստեղծման աշխատանքները: Հատուկ հանձնաժողովի կողմից պատրաստված Սահմանադրության նախագիծը հաստատվեց ԱդրԿ(Բ)Կ կենտկոմի նախագահության 1924 թ. հուլիսի 3-ի նիստում, Ադրբեջանի ԿԳԿ-ի նախագահությանն առաջարկվեց «Սահմանադրությունը հրապարակել թյուրքերեն, հայերեն և ռուսերեն»³⁶: Այն հայերեն և

³⁵ St u K истории образования Нагорно-Карабахской автономной области Азербайджанской ССР, էջ 236–237:

³⁶ Նույն տեղում, էջ 248–249:

թյուրքերեն տպագրվում է Բաքվի «Կոմունիստ» օրաթերթի 1924 թ. հուլիսի 6-ի թիվ 145 (924)-ում, իսկ ռուսերեն՝ ռուսալեզու «Բակինսկի ռաբոչի» թերթի 1924 թ. նոյեմբերի 26-ի թիվ 269-ում:

«Ինքնավար Լեռնային Ղարաբաղի Շրջանի Սահմանադրությունը» հանդիսացավ առաջին պաշտոնական փաստաթուղթը, որում «Ինքնավար Լեռնային Ղարաբաղի տարածությունը (տերիտորիան)» վերնագրով առանձին բաժնում նշված են մարզի տարածքը և բնակավայրերը: Ըստ այդմ՝ «Ինքնավար Լեռնային Ղարաբաղի մեջ մտնում է այն տարածությունը, որը բռնված է հետևյալ գավառների քաղաքներով և գյուղերով:

Շուշու գավառից՝ Շուշի քաղաքը և Ստեփանակերտը, գյուղերը. Կարաքետուկ (Հիլիս³⁷), Ուլուֆաբ, Կայաբաշի (Դահրավ), Սարի-Քեշիշ (Խանձք), Կիշլաղ-Քենդ (Ղշլաղ), Շալվա (Ռև), Սեյիտ-Բեգլի (Սեյդիշեն), Դաշբուլաղ, Մեհտիքենդ (Մեհդիշեն), Բադարա (Պտրեցիք), Սունժինսկոյի, Խնձորիստան, Իսմայիլ-Բեգլի, Մալի-Բեգլի, Խալիփալի, Խոջալի, Ղուշչիլար, Քեորփա-Աֆաթլի, Ջարուսլի (Ջառիստ), Նախիջևանիկ, Փիրջամալ, Դահրագ, Քեաթուկ-Աղդարա, Աղբուլաղ (Միրիշկյալլու), Վարազաբուն, Լիսագորսկ, Կերկիժան (իմա՝ Կրկժան), Ջամիլլի, Բալուջա, Ղայբալիքենդ, Փախլիզ (իմա՝ Փախլուլ), Խնսաձախ, Մեհտի-Քենդ (իմա՝ Մադաթքենդ, Ալամանց գոմեր), Վերին-Սգնիք, Դամուրչիլար (Ջաղացներ), Ներքին Սգնիք, Սդնախ, Չա-

³⁷ Հարկ է նկատի ունենալ, որ ԼՂԻՄ-ի Սահմանադրությունում նշված տեղանունները վերցված են նախկին ցարական տեղեկագրերից, ուր նախապատվությունը տրված էր գրեթե առանց բացառության XVIII դ. երկրորդ կեսից շրջանառության մեջ մտած օտարախունջ թյուրքական տարբերակներին (տե՛ս մասնավորապես "Кавказский календарь на 1917 год". "Отдел статистический", с. 47-50, 59-61, 63-65): Ուստի նպատակահարմար ենք համարել վերոբերյալ բնակավայրերին կից նշել բուն հայկական կամ այն անվանաձևերը, որոնք տարածված էին հայերի միջավայրում: Ճշտված են նաև բացահայտ աղավաղված տեղանունները:

նախչի (Ավետարանոց), Ղարաբուլաղ, Ղուշչի-Բաբա (Մոշ-
 Խմհատ), Սարուշեն, Խաչմաչ, Տուբնակալ, Հարալի (Ղարալի),
 Պիրում-Քենդ (իմա՝ Փիրումաշեն), Մխիթարա-Քենդ (Արկաթա-
 լու), Դաղդաղան (Քոասնի), Հարով (Հարավ), Դաշուքենդ (Դա-
 շուշեն), Շուշի-Քենդ (Շոշ), Դաշալթի-Հյունոտ (իմա՝ Հոնուտ),
 Քեշիշ-Քենդ (Դոնավարգ), Դաշալթի-Խոզաբիր (Քարինտակ),
 Քենդխուրդ (Հաղորտի), Քարահունջ, Մուշկապատ, Ղավախան,
 Մաշադի-Քենդ (իմա՝ Մաշադիշեն), Կուզում-Քենդ (Քերթ), Ադ-
 Քենդ (Սպիտակշեն), Աշան, Հացի, Ենգի-Քենդ (Նորշեն), Կարա-
 Քենդ (Ղրգդալա), Եմիշճա, Ջամեաթ (Ննգի, Նինգի), Կդարծի,
 Միրի-Քենդ (Մյուրիշեն, Միրիշեն), Կարադաղլի, Խոնաշեն,
 Բահրամլի, Խոջալու (Խոջավանդ), Մուզան (Մուդանլու), Աբ-
 դուլլար (իմա՝ Ամիրանլար, Ամիրալլար), Կոտլեարովկա, Կու-
 րոպատկինո, Նիկոլանկա, Սկոբլնկա, Սոս, Մխտորաշեն, Խեր-
 խան, Ծովատեղ, Հերիեր, Մավաս, Ամարաս, Բիլբիլակ, Աղբու-
 լաղ (Մըսմնա), Ուզում-Քենդ, Դրախտիկ, Թաղլար (Մեծ Թաղ),
 Ազոխ, Ջարդանաշեն (Վերին Թաղավարդ), Շեխեր, Ջաղադուզ
 (Սարգսաշեն), Թաղավարդ, Ղուզե-Ճարտար, Գիշի, Գյունե-
 Ճարտար, Իսպահանջուղ (Խնուշինակ), Յենգիջա (Սարդարա-
 շեն), Դաշբաշի (Քարագլուխ), Խանաբաղ Նոր, Խանաբաղ Հին,
 Քեշիշքենդ (Նորագյուղ), Խրամորթ, Վերին-Յելչիբաղ (իմա՝
 Ղլիճբաղ), Ներքին-Յելչիբաղ (իմա՝ Ղլիճբաղ), Տոդ, Մամեդա-
 ձոր, Մուլավարդին (իմա՝ Սալաքյաթին), Շեխեր, Հակակու, Թա-
 դուտ, Մուսալըխ (Մոխրենիս, Մոխրենեց), Կովշատլի, Տումի, Հո-
 դեր, Ծակուռի, Ջրակուս:

Ջիվանշիրի գավառից՝ գյուղեր. Հասանրիզ (Հաթերք),
 Ումուդլի (Ականա), Կիրանլու (իմա՝ Քյարամլու), Իմարար-Կա-
 րավենդ (Գյարավանդ), Չափար, Ղուզլու (Բաղդուս (աղավաղ-
 ված Վաղուհասից)), Կըզըլ-Կայա (Հարությունագումեր), Յայջա

(Տիգրան (աղավաղված Կճողուտից)), Ջարդախաչ, Չարեքտար, Բաղլու-Կայա, Բալլու-Կայա, Ախմախլի (Հայաթ), Բազարքենդ (Ծմակահող), Քոլատակ, Դաղմանլու (Թբիլիսի), Դովչանլու (Առաջաձոր), Չորմանլու (Գառնաքար), Վանք, Տրումբոն (իմա՝ Դրմբոն), Հոռաթաղ, Շահմասուր, Ներիշտար, Քիչիկ-Կարաբեգ (Մոխրաթաղ), Ուլու-Կարաբեգ (Մեծշեն), Կուսապատ, Աղդարա-Մարդակերտ (իմա՝ Մարտակերտ), Դամիրլու, Հոռաթաղ, Բուրուջ, Յարըմջա, Մարաղա, Մարգուշնան, Բուրջ, Լևոն-Արխ, Լևոն-Արխ (Սարով), Մենգրեխկ, Չարդախլու (Մաղավուզ), Լյուլասագ (Վարնկաթաղ), Օրլովո-Դենիսովկա, Ղազանչի, Ջանյաթաղ (Ճանկաթաղ), Գյուլյաթաղ, Սրխավանդ, Դամիրի, Թալիշ, Տուրուս (Թոռուտ, Եղակեր), Դաստագիր, Տոնաշեն, Մաղաղիս, Դամիրլար (Ղահիրիլար), Վերին-Չայլու, Ներքին-Չայլու:

Կարյազինի գավառից՝ գյուղեր. Հաջիքենդ (իմա՝ Աղջաքենդ, Խանձաձոր), Առաքել, Բանագուր, Բինյաթլի, Դոլանլար, Խժալլան (աղավաղված Ջիլանից), Դաշբաշի (Քարագլուխ), Ծամծոր, Կեյնա-աղ (աղավաղված Հին Թաղերից), Մյուլքիդարա (Ցրտախաչ), Խժաբերդ, Վանք, Հաղրութ, Կամրակյուճ, Կոչբեկ, Ղուշչիլար, Մելիքջանլու, Նորաշեն, Տայք, Թաղասեր, Ցոր, Շաղախ (Սարին շեն), Վորդնաշատ, Աղբուլաղ, Ախուլլու, Քյուքուշլու (աղավաղված Հախուլլու-Քյուհուլլուից, Ըխեցիք), Թուլատան (աղավաղված Բուլուրթան-Բլեթանցից), Դուդուզլի (Քյուրաթաղ), Կոգուլլու (աղավաղված Քյուհուլլուից, Կհուլեցիք), Խարմանջուղ, Իդիլեցիք (Իտեկեցիք, Էդիլլու):

Ղուբաթլի գավառից՝ Ղարաղշլաղն (իմա՝ Ղալաղարասի-Բերդաձորը) իր գաղութներով»³⁸:

³⁸ «Կոմունիստ», Բաքու, 6 հուլիսի 1924 թ., թիվ 145 (924): Տե՛ս նաև՝ Հայության պայքարը ԼՂԻՄ-ը Խորհրդային Հայաստանի հետ միավորելու համար (փաստաթղթերի և նյութերի ժողովածու), կազմողներ և խմբագիրներ՝ Կ. Խաչատրյան, Հ. Աբրահամյան, առաջաբանը՝ Կ. Խաչատրյանի, Ե., 2011, էջ 29-36:

Այսպիսով, ԼՂԻՄ-ը պարփակվելու էր նախկին Ելիզավետպոլի (Գանձակ) նահանգի Ջևանշիրի, Շուշիի և Կարյազինոյի գավառների միայն լեռնային հատվածներում: Դրանց էր միացվել նաև 1923 թ. լուծարված Ղուբաթլուի գավառի (ձևավորվել էր 1921 թ.) հյուսիս-արևելքն ընդգրկող Բերդաձորի գյուղախումբը՝ հարակից տարածքներով:

Նորաստեղծ ԼՂԻՄ-ը՝ Աղդամի, Ջաբրայիլի և Քրդստանի գավառների հետ միասին, Ադրբեջանի իշխանությունները դիտում էին որպես ԱդրՍԽՀ միասնական տնտեսական «Ղարաբաղյան գոտի» և հողակարգման մեկ միավոր: Համաադրբեջանական 4-րդ համագումարին Ադրբեջանի կառավարության 1924 թ. գործունեության հաշվետվության մեջ նշվում է, որ այդ շրջանի ընդհանուր տարածքը կարող է կազմել մինչև մեկ միլիոն դեսյատին³⁹ (կամ 14567.2 քառ. կմ, 1 դեսյատինը հավասար է 0.0145672 քառ. կմ-ի): Ինչպես նշել ենք, այդ տարածքից շուրջ 8000 քառ. կմ-ը բաժին էր հասնում Լեռնային Ղարաբաղին (ԼՂԻՄ-ը, Գյուլիստան-Գետաշենի ենթաշրջանը և Քրդստանի գավառի հյուսիսային հատվածը), իսկ շուրջ 6700 քառ. կմ-ը՝ Դաշտային Ղարաբաղին (Աղդամի և Ջաբրայիլի գավառներ):

Նշված ժամանակահատվածում հրատարակված պաշտոնական (ադրբեջանական) որոշ տեղեկագրերում նորաստեղծ ԼՂԻՄ-ի տարածքը ցույց է տրված ընդամենը 4160,5 քառ. կմ (3656 քառ. վերստ)⁴⁰: Սա պարզապես ոչ ճիշտ հաշվարկի արդյունք է և չի համապատասխանում իրականությանը: Ինչպես

³⁹ См. и К истории образования Нагорно-Карабахской автономной области Азербайджанской ССР, էջ 223-224:

⁴⁰ См. и ишаншқоршағы Азербайджанская сельскохозяйственная перепись 1921 года. Итоги по сельским обществам во вновь образованных уездах АССР, Нагорного Карабаха и по тем (основным) уездам, в которых произошли изменения границ, том III, выпуск XVII, Баку, АзЦСУ, 1924, էջ II (այսուհետև՝ Итоги):

Ադրկենտգործկոմի վերը նշված հրամանագրում հանդիպող, այնպես էլ ԼՂԻՄ-ի «Սահմանադրության» տարածքային տվյալների համադրումը, մեզ հասու այլ փաստաթղթերի տեղեկությունների համադրմամբ ցույց է տալիս, որ գոյության առաջին տարիներին ԼՂԻՄ-ն ընդգրկել է շուրջ 5000 քառ. կմ տարածք: Որպեսզի մեր այս պնդումը մերկապարանոց չհնչի, բերենք մի քանի փաստարկներ.

ա) Նախապես ԼՂԻՄ-ի մեջ էր ներառված Մարտակերտի (այն ժամանակ՝ Ջրաբերդի) շրջանի հարավային մասով հոսող Կավրտու գետակի (թրք.՝ Gavirtu-çay կամ Gabartu-çay) հովիտը՝ թաթարաբնակ մեկ տասնյակից ավելի գյուղերով, որոնք միավորված էին Ղաբարթա Բոյ-Ահմեդլիի (Կավարտ) գյուղական հասարակության մեջ⁴¹: Բացառությամբ Սրխավենդ և Մանիք-Սրխավենդ (Մանիքլու) գյուղերի՝ մնացած բնակավայրերը հետագայում դուրս բերվեցին մարզի կազմից:

բ) Հարավ-արևելքում մարզի մեջ էին մտնում Իշխանագետի միջին հովտի հայաբնակ Ողեր (Հողեր), ինչպես նաև թաթարաբնակ Ղզըլդշլաղ և Ղովշաթլու գյուղերը, որոնք ԼՂԻՄ-ից դուրս բերվեցին 1930-ական թթ. վերջերին:

գ) Որոշակիորեն ԼՂԻՄ-ի տարածքում են եղել Բերդաձորի (Ղարադշլաղ) ենթաշրջանին հարավ-արևելքից սահմանակից «Մուսուլմանլարի» (բարբառային՝ «Մըսմնլար») գյուղախմբի բնակավայրերը⁴², որոնք հետագայում նույնպես դուրս են բերվել մարզի տարածքից:

դ) Չենք կարող չնշել մի կարևոր փաստ ևս. մինչև 1920-ականների կեսերը ԼՂԻՄ-ի սահմանները հարավ-արևմտյան

⁴¹ St u Итоги, էջ 2:

⁴² Այս գյուղախմբի հայ բնակչությունը բռնի մահմեդականացվել էր XVIII դ. (Հովհաննիսյան Լ., Հայության անդառնալիորեն կորսված բեկորներ, «Եզերք» հանդես, թիվ 2, Երևան, 2007, էջ 88):

հատվածում անցել են Հազարու գետով, որով մարզը փոքր՝ շուրջ 6 կմ, բայց ընդհանուր սահման է ունեցել ՀՍԽՀ-ի հետ⁴³։ Ընդ որում, այս իրողությունն արտացոլված է ժամանակի խորհրդային պաշտոնական քարտեզներում⁴⁴։

Թեև ԼՂԻՄ-ի «Սահմանադրությամբ» որոշվեցին մարզի տարածքները և նախանշվեցին նրա վարչական սահմանները, սակայն Ադրբեջանի իշխանությունների կողմից հետագա տարիներին պարբերաբար բարձրացված սահմանային նոր խնդիրների քողի ներքո ԼՂԻՄ-ից նորանոր տարածքներ էին «մկրատվելու»։ Դրանցից էր ԼՂԻՄ-ի և արհեստականորեն ստեղծված «Քրդստանի գավառի» (նաև վերջինիս ու ՀՍԽՀ-ի) միջև սահմանագատման հարցը։ Հարկ է նկատի ունենալ, որ սահմանամերձ այդ հատվածի հայ և մուսուլման բնակչության միջև պատմականորեն ձևավորվել էր փոխադարձ անվստահության մթնոլորտ, ազգային հողի վրա պարբերաբար տեղի էին ունենում ընդհարումներ։

Սահմանային վեճերը կարգավորելու միջնորդությամբ Ադրբեջանի ԿԳԿ-ն, ի վերջո, ստիպված էր դիմել Անդրկովկասի ԿԳԿ-ին՝ խնդրելով վերջինիս աջակցությունը։ Անդրկենտրոնական կոմիտեի 1923 թ. հոկտեմբերի 18-ին՝ Ի. Ստուրուայի, իսկ նոյեմբերի 12-ին՝ Ս. Թողրիայի նախագահությամբ ստեղծում է տարածքային վեճերը կարգավորելու հանձնաժողովներ⁴⁵, որոնք, սակայն, խնդրի կարգավորման ուղղությամբ շոշափելի առաջընթաց չեն ապահովում։ 1924 թ. «Քրդստանի գավառի» վիճակի մասին ԱդրԿ(բ)Կ կենտկոմին ներկայացրած կարճ գեկուցման մեջ Ադրկենտրոնականի նախագահի տեղակալ Մ.Բ. Կասումովն

⁴³ Ст'ю Итоги, т. II: Հմմտ. Букшпан А., Азербайджанские курды: Лачин, Кельбаджар, Нахкрай. Заметки, Баку, 1932, с. 11.

⁴⁴ Ст'ю սույն հոդվածին կից ներկայացված առաջին երկու քարտեզները։

⁴⁵ ՀԱԱ, ֆ. 112, ց. 1, գ. 95, թ. 173, 186։


այն համարում է բոլոր առումներով ողբերգական, նշում, որ «բավականին տխուր է» նաև Զանգեզուրի հետ Քրդստանի սահմանների որոշման հարցը: Սահմանային 13 գյուղերի մուսուլման գյուղացիները «Անդրկենտգործկոմի վերջին հանձնաժողովի անցկացրած սահմանների հետ կապված բողոքներ ու դժգոհություններ են հայտնում»⁴⁶:

ԼՂԻՄ-ի և «Քրդստանի գավառի» վարչական սահմանը հաստատելու նպատակով ԱդրԿ(բ)Կ կենտկոմի նախագահության 1925 թ. հունիսի 24-ի որոշումով ստեղծվում է հերթական հանձնաժողովը, որի կազմում ընդգրկվում են ԼՂԻՄ-ի և «Քրդստանի գավառի» մեկական ներկայացուցիչ: Լսելով հանձնաժողովի զեկուցումը՝ ԱդրԿ(բ)Կ կենտկոմի նախագահությունը 1925 թ. հուլիսի 13-ին դարձյալ որոշում է խնդրել ՌԿ(բ)Կ անդրերկրկոմին, որպեսզի իրականացվի Անդրկենտգործկոմի հողային վեճերի կարգավորման հանձնաժողովի որոշումները՝ հողակարգման աշխատանքները ԼՂԻՄ-ում և Քրդստանի գավառում արագացնելու համար: Որոշման մեջ նշվում է նաև, որ ԱդրՍԽՀ հողժողկոմատը հողակարգման բոլոր խմբերը պետք է կենտրոնացնի «Քրդստանի գավառի» և ԼՂԻՄ-ի սահմանային գծում. հողակարգման աշխատանքները շտապ անցկացնելու և ավարտելու համար, քանի որ միայն դրանից հետո հնարավոր կլինի վերջնականապես հաստատել «Քրդստանի գավառի» և ԼՂԻՄ-ի միջև սահմանները⁴⁷: Ադրբեջանի իշխանությունների կողմից իրականացված սահմանազատման արդյունքում ոչ միայն կրճատվեց ԼՂԻՄ-ի տարածքը, այլև մարզն արհեստականորեն անջատվեց Խորհրդային Հայաստանից և, որպես

⁴⁶ К истории образования Нагорно-Карабахской автономной области Азербайджанской ССР, с. 219–223.

⁴⁷ Տե՛ս նույն տեղում, էջ 292–294:

АЗЕРБАЙДЖАНСКАЯ С. С. Р.



С.С.Р. АРМЕНИЯ



АДМИНИСТРАТИВНАЯ КАРТА НАГОРНО-КАРАБАХСКОЙ АО



1:250,000
1:250,000

КАРТА
1:250,000

У С Л О В Н Ы Е О Б О З Н А Ч Е Н И Я

КАРТА

СТРАНА
ГОРОДА
РАЙОН
УЕЗД
РАЙОН

ГОРОДА

Синий цвет
Красный цвет
Зеленый цвет
Синий цвет

ГОРОДА


Синий цвет
Красный цвет
Зеленый цвет
Синий цвет

ГОРОДА

Синий цвет
Красный цвет
Зеленый цвет
Синий цвет

Пояс: 1. 1:250,000
2. 1:250,000
3. 1:250,000
4. 1:250,000
5. 1:250,000
6. 1:250,000
7. 1:250,000
8. 1:250,000
9. 1:250,000
10. 1:250,000
11. 1:250,000
12. 1:250,000
13. 1:250,000
14. 1:250,000
15. 1:250,000
16. 1:250,000
17. 1:250,000
18. 1:250,000
19. 1:250,000
20. 1:250,000
21. 1:250,000
22. 1:250,000
23. 1:250,000
24. 1:250,000
25. 1:250,000
26. 1:250,000
27. 1:250,000
28. 1:250,000
29. 1:250,000
30. 1:250,000
31. 1:250,000
32. 1:250,000
33. 1:250,000
34. 1:250,000
35. 1:250,000
36. 1:250,000
37. 1:250,000
38. 1:250,000
39. 1:250,000
40. 1:250,000
41. 1:250,000
42. 1:250,000
43. 1:250,000
44. 1:250,000
45. 1:250,000
46. 1:250,000
47. 1:250,000
48. 1:250,000
49. 1:250,000
50. 1:250,000
51. 1:250,000
52. 1:250,000
53. 1:250,000
54. 1:250,000
55. 1:250,000
56. 1:250,000
57. 1:250,000
58. 1:250,000
59. 1:250,000
60. 1:250,000
61. 1:250,000
62. 1:250,000
63. 1:250,000
64. 1:250,000
65. 1:250,000
66. 1:250,000
67. 1:250,000
68. 1:250,000
69. 1:250,000
70. 1:250,000
71. 1:250,000
72. 1:250,000
73. 1:250,000
74. 1:250,000
75. 1:250,000
76. 1:250,000
77. 1:250,000
78. 1:250,000
79. 1:250,000
80. 1:250,000
81. 1:250,000
82. 1:250,000
83. 1:250,000
84. 1:250,000
85. 1:250,000
86. 1:250,000
87. 1:250,000
88. 1:250,000
89. 1:250,000
90. 1:250,000
91. 1:250,000
92. 1:250,000
93. 1:250,000
94. 1:250,000
95. 1:250,000
96. 1:250,000
97. 1:250,000
98. 1:250,000
99. 1:250,000
100. 1:250,000

АЗЕРБАЙДЖАНСКАЯ ССР — ПОЛИТИКО-АДМИНИСТРАТИВНАЯ КАРТА



«կղզյակ» (անկլավ), ամբողջությամբ հայտնվեց ԱդրՍԽՀ-ի ներքին տարածքում: Ինչ վերաբերում է «Քրդստանի գավառին», ապա վերջինս այդ կարգավիճակը պահպանեց մինչև 1929 թ. ապրիլի 8-ը, երբ լուծարվեց խորհուրդների 6-րդ համաադրբեջանական համագումարի որոշմամբ⁴⁸:

Այսպիսով, «Կարմիր Քրդստանի» ճարտարապետների մտահոգությունը բնավ էլ քուրդ ժողովրդի համար «մշակութային ինքնավարություն» ապահովելը չէր, այլ ԼՂԻՄ-ից և ՀՍԽՀ-ից տարածքների պարբերաբար զավթման միջոցով վերջիններիս տարանջատումը: Այդ մասին են վկայում նաև ԽՍՀՄ-ում 1920-40-ական թթ. հրատարակված պաշտոնական քարտեզները: Եվ եթե 1920-ական թթ. կեսերի քարտեզներում⁴⁹, ինչպես արդեն նշել ենք, ՀՍԽՀ-ն և ԼՂԻՄ-ն ունեն սահմանահատման բնդհանուր կետ Հազարու գետով (Գորիսի շրջանի Տեղ և Կոռնիձոր գյուղերի շրջանում), ապա արդեն 1930-40-ական թթ. քարտեզներում⁵⁰ ՀՍԽՀ-ի և ԼՂԻՄ-ի սահմանները զգալի չափով փոխված են և հայկական պետական երկու կազմավորումները հանրապետությունն ու ինքնավարությունը, տարանջատված են 6-8 կմ-անոց նեղ հողաշերտով՝ այսպես կոչված «Լաչինի միջանցքով»: Այս ամենը «լրացրեց» ԱդրՍԽՀ-ին նախկին Զան-

⁴⁸ Բաբայան Դ., Կարմիր Քրդստան. կազմավորման և լուծարման աշխարհաքաղաքական ասպեկտները, «21-րդ դար», Երևան, 2005, թիվ 4 (10), էջ 84: 1930 թ. մայիսի 25-ին հրապարակված ԱդրՍԽՀ Կենտգործկոմի որոշումով կազմավորվեց «Քրդստանի օկրուգ», որը գոյատևեց ընդամենը երկուսուկես ամիս (տե՛ս նույն տեղում, էջ 85):

⁴⁹ "Азербайджанская ССР", Большая Советская Энциклопедия (БСЭ), М., 1926, том 1, с. 640-641 (вставка), "ССР Армения", БСЭ, М., 1926, том 3, с. 416-417 (вставка).

⁵⁰ "Административная карта Нагорно-Карабахской АО" (Главное управление Геодезии и картографии при СНК СССР, 1939-1940), "Азербайджанская ССР - политико-административная карта", БСЭ, 2-ое изд., М., 1949, том 1, с. 434-435 (вставка).

գեգուրի գավառի արևելյան ընդարձակ հատվածի բռնակցումը, որի տարածքում՝ վարչական ձևախեղումների հետևանքով, 1929–1930 թթ. ստեղծվեցին Լաչինի, Ղուբաթլուի և Զանգեզանի շրջանները՝ ընդհանուր շուրջ 3340 քառ. կմ տարածքով:

Ինչպես վերը նշվեց, ԼՂԻՄ-ի վարչական սահմաններից ապօրինաբար դուրս թողնվեցին և ԱդրՍԽՀ Գյանջայի գավառում ներառվեցին պատմական Հյուսիսային Արցախի շուրջ երկու տասնյակ հայկական գյուղեր: Վերջիններիս բնակչությունն արդեն 1923 թ. աշնանից ԼՂԻՄ-ին միանալու համար պայքար ծավալեց: Աջակցություն չստանալով ադրբեջանական իշխանություններից, 1925 թ. գարնան սկզբին տեղի հայությունն իր բողոքի ձայնը ստիպված էր հասցնել միութենական բարձրագույն իշխանություններին: ԽՍՀՄ Կենտգործկոմ՝ Մ. Կալինինին, Անդրկենտգործկոմ՝ Ա. Ենուկիձեին, Ն. Նարիմանովին, Ս. Տեր-Գաբրիելյանին և Անդրկենտգործկոմի նախագահ Մ. Ցխակայային, ուղղված դիմումում «Գյանջայի գավառի լեռնային տեղամասի 9-րդ մասի շրջխորհրդի անդամները (թվով 160)», նշում են, որ Ղարաչինար (1200 բնակիչ), Ենգիքենդ (իմա՝ Նորաշեն, 650), Խարխափուր (540), Գյուլիստան (665), Գաղթուր (իմա՝ Ղահդուր, 240), Ներքին Աղջաքենդ (իմա՝ Ներքինշեն⁵¹, 1350), Վերին Աղջաքենդ (իմա՝ Վերինշեն, 1895), Բուզլուխ (540), Մանաշիդ (850), հայկական Բորիսի (Բիրյուսի, Հայ Պարիս, 1533), Էրքեջ (1300) գյուղերի⁵² հայ գյուղացիները հայտնվել էին այնպիսի ծանր վիճակում, որ անգամ ստիպված են դաշտային տարբեր աշխատանքներ կատարել հարևան թուրքերի համար: «Մեր ծանր դրության մասին հայտնելով կենտրոնական իշխանու-

⁵¹ Հետագայում բնակավայրը վերանվանվեց Շահումյան (ռուս.՝ Шаумяновск):

⁵² Նշված բնակավայրերը 1930-ական թթ. մտան ԱդրՍԽՀ Շահումյանի շրջանի մեջ:

թյուններին, – նշվում է դիմումում, – խնդրում ենք մեր շրջանը, որը տնտեսական, աշխարհագրական և պատմական առումով հանդիսանում է Ղարաբաղի բաղկացուցիչ մասը, միացնել Ինքնավար Ղարաբաղին, իսկ յայլաների և արոտավայրերի խնդիրը լուծել՝ հիմնվելով խորհրդային սահմանադրության և ԽՍՀՄ բոլոր ժողովուրդների իրավահավասարության սկզբունքի վրա»⁵³։ Հայ գյուղացիների այս խնդրագիր–դիմումը փոխանցվում է ՌԿ(բ)Կ կենտկոմի քաղբյուրո (պատճեն՝ ՌԿ(բ)Կ անդրերկրկոմ)։ Նույնպիսի բովանդակությամբ դիմում ներկայացվել է նաև ԽՍՀՄ Կենտգործկոմ⁵⁴։

Հայության կողմից բարձրացված խնդրի լուծման ընթացքի մասին 1925 թ. աշնանը հետաքրքրություն են ցուցաբերում ԽՍՀՄ Կենտգործկոմը և ԽՍՀՄ շրջանացման հանձնաժողովը։ 1925 թ. հոկտեմբերի 23–ին Անդրդաշնության (պատճեն՝ ԱդրՍԽՀ) ԿԳԿ–ներին ուղղված նամակում ԽՍՀՄ Կենտգործկոմի նախագահության քարտուղարությունը, քարտուղար Ա. Ենուկիձեի հանձնարարականով, խնդրում է ուշադրություն դարձնել ԱդրՍԽՀ Գյանջայի գավառի վերոնշյալ 11 հայկական գյուղերի լիազորված անձանց կողմից ՌԿ(բ)Կ կենտկոմ ուղղված՝ գյուղերը Լեռնային Ղարաբաղին միացնելու մասին, միջնորդությանը, և «անհապաղ տեղեկացնել, թե ժամանակին ինչ է կատարվել Անդրդաշնության և ԱդրՍԽՀ ԿԳԿ–ների կողմից»⁵⁵։

ԽՍՀՄ շրջանացման հանձնաժողովի անդամ և պատասխանատու քարտուղար Եզորովի կողմից 1925 թ. նոյեմբերի 12–ին Անդրդաշնության ԿԳԿ–ին ուղղված նամակում խնդրվում է տեղեկացնել, թե ինչ գործողություններ են ձեռնարկվել

⁵³ Վրաստանի ազգային արխիվ (ՎԱԱ), ֆ. 607, ց. 1, գ. 46, թ. 20 և շրջ.։

⁵⁴ Տե՛ս նույն տեղում։

⁵⁵ ՎԱԱ, ֆ. 607, ց. 1, գ. 46, թ. 18։

«ԱդրՍԽՀ Գյանջայի գավառի մի քանի գյուղերը ԼՂԻՄ–ին միացնելու միջնորդության հետ կապված»⁵⁶:

1925 թ. նոյեմբերի 23–ին ԱդրԿ(բ)Կ կենտկոմի նախագահությունը քննարկում և մերժում է ԼՂԻՄ–ին միանալու մասին «14 գյուղերի հայության» խնդրանքը՝ հետևյալ շինծու պատճառաբանությամբ. «Շրջանի միացումը կամ առանձնացումը կհանգեցնի նման միտումների ողջ Անդրկովկասում, ինչը կսրի ազգամիջյան հարաբերությունները»⁵⁷:

ԼՂԻՄ–ի տարածքային կորուստները շարունակվեցին նաև 1930–ական թվականներին: Ադրբեջանական իշխանությունների կողմից պարբերաբար իրականացվող վարչատարածքային փոփոխությունների արդյունքում ԼՂԻՄ–ից յուրացված գյուղերն իրենց հողատարածքներով անջատվում և կցվում էին արհեստականորեն ստեղծված հարևան շրջաններին: Ինչպես նշել ենք, հայկական Ողեր գյուղը փոխանցվեց ԱդրՍԽՀ Կարյագինոյի (հետագայում՝ Ֆիգուլի) շրջանին, բացի այդ, Հազարու գետի ձախ ափին գտնվող Հարար հայկական գյուղը վերանվանվեց «Ջաֆարաբադ» և միացվեց Լաչինի շրջանին: Վերջինիս անցավ նաև վերոհիշյալ «Մուսուլմանլարի» շրջանը՝ Քյոհնաշեն, Ճամբարախաչ, Իրչան, Այրակ (Ագարակ) և մի շարք այլ գյուղերով: Հայ ճարտարապետական մտքի գլուխգործոց Դադիվանքի (Խոթավանք) համալիրն իր հարակից տարածքներով անջատվեց

⁵⁶ Նույն տեղում, թ. 19:

⁵⁷ Տե՛ս Нифталиев И., Азербайджанская ССР в экспансионистских планах армян (20-е годы XX века), Баку, 2010, с. 140–141. Ուշագրավ է, որ ադրբեջանցի հեղինակի կողմից վկայակոչված այս փաստաթղթում ԼՂԻՄ–ին միավորվելու ցանկություն հայտնած հայկական գյուղերի թիվը նշված է 14, մինչդեռ վերոհիշյալ նախորդ վավերագրերում դրանց թիվը 11–ն է: Չենք բացառում, որ հետագա ամիսների ընթացքում 11 գյուղերի հայության պահանջին միացել է նաև հարևան Ղուշի–Արմավիր, Ղարաբուլաղ (հետագայում՝ Մարտունաշեն) և Գետաշեն բնակավայրերի հայությունը:

ԼՂԻՄ-ից և տրվեց Քյալբաջարի շրջանին, Մարտունու շրջանի Գյուլաբլու և Աբդալ գյուղերը միացվեցին Ադդամի շրջանին և այլն⁵⁸։ Պաշտոնական (ադրբեջանական) տվյալներով, արդեն 1933 թ. հունվարի 1-ի դրությամբ, ԼՂԻՄ-ի տարածքը կազմում էր 4431,7 քառ. կմ⁵⁹։

Այսպիսով, 1920–1930-ական թթ. ադրբեջանական իշխանությունների կողմից Ղարաբաղում իրականացված վարչատարածքային արհեստական վերաձևման արդյունքում ԼՂԻՄ-ից դուրս թողնվեցին և հարևան շրջաններին կցվեցին ինչպես բուն Լեռնային Ղարաբաղի գգալի հատվածներ (Վերին Խաչեն–Քարվաճառը, Գյուլիստանի հյուսիսային մասը՝ Շահումյանի շրջանը և Գետաշենի ենթաշրջանը, Դիգակի մի մասը՝ Ջաբրայիլը), այնպես էլ Հյուսիսային Արցախի և Գարդմանի հայաբնակ շրջանները⁶⁰։

Ամփոփենք, ՌԿ(բ)Կ կենտկոմի կովկասյան բյուրոյի պլենումի 1921 թ. հուլիսի 5-ի որոշման տրամաբանությամբ Լեռնային Ղարաբաղի ինքնավարության տարածքը պետք է կազմեր շուրջ 8000 քառ. կմ։ Սակայն, ի խախտումն այդ որոշման, ԼՂԻՄ-ը 1923–1924 թթ. կազմավորվեց միայն Լեռնային Ղարաբաղի մի մասում՝ մոտ 5000 քառ. կմ տարածքով։ Հետագա տարիներին Խորհրդային Ադրբեջանի իշխանությունները ԼՂԻՄ-ից շարունակաբար անջատեցին շուրջ 600 քառ. կմ ևս՝ մարզին թողնելով ընդամենը 4400 քառ. կմ տարածք։ Ավելին, ինքնավար մարզը «Լաչինի միջանցքով» արհեստականորեն մեկուսացվեց Խորհրդային Հայաստանից։

⁵⁸ Մկրտչյան Շ.Մ., Լեռնային Ղարաբաղ. Ադրբեջանի իրականացրած ցեղասպանության անատոմիան (1920–1988 թթ.), Ստեփանակերտ, 2003, էջ 74։

⁵⁹ Ст. в Социалистическое строительство АССР. Статистический сборник. Баку, Аз. УНХУ, 1935, էջ 9։

⁶⁰ Ст. в Манасян А., Карабахский конфликт. Ключевые понятия и хроника. էջ 40, 113։ Նաև՝ Нагорный Карабах в международном праве и мировой политике. Комментарии к документам. Том 2 /Ю.Г. Барсегов, отв. ред. А.О.Меликян/, Москва, 2009, էջ 225։

FORMATION AND TERRITORIAL LOSSES OF NKAO (THE 1920-1930s)

SUMMARY

The process of collapse of the Russian Empire, which started in 1917 continued in 1918. In april Transcaucasian Sejm declared the region as an independent federal republic, and in late May were proclaimed the Republic of Armenia, the Republic of Georgia and the East-Caucasian Muslm („Azerbaijan”) Republic, which acted as independent national states. In Karabakh (historical Artsakh) there was also tendency toward independence, which was declared by the first Congress of the Armenians of Artsakh (Karabakh) in July 1918. Until the mid of 1921 Nagorno-Karabakh was a separate administrative territorial unit, in fact a sovereign state formation; it had never been a member of the newly formed artitcal Azerbaijan state.

In early July 1921, by the decision of the Caucasian Bureau of the CC RCP (B) all the Nagorno-Karabakh as an autonomous region was illegally handed over to Soviet Azerbaijan. The authorities of the latter, however, did not hurry with the release of Nagorno-Karabakh as a regional autonomy. Only under severe political pressure of the Soviet leadership of Armenia and the Soviet Transcaucasian Federation (in particular A. Myasnikyan) Soviet Azerbaijan in the beginning of July 1923 finally declared the formation of the Autonomous Region of Nagorno Karabakh (ARNK); according to the new Soviet Constitution of 1937 - Nagorno-Karabakh Autonomous Region (NKAR). However, in violation of the above-mentioned decision of the Caucasian Bureau, the autonomous region has been

allocated only from the part of Nagorno Karabakh the rest of its territory artificially formed «Azerbaijani» districts - Kurdistan, Gyandja (arm. Gandzak), Kelbajar, Jabrayil, Lachin (arm. Berdzor) and others. Thus, from the entire territory of Mountainous Artsakh (Nagorno Karabakh), which was about 8000 square km., in 1923-1924 Azerbaijani authorities cut about 3,000 square km. In this case, however, the territorial losses were not over. According to the Constitution (the Regulations) of ARNK of 1924, where were mentioned also towns and villages included in its territory, the total area was up to 5,000 square km. However, in subsequent years, the Azerbaijani authorities periodically cut off from autonomous region about 600 square km territory with a predominantly Armenian population which was connected to neighboring areas. As a result - at the end of the 1930s the territory of Nagorno-Karabakh was only 4,400 square km. Moreover, the autonomous region was artificially cut off from Soviet Armenia with which it had had though small (approx. 6-8 km.) but a common border.

ОБРАЗОВАНИЕ НКАО И ЕЕ ТЕРРИТОРИАЛЬНЫЕ ПОТЕРИ (1920–1930–ЫЕ ГОДЫ)

РЕЗЮМЕ

Начавшийся в 1917 г. распад Российской империи продолжился в 1918 г. В апреле Закавказский Сейм объявил край независимой федеративной республикой, а уже в конце мая были провозглашены Республика Армения, Республика Грузия, а также Восточно–Кавказская мусульманская („Азербайджан“) республика, которые выступили как независимые национальные государства. В Карабахе (исторический Арцах) также склонились к независимости, которая и была объявлена на 1–ом съезде арцахских армян в июле 1918 г.

До середины 1921 г. Нагорный Карабах являлся самостоятельной административно–территориальной единицей, по сути – суверенным государственным образованием, и никогда не находился в составе искусственно образованного азербайджанского государства. В начале июля 1921 г. по решению Кавказского бюро ЦК РКП(б) весь Нагорный Карабах на правах автономной области был незаконно передан Советскому Азербайджану. Власти последнего, однако, не спешили с выделением Нагорного Карабаха в областную автономию. Лишь под жестким политическим давлением руководства Советской Армении и Советской Закавказской Федерации (в частности А. Мясникяна) Азербайджан в начале июля 1923 г. наконец то декларировал об образовании Автономной области Нагорного Карабаха (АОНК) (по новой Советской Конституции 1937 г. – Нагорно–Карабахская автономная область (НКАО)). Од-

ՀԱՍՏՀ-ի ԵՎ ԼՂԻՄ-ի ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿՈՐՈՒՄՏՆԵՐԸ 1923-1930-ական թթ.



ՀԱՍՏՀ-ից և ԼՂԻՄ-ից բռնագավառված տարածքները, որոնք 1923-1925թթ. րնդգրկվեցին այսպես կոչված «Քրդստանի գավառի» կազմում

ՀԱՍՏՀ-ից տարանջատված և Ադրբեյջան-ին բռնակցված մայսկին Ջանգեզուրի գավառի հարավ-արևելյան հատվածը

Նորաստեղծ ԼՂԻՄ-ից դուրս բողնված և Ադրբեյջան-ին բռնակցված Հյուսիսային Արցախի (Գյուլիստան-Գետաշեն) շրջանը՝ ավելի քան 1000կմ² տարածքով

1920-ական թթ. կեսից մինչև 1930-ական թթ. վերջը ՀԱՍՏՀ-ից (ՀԽՍՀ) և ԼՂԻՄ-ից Ադրբեյջան-ին (ԱԽՍՀ) բռնակցված տարածքները

Ադրբեյջան-ին 1921թ. բռնակցված Գարդմանի (Հայկական Գանձակ) տարածքը

нако, в нарушение вышеуказанного решения Кавбюро, автономная область была выделена только из части Нагорного Карабаха, на остальной же ее территории были искусственно образованы новые "азербайджанские" уезды и районы – Курдистанский, Гянджинский (арм. Гандзак), Кельбаджарский (арм. Карвачар), Джебраильский, Лачинский (арм. Бердзор) и др. Таким образом, от всей территории Нагорного Карабаха, которая составляла около 8000 кв. км., азербайджанскими властями только в 1923–1924 гг. было отрезано около 3000 кв. км. На этом, однако, территориальные потери не закончились. По Конституции (Положению) АОНК 1924 г., в которой были обозначены и входящие в ее территорию города и селения, общая площадь области составляла до 5000 кв. км. Однако в последующие годы азербайджанскими властями от автономной области периодически были отрезаны в пользу соседних районов еще около 600 кв. км территорий с преобладающим армянским населением. В результате этого – в конце 1930-ых годов территория НКАО составила всего 4400 кв. км. Более того – автономная область была искусственно отрезана от Советской Армении, с которой имела хоть и маленькую (ок. 6–8 км.), но общую границу.

ԱԿՍԵԼ ԲԱԿՈՒՆՑԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ
 ԶԱՆԳԵԶՈՒՐԻ ԳԱՎԱՌԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ
 ՀԱՅ-ԱՂԲԵԶԱՆԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԸ ՈՐՈՇՈՂ
 ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻՆ
 (1920-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐ)*

Անդրկովկասյան երեք հանրապետությունների՝ Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի, միջև գոյություն ունեցող տարածքային-սահմանային խնդիրները 1920–1921 թթ. այդ հանրապետությունների խորհրդայնացումից հետո առավել սուր բնույթ ստացան։ Իրենց սրությամբ առանձնանում էին Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության և Ադրբեջանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության միջև սուկա տարածքային-սահմանային խնդիրները, պայմանավորված հայկական մի շարք տարածքների նկատմամբ ադրբեջանական կողմի ոտնձգություններով։

Առաջին հայացքից թվում էր, թե Հայաստանի խորհրդայնացումը հող նախապատրաստեց խնդիրների արդարացի կարգավորման համար։ Խոսքն առավելապես վերաբերվում է 1920 թ. դեկտեմբերի 2-ին մի կողմից Ռուսաստանի ներկայացուցիչ Բորիս Լեգրանի, իսկ մյուս՝ ՀՀ կառավարության ներկայացուցիչներ Դրաստամատ Կանայանի (Դրո) և Համբարձում Տերտերյանի միջև երևանում ստորագրված համաձայնագրին, որի երրորդ

* Հղվածք պատրաստվել է ՀՀ ԿԳՆ Գիտության պետական կոմիտեի՝ գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորմամբ իրականացվող «13–6A402» ծածկագրով թեմայի ուսումնասիրության շրջանակներում։

հողվածով Խորհրդային Ռուսաստանը Խորհրդային Հայաստանի անբաժան տարածքներ էր ճանաչում Երևանի նահանգը՝ իր բոլոր գավառներով, Կարսի մարզի մի մասը, Ելիզավետպոլի նահանգի Զանգեզուրի գավառը, Ղազախի գավառի մի մասը, ինչպես նաև Թիֆլիսի նահանգի այն մասերը, որոնք Հայաստանի Հանրապետության տիրապետության տակ էին գտնվում մինչև 1920 թ. սեպտեմբերի 28-ը⁶¹։ Սակայն Խորհրդային Ռուսաստանը հավատարիմ չմնաց համաձայնագրի կետերին⁶²։

1921 թ. հոկտեմբերի 12-13-ին տեղի ունեցած հայ և ադրբեջանցի «պատասխանատու գործիչների» խորհրդակցության ժամանակ որոշվեց Զանգեզուրի գավառի տարածքում՝ երկու պետությունների միջև ժամանակավոր սահմանագիծ հաստատել։ Ըստ այդմ՝ Ադրբեջանի մաս համարվեցին այն տարածքները, որտեղ 1921 թ. ապրիլին անց էին կացվել տեղական խորհուրդների ընտրություններ, իսկ Հայաստանի տարածք՝ մինչև 1921 թ. հուլիսը Գ. Նժդեհի իշխանության ներքո գտնվող տարածքները⁶³։

Խորհրդային Ադրբեջանը քայլեր էր կատարում Խորհրդային Հայաստանից նոր տարածքներ բռնագավթելու նպատակով։ Այդ իրանականացվում էր սահմանային համաձայնագրերի կնքումից հետո առկա վեճերի «վերջնական» լուծման նպատակով՝ Անդրկովկասյան Դաշնության կենտգործկոմին կից ստեղ-

⁶¹ Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ. (քաղաքական պատմություն), փաստաթղթերի և նյութերի ժողովածու, խմբագրությամբ Գ. Ա. Գալոյանի և Վ. Ն. Ղազախեցյանի, Երևան, 2000, էջ 383-384։

⁶² Մանրամասն տե՛ս Խաչատրյան Կ., Բադալյան Գ., ՀՍԽՍՀ տարածքի և սահմանների ձևավորումը (1920 թ. դեկտեմբեր – 1922 թ. սկիզբ), «Հայոց պատմության հարցեր (գիտական հողվածների ժողովածու)», № 14, Երևան, 2013, էջ 178-185։

⁶³ Մանրամասն տե՛ս Սուքիասյան Ն. Կ., Զանգեզուրի գավառի բաժանումը 1921 թվականին. Զանգեզուրում Խորհրդային Հայաստանի և Խորհրդային Ադրբեջանի միջպետական սահմանի ձևավորման պատմությունից, «Վեմ», 2014, N 4, էջ 156-158։

ծված հանձնաժողովի շրջանակներում (դեկ.՝ Սարգիս Համբարձումյան, ում 1923 թ. մայիսի 14-ին փոխարինեց Ս. Կասյանը)⁶⁴:

Առանձին տարածքների պատկանելության շուրջ առկա տարաձայնությունների բարդության պատճառով հանձնաժողովին կից ստեղծվել և գործել են տարածքային ժամանակավոր հանձնաժողովներ: Դրանց շարքում իրենց կարևորությամբ առանձնանում էին 1923 թ. հոկտեմբերի 18-ին Գեորգի Ստուրուայի, և նույն թվականի նոյեմբերի 12-ին Սիլվեստր Թողրիայի կողմից ստեղծված հանձնաժողովները, որոնք նպատակ ունեին հարթել տարածաշրջանում լարվածության և բախումների հանգեցնող Զանգեզուրի և Քրդստանի միջև առկա վեճերը⁶⁵:

Այդ հանձնաժողովների աշխատանքներին՝ որպես ՀՍԽՀ ներկայացուցիչ, մասնակցել է նաև խորհրդահայ ականավոր արձակագիր Ակսել Բակունցը⁶⁶: Հանձնաժողովի աշխատանքների ընթացքի, առաջացած վեճերի ու խոչընդոտների, որոշումների ու սահմանագծման վերաբերյալ Բակունցի զեկուցումներից ու նամակներից կարելի է պատկերացնել, թե ինչ պայմաններում էր ընթանում հանձնաժողովի աշխատանքները, որ հարցերի շուրջ էին վեճերը և, վերջապես, ո՞րն էր պատճառը, որ մեծ

⁶⁴ Մանրամասն տե՛ս Սահակյան Ա., Հայաստանը Անդրկովկասյան Դաշնության կազմում (խանդավառ միավորումից մինչև անադմուկ բաժանում), Երևան, 2013, էջ 175-185:

⁶⁵ Նույն տեղում, էջ 176-177:

⁶⁶ Ա. Բակունցը մասնագիտությամբ գյուղատնտես էր: 1923-1924 թթ. նա խորհրդային Հայաստանի հողագործության ժողովրդական կոմիսարիատի Երևանի սերմնաբուծարանի կառավարչի օգնականն էր: 1924 թ. հոկտեմբերին մեկնել է Զանգեզուր՝ որպես գավառի գյուղատնտես, ապա հանդիսացել է գավառային գործադիր կոմիտեի հողագործության բաժնի վարիչ: 1926 թ. մարտին վերադարձել է Երևան՝ զբաղեցնելով Հողժողկոմատի գյուղվարչության գյուղատնտեսի, այնուհետև գյուղվարչության պետի տեղակալի պաշտոնները (տե՛ս Ղազախեցյան Վ., Ակսել Բակունցի գործունեությունը ՀՍԽՀ հողժողկոմատի կոլեգիայում (1925-1928 թթ.), «Բանբեր Հայաստանի արխիվների», 1979, N 2, էջ 90):

թվով հայկական տարածքներ գիջվում էին Խորհրդային Ադրբեջանին:

Հարցի առնչությամբ հետաքրքրական է Ա. Բակունցի՝ 1926 թ. հոկտեմբերի 18-ին ՀՍԽՀ հողագործության ժողկոմատի հողվարչությանն ուղղված գեկուցումը: Ջեկուցման մեջ հանձնաժողովի աշխատանքների մի շարք թերությունների շարքում ընդգծվում էր նաև այն, որ «հողհանձնաժողովը սահմաններն անցկացնելիս ի նկատի չէր առնում երկու կողմի հողերի քանակը: Այսինքն՝ թե այս կամ այն գյուղն ինչքան հող ունի, ինչ կապեր ունի հարևան շրջանների կենտրոնների հետ: Ստացվում էր այնպես, որ սահմանն անցկացնելու միակ հիմքը դա էթնիկական սկզբունքն էր, այսինքն՝ հայ գյուղերը մնացին Ջանգեզուրին, թուրք գյուղերն՝ Ադրբեջանին»⁶⁷:

Բնականաբար, ազգային սկզբունքը կարևոր զենք էր Խորհրդային Ադրբեջանի ձեռքին, քանի որ որոշ թուրքական գյուղեր սեպի նման խրվել էին հայկական գյուղերի միջև, և հնարավորություն էին ընձեռում Ադրբեջանի օգտին սահմանային վերաձևումներ կատարել: Այդ մասին է վկայում 1926 թ. նոյեմբերի 13-ին Անդրկենտգործկոմի սահմանագծման հանձնաժողովի գործունեության մասին Հայաստանի Ժողկոմխորհին ուղղված Ա. Բակունցի գեկուցագիրը, որտեղ պատկերավոր կերպով ներկայացվում է Խորհրդային Ադրբեջանի ներկայացուցիչների կողմից հայ և թուրք գյուղացիների միջև հարաբերությունները սրելու և թշնամանք սերմանելու նպատակով ծրագրված վեճերի առաջացումը⁶⁸:

⁶⁷ Բակունց Ա., Երկեր, հատոր IV, Երևան, 1984, էջ 482:

⁶⁸ Նույն տեղում, էջ 486-487:

Փաստերը ցույց են տալիս, որ չեն անտեսվել նաև մի շարք այլ պարագաներ (հատկապես տնտեսական գործոնը): Մասնավորապես, խոսելով 1924 թ. հուլիսի 11-ին կատարված սահմանազման մասին՝ 1926 թ. հոկտեմբերի 18-ին գրված նույն զեկուցագրում Ակսել Բակունցն արձանագրում է դրանում կատարված փոփոխության մասին, որը տեղի էր ունեցել թուրք գյուղացիների ցանկությամբ՝ հոգուտ Զանգեզուրի⁶⁹: Ասվածին լրացնելու են գալիս Հայաստանի ազգային արխիվում պահվող մի քանի զեկուցագրեր, որոնցում Զանգեղանի շրջանի աղբյուրաբանական գյուղերի գյուղացիները մի քանի անգամ դիմումներ են ուղղում Զանգեզուրի գավգործկոմին՝ խնդրելով ընդունել իրենց գավգործկոմի իշխանության տակ: Հաշվի էր առնվում այն հանգամանքը, որ գյուղացիները տնտեսապես կապված են Կապանի հետ, և իրենց 50 %-ը աշխատում է հանքերում⁷⁰:

Այս և նմանատիպ փաստերը կարող էին օգտագործվել Խորհրդային Հայաստանի իշխանությունների կողմից՝ առաջ քաշելու համար, այսպես կոչված, տնտեսական սկզբունքը: Սակայն, մյուս կողմից, 1923 թ. հուլիսին «Կարմիր Քրդստան»-ի ստեղծումը որոշակիորեն կաշկանդում էր Հայաստանի գործողությունները: Դա են փաստում Բակունցի զեկուցագրերում նշված մի շարք փաստեր: Այսպես, խոսելով սահմանների մասին՝ նա նշում է, որ Քրդստանի գյուղերի մասին ճշգրիտ տեղեկություններ չկան, այսինքն՝ հայտնի չէր ո՛չ նրանց բնակչության թիվը, և ո՛չ էլ հողերի չափը, ինչպես նաև նշված չէին հստակ սահմաններ⁷¹: Սա պատասխան է այն հարցին, թե արդյո՞ք եղել է հաստատուն սահմաններով, այսպես կոչված, «Կարմիր

⁶⁹ Նույն տեղում, էջ 486-487:

⁷⁰ ՀԱԱ, ֆ. 132, ց. 1, գ. 444, թ. 1-7 շրջ.:

⁷¹ Բակունց Ա., նշվ. աշխ., էջ 482-483:

Քրդստան»։ Վերջինս, իբրև քրդական ինքնավարություն, ադրբեջանական իշխանությունների կողմից ՀՍԽՀ-ի և ԼՂՀՄ-ի միջև ստեղծված և քրդերով բնակեցված տարածք էր, որը գոյություն է ունեցել 1923-1929 թթ.։ Փաստացի կազմավորելով քրդական գավառը՝ և՛ Մոսկվան, և՛ Բաքուն իրենց շահերն ու հեռահար նպատակներն ունեին⁷²։

Իր մեկ այլ գեկուցագրում՝ գրված 1926 թ. սեպտեմբերի 6-ին, Ա. Բակունցը խոսում է Տեղ և Խնածախ գյուղերի մասին, որոնց սահմանները 1926 թ. կատարվող ներքին հողաբաժանության ժամանակ դեռևս անորոշ էին⁷³։ Այս երկու սահմանամերձ գյուղերի շուրջ առկա վեճերը պարզորոշ կերպով արտահայտում էին Ադրբեջանի նկրտումները ռազմավարական և տնտեսական տեսանկյունից մեծ կարևորություն ունեցող սահմանամերձ շրջանների նկատմամբ։

1925-1927 թթ. Ա. Բակունցը մասնակցել է գավառների սահմանագծման հանձնաժողովի 6 նիստերի։ Մեծ կարևորություն ունեն նաև 1925 թ. դեկտեմբերի 17-ին Հողժողկոմատի կոլեգիայում⁷⁴ և նույն թվականի դեկտեմբերի 29-ին Զանգեզուրի գավգործկոմի նիստում⁷⁵ հանձնաժողովի աշխատանքի ընթացքի մասին նրա ներկայացրած գեկուցագրերը։

Տարածքային-սահմանային խնդիրները մասնակի հանգուցալուծվեցին 1929 թ. փետրվարի 18-ին գումարված Անդրդաշնության Կենտրոնական գործադիր կոմիտեի նախագահության

⁷² Բաբայան Դ., Կարմիր Քրդստան. կազմավորման և լուծարման աշխարհագրական ասպեկտները, «21-րդ դար», 2005, N 4, էջ 83-106։

⁷³ Բակունց Ա., նշվ. աշխ., էջ 477։

⁷⁴ Տե՛ս Ղազախեցյան Վ., Ակսել Բակունցի գործունեությունը ՀՍԽՀ հողժողկոմատի կոլեգիայում (1925-1928 թթ.), «Բանբեր Հայաստանի արխիվների», 1979, N 2, էջ 99։

⁷⁵ Տե՛ս Բեգլարյան Լ., էջեր Ակսել Բակունցի գյուղատնտեսական գործունեությունից, Երևան, 1969, էջ 21։

նիստում, որտեղ ընդունված որոշման համաձայն՝ ԱՍԽՀ Ջաբրայիլի շրջանին անցավ ՀԱԽՀ Կապանի շրջանի հարավ-արևելյան մի հատվածը՝ Շայֆլի, Գիրգիլի, Նաջաֆլար, Կարագյուլ, Չուխուր-Յուրդ, Վերին Քենլիկ, Թագաքենդ, Առաջին Քյալի, Ջանբար, Շարիկուն, Ադքենդ, Քյուլի, Գյուն-դշլախ, Փիրվեյսլի, Շուրունլի, Բուրջանլար, Սեիդլար, Ներքին Քուլակլի, Ղազանչի-Տուլու-Կիտյախ գյուղերը⁷⁶:

Նիստում որոշվեց նաև 1920-ական թթ. սկզբից լուծման սպառող մյուս տարածքների ճակատագիրը: Այսպես՝ որոշման համաձայն Դիլիջան-Ղազախ հատվածում 11659 դես.⁷⁷ հանձնվեց Ղազախի գավառին, իսկ 4000 դես.՝ Դիլիջանի գավառին: Դարալագյազ-Քրդստան հատվածում, «Արագեյար» արոտավայրերի շրջանում գտնվող 12000 դես. տարածքն ամբողջությամբ տրվեց Ադրբեջանին: Հայաստանի համար աննպաստ դասավորվեց նաև Լենինական-Ախալքալաք հատվածում առկա վեճը⁷⁸:

Ամփոփելով՝ նշենք, որ Ա. Բակունցի հաղորդած տեղեկությունները հարուստ նյութ են պարունակում Ջանգեգուրի գյուղերի, բնակչության կազմի, նրանց դրության վերաբերյալ, նաև թե ինչպես էին բնակիչներն արձագանքում սահմանագծման աշխատանքներին: Դրանք թույլ են տալիս լայն պատկերացում կազմել տվյալ ժամանակահատվածի սահմանային ձևափոխումների մասին:

⁷⁶ ՀԱԱ, ֆ. 112, ց. 1, գ. 267, թ. 78-79 (տեղանունների ճշգրտումը՝ Գեղամ Բաղալյանի):

⁷⁷ 1 դեսյատինը հավասար է 1.09 հեկտարի:

⁷⁸ ՀԱԱ, ֆ. 112, ց. 1, գ. 267, թ. 79 և շրջ.:

AKSEL BAKUNTS' PARTICIPATION AT THE ACTIVITIES
OF COMMITTEE DETERMINING THE ARMENIAN-
AZERBAIJANI BORDER AT THE TERRITORY OF ZANGEZUR
PROVINCE (IN THE 1920s)

SUMMARY

The Soviet Azerbaijan tried to obtain new territories at the expense of the Soviet Armenia. It was carried out within the central and local committees organized by the Central Executive Committee of the Transcaucasian Federation. The famous Armenian writer Aksel Bakunts also took part in these activities. His reports and letters are an important source to study the process of border demarcation between Soviet Armenia and Soviet Azerbaijan in the mid 1920s.

**УЧАСТИЕ АКСЕЛА БАКУНЦА В КОМИССИИ ПО
ОПРЕДЕЛЕНИЮ АРМЯНО-АЗЕРБАЙДЖАНСКОЙ
ГРАНИЦЫ НА ТЕРРИТОРИИ ЗАНГЕЗУРСКОГО УЕЗДА
(1920-ЫЕ ГОДЫ)**

РЕЗЮМЕ

Советский Азербайджан стремился овладеть новыми территориями за счет Советской Армении. Это осуществлялось в рамках решений центральных и местных комиссий, созданных Центральным Исполнительным Комитетом Закавказской Федерации. В работах комиссии принимал участие и знаменитый армянский писатель А. Бакунц. Письма и рапорты Бакунца являются важным источником для изучения процесса армяно-азербайджанского территориального разграничения в середине 1920-ых годов.

ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻՆ ՈՒՂՂՎԱԾ
ՆԱՄԱԿՆԵՐՆ ԻԲՐԵՎ 1930-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻ
ԽՈՐՀՐԴԱՀԱՅ ԱՌՕՐԵԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԵՏԱԶՈՏՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

Առօրեականության պատմությանը վերաբերող ուսումնասիրություններում օգտագործվում են բազմաբնույթ աղբյուրներ՝ արխիվային վավերագրեր, լուսանկարներ, անձնական բնույթի իշխանության մարմիններին ուղղված նամակներ և այլն: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ պատմագիտական ուսումնասիրությունների այս ուղղությունը սերտ կապի մեջ է հասարակագիտական այլ գիտությունների (սոցիոլոգիա, մշակութաբանություն, ազգագրություն, տնտեսագիտություն և այլն) հետ, այստեղ մեծապես օգտագործվում են նաև դրանց վերաբերող աղբյուրները՝ վիճակագրական տվյալներ, կենցաղի իրեր, տնտեսական գործունեության արդյունքներ, տարաբնույթ հաշվետվություններ և այլն: Առօրեականության պատմության ուսումնասիրություններում հատուկ մեթոդաբանությամբ օգտագործվում է նաև հարցազրույցը, որի տվյալները ևս յուրօրինակ աղբյուր են համարվում նշված ուսումնասիրությունների համար:

Խորհրդային Հայաստանի առօրեականության պատմության ամբողջական պատմագիտական հետազոտություններում անփոխարինելի աղբյուր են իշխանության մարմիններին ուղղված նամակները և դիմում-բողոքները: Այս փաստաթղթերն արտահայտում են հասարակական տրամադրությունների առավել ամբողջական պատկեր: Իշխանության մարմիններին նամակ գրելը ինքնանպատակ, հասարակության մեջ տարերայնորեն ձևավորված

սովորույթ չէր: Այս երևույթը 1920-ականներից արդեն հանդիսա-
նում էր հասարակական գիտակցության կառավարման հուսալի
միջոց, և այն, առաջին հերթին, խրախուսվում էր պետության կող-
մից: Իրենք՝ բուլշևիկները, պահանջում էին, որ ազգաբնակչությունն
իրեն հուզող հարցերի, մասնավորապես տեղական պաշտոնյանե-
րի կողմից կատարվող չարաշահումների մասին նամակներ ու բո-
ղոքներ ուղարկի, և սրանց մեծ մասին, որպես կանոն, արձագանք
էր լինում: Խորհրդային Հայաստանի Բանվորա-գյուղացիական
տեսչության ժողկոմատի՝ 1921 թ. փետրվար ամսի հրամաններից
մեկով կոմիսարիատին կից ստեղծվեց բողոքների բյուրո՝ բնակ-
չության բողոքները լսելու, և դրանց համապատասխան ընթացք
տալու նպատակով: Բողոքների բյուրոն պետք է ընդուներ «հայ-
տարարություններ և բողոքներ պաշտոնական անձանց կողմից
կատարված ապօրինի գործողությունների, իրավազանցություննե-
րի և զեղծարարությունների մասին»¹: Սրանով կոմունիստական
կուսակցությունը Հայաստանում ևս մասսայականացնում էր ազ-
գաբնակչության կողմից դիմումներ և բողոքներ գրելու պրակտի-
կան: Այս հանգամանքը, նույնպես, նմանատիպ փաստաթղթերին
տալիս է աղբյուրագիտական մեծ նշանակություն: Սրանցում
երևում են տեղական պաշտոնյաների կողմից կատարվող տարա-
բնույթ չարաշահումները, բյուրոկրատիզմը, մարդկանց ասլրում-
ները կենցաղային տարբեր հանգամանքների հետ կապված, մի
խոսքով՝ սրանք արտահայտում են հասարակական հարաբերու-
թյունների այն կողմերը, որոնք ավանդական պատմագրության
ուշադրությունից հաճախ դուրս են մնում:

¹ Տե՛ս Հակոբյան Ա., Հայաստանի բանգյուղտեսչությունը սոցիալիզմի համար
մղված պայքարում, Երևան, 1974, էջ 27:

Չի կարելի պնդել, թե այդ բողոք-նամակները միշտ արժանահավատ են իշխանությունների նկատմամբ իրական վերաբերմունքի արտահայտման տեսանկյունից: Այդուհանդերձ՝ դրանք արժեքավոր տեղեկություններ են պարունակում հասարակական մտածողության առանձին որակների, օրինաչափությունների վերաբերյալ: Սրա հետ կապված՝ առօրեականության պատմության առաջատար մասնագետներից մեկը՝ Նատալյա Պուշկարյովան, գրում է. «Պատմաբանը, ով իր առաջ պահպանված աղբյուրների միջոցով որոշակի ժամանակաշրջանի և որոշակի սոցիալական խմբի համար «տիպականի» վերականգման խնդիր է դնում, ջանում է բացահայտել բոլոր պատմական սուբյեկտների գործողությունների շարժառիթները, որոնց միջոցով փորձում է ավելի լավ հասկանալ նրանց»²: Դրանք վերհանելու համար կա մի կարևոր մոտեցում, որ պետք է կիրառի առօրեականության պատմության մասնագետ-պատմաբանը նման բնույթի աղբյուրների հետ աշխատանքում:

Հետազոտողի համար կարևորվում է ոչ միայն նամակներում կամ բողոքներում նկարագրվող փաստերի հավաստիությունը (հաճախ այն հնարավոր չէ ընդհանրապես բացահայտել), այլ՝ զգայական երանգները, որոնցով շարադրված է նամակը: Ն. Պուշկարյովայի խոսքերով. «Առօրեականության հետազոտողի աշխատանքը՝ ուրիշի մտքերի և բառերի մեկնաբանությունը, ուրիշի հուզական խոսքի «թարգմանությունն» է»³: Սա նշանակում է, որ աղբյուրի (տվյալ դեպքում՝ նամակի կամ դիմում-բողոքի) հեղինակի խոսքում շատ հաճախ արտահայտվում են նաև

² http://www.perspektivy.info/history/istorija_povsednevnosti_kak_napravlenije_istoricheskikh_issledovanij_2010-03-16.htm

³ http://www.perspektivy.info/history/istorija_povsednevnosti_kak_napravlenije_istoricheskikh_issledovanij_2010-03-16.htm

նրա մտավախություններն ու տագնապները, որոնց մասին նա չի խոսում:

Փորձենք ուրիշի զգայական խոսքի «թարգմանությունն» իրականացնել 1930-ական թթ. Խորհրդային Հայաստանի ներքին կյանքին վերաբերվող մի քանի փաստաթղթերում: Այսպես՝ 1937 թ. Խորհրդային Հայաստանի ժողովրդական դատավորներից մեկը՝ Ասատուր Ադամյանը, նամակ էր ուղարկել Հայկունկուսի կուսկոլեգիայի քարտուղար Պյոտր Կուզնեցովին՝ ընդդեմ իր հարևանուհի Մարգո Բաղդասարյանի: Նա, մասնավորապես, գրել էր. «Այս տարվա հուլիսի 3-ին նշված Մարգո Բաղդասարյանը, չնչին պատճառով վիճելով կնոջս հետ, փողոցային հայհոյանքներ ուղղելով նրա հասցեին՝ հրապարակային ձևով հայտարարում է, որ մեր ընտանիքը դաշնականների և հակահեղափոխականների ընտանիք է: Մարգո Բաղդասարյանի՝ նման անհիմն, սադրիչ հերյուրանքը, որ վայել չէ կուսակցության անդամին, նպատակ ունի վարկաբեկել ինձ՝ կուսակցականին, բոլշևիկին, ով սովետական իշխանությանը նվիրված քաղաքացի է, տասնյակ տարիներ զբաղեցրել է քննիչի, ավագ քննիչի և ժողդատավորի պաշտոններ: Այս ամենն ինձ ստիպեց բողոքել կուսվերահսկողության հանձնաժողովին և թախանձագին խնդրել, որ քննեն քաղաքացի Բաղդասարյանի գանգանքը»⁴:

Այստեղ հետաքրքիր է մի հանգամանք: Հեղինակը բողոքում է ոչ թե իր կնոջը հասցված անձնական բնույթի վիրավորանքների դեմ (բողոքի մեջ այս մասին ընդամենը հպանցիկ հիշատակվում է), այլ շեշտը դնում է քաղաքական բնույթի վիրավորանքների վրա: Նամակի հետագա տեքստում Ադամյանը ներկայացնում է իր հարուստ կուսակցական կենսագրությունը:

⁴ ՀԱԱ, ֆ. 91, ց. 2, գ. 680, թ. 3:

Ինչու՞: Պարզ է՝ նա վախենում է: Պահանջելով քննել նամակում նշված Բաղդասարյանի հանցանքը՝ նա ցանկանում է ապահովագրել իրեն, հեռացնել իրենից և իր ընտանիքից դաշնակցական, հակահեղափոխական լինելու կասկածը: Չէ որ 1937 թ. քաղաքական բռնաճնշումների ժամանակ ուժային կառույցների անցանկալի ուշադրության կենտրոնում կարող էր հայտնվել ցանկացած մարդ, և նույնիսկ այսօրինակ վեճերը կարող էին դա խթանել: Այս նամակից առօրեականության պատմության մասնագետը կարող է հիմնավոր եզրահանգումներ անել հեղինակի՝ նամակ գրելու շարժառիթների մասին: Նամակը գրել նրան ստիպել է ոչ թե կենցաղային սովորական վեճը՝ իր կնոջ և հարևանուհու միջև, այլ՝ ընտանիքը և իրեն պաշտպանելու ձգտումը:

Արխիվային նյութերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ 1930-ական թթ. իշխանության մարմիններին նամակներ գրելու պրակտիկան սեփական անձը պաշտպանելու մեծ նշանակություն ուներ: Մարդիկ գրում էին վերև, որպեսզի ցույց տան իրենց հավատարմությունը կոմկուսին, ապացուցեն «ժողովրդի թշնամիների» բացահայտմանն աջակցելու իրենց պատրաստակամությունը, որպեսզի չդառնան մատնության զոհ. մարդիկ շատ հաճախ իրենք էին նախահարձակ լինում, մատնում հարևաններին, բարեկամներին և այլն: Իշխանության մարմիններին ուղարկվող նամակները բացահայտում են նաև այլ շարժառիթներ:

Հաջորդ օրինակը նույնպես վերաբերում է 1930-ականների քաղաքական բռնաճնշումներին: Նամակի հեղինակը Երևան քաղաքի Աբովյան փողոցի 93 տան նկուղի բնակիչ մի ինժեներ է, որը նույնպես բողոքում է իր հարևաններից: Սակայն կան էական երկու տարբերություններ: Առաջին՝ նրա հարևաններն արդեն ձերբակալված են իբրև «ժողովրդի թշնամիներ», այսինքն՝

նամակի նպատակը նրանց մատնելը չէ: Երկրորդ՝ նամակում
 մատնանշելով ձերբակալվածների ընտանիքի անդամների բնա-
 կարանային բարվոք պայմանները՝ իմիջիայլոց, նա նկարագ-
 րում է այն ծանր, անտանելի պայմանները, որոնց մեջ նա ապ-
 րում է նույն շենքի նկուղային հատվածում: Որպես «ազնիվ» կո-
 մունիստ, իրավունքներ ներկայացնելով իր վերնի սենյակների
 հանդեպ, նամակագիրը ենթադրությունների տեղիք է տալիս:
 Հասարակական հարաբերությունների առավել ամբողջական
 պատկեր ստանալու նպատակով հետազոտողը կարող է նաև
 այստեղ հարց տալ. արդյոք այս ինժեներն ինքը մասնակցություն
 չի՞ ունեցել իր հարևանների «մերկացմանը»: Հարցի պատասխա-
 նը, այս դեպքում, ցավոք, չի երևում, սակայն հետագա զգայա-
 կան նրբերանգները, որոնք հեղինակն օգտագործում է
 տեքստում, ավելի են համոզում, որ նա շատ անհամբեր է հար-
 նաններին վտարելու և նրանց սենյակը զբաղեցնելու հարցում:
 Այսպես՝ նա գրում է. «Ես դիմում եմ տնային վարչություն, բայց
 ինձ, *պատկերացնում ե՞ք* (ընդգծումը մերն է - Գ. Ժ.), պատաս-
 խանում են, որ դիմումս բավարարելու համար նրանց անհրա-
 ժեշտ է Կենտկոմի թույլտվությունը»: Այսինքն՝ նա տարակու-
 սում էր, որ «Ժողովրդի թշնամիների» բնակարանը բռնագրավե-
 լու, նրանց ընտանիքները վտարելու համար անհրաժեշտ է
 պահպանել պաշտոնական ձևականությունները: Այս մի բառով
 հեղինակն արտահայտում է այդ ժամանակաշրջանին բնորոշ մի
 իրողություն, որը հաստատվում է այլ նամակներով և փաս-
 տաթղթերով. քաղաքական հետապնդումների ժամանակ բռնա-
 դատվածների ընտանիքի անդամների նկատմամբ բազմիցս եղել
 է խտրական, բյուրոկրատական վերաբերմունք տեղական իշ-
 խանության մարմինների կողմից:

Նշենք, որ անձնական, շահադիտական նկատառումներով գրվող նամակները շատ տարածված էին 1930-ականներին: Դա պայմանավորված էր այն հանգամանքով, որ նրանց մատնության գոհերի գործերը, որպես կանոն, օբյեկտիվ քննության չէին արժանանում, ինչը նրանց մոտ կարող էր առաջացնել անցանկալի մարդուց ազատվելու գայթակղություն: Հենց այս պատճառով էր, օրինակ՝ կալանավոր Մուշեղ Խլոյանը բացատրում իր ձերբակալությունը: Նրան ՀԿԿ 1-ին Աղասի Խանջյանի սպանության կապակցությամբ հակախորհրդային արտահայտություններ անելու մեղադրանք էր առաջադրվել 1936 թվականին: Կուսակցության կենտկոմին ուղարկած իր դիմումում մեջ նա գրել էր. «Այս մասին մատերիալը տված են լինում մեր գյուղացի մի քանի անձնավորություններ, որոնք ունեին ինձ հետ անհատական, անձնական թշնամություն, որը գոյացել էր կոլխոզային աշխատանքների հողի վրա, և այդ անձնավորությունները դեռ շատ վաղուց համախմբված աշխատում էին իմ նկատմամբ դավադրություններ պատրաստել, որը միայն նրանց հաջողվեց այն ժամանակ, երբ Խանջյանը կատարեց ինքնասպանություն»⁵: Նշենք, որ Խլոյանի վարկածը, որ հենց իր նշած գյուղացիներն են տվել «մատերիալը», դեռ ստուգման կարիք ունի: Այդուհանդերձ, նրա հայտարարությունը վկայում է այն փաստը, որ շահադիտական նպատակներով իշխանության մարմիններին գրվել են վարկաբեկիչ նամակներ ու բողոքներ:

Իշխանության մարմիններին ուղղված նամակները չունեին բացառապես ինքնապաշտպանվելու կամ սեփական նեղ անձնական շահերին հետամուտ լինելու շարժառիթներ: Սրանք շատ հաճախ գրվում էին այնպիսի ոճով, որ դժվար է միանգամից

⁵ Նույն տեղում, գ. 89, թ. 187:

հստակեցնել նամակի հեղինակի ակնկալիքները կամ այն գրելու նպատակը: Օրինակ՝ իր անկեղծությամբ աչքի է ընկնում Հոփսիմե Մկրտիչյանի՝ Թիֆլիսի վերստուգիչ հանձնաժողովին ուղարկված դիմումը, որը պետք է ուղարկվեր Երևան: Այստեղ նա հանգամանորեն ներկայացնում է իր և երեխաների իրավագուրկ վիճակը ամուսնու հոր տանը, սկեսրայրի, սկեսրոջ և ամուսնու կողմից անընդհատ կրկնվող հալածանքները, իր և երեխաների չքավոր վիճակն այն դեպքում, երբ ամուսինն «իր մոր համար առնում է ոսկեղեն, և այս րոպեին նրա մայրը ունի մոտ 2-3 հազար ռուբլու ոսկի և մարգարիտ»⁶: Ըստ էության՝ դիմումը կոնկրետ խնդրանք չի ներկայացնում, սակայն տեքստից կարելի է հասկանալ, որ կինը պայքարում է իրավագուրկ վիճակից դուրս գալու համար: Ամբողջ դիմումն իրենից ներկայացնում է կենցաղային անտանելի պայմաններից հյուծված կնոջ զգացմունքների մի իսկական հեղեղ, որ ավելի շատ կարելի է որակել որպես անկեղծացում, քան՝ որևէ պահանջի ներկայացում:

Անշուշտ, այս նամակը Հայաստանի կոմկուսին նույնիսկ ընտանեկան դժբախտությունների ժամանակ ապավինելու խոստն օրինակ է, ինչն այդ ժամանակաշրջանի բացառիկ իրողություններից էր: Ընդ որում՝ այս նվիրվածությունը պայմանավորված էր առավելապես կուսակցության իրականացրած գաղափարական աշխատանքով, որի գլխավոր նպատակը ազգաբնակչության մեջ վստահություն ստանալն էր: Քննարկվող ժամանակաշրջանին վերաբերվող բազմաթիվ նամակներ են պահպանվել, որտեղ կանայք կուսակցական մարմիններին խնդրում էին վերադարձնել իրենցից հեռացած ամուսիններին, շատերը

⁶ Տե՛ս նույն տեղում, գ. 340, թ. 98-99:

խնդրում են կարգի հրավիրել իրենց տարաբնույթ կենցաղային ճնշումների ենթարկող հարազատներին և այլն:

Հատուկ ուշադրության արժանի են նաև, այսպես կոչված, զգոն քաղաքացիների նամակները: Սրանք առանձնանում են իրենց գրելաոճով: Գրեթե բոլորի մեջ գովեստի շոայլ խոսքեր են պետության և կուսակցության հասցեին, և սրանց մեջ պարտադիր առկա են հավաստիացումները սեփական նվիրվածության, կուսակցության գործին անշեղ ու անվերապահ հավատարմության վերաբերյալ: Այս կարգի նամակները կարող են դիտվել և՛ որպես մատնագրեր, և՛ որպես սեփական քաղաքական գրագիտությունն ապացուցելու միջոց (ինչը կուսակցականին բնութագրող բավականին կարևոր հատկանիշ էր տվյալ ժամանակաշրջանում): Երևանի բնակիչներից մեկը՝ ոմն Սարգիս Իսկանդարյան, 1936 թ. կուսակցության վերստուգիչ հանձնաժողովին գրած նամակում պատմում է հարևանների մասին: Անդրադառնալով իր հարևան, կոմունիստ՝ Արամայիս Եղիազարյանին, նշում է, որ վերջինս բակի գործերին չի խառնվում, որպեսզի «խաթրին չդիպչեն»: Ի թիվս հարևանի մասին այլ տեղեկությունների՝ մատնագրում նա պատմում է նաև, թե ինչպես է Արամայիսի կինը խնդրում, որ նա պատից իջեցնի Ստալինի մեծադիր նկարը: «Արամայիս ջան, քեզ շատ եմ խնդրում, այս շան նկարը ոչնչացնես, գրողը սրան տանի, որ կողմը որ անցնում եմ, շան աչքերով ինձ հետևում է ... Արամայիս ջան, հոգուդ մեռնեմ, ճղճղի, զցի դեն, շատ եմ վախում դրանից: ... Եվ Արամայիսը, որպեսզի Մանյան «չվախենա», ընկեր Ստալինի նկարը պատից իջեցնում, պատառոտում և դեն է շպրտում ...», - գրված է դիմումի մեջ⁷: Նմանատիպ նամակների հեղինակները, որպես կանոն,

⁷ Նույն տեղում, գ. 656, թ. 15:

իրենց հաճախակի բանասարկություններն ու մատնությունները հիմնավորում էին իրենց կուսակցական «խղճի» թելադրանքով, ինչպես, օրինակ՝ կոմկուսի անդամ Մացո Նահապետյանը, ով, իր կուսընկերների մասին տեղեկություններ հաղորդելով, նամակի մեջ ավելացրել էր, որ «չի կարողանում լռել, լինել քաղաքական վախկոտ» և նամակը գրել նրան ստիպել են իր «կուսակցական խիզախությունն ու խիղճը»⁸:

1930 թ. Հայաստանի կոմունիստական կուսակցության կուսակցության երիտասարդական կազմակերպության (ՀԼԿԵՄ) անդամներից մեկի՝ Հայ կոմկուսի կենտկոմին ուղղված երկարաշունչ նամակի առարկան կուսակցությունից օգնություն ստանալու խնդրանքն է: Այս խնդրանքը նամակի հեղինակը համեմել է իր դառը կենսագրության մանրամասներով, նախկին կառավարությունից իր կրած զրկանքների նկարագրությամբ, փեսայի տանը (որտեղ ապրում է փոքր քրոջ հետ) իր իրավագուրկ վիճակով, բայց, որ ամենակարևորն է, նամակի բովանդակության մեծ մասը գովեստի շոայլ խոսքեր են կոմունիստական-բոլշևիկյան կուսակցության, նրա առաջնորդ Լենինի, սոցիալիզմի գաղափարների հասցեին: Ընդ որում, դատելով նամակից՝ հեղինակը սովորական գյուղացի երիտասարդ է, ով, ելնելով իր կյանքի հանգամանքներից, կիսատ է թողել ուսումը: Սակայն աչքի է զարնում նրա խանդավառությունը՝ փայլել կուսակցական-քաղաքական գիտելիքների տիրապետմամբ: Լավ յուրացնելով կոմկուսի կողմից քարոզվող և խրախուսվող պաթետիկ ոճը՝ նույն այս պաթոսով նա իր նամակում գրում է. «Մեր զարգացման ու փառավոր կյանքի հասնելու ուղին է մեր երկրում ինդուստրացման իրագործումը, կապիտալիստական տարրերի ոչնչացումը՝ որպես դասակարգ: Եվ ամե-

⁸ Նույն տեղում, ֆ. 1, ց. 17, գ. 87, թ. 149:

նագլխավորը՝ կոլեկտիվացման արագ թափի իրագործելի հաջողությունները: Եվ այս բոլորի միաձուլությունն ու խմբավածությունը պրոլետարիատի կոմունիստական կուսակցությունն ու նրա նվիրված ստեղծողը, որն ասել է. ոռոգում+էլեկտրոֆիկացիա=սոցիալիզմին: Մենք՝ այս բոլորս, գինված սոցիալիզմի անժանգ գենքերով և անհաշտ ատելությամբ դեպի մեր դասակարգային բոլոր գոյնի թշնամիները, համախմբված Լենինի բարձր ու ինտերնացիոնալ դրոշի տակ, կառուցում ենք սոցիալիզմ»⁹:

Խորհրդային տարիներին պետական և կուսակցական մարմիններին ուղարկված նամակները հստակ խմբավորել հնարավոր չէ: Մարդուն գրել նամակ կարող էր ստիպել բոլոր քննարկված դրդապատճառների միասնությունը, այսինքն՝ մարդը ցանկանար և լուծում տար իր անձնական խնդրին՝ և՛ փայլել իր գիտելիքներով, և՛ հաճոյանալ կուսակցությանը կամ պետական մարմնին, և՛ դրսևորել «քաղաքացիական գիտակցություն»: Աղբյուրների նշյալ տեսակի հետազոտելու նշանակությունը, այդուհանդերձ, շատ մեծ է, որովհետև այս նամակներում արտացոլված առօրեական տրամադրությունները, ձգտումները, դժգոհությունները շատ կարևոր տեղեկություն են տալիս տվյալ ժամանակաշրջանի կյանքի, բարքերի, մտածողության առանձնահատկությունների մասին, ինչն էլ առօրեականության պատմության համար ուսումնասիրության նյութ է հանդիսանում:

⁹ Նույն տեղում, ց. 10, գ. 57, թ. 111:

**THE LETTERS ADDRESSED TO THE AUTHORITIES AS THE
SOURCES OF THE INVESTIGATION OF THE SOVIET
ARMENIAN EVERYDAY LIFE HISTORY IN THE 1930 s.**

SUMMARY

The article is devoted to the importance of the letters sent to the authorities by ordinary communists and common people for the everyday life research of Soviet Armenia in the 1930s. These materials are particularly of great importance because they depict human emotions and feelings, their attitude to the problems they are worried about as well as everyday matters. The letters provide wide opportunities of investigation for everyday life historians, who can reveal historically vital events by means of corresponding methods of investigation and represent them from quite a different angle. Several approaches which are used to reveal the motives of writing letters and expectations from the authorities are represented in the article in a sample of a letter.

АДРЕСОВАННЫЕ К ОРГАНАМ ВЛАСТИ ПИСЬМА –
КАК ИСТОЧНИКИ ИССЛЕДОВАНИЯ ИСТОРИИ
ПОВСЕДНЕВНОСТИ СОВЕТСКОЙ АРМЕНИИ
1930-ЫХ ГОДОВ

РЕЗЮМЕ

В статье рассматривается вопрос важности писем рядовых коммунистов и простых людей в исследованиях на тему повседневности Советской Армении 1930-ых годов. Этим материалам придается большое источниковедческое значение потому, что в них наглядно выражены эмоциональные переживания людей, их отношение к повседневным проблемам. Материалы создают широкие возможности исследования для историка по теме повседневности, который по этим источникам раскрывает важные реалии исторической эпохи. На примере отдельных писем в статье представляются некоторые исследовательские подходы, которые применяются для изучения мотивов написания писем и для выявления тех ожиданий, которые люди связывали с властями.

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՌԱԶՄԱԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐԻ
ԶԱՐԳԱՅՄԱՆ ԱՌԱՋՆԱԶԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ
ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ՀԵՏՊԱՏԵՐԱԶՄՅԱՆ
ԱՌԱՋԻՆ ՏԱՄՆԱՄՅԱԿՆԵՐԻՆ
(1945–1960–ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐ)

Հայրենական մեծ պատերազմի ավարտից անմիջապես հետո ԽՍՀՄ ղեկավարությունը քայլեր ձեռնարկեց երկրի տնտեսությունը վերականգնելու, այն խաղաղ հիմքերի վրա փոխադրելու ուղղությամբ: «Սպառազինության արտադրանքի կրճատման կապակցությամբ արդյունաբերության վերակառուցման միջոցառումների մասին» ԽՍՀՄ Պաշտպանության պետական կոմիտեի 1945 թ. մայիսի 26–ի որոշումով վերակառուցման էր ենթակա նաև երկրի ռազմապաշտպանական արդյունաբերության ոլորտը: Նախատեսվում էր մի շարք ձեռնարկությունների փոխադրումը քաղաքացիական արտադրանքի ամբողջական կամ մասնակի արտադրությանը¹: Իհարկե, դա չէր վերաբերվում ռազմաարդյունաբերական համալիրի (ՌԱՀ) այն ոլորտներին, որոնք ներգրավված էին միջուկային զենքի, հրթիռազենիթային սպառազինության և ռադիոլուկացիոն նորագույն տեխնիկայի ստեղծման աշխատանքներում: Այդ սպառազինության կատարելագործմանն էին միտված ԽՍՀՄ կառավարության 1946 թ. մի շարք որոշումները. մայիսի 13–ի՝ «Ռեակտիվ սպառազինության հարցերի մասին», հուլիսի 10–ի և օգոստոսի 24–ի՝ ռադիոլուկա-

¹ См. и Симонов Н. С., Военно-промышленный комплекс СССР в 1920–1950-е годы. Темпы экономического роста, структура, организация производства и управление. Москва, 1996, էջ 194:

ցին սւրդյունաբերության զարգացման մասին²: Արդեն 1950 թ. խորհրդային առաջին «Ռ-1» տակտիկական հրթիռներն ընդունվեցին սպառազինության բանակում և դրվեցին մարտական հերթապահության:

Նշված որոշումները խթանեցին հետպատերազմյան առաջին տարիներին ԽՍՀՄ-ում, այդ թվում՝ խորհրդային Հայաստանում, սարքաշինության, էլեկտրոնային, էլեկտրամեխանիկական, ռադիոտեխնիկական գիտական ուղղությունների, նաև արտադրության այլ ճյուղերի զարգացումը: Ինչ վերաբերում է «ատոմային ծրագրին», ապա արդեն 1949 թ. օգոստոսին տեղի ունեցավ խորհրդային առաջին ատոմային ումբի հաջողված փորձարկումը:

Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտով միջազգային լարվածությունն աշխարհում ամբողջությամբ չլիցքաթափվեց: Միջազգային հարաբերություններում ձևավորվող Յալթա-Պոտսդամյան նոր համակարգը չէր կարող արագ փոփոխվող աշխարհի կայունության ամուր երաշխիք հանդիսանալ: ԽՍՀՄ ռազմավարական հավակնությունները Գերմանիայում, Արևելյան Եվրոպայում և Բալկաններում, Մերձավոր Արևելքի տարածաշրջանում շահերի լուրջ բախում առաջացրեցին ԱՄՆ-ի և Արևմուտքի հետ նրա հարաբերություններում:

Ռազմաքաղաքական երկու հզոր դաշինքների՝ ՆԱՏՕ-ի և «Վարշավայի պայմանագրի կազմակերպության» ձևավորումով սառը պատերազմը վերջնականապես մտավ «սպառազինության մրցավազք»-ի, առաջին հերթին՝ միջուկային և հոթիոային զենքի, գերլարված շրջափուլ: Հակադիր դաշինքների առաջա-

² Տե՛ս նույն տեղում, էջ 233, 254: Նաև՝ Быстрова И. В., Советский военно-промышленный комплекс: проблемы становления и развития (1930–1980-е годы), Москва, 2006, էջ 559:

տար երկրներ հանդիսացող ԱՄՆ-ում և ԽՍՀՄ-ում սկսվում են վերջնականապես ձևավորվել ռազմաարդյունաբերական համալիրները, այն տեսքով, որը բնորոշ էր 1950–1980-ական թվականների ՌԱՀ-երին: Ռուսաստանցի հետազոտող Ա. Բեզբորոդովն իրավացիորեն նկատում է, որ հետպատերազմյան տասնամյակներին իր ձևավորմամբ և կայուն զարգացմամբ խորհրդային ՌԱՀ-ը «պարտական էր» աշխարհում ընթացող ռազմատեխնիկական հեղափոխությանը, սառը պատերազմի պայմաններում քաղաքական երկու հակադիր համակարգերի միջև ընթացող պայքարին³:

Միջազգային լարվածության աճի նոր միտումները կողմերից պահանջում էին ռազմական ծախսերի հաստատուն ավելացում, ռազմաարդյունաբերության հետագա ծավալում և զարգացում: Ուստի հետպատերազմյան առաջին տարիների խորհրդային տնտեսության ապառազմականացման և նրանում ռազմապաշտպանական ծախսերի նվազեցման միտումները կարճ տևեցին՝ մինչև 1949 թ., երբ աշխարհաքաղաքական նոր իրողությունները (Բեռլինյան ճգնաժամ, ՆԱՏՕ-ի կազմավորում, 1950–1953 թթ. Կորեական պատերազմ և այլն) խորհրդային դեկավարությանը ստիպեցին արագացնել ռազմական ծրագրերի իրականացումը, ավելացնել ռազմական արտադրությունը: Հայտնի է, օրինակ, որ Կորեական պատերազմի տարիներին ԽՍՀՄ-ը մեծածավալ ռազմական օգնություն էր տրամադրում Կորեայի Ժողովրդա-դեմոկրատական հանրապետությանը:

1950-ական թթ. սկզբից ԽՍՀՄ-ում արձանագրվում է ռազմական ծախսերի և ներդրումների հաստատուն աճ, միջոցները

³ St'u Безбородов А. Б., Власть и ВПК в СССР (середины 40-х – середины 70-х годов). «Сталин и холодная война», Москва, 1997, էջ 94–95:

հիմնականում շարունակում էին ուղղվել «ատոմային ծրագրի» իրականացմանը, ռեակտիվ տեխնիկայի, ինքնաթիռների, ռադիոլուկացիոն համակարգերի, հրթիռագենիթային սպառազինության կատարելագործմանն ու սերիական արտադրությանը։ Դա ապահովելու նպատակով խորհրդային ղեկավարությունը խնդիր դրեց 1951–1955 թթ. ստեղծել արտադրական հավելյալ հզորություններ, վերակառուցել գործարանները, շարունակել նոր արտադրամասերի շինարարությունը և այլն⁴։

ԽՍՀՄ-ում ռազմական ծախսերի և արտադրության նշանակալի կրճատում արձանագրվեց միայն խորհրդային առաջնորդ Ի. Ստալինի մահից հետո՝ 1953 թ., երբ ավարտվեց նաև Կորեական պատերազմը։ 1954–1958 թթ. խորհրդային երկրի համար դարձան ռազմական ծախսերի կրճատման բացառիկ տարիներ. այդ շրջանում դրանք կրճատվեցին մինչև 1 մլրդ ռուբլիով, զուգահեռ կրճատվեց նաև խորհրդային բանակի ու ռազմական նավատորմիղի անձնակազմը՝ մինչև 3 մլն մարդով⁵։ Ռազմական ոլորտի հերթական «լիցքաթափումը», սակայն, դարձյալ կարճ տևեց։

Դեռևս 1953–1955 թթ. խորհրդային ղեկավարությունը սկսել էր մշակել «սոցիալիստական ճամբարի» երկրների պաշտպանական արդյունաբերության զարգացման միասնական պլանի և սպառազինման միասնական համակարգի ստեղծման ծրագիրը։ Սկսած 1955 թ., երբ, ի պատասխան 1954 թ. Գերմանիայի դաշնային հանրապետության՝ ՆԱՏՕ-ի անդամ դառնալու,

⁴ St'e Bystrava И. В., Военно-экономическая политика СССР: от «демилитаризации» к гонке вооружений, «Сталинское десятилетие холодной войны: факты и гипотезы», Москва, 1999, էջ 182:

⁵ St'e Bystrava И. В., Советский военно-промышленный комплекс: проблемы становления и развития (1930–1980-е годы), էջ 252–253:

ԽՍՀՄ-ի նախաձեռնությամբ և գլխավորությամբ կազմավորվեց սոցիալիստական երկրների «Վարշավայի պայմանագրի կազմակերպություն» ռազմաքաղաքական դաշինքը, ընդլայնվեցին խորհրդային ռազմական առաքումներն այդ երկրներ: Խորհրդային գաղտնի փաստաթղթերում դրանց մասին տեղեկատվությունը սկսեց նշվել առանձին տողով՝ «այդ թվում ժողովրդա-դեմոկրատական երկրների համար» ձևակերպմամբ: Նույն տարիներին ԽՍՀՄ-ը ձեռնամուխ եղավ սոցիալիստական մի շարք երկրների հակաօդային պաշտպանության (ՀՕՊ) միասնական համակարգի ստեղծմանը: 1958 թ. դրանք սպառազինվեցին խորհրդային զենիթահրթիռային «Ս-75», «Կուբ», «Կրուգ» համակարգերով⁶: Նշենք, որ ռազմական նորագույն այս տեխնիկայի արտադրության մեջ ներգրավված էին Խորհրդային Հայաստանի մի քանի ձեռնարկություններ, որտեղ պատրաստվում էին լրակազմ սարքեր և հանգույցներ⁷:

1950-ական թթ. սկզբից ԽՍՀՄ-ը սկսել էր խոշոր դեր խաղալ նաև զենքի վաճառքի համաշխարհային շուկայում: Տարեցտարի աճում էին նրա կողմից սպառազինության մատակարարումները «երրորդ աշխարհի» զարգացող երկրներ, այդ թվում Սիրիա, Իրաք, Եգիպտոս, Հնդկաստան, Վիետնամ, Հյուսիսային Կորեա, Կուբա, Հարավային Աֆրիկայի երկրներ և այլն:

Խորհրդային նոր առաջնորդ, ԽՄԿԿ Կենտկոմի առաջին քարտուղար Ն. Խրուշչովի օրոք (1953–1964 թթ.) ԽՍՀՄ-ում 1957 թ. ձեռնարկված վարչատնտեսական, այսպես կոչված՝ «խրուշչովյան ռեֆորմներ»-ում, երկրի ռազմապաշտպանական արդյունաբերության, ՌԱՀ-ի կառավարման խնդիրներն առանցքային տեղ

⁶ Տե՛ս նույն տեղում, էջ 327–328, 358:

⁷ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, ց. 77, գ. 483, թ. 3–10, նաև՝ ֆ. 1, ց. 126, գ. 4, թ. 11–13:

էին գրավում: «ԽՍՀՄ ժողտնտեսության 1958 թ. զարգացման պետական պլանի և պետբյուջեի նախագիծը կազմելու ժամկետների և կարգի մասին» ԽՍՀՄ Նախարարների խորհրդի 1957 թ. հուլիսի 10-ի թիվ 815 որոշումով կենտրոնական և միութենական համապատասխան գործադիր մարմիններին հանձնարարվում էր օգոստոս-սեպտեմբեր ամիսներին նախապատրաստել և կենտրոնական վերադաս մարմիններին ներկայացնել 1958 թ. համար ռազմական տեխնիկայի և գույքի, ղեկավարվող ռեակտիվ սպառազինության արտադրության պլանների նախագծերը: Հանձնարարվում էր նաև հայտեր ներկայացնել պաշտպանական արդյունաբերության ձեռնարկությունների համար սարքավորումների և նյութերի, համալրող մասերի, դրանց չափաքանակների մասին և այլն: ԽՍՀՄ Նախարարների խորհրդի որոշումով պաշտպանական արդյունաբերության ճյուղերի միութենական նախարարությունները, ԽՍՀՄ պաշտպանության նախարարության և ԽՍՀՄ պետական անվտանգության կոմիտեի (ՊԱԿ) հետ համատեղ պարտավորեցվում էին ԽՍՀՄ Նախարարների խորհրդին և Պետպլանին ներկայացնել ռազմական տեխնիկայի գծով գիտահետազոտական և փորձարարակոնստրուկտորական հիմնարար աշխատանքների պլանների նախագծերը⁸:

ԽՍՀՄ Նախարարների խորհրդի 1957 թ. օգոստոսի 24-ի հրահանգի համաձայն՝ միութենական հանրապետությունները պարտավոր էին սահմանված կարգով ԽՍՀՄ Պետպլան ներկայացնել սպառազինման, ռազմամթերքների, ռազմական տեխնիկայի և ռազմատեխնիկական գույքի արտադրության և մատակարարման պլանի կատարման մասին հաշվետվություններ: Ի կա-

⁸ Տե՛ս նույն տեղում, §. 1, ց. 37, գ. 39, թ. 52-56:

տարումն այդ հրահանգի՝ ՀԽՍՀ Նախարարների խորհուրդը 1957 թ. սեպտեմբերի 26-ին հանձնարարում է ՀԽՍՀ ժողտնտխորհին յուրաքանչյուր ամսվա 7-ին ՀԽՍՀ Պետպլան ներկայացնել ԽՍՀՄ ավիացիոն, պաշտպանական, նավաշինության և ռադիոտեխնիկական արդյունաբերության նախարարություններին չպատկանող հանրապետական ձեռնարկությունների սպառագինման, ռազմամթերքի, ռազմական տեխնիկայի և ռազմատեխնիկական գույքի արտադրության և մատակարարման պլանի կատարման վերաբերյալ հաշվետվություններ: Իր հերթին, ՀԽՍՀ Պետպլանին հանձնարարվում է յուրաքանչյուր ամսվա 10-ին նշված հաշվետվությունները ներկայացնել ԽՍՀՄ Պետպլան⁹:

ԽՄԿԿ Կենտկոմի և ԽՍՀՄ Նախարարների խորհրդի 1957 թ. սեպտեմբերի 19-ի թիվ 1146 որոշման մեջ արդեն նշվում է ԽՍՀՄ ժողտնտեսության, այդ թվում նաև սպառագինության ու ռազմական տեխնիկայի գծով հեռանկարային զարգացման պլանի մշակման անհրաժեշտության մասին: Հոկտեմբերի 21-ին ԽՄԿԿ Կենտկոմի նախագահությունը հանձնարարում է քայլեր ձեռնարկել հրթիռային տեխնիկայի արտադրության զարգացման առաջնահերթությունները մշակելու ուղղությամբ¹⁰: Նշենք, որ ԽՍՀՄ-ում հրթիռային տեխնիկայի զարգացման առաջնության կողմնակից էր անձամբ Ն. Խրուշչովը, ով գտնում էր, որ ապագա պատերազմում վճռական է լինելու հրթիռային-միջուկային զենքը¹¹:

Խորհրդային ռազմապաշտպանական արդյունաբերության կատարելագործմանն ու զարգացմանը, նրա կարողությունների

⁹ St'u նույն տեղում, ֆ. 113, ց. 77, գ. 47, թ. 1:

¹⁰ St'u Быстрова И. В., Военно-промышленный комплекс СССР на международной арене, «Отечественная история», Москва, 2006, № 2, էջ 62:

¹¹ St'u Быстрова И. В., Советский военно-промышленный комплекс: проблемы становления и развития (1930–1980-е годы), էջ 247:

բազմապատկմանն էր միտված «Արդյունաբերության պաշտպանական ճյուղերի մասին» ԽՍՀՄ Նախարարների խորհրդի 1957 թ. օգոստոսի 10-ի թիվ 956—439 «հույժ գաղտնի» որոշումը: ԽՍՀՄ Նախարարների խորհրդի նախագահ Ն. Բուլգանինի ստորագրությամբ այդ որոշմամբ նախատեսվում էին հրատապ միջոցառումների համալիր ծրագրեր պաշտպանական ոլորտի ձեռնարկությունների հետագա զարգացումն ապահովելու նպատակով: Խնդիր էր դրվում հասնել հայրենական ռազմական տեխնիկայի գերազանցությանն արտասահմանյանի նկատմամբ:

ԽՍՀՄ Նախարարների խորհուրդը միութենական ժողտնտխորհների (որոնց ղեկավարման ոլորտում էին գտնվում պաշտպանական արդյունաբերության ճյուղերի ձեռնարկությունները և կազմակերպությունները), նաև ԽՍՀՄ ավիացիոն, պաշտպանական, նավաշինության և ռադիոտեխնիկական արդյունաբերության նախարարությունների գործունեության գերխնդիրն էր համարում ռազմական ինքնաթիռների, հրթիռային սպառազինության և այլ տեսակի ռազմական տեխնիկայի համար նորագույն հատուկ սարքերի և նյութերի ստեղծումը, դրանց սերիական արտադրությունը: Նաև՝ պաշտպանական ոլորտի արդյունաբերական ձեռնարկությունների մոբիլիզացիոն հզորությունների շեշտակի ավելացումը¹²: Որոշմամբ՝ ժողտնտխորհները, ավիացիոն, պաշտպանական, նավաշինության և ռադիոտեխնիկական արդյունաբերության նախարարությունները խիստ պատասխանատվություն էին կրում, ԽՍՀՄ պաշտպանության նախարարության պահանջներին համապատասխան, նոր տեսակի ռազմական և հատուկ տեխնիկայի մշակման, գիտահետազոտական և փորձարարա-կոնստրուկտորական աշխատանքների զարգացման,

¹² Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 37, գ. 39, թ. 66:

կազմակերպությունների և ձեռնարկությունների փորձնական արտադրանքի, տեխնոլոգիական կարգապահության, խոտանի հայտնաբերման ու վերացման, բարձր որակի արտադրանք թողարկելու համար: Նաև՝ տնտեսական շրջանների պաշտպանական ճյուղերի ձեռնարկությունների համագործակցության, միութենական հանրապետությունների Նախարարների խորհուրդների Ժողտնտխորհների հետ միասին կառավարության կողմից հաստատված հսկիչ թվերի սահմաններում ռազմական արտադրանքի տարեկան և հեռանկարային ծրագրերը մշակելու համար և այլն¹³:

«Արդյունաբերության պաշտպանական ճյուղերի մասին» ԽՍՀՄ Նախարարների խորհրդի որոշումով սահմանվում էր, որ ռազմական տեխնիկայի պատրաստման, փորձարկման, սերիական արտադրության մեջ ներմուծման, նաև մոբիլիզացիոն հզորություններ պատրաստելու հարցերում արդյունաբերության պաշտպանական ճյուղերի ձեռնարկությունները ղեկավարվում են պաշտպանական ճյուղերի համապատասխան նախարարությունների կարգադրություններով՝ Ժողտնտխորհների միջոցով: Միութենական հանրապետությունների Նախարարների խորհուրդներին և Ժողտնտխորհներին, պաշտպանական արդյունաբերության ճյուղային նախարարություններին, պաշտպանական ձեռնարկությունների, գիտահետազոտական ինստիտուտների և կոնստրուկտորական բյուրոների ղեկավարներին հանձնարարվում էր, ղեկավարվելով ԽՍՀՄ Նախարարների խորհրդի 1956 թ. ապրիլի 28-ի թիվ 555-331 որոշմամբ՝ ապահովել պաշտպանական աշխատանքների խիստ գաղտնիությունը¹⁴:

¹³ Տե՛ս նույն տեղում, թ. 67-68:

¹⁴ Տե՛ս նույն տեղում, թ. 69:

Հարկ է նշել, որ սառը պատերազմի առաջին տարիներից խորհրդային արդյունաբերության ռազմապաշտպանական ոլորտը սկսեց մեկուսանալ, առանձնանալ արդյունաբերության քաղաքացիական արտադրանքի ոլորտից: Ռազմական ոլորտի գիտական և արտադրական գործընթացները գաղտնի պահելու, ինչպես նաև սպառազինության հատուկ արտադրություն կազմակերպելու նպատակով ՌԱՀ-ի կազմում գտնվող կազմակերպությունների և ձեռնարկությունների համար հաստատվեց տարբեր առանձնահատկություններով հատուկ ռեժիմի մի քանի մակարդակ: Ցածրը ներկայացնում էին փակ ձեռնարկությունները և, այսպես կոչված, «Փոստային արկղերը» (Փ/ա), որոնք աշխատում էին մեծ քաղաքների տարածքում: Հաջորդ մակարդակը արտաքին տեսքից սովորական քաղաքներն ու բնակեցված տարածքներն էին, ուր արտասահմանցիների մուտքն արգելված էր: Վերջապես, ամենաբարձր մակարդակը ԽՍՀՄ որոշ շրջաններում առաջ եկած «փակ քաղաքներն» էին, որոնք անմիջականորեն առնչվում էին միջուկային մշակումների հետ և պատկանում էին ատոմային գերատեսչությանը՝ ԽՍՀՄ միջին մեքենաշինության նախարարությանը: Դրանց թիվն ամբողջ երկրում տասն էր¹⁵:

ԽՍՀՄ Նախարարների խորհրդի 1959 թ. փետրվարի 9-ի թիվ 126-52 որոշմամբ հաստատված «Պետական գաղտնիք պարունակող կարևորագույն տեղեկությունների ցանկ»-ի համաձայն՝ ԽՍՀՄ ամբողջ տարածքում տեղաբաշխված ռազմապաշտպանական ոլորտի կազմակերպությունների և ձեռնարկությունների, դրանց մասնաճյուղերի տեղաբաշխման, նրանց

¹⁵ St'u Быстрова И. В., Советский военно-промышленный комплекс: проблемы становления и развития (1930-1980-е годы), էջ 600-601:

գործունեության, դրանից բխող գրագրությունը, հատուկ սպառազինության արտադրության վերաբերյալ գլխավոր պլանները և ամփոփ տվյալները, այնտեղ աշխատող բանվորների, ծառայողների, ինժեներատեխնիկական աշխատողների թվաքանակը և այլն համարվում էր խիստ գաղտնի և պետք է կրեր «Հույժ գաղտնի հատուկ կարևորության» կամ «Հույժ գաղտնի» գլխիՖը: Նույնը վերաբերում էր առանձին գիտահետազոտական ինստիտուտների, կոնստրուկտորական բյուրոների և հրաձգարանների գիտահետազոտական և փորձարարական աշխատանքների ամփոփ պլաններին, ռազմական կարևոր նշանակություն ունեցող հայտնագործություններին, գյուտարարություններին և այլն:

Գաղտնիության կարգը տարածվում էր նաև ժողովրդադեմոկրատական երկրներին հատուկ տեսակի սպառազինության մատակարարման մասին ամփոփ տվյալների, նաև այն տեղեկությունների վրա, որոնք բնութագրում են ԽՍՀՄ-ի գիտատեխնիկական և այլ օգնությունը՝ տեղում սպառազինության հատուկ տեսակներ արտադրելու համար և այլն¹⁶:

Խորհրդային Հայաստանում «փակ քաղաքներ» չկային, բայց գոյություն ունեին փակ կազմակերպություններ և ձեռնարկություններ, «Փոստային արկղեր»: Ուստի գաղտնիության ռեժիմի պահպանման խնդիրը գտնվում էր հանրապետության ղեկավարության ուշադրության ներքո:

ԽՄԿԿ Կենտկոմի և ԽՍՀՄ Նախարարների խորհրդի 1963 թ. փետրվարի 14-ի թիվ 208-76 որոշմամբ՝ Նախարարների խորհրդին առընթեր պետանվտանգության կոմիտեին, ԽՍՀՄ պաշտպանության նախարարությանը, միութենական հանրապետությունների Նախարարների խորհուրդներին տրվում էին

¹⁶ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 39, գ. 59, թ. 9-31:

մի շարք կարգադրություններ և հանձնարարականներ՝ հատուկ կարևորության պաշտպանական արտադրության գաղտնիության ռեժիմի պահպանման, ռազմական արտադրության կազմակերպման հետ կապված այլ խնդիրների գծով և այլն: Ի կատարումն այս որոշման՝ ՀԿԿ Կենտկոմի նախագահությունը և ՀԽՍՀ Նախարարների խորհուրդը 1963 թ. ապրիլի 12-ի համատեղ նիստում լսում են «Գաղտնիության ռեժիմի ուժեղացման մասին» հարցը:

Արձանագրվում է, որ հանրապետության ժողտնտխորհի այն ձեռնարկություններում, որոնք կենտրոնական վերադաս մարմինների պատվերներով միութենական արդյունաբերության պաշտպանական ճյուղերի համար արտադրում են ռազմական տեխնիկայի լրակազմ սարքավորումներ ու ապրանքներ, գաղտնիության ռեժիմի պահպանման, աշխատանքների ծածկագրման ու քողարկման գործում դեռևս առկա են լուրջ թերություններ: ՀԽՍՀ ժողտնտխորհը, Գիտությունների ակադեմիան, նախարարությունների և գերատեսչությունների ենթակայության տակ գտնվող ձեռնարկությունները բավարար միջոցներ չեն ձեռնարկում հակառակորդի կողմից ռադիոտեխնիկական, լուսանկարչական, հեռուստատեսային և այլ միջոցներով հետախուզում անցկացնելու հնարավորությունը վերացնելու համար: Նշվում է, որ ՀԽՍՀ ժողտնտխորհի, Գիտությունների ակադեմիայի, նախարարությունների և գերատեսչությունների ռեժիմային հիմնարկություններում և ձեռնարկություններում, գիտահետազոտական ինստիտուտների հատուկ կոնստրուկտորական բյուրոներում դեռ առկա է ինժեներատեխնիկական աշխատողների և բանվորների արտահոսք, ինչը նպաստում է օբյեկտների տեղաբաշխման գաղտնագերծմանը և կատարվող գաղտնի

բնույթի աշխատանքների բացահայտմանը: Հատուկ կարևորության պաշտպանական օբյեկտների տեղաբաշխման գաղտնիությունը չի ապահովում նաև ձեռնարկությունների նյութատեխնիկական մատակարարման գոյություն ունեցող կարգը: Իբրև լուրջ թերություն՝ նշվում է նաև այն, որ վերադաս գերատեսչությունների հետ ռադիոհեռագրային գաղտնի գրագրություն վարող ձեռնարկությունները, կազմակերպությունները և հիմնարկությունները խախտում են գոյություն ունեցող կարգը. նախագծերի մշակման, պաշտպանական տեխնիկայի հատուկ տեսակների փորձարկման և արտադրման առաջադրանքների կատարման մասին հեռագրերն ու ֆոտոհեռագրերն ուղարկում են առանց գաղտնիության մասին հատուկ նշագրման և այլն¹⁷:

Հանրապետության պաշտպանական ոլորտի կազմակերպություններում և ձեռնարկություններում նշված թերությունները վերացնելու, գաղտնիության ռեժիմը ամրապնդելու, հատուկ ռեժիմային և ռազմական օբյեկտների ծածկագրման և քողարկման աշխատանքները բարելավելու նպատակով ՀԿԿ Կենտկոմը և ՀԽՍՀ Նախարարների խորհուրդը որոշում են.

• Ժողտնտխորհի, Գիտությունների ակադեմիայի, նախարարությունների և գերատեսչությունների, ձեռնարկությունների և հիմնարկությունների ղեկավարությանը պարտավորեցնել արդյունաբերության պաշտպանական ճյուղերի համար մշակվող և պատրաստվող համալրող մասերի արտադրման աշխատանքներում ուժեղացնել պետական գաղտնիքների պահպանությունն ապահովելուն ուղղված աշխատանքները: Առավելագույնս սահմանափակել պետական գաղտնիքներին թույլատրվող անձանց շրջանակը, ընդունել անհրաժեշտ միջոցներ՝

¹⁷ Տե՛ս նույն տեղում, ֆ. 1, ց. 126, գ. 5, թ. 45:

հատուկ կարևորության «հույժ գաղտնի» և «գաղտնի» փաստաթղթերը պատրաստելու աշխատանքները և այդ փաստաթղթերին ծանոթանալու կարգը բարելավելու համար: Փակ նիստերի և խորհրդակցությունների ժամանակ հատուկ կարևորության «հույժ գաղտնի» և «գաղտնի» հարցերի քննարկումներում կրճատել ներգրավված անձանց շրջանակը:

- Ժողտնտխորհին, նախարարություններին և գերատեսչություններին պարտավորեցնել հատուկ կարևորության պաշտպանական և ռազմական օբյեկտների շինարարության և տեղաբաշխման վայրերի ընտրությունը կատարել ՀԽՍՀ Նախարարների խորհրդին առընթեր ՊԱԿ-ի ներկայացուցիչների մասնակցությամբ՝ հաշվի առնելով գաղտնիության ռեժիմի և հնարավոր բնական քողարկման պահանջները:

- Սահմանել, որ հատուկ կարևորության ռազմական օբյեկտների կառուցման համար հողատարածքներ տրամադրելու մասին որոշումներն ընդունվում են ՀԽՍՀ Նախարարների խորհրդի որոշմամբ՝ ԽՍՀՄ պաշտպանության նախարարության, միջին մեքենաշինության նախարարության, արդյունաբերության պաշտպանական ճյուղերի պետկոմների հայտերի հիման վրա:

- Սահմանել, որ կառուցվող կամ գոյություն ունեցող հատուկ կարևորության պաշտպանական և ռազմական օբյեկտների մոտակայքում տրամադրվող հողատարածքները, որտեղ կառուցվելու են բնակելի և այլ շենքեր, ենթակա են համաձայնեցման շահագրգիռ պետկոմների, նախարարությունների և գերատեսչությունների, նաև՝ ՀԽՍՀ Նախարարների խորհրդին առընթեր ՊԱԿ-ի մարմինների հետ:

- Ժողտնտխորհին, նախարարություններին և գերատեսչություններին պարտավորեցնել հատուկ կարևորության պաշտ-

պանական և ռազմական օբյեկտների շինարարությունը սկսելուց առաջ իրականացնել անհրաժեշտ միջոցառումներ գաղտնիության ռեժիմը պահպանելու համար:

- 1963 թ. ապրիլից բոլոր տեղագրական և այլ քարտեզներում, պլաններում, ուրվագծերում և վերարտադրումներում հատուկ պայմանական նշաններով լրացնել այն հողակտորները, որոնք զբաղեցված են պաշտպանական և ռազմական օբյեկտների կողմից:

- Ժողտնտխորհին պարտավորեցնել երկամսյա ժամկետում ՀԽՍՀ Նախարարների խորհրդի հաստատմանը ներկայացնել իր ենթակայության տակ գտնվող և ԽՍՀՄ պաշտպանության նախարարության ու արդյունաբերության պաշտպանական ճյուղերի պետկոմների պատվերներով արտադրանք թողարկող ձեռնարկությունների և հիմնարկությունների գաղտնիության՝ ռեժիմի կազմակերպման միջոցառումների մասին:

- Անդրկոպկասյան երկաթգծի Երևանի բաժանմունքին պարտավորեցնել սահմանել պատշաճ կարգ ու կանոն պաշտպանական արդյունաբերության ռեժիմային ձեռնարկությունների բեռների փոխադրման, փաստաթղթերի ձևակերպման և պահպանման գործում և այլն¹⁸:

1950-ական թթ. վերջին ԽՍՀՄ ժողտնտեսության զարգացման հնգամյա ծրագրերից անցում կատարվեց յոթնամյա ծրագրերի: 1959 թ. սկզբին տեղի ունեցած ԽՄԿԿ 21-րդ համագումարն ընդունեց երկրի ժողովրդական տնտեսության զարգացման 1959–1965 թթ. յոթնամյա պլանը, որում դրված էր մեծախոստում կարգախոս՝ «հասնել ու անցնել» ԱՄՆ-ից: Իհարկե, խորհրդային ղեկավարությունն առաջին հերթին նպատակ ուներ հասնել ռազ-

¹⁸ Տե՛ս նույն տեղում, թ. 46–49:

մական գեոակշոության, իսկ դա հնարավոր էր բացառապես նորագույն սպառազինության, այդ թվում՝ միջուկային, և ռազմական տեխնիկայի կատարելագործման, ռազմական ծախսերի և արտադրանքի շեշտակի ավելացման միջոցով:

ԽՍՀՄ ռազմական հզորությունն ամրապնդելու նպատակով արդեն 1959 թվականից երկրի ռազմապաշտպանական արդյունաբերությունը յուրացնում է մի քանի նոր տիպի հրթիռների և կառավարվող արկերի, ռազմական նորագույն այլ տեխնիկայի թողարկումը: ԽՍՀՄ Նախարարների խորհրդի նախագահությանը կից Ռազմաարդյունաբերական հանձնաժողովի 1960 թ. մարտի 31-ի որոշման մեջ նշվում է, որ ԽՍՀՄ պաշտպանության նախարարության պատվերներով խորհրդային բանակին ամբողջությամբ մատակարարվել են զենիթահրթիռային «Ս-75» համակարգեր, չկառավարվող ռեակտիվ սպառազինության համակարգեր, ռադիոլուկացիոն միջոցներ, սուզանավեր, նորագույն ռազմական այլ տեխնիկա¹⁹: Այս ամենը նպաստեց, որպեսզի 1959 թ. վերջին ԽՄԿԿ Կենտկոմի հատուկ որոշումով ԽՍՀՄ Ջինված ուժերի համակարգում ստեղծվեն նոր՝ Ստրատեգիական նշանակության հրթիռային զորքեր:

«Սպառազինությունների մրցավազք»-ի հերթական փուլին նպաստում էր նաև միջազգային հարաբերություններում 1950-ական թթ. վերջին 1960-ական թթ. սկզբին լարվածության աճը: Բեռլինյան ճգնաժամի 1958–1961 թթ. հերթական փուլը հանգուցալուծվեց միայն 1961 թ. երկրորդ կեսին, երբ օգոստոսի 13-ին Արևմտյան Բեռլինի շուրջը կառուցվեց սառը պատերազմի ամենաակնառու խորհրդանիշը՝ հանդիսացող «Բեռլինյան պատը»: Արևելք–Արևմուտք, ԽՍՀՄ–ԱՄՆ ռազմաքաղաքական առճակա-

¹⁹ Ст'я Симонов Н. С., նշվ. աշխ., էջ 297, 303:

տումն իր գազաթնակետին հասավ 1962 թ. Կարիբյան (Կուբայական) ճգնաժամի շրջանում, երբ աշխարհը հայտնվել էր կործանարար միջուկային պատերազմի շեմին: Այսպիսով, պատահական չէր, որ ԽՍՀՄ-ում ռազմական ծախսերի առավել բարձր տեմպեր արձանագրվեցին հենց 1961–1965 թթ., երբ միջին տարեկան աճը կազմեց 7,6 %²⁰, իսկ ՌԱՀ-ի ճյուղերում կապիտալ ներդրումներն ավելացան 30 %-ով²¹:

Այսպիսով, ընդունելի է հիմնախնդրի ուսաստանցի մի շարք հետազոտողների այն պնդումը, որ 1945–1964 թթ. ժամանակաշրջանը համարվում է ԽՍՀՄ ՌԱՀ-ի ձևավորման սովորտի շրջանը:

1960-ական թվականների կեսերից ԽՍՀՄ-ը հայտնվեց սոցիալ-տնտեսական հերթական ճգնաժամի առջև, ուստի ձեռնարկվեցին համալիր տնտեսական բարեփոխումներ, որոնց հիմնավորումը տվեց ԽՄԿԿ Կենտկոմի 1965 թ. սեպտեմբերյան պլենումը: Պաշտպանական արդյունաբերության զարգացման հիմնական առաջնահերթությունները 1966–1970 թթ., որոնք հայտնի են իբրև ԽՍՀՄ Նախարարների խորհրդի նախագահ Ա. Կոսիգինի տնտեսական ռեֆորմի տարիներ, ՌԱՀ-ի ոլորտում «ատոմային ծրագրի» հետ զուգահեռ առաջին դիրքերում շարունակում էին մնալ «հրթիռատիեզերական և ինքնաթիռային տեխնիկայի արտադրությունը», «բոլոր տեսակի հրթիռային սպառազինության ռադիոսարքերի, ռադիոլուկացիոն, ռադիոհետախուզման և այլ հատուկ սարքերի» արտադրությունը: Դրանցից հետո միայն՝ հրթիռային պինդ վառելիքը, պայթուցիկ նյութերը, զի-

²⁰ St'u Быстрова И. В., Советский военно-промышленный комплекс: проблемы становления и развития (1930–1980-е годы), էջ 254:

²¹ St'u Симонов Н. С., նշվ. աշխ., էջ 304–305:

նամթերքը, նավաշինությունը, զրահատանկային տեխնիկան և այլն²²:

...

«Սպառազինության արտադրանքի կրճատման հետևանքով արդյունաբերության վերակառուցման միջոցառումների մասին» ՊՊԿ-ի 1945 թ. մայիսի 26-ի վերը հիշատակված որոշումով վերակառուցման էր ենթակա նաև ռազմապաշտպանական արդյունաբերության կառավարման համակարգը: Փոփոխությունների արդյունքում կրճատվեցին պաշտպանական ոլորտի ժողկոմատները՝ լուծարվեցին ԽՍՀՄ ռազմամթերքների, ականանետային սպառազինության և տանկային արդյունաբերության ժողկոմատները: Ռազմական արտադրության կազմակերպումն այսուհետ կենտրոնացվելու էր ԽՍՀՄ սպառազինության, ավիացիոն, նավաշինության արդյունաբերության, գյուղատնտեսական և տրանսպորտային մեքենաշինության ժողկոմատներում (1946 թ. մարտից՝ նախարարություններ): Դրանց գույքահեռ ԽՍՀՄ Նախարարների խորհրդին կից գործում էին 1945 թ. օգոստոսին ստեղծված Հատուկ կոմիտեն և Առաջին գլխավոր վարչությունը (ատոմային ծրագրեր), ատոմային, ռեակտիվ տեխնիկայի, ռադիոլուկացիայի հարցերով կոմիտեներ²³:

Ռազմապաշտպանական արդյունաբերության ոլորտը խորհրդային ողջ ժամանակաշրջանում գտնվում էր երկրի կուսակցական-քաղաքական բարձրագույն ղեկավարության, նաև՝ խորհրդային իրավապահ և անվտանգության մարմինների (ՆԳՆ, ՊԱԿ) աչալուրջ հսկողության ներքո: Վերջիններս իրենց գործառույթներով հանդիսանում էին խորհրդային ՌԱՀ-ի

²² Ст'я Быстрова И. В., Советский военно-промышленный комплекс: проблемы становления и развития (1930–1980-е годы), էջ 260:

²³ Ст'я նուն տեղում, էջ 237, 240:

կարևոր մասը: Նրանց իրավասության ոլորտում էր գտնվում ձեռնարկությունների և կազմակերպությունների, այլ օբյեկտների պահպանության, կադրերի, հետախուզության, հակահետախուզության և այլ հարցերը:

Պատերազմից հետո ՌԱՀ-ի կառավարման գործառույթներն իրականացնում էր ԽՍՀՄ Կենտկոմի քաղբյուրոյի 1949 թ. հուլիսի 10-ի որոշումով ստեղծված Մեքենաշինության բաժինը (1953 թվականից՝ Պաշտպանական արդյունաբերության բաժին) և Կենտկոմի համապատասխան քարտուղարը²⁴:

1953 թ. Ի. Ստալինի մահից հետո Ն. Խրուշչովի ղեկավարման տասնամյակում ԽՍՀՄ-ում հետևողականորեն իրականացվեց ժողտնտեսության կառավարման ապակենտրոնացման քաղաքականություն: ԽՍՀՄ-ում սպառազինության արտադրության ծրագրերը կենտրոնացված էին ԽՍՀՄ միջին մեքենաշինության (ատոմային ծրագիրը), պաշտպանական արդյունաբերության (մինչև 1953 թ.՝ սպառազինության), 1954 թ. ստեղծված ռադիոտեխնիկական, ավիացիոն և նավաշինության արդյունաբերության նախարարություններում:

1957 թ. ձեռնարկված «խրուշչովյան ռեֆորմներ»-ով երկրի արդյունաբերությունը ղեկավարվելու էր ոչ թե ճյուղային (նախարարությունների միջոցով), այլ տարածքային սկզբունքի հիման վրա: Ստեղծվեցին տեղական ժողտնտիսորհներ, որոնք անմիջականորեն ենթարկվում էին համամիութենական նախարարությանը: Արդյունքում լուծարվեցին 141 համամիութենական և հանրապետական նախարարություններ, որոնց փոխարեն ստեղծվեցին 105 ժողտնտիսորհներ: Դրանով փորձ էր կատար-

²⁴ Տե՛ս նույն տեղում, էջ 456:

վում ընդլայնելու միութենական հանրապետությունների իրավունքներն ու տնտեսավարման լիազորությունները:

Ինչպես նշել ենք, ռեֆորմները շրջանցեցին նաև խորհրդային ՌԱՀ-ը, նպաստեցին վերջինիս կառավարման ապակենտրոնացմանը, նաև՝ պաշտպանական և քաղաքացիական ձեռնարկությունների միջև սերտ կապերի հաստատմանը, ՌԱՀ-ի աշխարհագրական շրջանակների ընդլայնմանը: Տնտեսության մյուս ճյուղերի նման պաշտպանական արդյունաբերության ձեռնարկությունները ևս հանձնվեցին տեղական ժողտնտխորհներին: ԽՍՀՄ-ում գիտատեխնիկական միասնական քաղաքականություն իրականացնելու, ՌԱՀ-ի ոլորտում գիտահետազոտական և փորձարարակոնստրուկտորական աշխատանքներն արդյունավետ կազմակերպելու նպատակով ԽՍՀՄ Նախարարների խորհրդին կից ստեղծվեցին ավիացիոն, պաշտպանական տեխնիկայի, մեքենաշինության, նավաշինության, ավտոմատիզացիայի, ռադիոէլեկտրոնիկայի, ատոմային էներգիայի օգտագործման և այլ պետկոմներ²⁵:

ՌԱՀ-ի կառավարման համակարգում իրականացվող ռեֆորմների շրջանակներում ԽՍՀՄ Նախարարների խորհուրդը 1957 թ. օգոստոսի 13-ին որոշում է ընդունում «Արդյունաբերական ձեռնարկություններում ԽՍՀՄ պաշտպանության նախարարության ռազմական ներկայացուցիչների կրճատումների մասին»: Նույն որոշմամբ հաստատվում է «Արդյունաբերական ձեռնարկությունների ղեկավարների, բաժինների և արտադրամասերի պետերի, վարպետների պատասխանատվությունը մատակարարվող սերիական ռազմական արտադրանքի որակի և արդյունաբերական ձեռնարկություններում ԽՍՀՄ պաշտպա-

²⁵ Տե՛ս նույն տեղում, էջ 254:

նության նախարարության ռազմական ներկայացուցիչների մասին Կանոնադրությունը»²⁶: Այն տարածվում էր միութենական նախարարությունների և ժողտնտխորհների արդյունաբերական բոլոր այն ձեռնարկությունների և կազմակերպությունների վրա, որոնք ռազմական պատվերներ են կատարում ԽՍՀՄ պաշտպանության նախարարության համար: «Կանոնադրությամբ» արդյունաբերական ձեռնարկությունների աշխատողները պատասխանատու էին Պաշտպանության նախարարությանը մատակարարվող վատորակ, անլրակազմ կամ տեխնիկական պայմաններին չհամապատասխանող արտադրանքի համար: Այդ դեպքում ձեռնարկությունների ղեկավարները, բաժինների և արտադրամասերի պետերը, վարպետները, հաստատված կարգի համաձայն, ենթարկվելու էին դատական և նյութական պատասխանատվության: «Կանոնադրություն»-ում նշվում էր բազմաթիվ այլ պարտականությունների մասին ևս, նաև՝ Պաշտպանության նախարարության ռազմական ներկայացուցիչների պատասխանատվության և իրավունքների²⁷:

Ապակենտրոնացման քաղաքականությանը զուգահեռ խորհրդային ՌԱՀ-ի կառավարման համակարգում հետպատերազմյան տարիներին հետևողականորեն ամրապնդվում էր 1957 թ. ԽՍՀՄ Նախարարների խորհրդի նախագահությանը կից ստեղծված Ռազմաարդյունաբերական հանձնաժողովի համակարգող դերը, նրա միջոցով էին անցնում ոլորտի բոլոր արմատական որոշումները: Հանձնաժողովին փոխարինեց ԽՍՀՄ Նախարարների խորհրդին կից դեռևս 1951 թվականից գործող ռազմական և ռազմաարդյունաբերական հարցերով բյուրոն: ՌԱՀ-ի

²⁶ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 37, գ. 39, թ. 70–71:

²⁷ Տե՛ս նույն տեղում, թ. 72–79:

հանձնաժողովի ստեղծումից ի վեր այն հաջորդաբար գլխավորել են խորհրդային ազդեցիկ գործիչներ Դ. Ֆ. Ուստինովը (1957–1963), Լ. Վ. Սմիրնովը (1963–1985), Յու. Դ. Մասլյուկովը (1985–1988) և Ի. Ս. Բելոուսովը (1988–1991):

Խորհրդային տարիներին գերգաղտնի պայմաններում գործող ԽՍՀ-ի հանձնաժողովի հիմնական խնդիրներն ու գործառույթները ներկայացված են ոլորտի մասնագետների կողմից հեղինակված՝ «Հայրենական ռազմաարդյունաբերական համալիրը» կոլեկտիվ աշխատությունում: Նշենք դրանցից մի քանիսը.

- սպառազինման և ռազմական տեխնիկայի արդիական տեսակների ստեղծման աշխատանքների կազմակերպում և համակարգում,

- արդյունաբերության պաշտպանական ճյուղերի աշխատանքների համակարգում,

- արդյունաբերության պաշտպանական ճյուղերի օպերատիվ կառավարում և գործունեության վերահսկում,

- ԽՍՀՄ Պետպլանի և պաշտպանության նախարարության հետ համատեղ սպառազինության ծրագրերի, սպառազինության և ռազմական տեխնիկայի արտադրման ու թողարկման հնգամյա և տարեկան պլանների նախապատրաստում՝ վերադաս մարմինների կողմից հաստատելու համար,

- արդյունաբերության պաշտպանական ճյուղերի ռազմատեխնիկական համագործակցության հարցերով արտաքին տնտեսական կապերի համակարգում և այլն:

Հանձնաժողովի կողմից վերջնական տեսքի բերված որոշումների նախագծի տարբերակը ուղարկվում էր ԽՄԿԿ Կենտկոմի պաշտպանական արդյունաբերության բաժին, որտեղ այն ենթարկվում էր լրացուցիչ ճշգրտումների: Դրանից հետո փաս-

տաթղթերն ընդունվել են ԽՄԿԿ Կենտկոմի և ԽՍՀՄ Նախարարների խորհրդի համատեղ որոշումներով: Դրանք կրում էին գաղտնիության տարբեր աստիճանի գրիֆներ, և սահմանված կարգի համաձայն՝ ուղարկվում էին շահագրգիռ գերատեսչություններին: Հետաքրքիր է, որ հետպատերազմյան ողջ ժամանակաշրջանում հանձնաժողովի նիստերն անց են կացվել Մոսկվայի Կրեմլի «Օվալ» դահլիճում, շաբաթը մեկ անգամ պարբերությամբ²⁸:

Ն. Խրուշչովի պաշտոնանկությունից հետո, երբ կասեցվեցին նաև «խրուշչովյան ռեֆորմները», 1964 թ. վերջերից սկսվում է ՌԱՀ-ի համակարգի ձեռնարկությունների հերթական «հավաքագրումը» կենտրոնացված ճյուղային նախարարություններում: ԽՍՀՄ-ում 1965 թ. իրականացվող նոր ռեֆորմների արդյունքում վերականգնվում է արդյունաբերության կառավարման ճյուղային համակարգը, ամրապնդվում է կենտրոնացված պլանային կառավարման համակարգը: Խորհրդային ՌԱՀ-ում ուժեղանում էր նաև ԽՄԿԿ Կենտկոմի պաշտպանական արդյունաբերության բաժնի համակարգող դերը:

Շուտով վերջնականապես ձևավորվում է պաշտպանական արդյունաբերության նախարարությունների, այսպես կոչված՝ «իննյակը», որոնցում հիմնականում կենտրոնացված էին ռազմական արտադրանք թողարկող պաշտպանական արդյունաբերության ձեռնարկությունները: Դրանք էին՝ ավիացիոն արդյունաբերության, պաշտպանական արդյունաբերության, նավաշինության արդյունաբերության, քիմիական արդյունաբերության, էլեկտրոնային արդյունաբերության, էլեկտրոտեխնիկական արդյունաբերության, ընդհանուր մեքենաշինության

²⁸ St'u Отечественный военно-промышленный комплекс и его историческое развитие. Под редакцией О. Д. Бакланова и О. К. Rogozina. Под общей редакцией О. К. Rogozina, Москва, 2005, էջ 92–93:

(այստեղ կենտրոնացված էին հրթիռատիեզերական տեխնիկայի ստեղծման աշխատանքները), ռադիոարդյունաբերության, միջին մեքենաշինության նախարարությունները: Վերջիններիս հարում էին 10 կից նախարարություններ՝ իրենց այն ձեռնարկություններով, որոնք արտադրում էին ռազմական և քաղաքացիական նշանակության արտադրանք: Ոլորտի քաղաքական և տնտեսական ղեկավարումը ապահովում էին ԽՄԿԿ Կենտկոմի հատուկ բաժինները (պաշտպանական արդյունաբերության և վարչական մարմինների), իսկ անվտանգության խնդիրները՝ ՆԳՆ-ն և ՊԱԿ-ը: Նորագույն ռազմական տեխնիկայի զարգացման կազմակերպչական, գիտատեխնիկական ապահովության հարցերով զբաղվում էին ԽՍՀՄ Նախարարների խորհուրդը, նրա համապատասխան պետկոմները, Պետպլանը, ֆինանսների նախարարությունը, Գիտությունների ակադեմիան²⁹:

Խորհրդային ՌԱՀ-ի կառավարման նշված համակարգը գրեթե անփոփոխ տեսքով գոյություն ունեցավ մինչև ԽՍՀՄ-ի կազմալուծումը 1991 թ.:

Ամփոփելով՝ կարելի է եզրակացնել, որ Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո միջազգային իրադրությունն աշխարհում շարունակում էր լարված մնալ: Վերջինս նպաստում էր հետպատերազմյան առաջին տասնամյակներին խորհրդային ռազմապաշտպանական արդյունաբերության աննախադեպ զարգացմանը: Այդ տարիներին ձևավորվեցին ԽՍՀՄ ռազմատնտեսական քաղաքականության և ՌԱՀ-ի առաջնահերթությունները, կատարելագործվեց նրա կառավարման համակարգը: «Ընդհանուր առմամբ՝ Երկրորդ համաշխարհային

²⁹ St'u Быстрова И. В., Советский военно-промышленный комплекс: проблемы становления и развития (1930-1980-е годы), էջ 255-256:

պատերազմին հաջորդող առաջին երկու տասնամյակները հանդիսացան ԽՍՀՄ-ում ռազմաարդյունաբերական համալիրի ստեղծման հիմնադիր փուլը: Այս տարիներին մշակվեցին ռազմական նոր դոկտրինի և ռազմավարության հիմքերը, որը տիրապետում էր ԽՍՀՄ-ում մինչև 1970-ական թթ., ստեղծվեց զիտական և արտադրական հզոր բազա սպառազինության բոլոր տեսակների և համակարգերի հետագա զարգացման համար»³⁰: Նշված ժամանակաշրջանում խորհրդային ՌԱՀ-ը ներկայանում էր իբրև ԽՍՀՄ սոցիալ-տնտեսական համակարգի հիմքը, որոշիչ էր դառնում նրա դերը նաև խորհրդային երկրի կուսակցական-պետական կյանքում:

KAREN KHACHATRYAN

PRIORITIES OF THE DEVELOPMENT OF THE SOVIET
MILITARY-INDUSTRIAL COMPLEX AND ITS
MANAGEMENT SYSTEM IN THE FIRST POST-WAR
DECADES (THE 1945–1960s)

SUMMARY

During the first post-war decades the Soviet Military Industrial Complex “owed” its formation and stable development to the “cold war” that had started since the end of 1940s and the military-technical revolution that was gathering pace. From the beginning of 1950s a considerable rise of expenditures on MIC was observed in the USSR. Its priorities became the creation and development of the

³⁰ Նույն տեղում, էջ 260:

nuclear weapon, newest reactive and anti-aircraft and rocket technology, radar systems of air defence, etc.

The administrative and economic reforms that were being implemented in the USSR in 1957-1964 were aimed at the decentralization of the Soviet MIC and its management systems as well. In the MIC of the country the coordinating role of the Military-industrial commission under the Presidium of the Council of Ministers of the USSR, as well as that of the department of the Defence industry of the Central Committee of CPSU were strengthened. After starting the reforms from the mid-1960s a new phase of centralization of the MIC management system started and the so-called "nine" governing ministries of military and defence industry (aviation, defence, shipbuilding, chemical, electronic, electrotechnical industries, radio industry, general engineering, medium engineering) were finally formed.

During the period under discussion the priorities of the Soviet MIC and its management system were finally formed. Besides, a firm scientific and technical and manufacturing base was prepared for the production of all types of the newest technique and arms. The Soviet MIC became the socio-economic foundation of the USSR, and its decisive role in the party-and-political life of the country increased.

ПРИОРИТЕТЫ РАЗВИТИЯ СОВЕТСКОГО ВОЕННОПРОМЫШЛЕННОГО КОМПЛЕКСА И СИСТЕМА ЕЕ УПРАВЛЕНИЯ В ПЕРВЫЕ ПОСЛЕВОЕННЫЕ ДЕСЯТИЛЕТИЯ (1945–1960–ЫЕ ГОДЫ)

РЕЗЮМЕ

В первые послевоенные десятилетия своим формированием и стабильным развитием советский ВПК был «обязан» начавшейся с конца 1940–ых годов «холодной войне» и набирающей обороты военнотехнической революции. С началом 1950–ых годов в СССР наблюдается значительный рост расходов на ВПК. Ее приоритетами становятся создание и развитие атомного оружия, реактивной, зенитно–ракетной новейшей техники, радиолокационных систем противовоздушной обороны и т.д.

Проводимые в СССР в 1957–1964 годах административно–хозяйственные реформы были направлены также на децентрализацию советского ВПК и системы ее управления. В ВПК страны усиливается координирующая роль Военнопромышленной комиссии при Президиуме Совета Министров СССР, а также отдела Оборонной промышленности ЦК КПСС. После свертывания реформ с середины 1960–ых годов начинается новый этап централизации системы управления ВПК, окончательно формируется так называемая «девятка» руководящих министерств военнооборонной промышленности (авиационной, оборонной, судостроительной, химической, электронной, электротехнической промышленности, радиопромышленности, общего машиностроения, среднего машиностроения).

В исследуемый период были окончательного сформированы приоритеты советского ВПК и система ее управления. Была также подготовлена прочная научно-техническая и производственная база для выпуска всех видов новейшей техники и вооружения. Советский ВПК становится социально-экономической основой СССР, возрастает ее определяющая роль в партийно-политической жизни страны.

ՀԱՅ-ԲԵԼԱՌՈՒՍԱԿԱՆ ՄԻՋՊԵՏԱԿԱՆ
ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 2000-2010 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

Հայ-բելառուսական միջպետական հարաբերությունների հաստատման տեսանկյունից կարևոր նշանակություն ունեցավ երկու պետությունների անկախության փոխադարձ ճանաչումը: Բելառուսի Հանրապետությունը (ԲՀ) Հայաստանի Հանրապետության (ՀՀ) անկախությունը ճանաչել է 1992 թ. հունվարի 22-ին, իսկ ՀՀ-ն ԲՀ-ի անկախությունը՝ 1992 թ. փետրվարի 6-ին: 1993 թ. հունիսի 12-ի արձանագրությամբ երկու երկրների միջև հաստատվում են դիվանագիտական հարաբերություններ:

1993-1998 թթ. ՀՀ-ի և ԲՀ-ի միջև թեև կնքվել են մի շարք համաձայնագրեր և արձանագրություններ, տեղի ունեցել որոշ փոխայցելություններ, այդուհանդերձ՝ հայ-բելառուսական հարաբերություններում աշխուժություն չի նկատվել: Այս հարցում ՀՀ իշխանությունները զգուշավոր մոտեցում էին որդեգրել: Հավանաբար, դա պայմանավորված էր Բելառուսի ներքաղաքական իրավիճակով, նախագահ Ա. Լուկաշենկոյի և իր վարչակազմի, ինչպես նաև 1996 թ. ընդունված Սահմանադրության ու նորընտիր խորհրդարանի նկատմամբ Արևմուտքի բացասական վերաբերմունքով և մերժողական դիրքորոշմամբ:

1998-1999 թթ. Բելառուսը Հայաստանի հետ երկկողմ հարաբերությունները զարգացնելու պատրաստակամություն հայտնեց: Դա պայմանավորված էր նաև Ռուսաստան-Բելառուս միության ստեղծման հետ, ինչը լայն արձագանք էր ստացել հայ հասարակության որոշ շրջաններում (հատկապես Հայաստանի կոմունիստական կուսակցության շարքերում): ՀՀ ԱԳՆ կողմից

ԲՀ-ում գործերի ժամանակավոր հավատարմատար էր նշանակվել Սպարտակ Կոստանյանը, իսկ 1999 թ. սկզբին ԲՀ-ում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան նշանակվեց Սուրեն Հարությունյանը: Բելառուսի հետ երկկողմ բազմաբնույթ հարաբերությունների զարգացումը համընկնում էր ՀՀ-ի քաղաքական և տնտեսական շահերին: Առաջնահերթ զարգացնելով փոխշահավետ համագործակցությունը տնտեսական և ռազմատեխնիկական ուղղություններով՝ հայկական կողմի համար նպատակահարմար էր աշխուժացնել նաև քաղաքական շփումները:

Հայ-բելառուսական հարաբերություններում 1990-ականներին թեև առկա էր քաղաքական երկխոսություն, սակայն այն գնահատվում էր, իբրև, վիթխարի հնարավորությունների դեռևս չբացահայտված դաշտ: Բելառուսում կարծում էին, որ ազդեցիկ միջազգային կազմակերպությունների ակտիվ անդամ Հայաստանը կարող էր Բելառուսին քաղաքական աջակցություն ցույց տալ միջազգային ասպարեզում: Սակայն, Հայաստանի տրանսպորտային ուղիների շրջափակումը լուրջ դժվարություններ էր հարուցում¹: Հայ-բելառուսական հարաբերություններում նոր փուլ բացվեց 2000 թ.: Փոխայցելությունները, միջկառավարական հանձնաժողովների նիստերը, ըստ էության, ստեղծեցին իրավապայմանագրային լայն դաշտ, ինչն էլ խթանիչ դեր ունեցավ երկկողմ համագործակցության համար և ցույց տվեց, որ հարաբերություններում չկա որևէ լուրջ խոչընդոտ, առկա է առանցքային հարցերում կողմերի դիրքորոշումների համահունչություն, միջազգային կազմակերպություններում և առևտրատնտեսական հարաբերություններում՝ համագործակցության մեծ ներուժ²:

¹ «Հայաստանի Հանրապետություն», 21 հուլիսի 2001 թ.:

² Նույն տեղում, 26 մայիսի 2001 թ.:

2000 թ. փետրվարի 8-10-ը ՀՀ պաշտպանության նախարար Վ. Հարությունյանի պաշտոնական այցի ընթացքում Բելառուսի վարչապետ Ս. Լինգոյի և ԲՀ Անվտանգության խորհրդի քարտուղար Վ. Շեյմանի հետ մտքեր փոխանակվեցին միջազգային և տարածաշրջանային անվտանգության հրատապ հարցերի, միջկառավարական հանձնաժողովի ընթացքում ընդունված որոշումների կատարման և այլ խնդիրների շուրջ: Լինգոն շեշտեց Բելառուսի «խոր հետաքրքրվածությունը» փոխադարձ հարաբերությունների զարգացման գործում³: Այցը որոշակի անհանգստություն առաջացրեց Ադրբեջանում և Թուրքիայում: Ադրբեջանի նախագահ Հ. Ալիևը Վաշինգտոնում հայտարարեց. «Սկզբում Մոսկվան, հետո Մինսկը: Դա կարող է լուրջ բարդություններ առաջացնել Հարավային Կովկասում»⁴: Բելառուսական կողմը հիշեցրել է, որ Հայաստանը և Բելառուսը ՀԱՊԿ-ի անդամ են, իսկ ռազմական բնագավառում կողմերի համագործակցությունը կրում է զուտ պաշտպանական բնույթ և ուղղված չէ երրորդ երկրի դեմ: Բելառուսական կողմը կարծիք է հայտնել Թուրքիայի դեսպանին, որ հայ-թուրքական հարաբերություններում «Թուրքիան պետք է ավելի բաց լինի Հայաստանի համար»⁵:

ՀՀ վարչապետ Անդրանիկ Մարգարյանի 2000 թ. հուլիսի 19-20-ի այցը Բելառուս Հայաստանի կողմից պաշտոնական մակարդակով առաջին այցն էր: Նշենք, որ դեռևս 1998 թ. ԲՀ վարչապետը և արտգործնախարարը Բելառուս այցելելու պաշտոնական հրավերներ էին ուղարկել ՀՀ վարչապետին և արտգործնա-

³ ՀՀ ԱԳՆ արխիվ, ց. 6, գ. 132, թ. 53-55:

⁴ Նույն տեղում, թ. 56:

⁵ Նույն տեղում, թ. 59:

խարարին⁶: Բանակցությունների արդյունքում ստորագրվեցին շուրջ մեկ տասնյակ միջպետական համաձայնագրեր, այդ թվում՝ բարձրագույն որակավորման, գիտական-գիտամանկավարժական կադրերի ատեստավորման բնագավառում համագործակցության, եկամուտների և գույքի կրկնակի հարկումը բացառելու ու հարկումից խուսափելը կանխելու, ագրոարդյունաբերական ոլորտում տնտեսական և գիտատեխնիկական համագործակցության, ֆինանսական և բանկային բնագավառներում փոխգործակցության մասին⁷:

Հոկտեմբերի 30-31-ը փոխադարձ պաշտոնական այցով Հայաստանի Հանրապետությունում գտնվող Բելառուսի վարչապետ Վ. Երմոշինի գլխավորած պատվիրակության մասնակցությամբ հոկտեմբերի 30-ին Երևանում իր աշխատանքը սկսեց հայ-բելառուսական միջկառավարական առևտրատնտեսական հանձնաժողովը: ՀՀ վարչապետ Ա. Մարգարյանն իր գործընկերոջ հետ առանձնազրույցի ժամանակ փաստեց, որ անհրաժեշտ իրավական հիմքերը ստեղծելուց հետո, թեկուզ փոքր, բայց արդեն հստակ քայլերով պետք է առաջ ընթանալ՝ համագործակցության հնարավոր ոլորտներում: Վ. Երմոշինն իր երկրի անունից սլատրաստակամություն հայտնեց նախանշված ցանկացած ոլորտում երկխոսություն սկսել⁸:

Հայ-բելառուսական հարաբերություններում առանձնակի կարևորվում է 2001 թ. մայիսի 26-27-ը Բելառուսի նախագահ Ալեքսանդր Լուկաշենկոյի առաջին պաշտոնական այցը ՀՀ: Այն վկայում էր Բելառուսի համար Հայաստանի հետ հարաբերութ-

⁶ Նույն տեղում, ց. 5, գ. 275, թ. 3:

⁷ <http://www.gov.am/am/news/item/1103/>.

⁸ <http://egovernment.am/am/news/item/1224/>.

յունների առաջնայնության մասին⁹: Այցի ընթացքում ՀՀ նախագահ Ռ. Քոչարյանը և ԲՀ նախագահ Ա. Լուկաշենկոն ստորագրել են «ՀՀ և ԲՀ միջև բարեկամության և համագործակցության մասին» պայմանագիրը, համաձայնագրեր՝ ներդրումների իրագործմանն աջակցելու և փոխադարձ պաշտպանության մասին, արդարադատության, կրթության բնագավառներում համագործակցության մասին (ընդհանուր առմամբ՝ 5 փաստաթուղթ)¹⁰: Պաշտոնական այցի շրջանակներում Բելառուսի նախագահը Ծիծեռնակաբերդի հուշահամալիր այցի ավարտին Հայոց ցեղասպանության առնչությամբ նշեց. «Մենք լավ գիտենք այդ փաստը ճանաչելու ուղղությամբ աշխարհում սկսված շարժման մասին: Ես կարծում եմ, որ Բելառուսի ժողովուրդը և պետությունը պարտք չեն մնա հայերին»¹¹: Այդուհանդերձ, նրա խոսքերն իրական գործի չվերածվեցին: Այդ է փաստում նաև այն հանգամանքը, որ արդեն իսկ 2010 թ. ՀՀ-ում ԲՀ արտակարգ և լիազոր դեսպան Ստեպան Սուխարենկոն, մեկնաբանելով այն, թե ինչու Մինսկը Հայոց ցեղասպանությունը դատապարտող բանաձև չի ընդունում, ասել է, որ այդ հարցը դեռևս ամբողջությամբ ուսումնասիրված չէ: Ինչ վերաբերում է Լեոնային Ղարաբաղի հիմնախնդրին, վերջինս նշել է, որ Բելառուսը բազմիցս ամենաբարձր մակարդակով հայտարարել է, որ Ղարաբաղյան հակամարտությունը պետք է կարգավորվի խաղաղ ճանապարհով՝ տարածքային ամբողջականության և ազգերի ինքնորոշման իրավունքի հիման վրա, իհարկե, պահպանելով բոլոր կողմերի շահերը¹²:

⁹ «Հայաստանի Հանրապետություն», 30 մայիսի 2001 թ.:

¹⁰ «Ազգ», 26 մայիսի 2001 թ.:

¹¹ Նույն տեղում, 29 մայիսի 2001 թ.:

¹² <http://www.panarmenian.net/arm/news/54780/>.

2001 թ. սեպտեմբերի 1-ին ՀՀ-ում սկսեց գործել Բելառուսի դեսպանատունը: 2002-2003 թթ. այն զլխավորում էր ՀՀ-ում գործերի ժամանակավոր հավատարմատար Վալերի Սիսունը¹³: Իսկ արդեն 2003 թ. մարտի 4-ին ՀՀ նախագահ Ռ. Քոչարյանին իր հավատարմագրերն հանձնեց Հայաստանում ԲՀ նորանշանակ դեսպան Մարինա Դուգուպուլովան¹⁴: 2008 թ. օգոստոսի 14-ին ՀՀ-ում ԲՀ դեսպան նշանակվեց Ս. Սուխարենկոն: Վերջինս 2005-2007 թթ. հանդիսացել է ԲՀ Ազգային անվտանգության կոմիտեի նախագահը¹⁵:

2000-ականներին հայ-բելառուսական հարաբերություններում կայուն զարգացման միտում էր նկատվում: Կանոնավոր տեղի էին ունենում հանդիպումներ երկու երկրների նախագահների և կառավարությունների միջև: Ստորագրվեցին ավելի քան 30 միջպետական պայմանագրեր և համաձայնագրեր: 2001 թ. մայիսին նախագահների կողմից ստորագրված բարեկամության և համագործակցության մասին պայմանագիրը 2003 թ. վավերացվեց երկու երկրների խորհրդարանների կողմից¹⁶: Այն կնքվել է 10 տարի ժամկետով¹⁷:

Բավականին արդյունավետ բնույթ էր կրում հայ-բելառուսական համագործակցությունը միջազգային կազմակերպություններում, որտեղ Բելառուսը հուսալի գործընկեր էր: Այսպես, օրինակ, հայկական կողմի խնդրանքով Բելառուսը չի մասնակցել ՄԱԿ-ի և ԵԱՀԿ-ի համագործակցության հարցի՝ Լեռնային Ղարաբաղին վերաբերող քվեարկությանը: ՄԱԿ-ի Մարդու

¹³ «Ազգ», 23 օգոստոսի 2002 թ.:

¹⁴ ՀՀ-ում Բելառուսի Հանրապետության դեսպանատան ընթացիկ արխիվ:

¹⁵ http://naviny.by/rubrics/politic/2008/08/14/ic_news_112_295708/.

¹⁶ http://www.mfa.gov.by/press/news_mfa/cdf3991e2e2ff587.html.

¹⁷ ՀՀ ԱԳՆ արխիվ, ց. 7, գ. 243, թ. 87-90:

իրավունքների հանձնաժողովի 57-րդ նստաշրջանում Բելառուսը համահեղինակ է դարձել Հայաստանի առաջարկած «Կոնվենցիա ցեղասպանության հանցագործության կանխարգելման և պատժի մասին» բանաձևին¹⁸:

Տարբեր գերատեսչությունների արդյունավետ համագործակցության մասին է վկայում 2000 թ. սեպտեմբերի 20-ին Կիևում ՀՀ ազգային վիճակագրական ծառայության և ԲՀ վիճակագրության և վերլուծության նախարարության միջև համագործակցության մասին համաձայնագրի ստորագրումը¹⁹, 2001 թ. նոյեմբերի 4-6-ը ՀՀ ներքին գործերի նախարար Հ. Հարությունյանի զլխավորած պատվիրակության այցը Բելառուս, 2002-2003 թթ. փոխգործողությունների մասին արձանագրության ստորագրումը: Համանման արձանագրություն ստորագրվեց նաև ՀՀ ՆԳ փոխնախարար Ա. Երիցյանի և ԲՀ ՆԳՆ կազմակերպված հանցավորության և կոռուպցիայի դեմ պայքարի կոմիտեի նախագահ Մ. Մեդվեդևի միջև²⁰:

2002 թ. մարտի 14-16-ին ՀՀ ԱԳ նախարար Վ. Օսկանյանի զլխավորած պատվիրակության առաջին պաշտոնական այցի ընթացքում հանդիպումներ տեղի ունեցան ԲՀ վարչապետ Գ. Նովիցկու, ԱԳ նախարար Մ. Պոպովի, նախագահի աշխատակազմի ղեկավար, նախկին արտգործնախարար Ռ. Լատիպովի հետ: Պաշտոնական բոլոր հանդիպումների ընթացքում երկուստեք նշվել է երկու պետությունների միջև քաղաքական տարաձայնությունների բացակայության փաստը:

2002 թ. հունիսի 6-7-ը ՀՀ նախագահ Ռ. Քոչարյանի պաշտոնական այցը Բելառուս առաջին հերթին նպատակ էր հե-

¹⁸ Նույն տեղում, ց. 8, գ. 238, թ. 66:

¹⁹ ՀԱԱ. ֆ. 113, ց. 203, գ. 834, թ. 6:

²⁰ Նույն տեղում, թ. 57-59:

տապնդում զարգացնել և ընդլայնել հայ-բելառուսական առևտրատնտեսական հարաբերությունները: Այցի ընթացքում ստորագրվել են՝ համաձայնագիր՝ «Հայաստանի և Բելառուսի կառավարությունների միջև Հայաստանի և Բելառուսի քաղաքացիների առանց այցագրերի փոխայցելությունների մասին», արձանագրություն՝ Հայաստանի և Բելառուսի կառավարությունների միջև ազատ առևտրի մասին, սպառազինության և ռազմական տեխնիկայի փոխադարձ մատակարարումների մասին համաձայնագիր²¹: Այցի ընթացքում ձեռք բերվեցին մի շարք կոնկրետ պայմանավորվածություններ՝ բելառուսական ավտոբուսներ, «Բելազ» մականիշի խոշոր բեռնատարներ ձեռք բերելու, Հայաստանում բելառուսական տրակտորների տեխնիկական սպասարկմամբ զբաղվող տարածաշրջանային կենտրոն բացելու, հոկտեմբերին Մինսկում կայանալիք հայ-բելառուսական բիզնես ֆորումի անցկացման վերաբերյալ²²: Այցի շրջանակներում երկու երկրների մայրաքաղաքների միջև կնքվեց համագործակցության մասին համաձայնագիր²³: Հայաստանի և Բելառուսի միջև ձեռնարկատիրական գործունեության ոլորտում առկա է բավականին լայն իրավապայմանագրային դաշտ. 2010 թ. դրությամբ առկա էր 14 պայմանագիր:

2002 թ. հայ-բելառուսական համագործակցությունը ռազմական ոլորտում դինամիկ զարգացում է ապրել: Համագործակցությունը նոր ազդակ է ստացել 2002 թ. նոյեմբերի 25-27-ին ԲՀ պաշտպանության նախարար, գեներալ-գնդապետ Լ. Մալցևի՝ Հայաստան այցի շնորհիվ: 2003 թ. ռազմական և ռազմատեխնիկական ոլորտներում համագործակցությունը ձեռք է բերել ավե-

²¹ «Ազգ», 7 հունիսի 2002 թ.:

²² ՀՀ ԱԳՆ արխիվ, ց. 8, գ. 239, թ. 105-107:

²³ Նույն տեղում, ց. 15, գ. 91, թ. 95:

լի գործնական ուղղվածություն, որի մասին վկայում է 2003 թ. կնքված համագործակցության մասին համաձայնագիրը²⁴:

Երկկողմ հարաբերությունների զարգացման տեսակետից կարևորվում են ՀՀ պաշտպանության նախարար, ՀՀ նախագահին առընթեր անվտանգության խորհրդի քարտուղար Ս. Սարգսյանի 2003 թ. հոկտեմբերի 9-11-ը Բելառուս կատարած այցը, ինչպես նաև ԲՀ ԱԳ նախարար Մարտինովի հոկտեմբերի 16-ին պաշտոնական այցը Հայաստան: Դա կողմերին հնարավորություն է տվել խորությամբ ընկալել միմյանց դիրքորոշումները արտաքին քաղաքական ոլորտին առնչվող սկզբունքային հարցերի շուրջ: Ձեռք են բերվել պայմանավորվածություններ նաև միջազգային կազմակերպություններում համագործակցության մասին²⁵: Բելառուսի ԱԳ նախարարի խոսքով՝ Բելառուսի արտաքին քաղաքականության մեջ առաջնահերթություն են նրա հարևան բոլոր երկրները, ու, թեև, Հայաստանը մոտ չէ աշխարհագրորեն, բայց նրա հետ հարաբերությունները ևս առաջնահերթ են²⁶:

2004 թ. փետրվարի 23-26-ը ՀՀ ԱԺ նախագահ Ա. Բաղդասարյանի գլխավորած պատվիրակության պաշտոնական այցը խորհրդարանական պատվիրակության առաջին այցն էր: Այցի ընթացքում ստորագրվեց համագործակցության մասին համաձայնագիր, և ստեղծվեց միջխորհրդարանական համագործակցության հանձնաժողով: Այցի շրջանակներում ՀՀ ԱԺ վերահսկիչ պալատի նախագահ Գ. Ոսկանյանը և ԲՀ պետական

²⁴ Նույն տեղում, ց. 12, գ. 161, թ. 121:

²⁵ Նույն տեղում, ց. 9, գ. 170, թ. 83:

²⁶ «Հայաստանի Հանրապետություն», 18 հոկտեմբերի 2003 թ.:

վերահսկողության կոմիտեի նախագահ Ա. Տոգիկը ստորագրել են համագործակցության մասին համաձայնագիր²⁷:

2005 թ. հայ-բելառուսական հարաբերությունների զարգացման տարի էր: Որակական նոր բնույթ ստացան համագործակցությունը կառավարությունների, խորհրդարանների, նախարարությունների և զանազան գերատեսչությունների մակարդակով: Տնտեսական, ռազմական և ռազմատեխնիկական, գիտության, կրթության, մշակույթի ոլորտներում համագործակցության մասին կոնկրետ պայմանավորվածություններ են ձեռք բերվել 2005 թ. մայիսի 2-4-ը ՀՀ վարչապետ Ա. Մարգարյանի՝ Բելառուս կատարած երկրորդ այցի ընթացքում²⁸: Բելառուսում գտնվելու ընթացքում ՀՀ վարչապետն այցելեց «ՄԱԶ» արտադրական միավորում, մասնակցեց հայ-բելառուսական գործարար համաժողովի և Հայաստանում արտադրվող ապրանքատեսականու ցուցահանդեսի բացմանը²⁹: Ակտիվացան երկու երկրների շփումները նաև մշակույթի, արվեստի և կրթության ոլորտում: Հայկական տարբեր ստեղծագործական խմբեր, գեղարվեստական կոլեկտիվներ մասնակցեցին Բելառուսում անցկացված փառատոններին³⁰:

2006 թ. և հաջորդող տարիներին ամրապնդվեցին հայ-բելառուսական հարաբերությունների վերջին տարիների զարգացման միտումները: Շարունակվեցին բարձր մակարդակի երկկողմ կանոնավոր շփումները, փոխգործակցությունը արտաքին քաղաքական գերատեսչությունների միջև, այդ թվում՝ տարածաշրջանային ու միջազգային կազմակերպությունների շրջանակներում:

²⁷ ՀՀ ԱԳՆ արխիվ, ց. 10, գ. 128, թ. 22-29:

²⁸ Նույն տեղում, ց. 11, գ. 138, թ. 98-99:

²⁹ <http://www.gov.am/am/news/item/1647/>:

³⁰ ՀՀ ԱԳՆ արխիվ, ց. 11, գ. 138, թ. 101:

Փոխայցելությունների նախանշված ծրագրով հոկտեմբերին կայացավ ԲՀ վարչապետի այցը Հայաստան: Երկու երկրների միջև գործող իրավապայմանագրային դաշտը համալրվեց այցի շրջանակներում ստորագրված վեց փաստաթղթերով:

ՀՀ նախագահ Ռ. Քոչարյանի 2006 թ. հունիսի 1-ի հրամանագրերով Սուրեն Հարությունյանն ազատվեց Բելառուսում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպանի, նաև ԱՊՀ կանոնադրական և այլ մարմիններում ՀՀ մշտական լիազոր-ներկայացուցչի պարտականություններից: Այդ պաշտոններում նշանակվեց Օլեգ Եսայանը³¹: Իսկ 2010 թ. ապրիլի 26-ին ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի հրամանագրով այդ պաշտոնում նշանակվեց Արմեն Խաչատրյանը՝ ազատվելով Ուկրաինայում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպանի պարտականություններից³²:

2006 թ. հոկտեմբերի 22-ին պաշտոնական այցով Հայաստան ժամանած Բելառուսի վարչապետ Ս. Սիդորսկու գլխավորած պատվիրակությունը հոկտեմբերի 23-ին հանդիպեց ՀՀ վարչապետ Ա. Մարգարյանի հետ: Հանդիպման ընթացքում կողմերը կարևորեցին և հեռանկարային համարեցին տեղեկատվական տեխնոլոգիաների, դեղագործության, գյուղատնտեսության, էներգետիկայի, աղամանդագործության և ոսկերչության ու մի շարք այլ ոլորտներում համագործակցության զարգացումը³³:

2006 թ. բարելավվեց տրանսպորտային կապը Բելառուսի հետ: «Բելավիա» ընկերության հետ բանակցությունների արդյունքում նույններից սկսեց գործել «Արմավիա» ընկերության Երևան-Մինսկ-Երևան չվերթը: Այն իրականացվում էր շաբաթը

³¹ <http://armenpress.am/arm/news/659/>.

³² http://www.report.am/am/news/other-2/old_1156.

³³ <http://www.gov.am/am/news/item/2869/>.

մեկ սնգամ՝ ի լրումն նույն պարբերականությամբ իրականացվող «Բելավիա» ընկերության Մինսկ-Երևան-Մինսկ չվերթի³⁴:

2007 թ. սկիզբը նշանավորվեց փետրվարի 17-ին ՀՀ-ում տեղի ունեցած հայ-բելառուսական միջխորհրդարանական համագործակցության երկրորդ նիստով, որի ընթացքում քննարկվեցին երկկողմ առևտրատնտեսական համագործակցության, ազգային օրենսդրությունների մերձեցման ու օրենսդրական փորձի փոխանակման, իրավապայմանագրային դաշտի զարգացման և այլ ոլորտներին առնչվող հարցեր³⁵:

Միջտարածաշրջանային փոխշահավետ համագործակցության վառ օրինակ է 2007 թ. սեպտեմբերի 24-30-ը Մինսկի մարզի Ժողինոյի քաղաքապետարանի հրավերով ՀՀ Սյունիքի մարզի Քաջարանի քաղաքապետ Վ. Գևորգյանի գլխավորած 17 հոգանոց պատվիրակության այցելությունը Բելառուս³⁶: Քույր քաղաքներ Ժողինոյի և Քաջարանի միջև տարբեր ոլորտներում համագործակցության զարգացման ու մշակութային կապերի ամրապնդման հարցերի հետ մեկտեղ քննարկվել են «Բելազ» մականիշի խոշոր ինքնաթափերի Հայաստան առաքման և հուսալի շահագործման խնդիրները³⁷: 2008 թ. հունիսին կայացել է Մինսկի մարզի գործկոմի նախագահ Ֆ. Կրուպեցի գլխավորած պատվիրակության այցը Սյունիքի մարզ³⁸, իսկ դեկտեմբերի 8-11-ը այցով Մինսկում էր ՀՀ Սյունիքի մարզպետ Ս. Խաչատրյանի գլխավորած պատվիրակությունը³⁹: Կայացած հանդիպումների արդյունքում փոխհամաձայնեցվել և ստորագրվել են համա-

³⁴ ՀՀ ԱԳՆ արխիվ, ց. 13, գ. 90, թ. 9:

³⁵ Նույն տեղում, ց. 13, գ. 90, թ. 88:

³⁶ Նույն տեղում, թ. 89:

³⁷ <http://www.mfa.am/hy/press-releases/item/2007/10/02/kajaran/>.

³⁸ Նույն տեղում, ց. 14, գ. 114, թ. 89:

³⁹ <http://www.mfa.am/hy/press-releases/item/2008/12/17/belarus/>.

գործակցության պայմանագրեր Կապան և Բորիսով, Ագարակ և Սուլիգորսկ, Սիսիան և Սլուցկ, Մեղրի և Մյադել, Գորիս և Նեսվիժ քաղաքների միջև⁴⁰: Գլխավորապես առևտրատնտեսական համագործակցություն էր նկատվում ԲՀ Մինսկի շրջանի և ՀՀ Սյունիքի մարզի միջև: 2010 թ. տեղի ունեցան փոխադարձ այցեր՝ ՀՀ Շիրակի մարզի մարզպետի այցը ԲՀ Գրոդնոյի շրջան, ՀՀ Արագածոտնի մարզպետի այցը ԲՀ Մոգիլովի շրջան, ԲՀ Վիտեբսկի շրջանի ղեկավարության այցը ՀՀ Տավուշի մարզ: Նշված շրջանների միջև համաձայնագրեր են կնքվել առևտրատնտեսական, գիտատեխնիկական և մշակութային ոլորտներում համագործակցության մասին⁴¹:

2008 թ. նոյեմբերի 27-28-ը ՀՀ արտգործնախարար Է. Նալբանդյանի՝ Բելառուս կատարած պաշտոնական այցի շրջանակներում քննարկվեցին երկկողմ, տարածաշրջանային հարցերի լայն շրջանակ⁴²:

2009 թ. մարտի 11-ին աշխատանքային այցով Հայաստան ժամանած Բելառուսի նախագահ Ա. Լուկաշենկոյի հետ քննարկել են երկու երկրների միջպետական հարաբերությունների խորացմանը, առևտրատնտեսական կապերի հետագա ընդլայնմանը, միջազգային կազմակերպություններում ու կառույցներում համագործակցությանը, գլոբալ ֆինանսատնտեսական ճգնաժամի պայմաններում ազգային տնտեսությունների առջև ծառացած մարտահրավերների դիմագրավմանը վերաբերող հարցեր⁴³: Բելառուսի նախագահը հայ գործարար շրջանակներին առաջարկել է ներդրումային և այլ նախագծեր իրականացնել

⁴⁰ «Հայաստանի Հանրապետություն», 12 դեկտեմբերի 2008 թ.:

⁴¹ http://armenia.mfa.gov.by/ru/bilateral_relations/political/.

⁴² ՀՀ ԱԳՆ արխիվ, ց. 14, գ. 114, թ. 88:

⁴³ <http://m.president.am/hy/press-release/item/2009/03/11/news-435/>.

Բելառուսում: Այդ նպատակով Մինսկ են մեկնել «Մուլտի Գրուպ» կոնցերնի նախագահ Գազիկ Ծառուկյանն ու «Արդիմպեքս» ՍՊԸ-ի գլխավոր տնօրեն Ռոբերտ Տոնոյանը⁴⁴:

Իսկ արդեն հոկտեմբերի 29-31-ին պաշտոնական այցով Հայաստանում գտնվող Բելառուսի արտգործնախարար Ս. Մարտինովի և ՀՀ արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանի համատեղ մամլո ասուլիսին Մարտինովը նշեց. «Բելառուսը հուսով է, որ Հայաստանն ու Ադրբեջանը կկարողանան փոխգիջման հասնել Ղարաբաղյան հակամարտության կարգավորման հարցում»: Անդրադառնալով Ադրբեջանին Բելառուսի կողմից զենքի առաքմանը՝ Մարտինովն ասաց, որ այդ քայլով Մինսկը չի խախտում միջազգային պարտավորություններն ու ՀԱՊԿ գծով ստանձնած պարտավորությունները⁴⁵: ԲՀ նախարարը ելույթով հանդես եկավ ԵՊՀ ուսանողների և պրոֆեսորադասախոսական կազմի առջև՝ «Բելառուս. արտաքին քաղաքականության ակտուալ ուղղությունները» թեմայով: ԲՀ նախարարի Շիրակի մարզ այցի արդյունքում կնքվել է համաձայնագիր Բելառուսի Գրողնոյի շրջանի և ՀՀ Շիրակի մարզի միջև՝ առևտրատնտեսական, գիտատեխնիկական և մշակութային ոլորտներում համագործակցության մասին⁴⁶:

2009 թ. Ռուսաստանի և Բելառուսի միջև սկիզբ առած տարաձայնությունները՝ պայմանավորված եներգակիրները Բելառուսին շուկայական գնով առաքելու ՌԴ նոր քաղաքականությամբ, առիթ հանդիսացան Բելառուսի կողմից եվրոպական երկրների հետ հարաբերությունները վերակառուցելուն ուղղված որոշ քայլեր կատարելու համար: 2009 թ. ապրիլին բելառուս ժողովրդին և Ազգային ժողովին ուղված իր ուղերձում Լու-

⁴⁴ <http://www.newsarmenia.am/arm1/20090617/42091895.html>.

⁴⁵ «Ազգ», 31 հոկտեմբերի 2009 թ.:

⁴⁶ http://mfa.gov.by/press/news_mfa/ff734b2bcd2dc90e.html.

կաշենկոն շեշտում էր, որ այն կարող է իրականացվել առանց նախապայմանների և չի կարող ուղղված լինել ընդդեմ Ռուսաստանի: Եվրոպական կառույցները և ԱՄՆ-ն եներգակիրները եվրոպական երկրներ առաքման, ինչպես նաև 2008 թ. օգոստոսի վրաստանյան իրադարձությունների շուրջ ՌԴ-ի հետ ծագած տարաձայնությունների արդյունքում սկսեցին որոշակի պատրաստակամությամբ արձագանքել երկխոսություն ծավալելու Բելառուսի նախաձեռնություններին⁴⁷: 2010 թ. մարտի 22-ին Հայաստանում էր ԲՀ ԱԺ պատվիրակությունը՝ փոխնախագահ Վ. Իվանովի գլխավորությամբ՝ մասնակցելու ՀՀ և ԲՀ ԱԺ-ների միջխորհրդարանական հանձնաժողովի 4-րդ նիստի աշխատանքներին⁴⁸: Իսկ 2010 թ. օգոստոսի 17-ին աշխատանքային այցով Հայաստան ժամանեց Բելառուսի նախագահ Ա. Լուկաշենկոն՝ մասնակցելու օգոստոսի 20-22-ը անցկացվելիք ՀԱՊԿ երկրների նախագահների գագաթնաժողովին: Դեկտեմբերի 2-ին կայացել է Բելառուսի գործարարների պատվիրակության այցը Հայաստան⁴⁹:

Այսպիսով, կարող ենք փաստել, որ ՀՀ-ի և ԲՀ-ի հարաբերություններին հիմնականում բնորոշ էր քաղաքական տարաձայնությունների բացակայությունը, միջազգային առանցքային հարցերում համանման դիրքորոշումները, միջազգային կազմակերպություններում գործողությունների համաձայնեցումը: Հարաբերությունների նման մակարդակը հետագա տարիներին առկա բոլոր ոլորտներում համագործակցությունն ավելի ընդլայնելու ու զարգացնելու հնարավորություն է տալիս:

⁴⁷ ՀՀ ԱԳՆ արխիվ. ց. 15, գ. 91, թ. 49:

⁴⁸ http://www.parliament.am/news.php?cat_id=2&NewsID=3832&year=2010&month=03&day=22.

⁴⁹ http://www.mfa.am/u_files/file/reports/report2010.pdf.

**ARMENIAN-BELARUSIAN INTERSTATE
RELATIONS IN 2000-2010**

SUMMARY

After the collapse of the Soviet Union for the post-Soviet countries was of a key importance establishment of multilateral relations with each other. Diplomatic relations between Belarus and Armenia were established on June 13, 1993. In September 2001 in Yerevan, opened the Embassy of the Republic of Belarus. Embassy of the Republic of Armenia in the Republic of Belarus has been operating since 1993. With the establishment of diplomatic relations cooperation between the two sovereign states of Armenia and Belarus reached a qualitatively new level, an important factor of which is the active political dialogue, supported by the leadership of Armenia and Belarus, both bilateral and in multilateral activities. Relations between the two countries characterized by political proximity of positions on most key international problems, coherence and mutual support in international organizations interested in improving the efficiency of cooperation within the CIS, the creation of the SCTO.

АРМЯНО-БЕЛАРУССКИЕ МЕЖГОСУДАРСТВЕННЫЕ ОТНОШЕНИЯ В 2000-2010 ГОДАХ

РЕЗЮМЕ

13 июня 1993 г. между Республикой Беларусь и Арменией были установлены дипломатические отношения. С этим сотрудничество двух суверенных государств вышло на качественно новый уровень. Важным фактором в отношениях стран является активный политический диалог, поддерживаемый руководством. Отношениям между странами свойственно близость позиций по большинству ключевых международных проблем, согласование действий и взаимная поддержка в международных организациях, заинтересованность в повышении эффективности сотрудничества в рамках СНГ, создания в рамках ОДКБ системы коллективной безопасности.

ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Գոհար Վարդումյան

ԳԱԱ պատմության ինստիտուտի Հին դարերի պատմության բաժնի առաջատար գիտաշխատող, պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ

Վահե Սարգսյան

ԳԱԱ պատմության ինստիտուտի Հին դարերի պատմության բաժնի ավագ լաբորանտ

Կարինե Մելիքյան

ԳԱԱ պատմության ինստիտուտի Միջին դարերի պատմության բաժնի ավագ գիտաշխատող, պատմական գիտությունների թեկնածու

Գոռ Էրանյան

ԳԱԱ պատմության ինստիտուտի ասպիրանտ

Արտաշես Շահնազարյան

ԳԱԱ պատմության ինստիտուտի Միջին դարերի պատմության բաժնի վարիչ, պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ

Գայանե Այվազյան

Մաշտոցի անվան Մատենադարանի ավագ գիտաշխատող, պատմական գիտությունների թեկնածու

Հասմիկ Ամիրջանյան

ԳԱԱ պատմության ինստիտուտի Նոր պատմության բաժնի գիտաշխատող, պատմական գիտությունների թեկնածու

Լիլիթ Քոսյան

ԳԱԱ պատմության ինստիտուտի հայցորդ

Սամվել Պողոսյան

Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ Հայոց պատմության ամբիոնի դոցենտ, պատմական գիտությունների թեկնածու

Սմբատ Մինասյան

ԵՊՀ Միջազգային հարաբերությունների և դիվանագիտության ամբիոնի դասախոս, պատմական գիտությունների թեկնածու

Խաչատուր Ստեփանյան

Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ Հայոց պատմության ամբիոնի դոցենտ, պատմական գիտությունների թեկնածու

Համո Սուքիասյան

ԳԱԱ պատմության ինստիտուտի Նորագույն պատմության բաժնի գիտաշխատող, պատմական գիտությունների թեկնածու

Կարեն Խաչատրյան

ԳԱԱ պատմության ինստիտուտի փոխտնօրեն,
Նորագույն պատմության բաժնի առաջատար
գիտաշխատող, ԳԱԱ ԳԿՄԿ Պատմության և
միջազգային հարաբերությունների ամբիոնի
վարիչ, պատմական գիտությունների թեկնա-
ծու, դոցենտ

Գայանե Ղազարյան

ԳԱԱ ԳԿՄԿ մագիստրատուրայի «Պատմութ-
յուն» մասնագիտության երկրորդ կուրսի ուսա-
նողուհի

Գագիկ Ժամհարյան

Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական
մանկավարժական ինստիտուտի հենակետա-
յին վարժարանի ուսուցիչ, պատմական գի-
տությունների թեկնածու

Արմինե Սողոմոնյան

ԳԱԱ ԳԿՄԿ մագիստրատուրայի «Միջազգա-
յին հարաբերություններ» մասնագիտության
շրջանավարտ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԳՈՂԱՐ ՎԱՐԴՈՒՄՅԱՆ

ՀԻՆ ՀԱՅՈՑ ԱՐԵՎԱՅԻՆ ԱՍՏՎԱԾ ՄԻՀՐԸ՝
ԲԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐԴԱՐՈՒԹՅԱՆ ՀՈՎԱՆԱՎՈՐ 3

ՎԱՀԵ ԱԱՐԳԱՅԱՆ

ԱՐԾՐՈՒՆԻՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ՍԵՊԱԳԻՐ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԵՎ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ
ԱՂԲՅՈՒՐՆԵՐՈՒՄ 20

ԿԱՐԻՆԵ ՄԵԼԻՔՅԱՆ

ՍԱՀԱԿ ՊԱՐԹԵՎԻ ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԸ
ՈՐՊԵՍ ՀՈԳԵԻՈՐ ՎԵՐԱԾՆՈՒԹՅԱՆ ՍԿԻՋԲ 30

ԳՈՌ ԵՐԱՆՅԱՆ

ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՀԱՅ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ «ՄԱՐ»
ԵՎ «ՔՈՒՐԴ» ԷԹՆՈՆԻՄՆԵՐԻ ՆՈՒՅՆՈՒԹՅԱՆ
ՀԱՐՅԻ ՇՈՒՐՋ 44

ԱՐՏԱՇԵՍ ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ

ԱՐՅԱԽԻ ԻՇԽԱՆԱԿԱՆ ՏՆԵՐԻ ԷԹՆԻԿ ՊԱՏԿԱՆԵԼՈՒԹՅԱՆ
ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ՆԵՆԳԱՓՈԽՄԱՆ ՇՈՒՐՋ 73

ԳԱՅԱՆԵ ԱՅՎԱԶՅԱՆ

ԵՐԵՍԻԱ ՉԵԼԵՊԻ ՔՅՈՍՈՒՐՃՅԱՆԻ «ՕՐԱԳՐՈՒԹԻՒՆ» ԵՐԿԸ 89

ՀԱՍՄԻԿ ԱՄԻՐՋԱՆՅԱՆ

ՎՐԱՅ ԻՇԽԱՆՆԵՐ ԲԱՐԱԹՈՎՆԵՐԻ ՊԱՅՔԱՐԸ ՀԱՂՊԱՏԻ ՎԱՆՔԻ
ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ XIX ԴԱՐՈՒՄ 109

ԼԻԼԻԹ ՔՈՍՅԱՆ

ՀԱՅ ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ ԴՐՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՑՈԼՈՒՄԸ
ԿՈՎԿԱՍԻ ՀԱՅՈՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ԱՐԽԻՎԱՅԻՆ ՆՅՈՒԹԵՐՈՒՄ (1896 թ.) 124

ՍԱՄՎԵԼ ՊՈՂՈՍՅԱՆ

ՄՈՒՍԱԼԵՌՅՈՒՆԵՐԻ ԿԱՄԱՎՈՐԱԳՐՈՒՄԸ ԱՐԵՎԵԼՅԱՆ
ԼԵԳԵՈՆԻՆ 134

ՍՄԲԱՏ ՄԻՆԱՍՅԱՆ

ՀԱՅ ԶԻՆՎՈՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀԱՐԱՎԻ ՈՉ
ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԶԻՆՎԱԾ
ՈՒԺԵՐՈՒՄ 1918-1920 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ 148

ԽԱՉԱՏՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԱՆՏԵՍՈՒՄԸ ՈՐՊԵՍ 1921 թ.
ՓԵՏՐՎԱՐՅԱՆ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԻՑ ՄԵԿԸ 160

ՀԱՄՈ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

ՀՍԽՀ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ԺՈՂԿՈՄԱՏԻ ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ 1921-1922 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ 172

ԿԱՐԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԼՂԻՄ-Ի ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ՆՐԱ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ
ԿՈՐՈՒՍՏՆԵՐԸ (1920-1930-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐ) 184

ԳԱՅԱՆԵ ՂԱԶԱՐՅԱՆ

ԱԿՍԵԼ ԲԱԿՈՒՆՅԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԶԱՆԳԵԶՈՒՐԻ
ԳԱՎԱՌԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՀԱՅ-ԱՂԲԵԶԱՆԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԸ
ՈՐՈՇՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻՆ
(1920-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐ) 218

ԳԱԳԻԿ ԺԱՍՆԱՐՑԱՆ

ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻՆ ՈՒՂՂՎԱԾ ՆԱՄԱԿՆԵՐՆ ԻԲՐԵՎ
1930-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԱՀԱՅ ԱՌՕՐԵԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԵՏԱԶՈՏՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ 227

ԿԱՐԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՌԱԶՄԱԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐԻ
ԶԱՐԳԱՅՄԱՆ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ՀԱՄԱԿԱՐԳԸ ՀԵՏՊԱՏԵՐԱԶՄՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՏԱՄՆԱՄՅԱԿՆԵՐԻՆ
(1945–1960–ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐ) 240

ԱՐՄԻՆԵ ՍՈՂՈՄՈՆՅԱՆ

ՀԱՅ-ԲԵԼԱՌՈՒՍԱԿԱՆ ՄԻՋՊԵՏԱԿԱՆ
ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 2000-2010 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ 268
ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ 285

CONTENTS

GOHAR VARDUMYAN

THE ARMENIAN SOLAR GOD MIHR –
THE PROTECTOR OF THE GOOD AND JUSTICE 3

VAHE SARGSYAN

EVIDENCE OF THE ARTSRUNIS
IN CUNEIFORM INSCRIPTIONS AND MEDIEVAL SOURCES 20

KARINE MELIKYAN

THE PERIOD OF PATRIARCHATE OF SAHAK PARTEV
AS A START OF SPIRITUAL REGENERATION 30

GOR YERANYAN

DISCUSSIONS AROUND THE ISSUE OF IDENTIFICATION OF KURD
AND MEDIAN ETHNONYMS IN
ARMENIAN MEDIEVAL SOURCES 44

ARTASHES SHAHNAZARYAN

AZERBAIJANI ATTEMPTS TO FALSIFY THE ETHNIC BELONGING OF
ARTSAKH PRINCLEY HOUSES 73

GAYANE AYVAZYAN

THE WRITING BY YEREMIA CHELEBI
QYOMURTCHYAN "DIARY" 89

HASMIK AMIRJANYAN

THE STRAGGLE OF THE GEORGIAN FAMILIES BARATOVVS FOR THE
HAGHPATS EARDS 109

LILIT KOSYAN

THE STATE OF ARMENIAN REFUGEES ACCORDING TO ARMENIAN
BENEVOLENT SOCIETY OF THE CAUCASIAN ARCHIVES (1896)124

SAMVEL POGHOSYAN

THE VOLUNTEERING OF MUSA DAGH ARMENIANS IN
THE ARMENIAN LEGION..... 134

SMBAT MINASYAN

ARMENIANS IN THE FORCES OF THE ANTI-SOVIET STATE
FORMATIONS OF THE SOUTH OF RUSSIA IN 1918-1920..... 148

KHACHATUR STEPANYAN

VIOLATION OF NATIONAL ISSUES AS THE CAUSE
OF THE REBELLION IN 1921..... 160

HAMO SUKLASYAN

THE PUBLISHING ACTIVITY OF THE PEOPLE'S COMMISSARIAT
OF FOREIGN AFFAIRS OF SSRA IN 1921-1922 172

KAREN KHACHATRYAN

FORMATION AND TERRITORIAL LOSSES OF NKAO
(THE 1920-1930s) 184

GAYANE GHAZARYAN

AKSEL BAKUNTS' PARTICIPATION AT THE ACTIVITIES OF COMMITTEE
DETERMINING THE ARMENIAN-AZERBAIJNIAN BORDER AT THE
TERRITORY OF ZANGEZUR PROVINCE (IN THE 1920s) 218

GAGIK ZHAMHARYAN

THE LETTERS ADDRESSED TO THE AUTHORITIES AS THE SOURCES
OF THE INVESTIGATION OF THE SOVIET ARMENIAN EVERYDAY
LIFE HISTORY IN THE 1930s 227

KAREN KHACHATRYAN
PRIORITIES OF THE DEVELOPMENT OF THE SOVIET MILITARY-INDUSTRIAL COMPLEX AND ITS MANAGEMENT SYSTEM IN THE FIRST POST-WAR DECADES (THE 1945–1960s) 240

ARMINE SOGHOMONYAN
ARMENIAN-BELARUSIAN INTERSTATE RELATIONS IN 2000-2010 268

ABOUT THE AUTHORS 285

СОДЕРЖАНИЕ

ГОАР ВАРДУМЯН

БОГ СОЛНЦА МИҢР – ПОКРОВИТЕЛЬ ДОБРА
И СПРАВЕДЛИВОСТИ У ДРЕВНИХ АРМЯН 3

ВАГЕ САРГСЯН

СВИДЕТЕЛЬСТВА О РОДЕ АРЦРУНИ В КЛИНОПИСЯХ И
СРЕДНЕВЕКОВЫХ ИСТОЧНИКАХ 20

КАРИНЕ МЕЛИКЯН

ПЕРИОД ПАТРИАРШЕСТВА СААКА ПАРТЕВА КАК НАЧАЛО
ДУХОВНОГО ВОЗРОЖДЕНИЯ 30

ГОР ЕРАНЯН

ВОПРОС ОБ ИДЕНТИЧНОСТИ КУРДСКОГО И МИДИЙСКОГО
ЭТНОНИМОВ В АРМЯНСКИХ СРЕДНЕВЕКОВЫХ ИСТОЧНИКАХ .. 44

АРТАШЕС ШАХНАЗАРЯН

ОБ АЗЕРБАЙДЖАНСКОЙ ФАЛЬСИФИКАЦИИ ЭТНИЧЕСКОЙ
ПРИНАДЛЕЖНОСТИ КНЯЖЕСКИХ ДОМОВ АРЦАХА 73

ГАЯНЭ АЙВАЗЯН

ПРОИЗВЕДЕНИЕ “ДНЕВНИК” ЕРЕМИИ ЧЕЛЕБИ КЕМУРЧЯНА 89

АСМИК АМИРДЖАНИЯН

БОРЬБА ГРУЗИНСКИХ КНЯЖЕСКИХ РОДОВ БАРАТОВЫХ ЗА
ОСВОЕНИЕ ЗЕМЕЛЬ АХПАТСКОГО МОНАСТЫРЯ В XIX ВЕКЕ 109

ЛИЛИТ КОСЯН

ПОЛОЖЕНИЕ АРМЯНСКИХ БЕЖЕНЦЕВ ПО АРХИВНЫМ
ДОКУМЕНТАМ КАВКАЗСКОГО АРМЯНСКОГО
БЛАГОТВОРИТЕЛЬНО ОБЩЕСТВА (1896) 124

САМВЕЛ ПОГОСЯН

ВОЛОНТЕРСТВО МУСАДАГСКИХ АРМЯН В АРМЯНСКИЙ ЛЕГИОН.....	134
---	-----

СМБАТ МИНАСЯН

АРМЯНСКОЕ ВОИНСТВО В ВООРУЖЕННЫХ СИЛАХ АНТИСОВЕТСКИХ ГОСУДАРСТВЕННЫХ ОБРАЗОВАНИЙ ЮГА РОССИИ В 1918-1920 ГОДАХ	148
---	-----

ХАЧАТУР СТЕПАНЯН

ПОПИРАНИЕ НАЦИОНАЛЬНЫХ ПРОБЛЕМ КАК ОДНА ИЗ ПРИЧИН ФЕВРАЛЬСКОГО ВОССТАНИЯ 1921 Г.	160
--	-----

АМО СУКИАСЯН

ИЗДАТЕЛЬСКАЯ ДЕЯТЕЛЬНОСТЬ НАРОДНОГО КОМИССАРИАТА ИНОСТРАННЫХ ДЕЛ ССРА В 1921-1922 ГОДАХ	172
--	-----

КАРЕН ХАЧАТРЯН

ОБРАЗОВАНИЕ НКАО И ЕЕ ТЕРРИТОРИАЛНЫЕ ПОТЕРИ (1920–1930–ЫЕ ГОДЫ)	184
--	-----

ГАЯНЕ КАЗАРЯН

УЧАСТИЕ АКСЕЛА БАКУНЦА В КОМИССИИ ПО ОПРЕДЕЛЕНИЮ АРМЯНО-АЗЕРБАЙДЖАНСКОЙ ГРАНИЦЫ НА ТЕРРИТОРИИ ЗАНГЕЗУРСКОГО УЕЗДА (1920-ЫЕ ГОДЫ)	218
--	-----

ГАГИК ЖАМГАРЯН

АДРЕСОВАННЫЕ К ОРГАНАМ ВЛАСТИ ПИСЬМА – КАК ИСТОЧНИКИ ИССЛЕДОВАНИЯ ИСТОРИИ ПОВСЕДНЕВНОСТИ СОВЕТСКОЙ АРМЕНИИ 1930-ЫХ ГОДОВ	227
--	-----

КАРЕН ХАЧАТРЯН

**ПРИОРИТЕТЫ РАЗВИТИЯ СОВЕТСКОГО
ВОЕННОПРОМЫШЛЕННОГО КОМПЛЕКСА
И СИСТЕМА ЕЕ УПРАВЛЕНИЯ В ПЕРВЫЕ ПОСЛЕВОЕННЫЕ
ДЕСЯТИЛЕТИЯ (1945–1960–ЫЕ ГОДЫ) 240**

АРМИНЕ СОГОМОНЯН

**АРМЯНО-БЕЛАРУССКИЕ МЕЖГОСУДАРСТВЕННЫЕ ОТНОШЕНИЯ
В 2000-2010 ГОДАХ 268**

ОБ АВТОРАХ 285

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի «Հայոց պատմության հարցեր» տարեգրքին հոդվածներ ներկայացնելու չափորոշիչները.

- Հեղինակի անունը, հայրանունը, ազգանունը, գիտական աստիճանը, կոչումը, աշխատանքի (ուսման) վայրը, պաշտոնը, հեռախոսահամարը, էլեկտրոնային հասցեն:

- Հոդվածները ներկայացնել մինչև 15 էջ ծավալով, հայերեն, ռուսերեն և անգլերեն ամփոփագրերով (10-15 տող): Տառատեսակը հայերենի դեպքում՝ Sylfaen, այլ լեզուների՝ Times New Roman, տեքստի տառաչափը՝ 12, տողատակում՝ 9, միջտողային հեռավորությունը՝ 1.5, լուսանցքները՝ վերևից՝ 2, ներքևից՝ 2.5, ձախից՝ 3, աջից՝ 1:

- Գիտական աստիճան չունեցող հեղինակները պարտադիր պետք է ներկայացնեն հոդվածի մասին երաշխավորական գրություն գիտական ղեկավարից կամ գիտական (գիտակրթական) հաստատության համապատասխան մասնագիտական ստորաբաժանման կողմից:

- Հոդվածները պարտադիր ուղարկվում են գրախոսության, գիտական նորույթ չպարունակող կամ նախկինում հրատարակված հոդվածները չեն տպագրվում:

«Հայոց պատմության հարցեր» տարեգրքի բոլոր համարները էլեկտրոնային տարբերակով տե՛ս

<http://serials.flib.sci.am/openreader/test/index.html>

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ
(ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ)

THE PROBLEMS OF THE HISTORY OF ARMENIA
(A COLLECTION OF SCIENTIFIC ARTICLES)

ВОПРОСЫ ИСТОРИИ АРМЕНИИ
(СБОРНИК НАУЧНЫХ СТАТЕЙ)

15

Համակարգչային շարվածքը և ձևավորումը՝ Ա. Մարանգոզյանի
Տպագրիչ՝ Լ. Մուրադյան

Ստորագրված է տպագրության 08.12.2014 թ.

Տպաքանակը՝ 200 օրինակ

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ
ИНСТИТУТ ИСТОРИИ НАН РА
INSTITUTE OF HISTORY OF NAS RA

ՀՀ, 0019, Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24/4

РА, 0019, Ереван, пр. Маршала Баграмяна 24/4

24/4, Marshal Baghramyan Ave., 0019, Yerevan

<http://www.academhistory.am>

